

291. 93-4


ԲԱԳԻՆ

2 ԳԱՐՈՒՆ 2002

40
ԱՄԵԱԿ

1962-2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Ա. ՍԱՆԻՆԵԱՆ Տիկին Արրիամարնի մահը
- 23.- Փ. ՋԵՐՄԱՆԵԱՆ Բանաստեղծություններ
- 27.- Հ. ՄԱԿՍՐՅԱՆ Վազեմ... Զուշանամ
- 51.- ԵՂ. ՊՕՅԱՋԵԱՆ Իմ հին, իմ հի՛ն սիրեցեալ
- 52.- ՇԱՀԱՆԴՈՒԽՏ Վերադարձը
- 64.- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ Օրագիր
- 72.- ՎԱՐԱՆԴ Դանք չակաճ
- 79.- Թ. ԶԻՅԱԼՅԱՆ Մարեմանօրը
- 92.- Մ. ԱԲԿԵՊԻՍԿՈՊՈՍ «Մայրիկ»ը եայերէն կը խօսի
- 94.- Ա. ՎԵՐՆԻՍՅԱՆ Մայրիկ
- 99.- * * * Ժառանգական աւիշներով
- 106.- * * * Մեր ցաւով շաղախուած միւս մեծը
- 107.- Յ. ԿՈՓԻԼԵՆԻՆ-ԷՐԵՄԵԱՆ Ժանսեմ՝ առեղծուածային
անուն մը
- 110.- * * * Պետրոս Ալախատոյեան
- 111.- Պ. ԱԼԱԷԱՅՏՈՅԵԱՆ Յ. Դելլայեան կամ Նակատագրի
կողին իրած մեկը
- 128.- * * * Փոքրիկ իշխանը
- 131.- Ա. ՏԸ ԱԷՆԹ ԵՎԶԻԼՊԵԼԻ Փոքրիկ իշխանը
- 137.- * * * Նշմարներ
- 147.- * * * Մշակութային լուրեր

Կողմ՝ ՄԱՐԱԼ ՓԱՆՈՍԵԱՆԻ

ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՆԱՍԱԶԳՈՅԻՆ»Ի ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Բազին

ԱՅՄՈՒԳՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԻՆՍՏԻ

ԽԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 2 ԳԱՐՈՒՆ 2002 ՊԷՅՐՈՒԹ

Ս. Սանինեան

ՏԻԿԻՆ ԱԲՐՀԱՄՍԸՆԻ ՄԱՀԸ

Երեսնական եւ քառասնական թուականներու կեսերուն արիւնոտ բռնակալութեանց ճամբարային դժոխքներուն դառնութիւնները ցմրուր ընկած ողբացեալ գըրուագէտ Սուրէն Սանինեան, մահէն կարճ ժամանակ մը առաջ, իր անտիպ գործերուն մէկ շարքը պահ դրած էր իր բարեկամներէն Դենրիկ եւ Անասիկ Պուտաքեաններուն Սօտ, որոնք առիթով մը մեր տրամադրութեան տակ դրին պատմուածքներու եւ վիպակներու ծրարը, «Բազին»ի մէջ գանոնք լոյս ընծայելու փափաքով եւ հատորային առումով մեկենաս մը գտնելու յոյսով:

Տարի մը առաջ, «Գէորգ Մելիտիւնեցի» գրական մրցանակի դատակազմը, «Մաքառում» խորագիրի մը տակ շարքին հինգը լոյս ընծայեց 309 էջ հաջուող հատորով մը:

Ստորեւ տրուած անտիպ պատմուածքին հետ, պիտի մաղթէիք, որ ուրիշ մեկենաս մը յայտնուէր եւ առանձին հատորով մը լոյս ընծայէր այն միւս վիպակներն ու պատմուածքները, որոնք ապրուած փորձառութեանց վրայ կառուցուած են եւ ունին կարողացելու աշխուժ արժանիք մը, ինչպէս ունէին Սուրէն Սանինեանի բոլոր գործերը, «Ես յանցանք գործեցի» հատորէն մինչեւ «Դեռաւոր թաղ ու լուսաւոր մայրերի վրայ» տեղի ունեցած անցուղարձերուն պատումները:

«...Ինչից մահացաւ ձեր բանկագլին կողակիցը»,- հարցնում էին Ռեն Արրեամսարնին:

Պարոն Արրեամսարնը մինչև պատասխանելը արցունքով էր լեցնում իր աչքերը, և յետոյ հատաչելով՝ վշտահար առում էր կամացուկ:

«Արտի կարուածից...»:

Քեն Արրեամսարնը իր վաճառորդին կարգադրեց փակել Հազուստի իր խանութը և տուն գնալ, իսկ ինքը ձեռքերը դրեց մէջքին և քայլեց փողոցն ի վեր:


Նա չէր ուզում տուն գնալ: Այդ ոչ թէ անոր Համար, որ Հանգստի կարիք չէր գոում, այլ չէր ուզում իր կնոջը տեսնել:

Նրա կինը, Սառան, որ բարձրահասակ, նիհար-նիհար ու սուր թթով և փոքրիկ ու անզոյն աչքերով մի կին էր, իր ամուսնուն Հանգիստ չէր տալիս: Նրա կարծիքով, իր ամուսինը շատ քիչ գրամ էր տուն բերում, և Հէնց այդ պատճառով էլ միշտ դժգոհ էր նրանից: Միշտ դժգոհ:

Այդ դժգոհութիւնն առաջանում էր Սառայի այն ենթադրութիւնից, թէ ինքը շնաշխարհիկ մէկ էակ է, որ այդպիսի գեղեցիկ կինը պէտք է մի միլիոնատիրոջ բաժին ընկնէր, և ոչ ինչ-որ տղամարդկանց Հազուստավաճառի:

Միւս կողմից էլ՝ Սառան ծոյլ էր և փնթի: Հէնց այդպիսի կանայք էլ միշտ դժգոհ են լինում իրենց ամուսիններից, որ պէտքի Հաւասարակշռութիւն ստեղծեն իրենց ծուլութեան և պարտականութիւնների միջև: Նա ոչինչ չէր անում, բառացիորէն ոչինչ: Նոյնիսկ իր բնակարանը կարդի չէր բերում: Ձին կանանց մի լայնթեւ վերնոց Հագած, նա ամբողջ օրը պառկում էր մի բազմոցի վրայ, անվերջօրէն սուրճ էր խմում և անվերջօրէն ծխում: Նա ծխում էր օրեկան Հարիւր ծխապանիկ և ամիսսում էր, որ այդքան քիչ էր ծխում, որովհետեւ սրտից սկար էր: Երբ նրան պատահականօրէն մարդիկ էին Հանդիպում, նա նրանց վրայի նիկոտինով լեցուն մի անօթ էր յիշեցնում:

Քեն Արրեամսարնի ուրախութեանը ուրախութիւն չէր Հասնի, եթէ, իրապէս, Սառան մի միլիոնատիրոջ բաժին ընկած լինէր: Արրեամսարնի Համար, Սառան ոչինչ չէր անում, ոչինչ: Կերակուր չէր եփում: Նա նախ չգիտէր, յետոյ էլ նոյնիսկ, շատ էր դժգոհում, որ իր Համար սուրճ էր եփում, որովհետեւ ցանկանում էր մի սպասուհի ունենար, որը նրա Համար միշտ սուրճ եփէր և մատուցէր: Դատարկ գաւաթ վերցնէր, լիքը մատուցէր: Այդ Հանգամանքն էլ դժգոհութիւն էր առաջ բերում նրա մէջ: Եթէ մի միլիոնատիրոջ բաժին ընկած լինէր, այդ այդպէս էլ կը լինէր: Սպասուհին նոյնիսկ նրա ծխախոտաւոր փր կը բացէր և ծխապանիկը նրա բերանը կը գնէր:



32900 ան.
525-2017

Այդպէս էր Սառա ԱրրՀամարնը, որը իր Հանգստաւէտութիւնը ցանկանում էր կատարեալ եւ գերազանց լինէր, բայց ոչ այնպէս ողորմելի, ինչպէս էր Բեն ԱրրՀամարնի տանը:

-2-

Բեն ԱրրՀամարնը չգիտէր, թէ ինչ անէր: Նա միայն անիծում էր այն օրը, երբ ինքը իր մեծ «այրո»ն ասաց, եւ իր ձեռքով իր Համար կեանքը լեղիի վերածեց: Նա շատ էր ուզում, որ Սառան մեռնէր եւ իր Հոգին ազատուէր: Աստան էլ գիտէր այդ:

-- Ես գիտեմ, թէ դու ինչ ես մտածում,- իր սուր ու ճղճրգան ձայնով ճշում էր Սառան,- դու իմ մահն ես ուզում:

-- Ձեռն ուզում,- ստում էր Բենը, որովհետեւ վախենում էր,- ինչո՞ւ պիտի քեզ նման մի գեղեցիկ կնոջ մահը ցանկանամ: Գիտես, որ իմ ամբողջ էութեամբ սիրահարուած եմ եւ քո վրայ:

-- Ռեզո՞ւմ ես, ուզո՞ւմ ես,- շարունակում էր իր բոլոր թորքերով լեցուն օդով ճշալ Սառան,- եթէ չուզենայիր, ինձ չէիր քաջալերի, որ ես այդքան շատ սուրճ խմեմ, եւ Հարիւր Հատ ծխազլանիկ ծխեմ:

-- Մի խմիր եւ ծխիր,- ասում էր Բենը,- եւ մի մեռիր:

-- Տեսնում ես,- ազադակում էր Սառան,- դու այնքան ծրլատ ես, որ ցանկանում ես, որ ես նոյնիսկ սուրճ չխմեմ եւ ծխախոտ չծխեմ: Սեւ լինէր այդ օրը, որ մենք շամունանայինք:

-- Արդէն սեւ օր էր այդ օրը:

-- Միլիոնատէր, միլիոնատէր,- շարունակում էր ազադակել Սառան,- ո՞ւր ես դու, արի ինձ տար, եւ ազատիր: Ես միայն քեզ եմ արժանի, քեզ, տնաքանդ մարդ: Ես միայն քո պալատներին եմ արժանի, քո ճոխ կեանքին, քո սպասուհիներին, քո ծառաներին, քո կանաչ դուլարներին: Ռ՞ւր ես դու, անխելք մարդ: Արի, շուտ արի:

Բայց միլիոնատէրի Հոգը չէր, որ Սառան տառապում էր եւ նրանց սիրում: Նրանք սիրում էին երկար ուղեբերով ու չիկաՀեր աղջիկներ, որոնք Համաչափ մարմին ունենային, մարդարտեայ ատամներ, Հիթեղ շրթունքներ, բարձր, մեծ եւ ամուր կրծքեր, այլ ոչ թէ Սառայի պէս չոր ու տափակ կրծքով էակներ: Մի բան յայտնի էր, որ Աստան եթէ սրտի Հիւանդութիւն չունենար եւ Հազար տարի ապրէր, երբեք միլիոնատիրոջ երես չէր տեսնի: Խե՞նթ էին միլիոնատէրերը: Եթէ Բեն ԱրրՀամարնի նման անխելք մարդիկ կան, նրանք թող ամուսնանան Սառայի եւ Սառաների Հետ: Սառան ո՞ւր՝ միլիոնատէրը ո՞ւր: Բայց արի Սառային այդ բանը Հասկացրու: Կը սպանէր բերան բացողին:

Բեն ԱրրՀամորնը քայլում էր ու մտածում իր եւ Սառայի փոխարարերութիւններէ մասին, երբ խանութից տուն գնաց եւ իր կնոջից ուտել խնդրեց: Սառան, որ այդ ժամանակ բազմոցի վրայ պառկած սուրճ էր խմում ու ծխում էր, բարկացաւ.

-- Ի՞նչ է,- ասաց,- կատու՞ւ ես, որ քեզ կերակրեմ: Տեսոյ էլ այս տունը ճաշարան չէ:

-- Կատու չեմ, Սառա,- արդարացաւ Բենը:

-- Որ կատու չես, գնա՛ սառցարանը բաց, մի բան վերցրու եւ լափիր:

-- Սառցարանում ի՞նչ կայ ուտելու,- Հարցրեց Բենը:

Բենը գնաց խոհանոց եւ յետ եկաւ:

-- Սառցարանում կատուի ուտելիքից բացի ուրիշ բան չկայ, Սառա:

-- Գու կատուից անելին չես, կեր կատուի ուտելիքը,- առաջարկեց Սառան:

-- Ես կատուի կերակուր ուտող չեմ,- «քաջարար» յամանեց Բենը:

-- Այն ժամանակ, առ ա՛յս լափիր,- Բենի գլխին նետեց իր Հողաթափը Սառան:

Բենը վերցրեց Հողաթափը եւ սկսեց զննել:

-- Այս ինչպէ՞ս ուտեմ,- Հարցրեց,- Հո՞ւմ, խաշուա՞ծ, թէ տապակա՞ծ:

-- Զխմուիր, ինչպէս որ ցանկանում ես,- թոյլ տուեց Սառան:

Այդ օրուանից ի վեր, Բենը, երբ տուն էր գալիս, զերազատում էր սոված մնալ, քան Սառայից ուտել խնդրել:

Սակայն այսպէս շարունակելն անկարելի էր:

-3-

Բեն ԱրրՀամորնը մտածեց-մտածեց եւ վճռեց գնալ Սառայի եղբոր՝ Զէկըրի մօտ գանգատիս Նա Զէկըր Գուղբերգին երբեք չէր տեսել: Գուղբերգը նրա եւ Սառայի Հարսանիքին չէր եկել, ասելով, թէ ինքը ժամանակ չունի այդպիսի զգացական բաներով զբաղուելու: Բենը նրան, նոյնիսկ, չէր տեսել: Նրանց միջեւ գնալ-գալ չկար: Զէկըրը միլիոնատէր էր եւ ժամանակ չունէր ազգակցական կապերով զբաղուելու:

Չնայած բարեկամական այդպիսի շեղեալ կապերի, բայց եւ այնպէս Բեն ԱրրՀամորն վճռեց վաղը գնալ իր կնոջ եղբորը տեսնելու:

Եւ գնաց:

Շէնքին, ուր Գուղբերգն իր գրասենեակն ունէր, ամբողջովին կառուցուած էր ալիմիւնումից եւ ապակուց: Ան այնքան բարձր էր, որ ծայրը չէր երեւում: Արեւի տակ փայլփլոզ այդ շէնքն ամբողջովին բաժանուած էր բազմաթիւ գրասենեակների միջեւ, ուր տեղի ունեցող խօսակցութիւնները միայն ու

միայն դուրսի շուրջն են դառնում: Այդտեղ աշխատող տղա-
մարդիկ իրենց առաղձեայ դէմքերով, ապակեայ շտեմնող աչ-
քերով եւ նպատակադրումի միանձանողութեամբ ամէնքն
իրար նման էին երեւում եւ դժուար էր նրանց զանազանել
միմեանցից:

Ներս մտնելով շէնքի ընդարձակ նախազաւիթը, Բենը
վախեցաւ եւ ուզեց յետ դառնալ, բայց այդ պահին նրան մո-
տեցաւ մէկը եւ Հարցրեց, թէ արդեօք կարո՞ղ է նրան օղնել:

Բենը շփոթուեց, բայց հաւաքուելով ասաց, թէ ուզում է
Պարոն Գոլդբերգին տեսնել:

Անրիժ մաքրութիւն ունեցող նախազաւիթում վերելակ-
ները բարձրանում էին ու իջնում՝ Հարիւրաւոր կանանց ու
տղամարդկանց վեր տանելով եւ վար քերելով: Բենը նկատեց,
որ այդ շէնքի կանայք Համարեա՝ թէ ամէնքն էլ երիտասարդ-
ներ են եւ շատ գեղեցիկ:

Ջէկըրը Գոլդբերգի գրասենեակները գտնուում էին երե-
սունեօթերորդ յարկում:

Երբ նա ներս մտաւ մի դռնից՝ Գոլդբերգի առանձնասեն-
եակը գնալու համար, անկիւնում դրուած գրասեղանի առջեւ
նստած մի գեղեցիկ աղջիկ նրան Հարցրեց.

-- Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար, պարոն:

-- Ես ուզում եմ Պարոն Գոլդբերգին տեսնել, - միամտօ-
րէն ասաց Բենը. կարծելով, թէ բաւական է, որ այդ ասաց,
ապա իրեն անմիջապէս Գոլդբերգի մօտ կը տանեն:

-- Պարոն Գոլդբերգին այդքան էլ դիւրին չէ տեսնել, -
ասաց աղջիկը, - ժամադրուած էք:

-- Ոչ: Ես այդ չգիտէի:

Աղջիկը ծիծաղեց.

-- Այն ժամանակ ես չեմ կարող օղնել:

Բենը խեղճացաւ.

-- Ես աշխատանքս թողել եմ եւ եկել այն յոյսով, որ Հէնց
այսօր կարող եմ տեսնել Պարոն Գոլդբերգին: Մենք ազգա-
կաններ ենք:

Աղջիկը մտածեց.

-- Լոււ: Տեսնենք ես կարո՞ղ եմ մի բան անել:

Նա վերցրեց Հեռախօսը եւ խօսեց ինչ որ տեղ:

-- Այստեղ մի պարոն ցանկանում է Պարոն Գոլդբերգին
տեսնել...: Այո, Հէնց այսօր...

-- Սպասեցէք, թերեւ մի բան դուրս գայ, - ասաց աղջիկը
եւ անցաւ իր գործին, - նստեցէք:

Բենը նստեց պատի տակ շարուած մի քանի բազկաթոռ-
ներից մէկի վրայ, եւ սկսեց իր շուրջը նայել: Քառակուսի սեն-
եակը մաքրութիւնից պսպղում էր: Սենեակի երեք անկիւննե-
րում եւ պատուհանի զոզում արեւադարձային փարթած եւ
լայնտերեւ բոյսեր կային, որոնք դիտողին մի տարաշխարհիկ
եւ երազային աշխարհ էին փոխադրում:

Բազկաթոնների առջևները դրուած ցածր սեղանների վրայ կային խմիչքի շէր, ծխազլանիկների գոյնզգոյն աուփեր եւ շատ թանկանոց քաղցրաւենիների պնակներ:

Բենը մի ծխազլանիկ վառեց եւ սկսեց աղջկան դիտել: Նա չիկահեր էր: Ունէր շատ սիրուն դէմք, կապոյտ աչքեր, փարթամ կուրծք եւ երկար ոտքեր:

«Միլիոնատէրերը չիկահերերին են սիրում», - մտածեց Բեն ԱրրՀամսընը, եւ Հառաչեց:

Ժամեր անցան, քայց Բենին չէին կանչում: Այդ յապաղմանը ի միտքարութիւն աղջիկը երբեմն-երբեմն բարձրացնում էր գլուխը եւ քաղցրօրէն ժպտում էր Բենին:

Մարդիկ գալիս էին, գնում, ամէնքն էլ ինչ-որ շատ զրաղւած մարդկանց յարուած դէմքերով: Երբեմն, երբ բացւում էր ներսի սենեակի դուռը, այնտեղից ծիծաղի եւ երբեմն էլ լարւած խօսակցութեան ձայներ էին գալիս:

Վերջապէս ներսից Հեռաձայնեցին, որ ԱրրՀամսընը կարող է անցնել ներքին սպասման սրահը: Այդտեղ աւելի գեղեցիկ էր եւ աւելի Հաճելի: Երկու է՛լ աւելի գեղեցիկ աղջիկներ նստել զրուցում էին եւ անվերջ ծիծաղում: Երբ ԱրրՀամսընը ներս մտաւ, նրանցից մէկը քար անտարբերութեամբ, եւ զլխով միայն, ցոյց տուեց մի բազկաթոն:

ԱրրՀամսընը նստեց եւ սկսեց գաղտնօրէն այդ աղջիկներին դիտել: Նա գիտէր, որ այդ աղջիկները տարեկան քսանից-երեսուն Հազար դուլար են ստանում իրենց գեղեցկութեան եւ ոչինչ չանելու Համար: ԱրրՀամսընը գիտէր, որ իր երկրում ամէն մի ձեռնարկատէր կարող է այդ գեղեցկուհիներից պահել այնքան Հողի, ինչքան իր սիրտը ուզում է եւ նրանց վճարող Հսկայական գումարները դուրս Հանել կառավարութեանը վճարուող Հարկերից, եթէ իրապէս այդ միլիոնատէրերը Հարկ են վճարում:

ԱրրՀամսընը գաղտնօրէն դիտում էր այդ աղջիկներին եւ ներքուստ նախանձում Սառայի բախտաւոր եղբորը, որ այդպիսի սիրուհիներ ունի, եւ միեւնոյն ժամանակ մտածում էր, որ եթէ մի օր ինքը Հարստանայ, նոյնն էլ ինքն է անելու:

Վերջապէս նրան կանչեցին Գոլդբերգի մօտ: Գոլդբերգը նստած էր մի մեծ սեղանի առջև, որի վրայ թղթեր կային ցրուած:

Նա ամբողջովին արդիական էր: Հազել էր բազմագոյն մի բանկոն, որի օձիքներն այնքան լայն էին, որ ծայրերը Հասնում էին մինչեւ նրա թիւերը: Նրա փողկապը լայն էր ու գոյնզգոյն: Իր շարժուձեւը տիրական էր եւ արՀամարՀական:

«—Այս երիտասարդ միլիոնատէրը շատ է վերելից թրոլում», - մտածեց Բենը եւ նստնց իրեն ցոյց տրուած գահաւորակի վրայ:

— Քարտուղարուհիս ինձ ասաց, որ մենք ազգականներ ենք: Ազգակցական ի՞նչ կապեր ունենք մենք.- Հարցրեց Գուղբերգը սեղանի վրայի թղթերին նայելով:

— Ես անուանացած եմ ձեր քրոջ՝ Սառայի հետ,- ասաց Արրհամարներ:

— Ահա՛, ուրեմն այդ դուք էք եղել այն բախտաւոր մարդը, որ արժանացել էք մեր գեղեցիկ Սառային,- չգիտես ծաղրե՞ց, թէ լուրջ ասաց Գորգբերգը:

— Ինչպէս տեսնում էք ես եմ եղել,- ասաց Յենը:

— Սառան ինչպէ՞ս է, լա՞ւ է:

— Սառան թող ների, որ ձեր Հարսանիքին շարողացայ ներկայ գտնուել: Գիտէք, երբ մէկը գործի մարդ է՝ Հարսանիքը եւ նման բաները նրան ծիծաղելի են թւում:

— Այդպէս է:

— Է՛հ, բարեւիր Սառային,- տեղից ելաւ եւ ձեռքը պարզեց Գուղբերգը:

Արրհամարներ Հասկացաւ, որ տեսակցութիւնը վերջացած է, բայց նա ուժ գործադրեց իր վրայ եւ ասաց.

— Ես ձեզ մօտ գործով եմ եկել...

Գուղբերգը յօնքերը կիտեց.

— Ի՞նչ կայ: Եթէ խօսքը դրամին է վերաբերում, մոռացիր, փող չկայ...

— Սոսքը դրամին չի վերաբերում, այլ՝ Սառայի եւ իմ փոխարարութիւններին...

— Ահա՛...: Ի՞նչ է պատահել:

— Սառան պահանջկոտ է...

— Բոլոր կանայք են պահանջկոտ:

— Սառան չափն անցնում է:

— Ի՞նչ է պահանջում:

— Դրամ...

— Դու ինչո՞վ ես դբաղում:

— Տղամարդկանց Հազուստ եմ վաճառում:

— Boy...! Ել ուրիշ գործ չգտա՞ր, տղամարդկանց Հազուստ ես վաճառում: Եթէ Հազուստ պիտի վաճառէիր, գոնէ կանանց Հազուստ վաճառէիր:

— Ինչո՞ւ:

Գուղբերգը նստեց.

— Որովհետեւ կանայք շարաթը մէկ ձեռք Հազուստ են գնում, իսկ տղամարդիկ հինգ տարին մէկ Հազուստ:

— Այդ խանութը ես Հօրիցս ժառանգութիւն եմ ստացել:

— Լաւ կը լինէր, որ Հայրդ քեզ մէկ միլիոն դոլար ժառանգութիւն թողնէր: Քանի՞ տարեկան ես:

— Երեսուն երկու:

— Երեսուն երկու տարեկան ես, բայց ութսուն տարեկան ծերունու երեւոյթ ունես:

— Զեմ Հասկանում:

— Արդիական չես պաշտում քեզ: Բեխ ու մօրուք պաշիր: Մաղերդ երկարացրու: Հագուստդ արդիական դարձրու:

— Ինչու՞ Համար:

— Ցանախորդ գրաւելու: Բեզ տեսնողը քեզնից ոչինչ չի գնի: Մենք վաճառականներս միշտ պէտք է օրուայ սովորութիւնների եւ օրուայ տիրող ոգու հետ գնանք: Գործի տեսակէտից պէտք է... Դե՛հ, նորից եմ խնդրում, բարեւես Սատային, նորից տեղից ելաւ Գոլգրերգը:

-4-

Մօտ մէկ ամիս էր անցել Աբրահամսընի եւ Գոլգրերգի առաջին Հանդիպումից. երբ մի օր էլ առաջինին կանչեցին երկրորդի մօտ:

Աբրահամսընը նորից գեղեցիկ քարտուղարուհիների մօտից անցնելով մտաւ Գոլգրերգի առանձնասենեակը: Այնտեղ էր նաեւ մէկը, որը երկարուկ գլուխ ունէր, սեւ գեղին գոյնի գէմք, եւ միու ալուաններ:

— Մանօթացէք, — ասաց Գոլգրերգը Աբրահամսընին եւ սենեակում գտնուողին, եւ ապա ինքը ծանօթացրեց, — բժիշկ Մամէզ Թիւրքու, յրժանաւարա Անկարայի Համալսարանից եւ ԸԸԸ...

— Բեն Աբրահամսըն, — ինքն իրեն ներկայացրեց Հագուստավաճառը:

Թուրքը եւ Բենն իրար ձեռք տուին եւ նստեցին:

— Պարոնայք, այժմ անցնենք գործի, — ասաց Գոլգրերգ. եւ անմիջապէս աւելացրեց, — այդ խօսակցութիւնը, որ Հիմա այստեղ տեղի պիտի ունենայ, այս սենեակի պատերից այն կողմը չպիտի անցնի:

— Անշուշա, — Համաձայնեցին Աբրահամսընը եւ Թիւրքուն:

— Պարոնայք, — նորից խօսեց Գոլգրերգը, — այսօրուայ մարդկութիւնը առաջնորդում է երկու գաղափարներով, որոնք լքրացնում են մէկը միւսին, եւ Հակադիր են ճիճաղելի, այսպէս կոչուող «վսեմ» գաղափարների: Այսօրուայ մարդկութեանը Համակող երկու գաղափարներն են՝ նիւթը եւ սեռային կեանքը Պարոնայք, դուրսը կանաչ աստուած է դարձել եւ Հէնց ճշմարտութիւնն էլ այդ է. քանի որ կանաչ դուրսը կեանքի եւ կենսի աղբիւր է Հանդիսանում: Մեր ինչին են պէտք «վսեմ» գաղափարները եւ կեանքի գեղեցկութիւնները, եթէ մենք դուրսը չունենք: Դուրս, ոչ թէ մի քանի Հատ մի կերպ ապրելու Համար, այլ շատ: Որքան կարելի է շատ: Միլիոններ, միլիարդներ: Որքան շատ, այդքան մեծ է ուժը, այնքան մեծ է անկախութիւնը եւ պատիւը: Մարդկութեանը Համակող այսօրուայ երկրորդ գաղափարն է սեռային կեանքը: Սեռային կեանքը միշտ եղել է, բայց այսօր այն փետիչի է վերածուել:

-- Սեռական կեանքում դեր ունեն թէ՛ կինը եւ թէ՛ տղամարդը: Բայց կինը գտնւում է կենտրոնում, որովհետեւ վերջին խօսքը պատկանում է կնոջը. քանի որ նրա Համաձայնութեամբ կամ էլ Համակերպումով է, որ ամբողջանում է Հարցը: Թէեւ տղամարդը յարձակուող կողմն է Հանդիսանում, բայց թոյլ ու փխրուն մարմնով կինը շատ ղէպբերում, եւ եթէ ցանկանում է, յետ է մղում այդ յարձակումները ապուշացնելով տղամարդուն: Ինչպէս ժողովուրդն է ասում. «Կանայք իրենց միշտ էլ թանկ են ծախում» է՛լ աւելի ցանկալի դառնալու Համար:

Բայց այդ՝ Հարցի Հոգեբանական կողմն է: Ի ծնէ, բնութեան պահանջով, կինը միշտ էլ ձգտում է ցանկալի երեւալ: Իրա Համար էլ իր ունեցած բնական գրաւութիւնների վրայ աւելացնում է արհեստականը: Ծառ անգամ այդ արում է նիւթական նկատառումներով: Կին եւ տղամարդ Համեմատութեամբ, կինն աւելի նիւթապաշտ է: Այդ ո՞ր կինն է, որ չի ցանկանում մի միլիոնատիրոջ հետ ամուսնանալ: Այդպիսի կին դեռ չի ծնուել:

Եւ այդպէս, կինը կին է ծնւում՝ գեղեցիկ երեւալու Համար: Ասացի արդէն, որ այդ գեղեցկութիւնը խայթ է տղամարդկանց Համար: Զարմանալին այն է, որ եթէ մի կին իրապէս ի ծնէ գեղեցիկ է ծնուել, դրանով նա չի բաւարարում, այլ դիմում է նաեւ արհեստական միջոցների է՛լ աւելի գեղեցիկ երեւալու Համար: Այդ արհեստական միջոցների մէկ մասն, ինքք կինն է Հնարում, միւս մասը մենք՝ առեւտրականներս: Այսպէս, օրինակ, առեւտրական մի ընկերութիւն յամառօրէն ազգարարում է՝ «Միլիոնատէրերը չիկահերներին են սիրում: Օրիորդ մազերդ չէկ ներկիր, թերեւս կարողանաս մի միլիոնատէր էլ դու ճանկել»: Ես միշտ էլ նախանձում եմ ներկի այդ ընկերութեանը, որ, շնորհիւ առեւտրական այդ յաջող յայտարարութեանը, տարեկան Հարիւրաւոր միլիոնների ներկ է ծախում: Յաջող յայտարարութիւններ շատ կան եւ մենք էլ պէտք է ունենանք մերը: Անշուշտ միայն կնոջ շուրջը, որովհետեւ դրամ ծախսողը կինն է: Չկայ կին, որ աւելի գեղեցիկ երեւալու Համար դրամ խնայի: Այ, չկայ այդպիսի մի կին: Եւ մենք պէտք է օգտուենք առիթից:

-- Պարոն ԱրրՀամարն,- Գոյղբերգը դիմեց Բենին,- մի քանի օր առաջ երբ ինձ ծանօթացրին բժշկի Հետ, եւ երբ բժիշկն ինձ ասաց, որ ինքք Անգարայի Համալսարանն է աւարտել, միտք յղացայ կանացի վայելչակազմութեան վերաբերեալ մի ղեղ արտադրելու մի ընկերութիւն Հաստատել, որի անդամներն են լինելու բժիշկը, դու եւ ես: Ամերիկուհիները ուզում են նիւար մնալ եւ մենք պէտք է փորձենք այդ անելու...

-- Եթէ պարոն բժշկի մասնագիտութիւնը կանանց նիւարեցումն է, ապա այդ ղէմ է նրա երկրի բարձրին,- ասաց Բենը:

-- Ի՞նչ ես ուզում ասել,-- խստորէն Հարցրեց Գոլգրերդը: Բենը շարժուեց տեղում եւ ասաց իրեն յատուկ շիտակութեամբ.

-- Ինչքան գիտեմ, թուրքերը մտեղ կանանց են սիրում, ուրեմն պարոն բժիշկը պէտք է որ այդ ուղղութեամբ սովորած լինի...

Թուրք բժիշկը Հաղաց.

-- Պարոն Գոլգրերդ, յանուն ճշմարտութեան ուզում եմ երկու բառ ասել:

-- Այո:

-- Պարոն Գոլգրերդ, թուրքիայից դուրս մեզ՝ թուրքերիս, Համարում են բիրտ, վայրենի, մարդատեաց վանդալներ: Այդ բոլորի վրայ աւելացրած որպէս անճաշակ մի ժողովուրդ: Բայց այդ այդպէս չէ: Մենք նրբաճաշակ եւ հումանիտար մի ժողովուրդ ենք: Այս երկրում դռնէ կան մարդիկ, որոնք մեզ Արեւելքի «Ձէնտլմէն» են համարում:

-- Այո... Այո...: Արդէն Պարոն ԱրրՀամսընի դիտողութիւնն միանգամայն աւելորդ էր: Մենք այստեղ, Հաւաքուել ենք առեւտուր անելու եւ ոչ թէ թուրքերի վարք ու քարքով զբաղուելու...

-- Պարոն Գոլգրերդ,-- ձեռք բարձրացրեց ԱրրՀամսընը,-- ասեմ, որ ես թուրքերի դէմ ոչինչ չունեմ: Ես մի Հայ բարեկամ ունեմ, այդ նա է, որ միշտ սեւացնում է թուրքերին...: Սակայն ես նորից եմ ցանկանում իմանալ, թէ ինչո՞ւ այս թուրք բժիշկը, եւ ոչ մի ամերիկացի բժիշկ...

-- ԱրրՀամսըն, ԱրրՀամսըն,-- գլուխն կշտամբանքով օրօրեց Գոլգրերդը,-- ես տեսնում եմ, որ մեր Սառան իրաւունք ունի քեզնից դժգոհ լինելու եւ ի գուր չէ, որ դու տղամարդկանց Հաղուստաւաճառութիւն ես ընտրել որպէս ասպարէզ, քեզնից դժուար է վաճառական պատրաստել: Որովհետեւ վաճառական լինել, նշանակում է վաճառականին յատուկ Հոտառութիւն ունենալ, Հասկանալու Համար ժամանակի ողին, եւ այդ Հոտառութիւնն օգտագործել շահ ձեռք բերելու Համար: Ո՛չ միայն այդ այլեւ ճանաչել մարդը: Տեսնել մարդկային թոյլ կողմերը եւ օգտագործել այդ կողմերը: Արդ՝ քանի որ մենք ապրում ենք Ամերիկայում, մեր առաջին գործը պէտք է լինի ճանաչել ամերիկացուն, կին թէ տղամարդ: Եւ որովհետեւ մեր սկսելիք գործը կանանց Հետ է լինելու, մենք պէտք է ճանաչենք ամերիկացի կանանց: Ո՞վ է ամերիկուհին: Ամերիկուհին այս երկրի ընտանիքների իշխող տարրն է: Պօքս Հասկանալի դարձնելու Համար ասեմ, որ Ասիայում ընտանիքի տէրը տղամարդն է եւ կինը Համարեա՛ թէ ոչինչ է: Այստեղ զրա Հակառակն է: Այս երկրում ընտանիքի տէրը կինն է, իսկ ամուսինը կամ տղամարդը Համարեա՛ թէ ոչինչ է: Սակայն այդպիսի զրուածքն արհեստական է եւ արտաոտց: Որովհետեւ ի բնէ սեւերի մէջ կինը թոյլ կողմն է Հանդիսանում: Հոգեբանօրէն էլ

կինը քնազգով իրեն միշտ պաշտպանեալի դերում է զգում: Կինն ուզում է, որ տղամարդը ուժով լինի թէ՛ մարմնապէս եւ թէ՛ իր կամքով: Կինը չի սիրում թող տղամարդ: Նա ուզում է հպատակուել: Այդպէս իրեն աւելի լաւ է զգում: Սակայն, ինչո՞ւ եմ ես այդ մասին խօսում, որպէսզի ձեզ, պարոն Արրհամարն, - մատը դէպի Բենը պարզեց Գոլդբերգը. - բացատրեմ, թէ ինչու ես գերադասեցի անկարացի այդ թուրք բժշկին մեզ գործընկեր վերցնել, քան ամերիկացի մի բժշկի: Նորից եկէ՛ք Հասկանանք, պարոնայք, որ մեր գործը զլիաւորապէս ամերիկացի կանանց հետ է լինելու, իսկ ամերիկացի կինը միշտ էլ տարաշխարհիկ երեւոյթների սիրահար է: Ապրելով տնտեսական եւ ազատական Համեմատաբար աւելի լաւ պայմաններում, այդ կինը ձանձրանում է իր կեանքի միօրինակութիւնից եւ իր թոյլ ամուսնու վրայ զերիշխելուց: Նրա աչքը միշտ դէպի Արեւելք է, դէպի Ասիան: Իր կրթութեամբ եւ իմացականութեամբ լինելով սահմանափակ անձ, այդ կինն Ասիան պատկերացնում է որպէս թագաւորների, իշխանների եւ Հարեմների մի Համատարած աշխարհ: Այդ Հարեմները գտնուում են կանաչագեղ պարտէզներում, ուր կան լողաւազաններ եւ ուր ցայտում են սառնորակ շատրուաններ: Պարտէզներում գիշեր-ցերեկ դալլալում են սոխակները եւ ծառից ծառ են թռչկոտում տարաշխարհիկ թռչուններ: Հարեմների յատակներին սփռուած են թանկագին քարեր եւ ազամանդներ եւ Հարեմների կանայք, որ ոչինչ չեն անում, այդ քարերը Հաւաքում են եւ իրենց զարգարում: Լուում է արեւելեան մեղկ երածշտութիւն: Բայց ահա քացուեց Հարեմի դուռը, եւ ներս մտաւ Հարեմի տէրը: Դա մի առնացի տղամարդ է եւ այնքան գեղեցիկ, որ միայն Հեքիաթների մէջ է լինում: Նա ընտրում է իր կանանցից մէկին (տուեալ դէպքում ամերիկուհու) եւ տանում...: Այդ կեանք չէ, այլ՝ մի լաւ երազ: Ամերիկուհին իրեն երջանիկ է զգում, որովհետեւ իր թուլական եւ իրեն ենթարկուող ամերիկացի ամուսնու փոխարէն, այժմ ինքը սիրախաղերի ենթակայ է մի-մի թագաւորի, մի իշխանի, որի մի կարգադրութիւնից գլուխներ են, որ թռչում են՝ ինչպէս զնդակները զնդացիի խողովակից: Եւ այդ թագաւորը կամ իշխանն այնքան կարող մէկն է, որ մի գիշերուայ մէջ ամերիկուհուն տասից-տասնհինգ անգամ... Այդպէս, ուրեմն, պարոն Արրհամարն, ամերիկուհու աչքն դէպի Արեւելքն է, եւ ես անկարացի մի բժիշկ ընտրեցի, որովհետեւ Անկարան էլ Արեւելքում է գտնուում: Մի մոռացէ՛ք, պարոնայք, որ մեր արտադրած զեղաչների վրայ տարբեր գրերով եւ գունաւոր թանաքով գրուած պիտի լինի, թէ՛ «այս գեղը պատրաստուած է Անկարայի աշխարհահռչակ Համալսարանի կանացի վայելչագեղութեան ֆակուլտետն ոսկեայ չքանչանով աւարտած Հմուտ մի բժշկի զեղատոմսով եւ նրա աշայուրջ Հսկողութեան տակ»:

Թուրքը, իբրեւ թէ Համեստութիւնից, իր արիւնով լեցուած աչքերը իջեցրեց:

- Հարցեր կա՞ն,- Հարցրեց Գուղրերզը:
- Մի հարցում,- մատը տնկեց Բենը:
- Ի՞նչ է:
- Ո՞ւր է լինելու մեր գործարանը:
- Սկզբում, քո խանութում:
- Իսկ Հագուստնե՞րս:
- Դուրս թափիր. կամ Հաւաքիր մի կողմը դիր:
- Բենը տխրեց: Իր այնքան սիրելի խանութը գործարանի պիտի վերածուէր, եւ այնքան լաւ Հագուստներ ոչինչ բան պիտի դառնային, մանաւանդ որ դեռ ապագան յայտնի չէր:
- Ուրիշ ի՞նչ,- Հարցրեց Գուղրերզը:
- Ինչքա՞ն է ապահով մեր այս ձեռնարկի ապագան:
- Ասեմ, որ միլիոններ են հոսելու մեր գրպանները, որովհետեւ մեր պատրաստելիք գեղի մի սրուակը մենք պիտի ծախենք տասը դոլարի, երբ մենք այդ սրուակի վրայ պիտի ծախենք ընդամենը երկուսից-երեք սենթ:
- Ձեռն Հասկանում,- տարակուսեց ԱրրՀամսընը:
- Գուղրերզը ծիծաղեց.
- Բծիչկ, դուք բացատրէք, թէ ինչպէս:
- Թուրքը գոռոզ մի Հայացք նետեց Բենի վրայ, եւ ասաց.
- Մեր պատրաստելիք դեղը պարունակելու է իննսունութ տոկոս H : O մէկ տոկոս acetic acid, մէկ տոկոս արհեստական պողպահիթ, եւ ամէն մի սրուակի Համար երկուսից-երեք Հատ C : H : O :
- Բենը շփոթուեց: Թուրքի ասած քիմիական այդ բաղադրութիւնների ինչ լինելը նա չհասկացաւ:
- Ի՞նչ են գրանք,- Հարցրեց նա ամաչելով:
- Թուրքը ծիծաղեց Հեղնարար.
- H : O ն ջուրն է, acetic acidը՝ քացախ, իսկ C : H : O ն ապիրին:
- Բայց այդ խաբէութիւն է,- բացազանչեց ԱրրՀամսընը:
- Գուղրերզը մոայլուեց:
- Լսիր,- գոռաց նա,- դու այստեղ ես եկել businessի՞ Համար, թէ մեր գլխին բարոյական քարոզներ կարդալու: Ես տեսնում եմ, որ քեզնից businessman չի դուրս գայ: Ոչ:
- ԱրրՀամսընը գլուխն իջեցրեց եւ սկսեց մտածել: Նա ուզում էր ելնել տեղից, թքել իր աներձագի երեսին եւ թողնել Հեռանալ: Սակայն այդպէս չարեց, որովհետեւ իր մտքում արդարացրեց նրան:
- «Թերեւս նա ճշմարիտ է,- մտածեց նա,- Թերեւս, իրապէս, առեւտուրը խաբէութիւն է, եւ ես չեմ իմացել այդ մասին...»:
- Գուղրերզը նրան նայեց եւ մեղմացաւ:
- Երբ... ի՞նչ է քո առաջին անունը:
- Բենիամին... Բեն...
- Ինձ լսիր, Բեն...

-- Այո...

-- Իրապէս, եթէ ուզում ես մի կանոնաւոր գործընկեր դառնալ, պէտք է փոխես քո այդ «վարժապետական» մտայնութիւնը...

-- Yes...

-- Good, այդպէս աւելի լաւ է քեզ համար: Հաւատա՛ ինձ...

-- I believe you...

-- Լաւ, առայժմ տուն գնացէք ու մտածեցէք մեր սկսելիք գործի մասին: Ես ձեզ խնդրում եմ ձեր մտածումներում չեյտք դնել «ոեկլամի» վրայ: Գիտցէք, որ մեր այս օրերում ապրանք ծախում է. ոչ թէ իր որակի շնորհիւ, այլ շնորհիւ այն ոեկլամի, որ կատարում է նրա վերաբերեալ...: Այդ ուղղութեամբ ես առաջարկում եմ մեր դեղի շքերի վրայ ջոյց տալ միջին տարիքի մի գէր կին եւ նրա կողքի լուսանկարում ջոյց տալ մի երիտասարդ ու նիհար աղջիկ: Առաջին նկարի տակ գրել՝ «Անաջ»: Երկրորդ նկարի տակ գրել «Յետոյ»: Ասելս այն է, որ ջոյց տալ, թէ գէր կինը ինչքան գէր է եղել մինչեւ մեր դեղի գործածութիւնը: Իսկ նիհար աղջկայ լուսանկարով ջոյց տալ, թէ նա ինչքան է նիհարել մեր դեղը գործածելուց յետոյ...: Հասկանալի՞ է, Բեն, հասկացա՛ր...

-- Մէկ քան,- մատը տնկեց Բենը:

-- Այո...

-- Վարձում եմ գէր կինը եւ երիտասարդ աղջիկը պէտք է իրար շատ նման լինեն:

-- Այդ մասին խօսք չի կարող լինել:

-- Ինչպէ՞ս գտնել:

-- Մայր եւ աղջիկ...

-- Ես այդքան չմտածեցի...

Գոլդբերգը եւ Թուրքը ծիծաղեցին:

Հիմա եկէք մեր «դեղի» անուան մասին մտածենք: Ի՞նչ առաջարկներ ունէք,- հարցրեց Գոլդբերգը:

-- Ես առաջարկում եմ «Անկարա», - ասաց Թուրքը:

-- Իսկ դու, Պարոն Արրհամարն:

-- Նիւ Եորք:

Գոլդբերգը մտածեց:

- Պարոնայք, դուք մոռանում էք, որ մեր «դեղը» օչարակ չէ. այլ՝ «բժշկական գիտական տուեալներով պատրաստուած մի դեղ»: Բժշկութեան մէջ «արին» կամ «կրին» վերջաւորութիւնը շատ է գործածուած եւ լաւ տպաւորութիւն ձգում: Ուստի՝ ես առաջարկում եմ մեր «դեղը» անուանել «Արրհամարն»:

-- Իմ անունով,- վախեցաւ Արրհամարնը:

-- Այո:

-- Ինչո՞ւ...

-- Գիտական է հնչում:

-- Իսկ պատասխանատուութիւնը...

-- Ի՞նչ պատասխանատուութիւն:

- Որ մի օր...
 -- Այդ օրը չի գայ:
 -- Իսկ եթէ...
 -- Մի վախեցիր, գու թիզնիսմէն ես: Այս երկրում թիզնիսմի գիպչող չկայ:
 -- Բայց մեր թիզնիսմը...
 -- Այդ միեւնոյնն է...: Այս երկրում Հարիւրաւոր տեսակի «ղեղեր» են վաճառում, որոնք գործածող Հիւանդին մի ասեղի ծայրի չափ անզամ անոքում չի բերում: Բայց ասենք, «ատուգող յանձնախումբը» գրում է, «Քանի որ այդ դեղը չօգնելով Հիւանդին, չի էլ վնասում նրա առողջութեանը, թոյլ տալ որ վաճառուի: Նոյն եզրակացութիւնն է կայացուելու նաեւ մեր «ղեղի» վերաբերեալ, եթէ մի օր... Մեր դեղը յաւիտենական է լինելու:
 -- Ուրեմն մեր գործն է լինելու միայն գրամի ազաւով կուտակումը.- Հարցրեց ԱրրՀամարներ:
 -- Այո: Բայց, միաժամանակ տենդագին մրցում ուրիշների դէմ: Այսինքն՝ «ոնկլամ», «ոնկլամ» եւ նորից «ոնկլամ»: «Ռեկլամի» Համար մենք գրամ չպիտի խնայենք, մանաւանդ որ «ոնկլամի» վրայ ծախսուած գրամը պետութեան Հաշուին է գնալու:
 -- Պետութեան կողմից այդ ինչ բարեբարութիւն,- խանգաւառուեց Բենը:
 -- Այո, մեր երկրի կառավարութիւնը, մեր՝ միլիոնատէրերիս բարի մօրաքոյրն է՝ մեզ գաթա է ուտեցնում եւ ձուածեղ:
 -- Ես չգիտէի...
 -- Ի ու դեռ չատ բան չգիտես...: Լաւ կ'անես, որ միշտ ինձ լսես...
 -- Այո: Մանաւանդ կառավարութեան պէս մի բարի մօրաքոյր ձեռք բերելու Հարցում:
 Գոլգրերգը ծիծաղեց.
 -- Պարոնայք, քիչ ստաջ ես ուզեցի ձեզ տուն ուզարկել: Բայց մի Հարց եւս լուծենք յետոյ: Համաձայն էք:
 -- ԱրրՀամարն տուն գնալու ամենեւին մտադրութիւն չունէր: Տուն գնար ո՞ւմ Համար: Մտաայի՞ն: Ոչ, ոչ, նորից ոչ:
 -- Ես Համաձայն եմ,- ասաց ԱրրՀամարներ:
 Թուրքի կարծիքը չՀարցրին:
 -- Այս Հարցը «ղեղի» սրտակի ձեւի մասին է,- ասաց Գոլգրերգը,- մեր սրտակը պէտք է իր ձեւով եւ գոյնով տարբեր լինի ուրիշ քնկերութիւնների «ղեղերի» չչերից: Պէտք է լինի մաքուր ապակուց եւ ոսկեղոյն: Թերեւս դուք ուրիշ առաջարկներ ունէք:
 -- Ես չունեմ,- ասաց ԱրրՀամարներ:
 Թուրքը լռեց:
 -- Այդ սրտակը մեծ կարեւորութիւն է ունենալու մեր գործի յաջողութեան, այսինքն՝ մեր «ղեղի» վաճառքի գործում:

-- Այո,- Հաստատեց թուրք «բժիշկը»:

-- Այդպէս է,- իր խօսքը շարունակեց Գոլդբերգը,- պարոնայք, ասեմ, որ ես ե՛ւ ստակում եմ, ե՛ւ դուում գիրք կոչուող իրից, բայց եթէ ես Հրատարակիչ լինէի, իմ Հրատարակած գրքերն ամէնից գրաւիչ կազմը կ'ունենային: Ընթերցողները, նոյնիսկ ինձ նման գրքից զգուացող մէկը տարում է գրքի կազմով եւ գնում է այն:

Նոյնն է նաեւ ղեղերի Հարցում սրուակների Հարցը: Տեսք ունեցող մի սրուակ կարող է խայծ Հանդիսանալ մի դեղի վաճառքի, եթէ նոյնիսկ այդ դեղը մեր դեղի պէս սեղանի ջուր է միայն: Ուստի՝ պարոնայք, ինչպէս նախապէս ասացի, մեր սրուակը լինելու է մաքուր ապակուց, գունաւոր եւ իւրաձեւ: Այն է՝ չորս անկիւններով, բայց տափակ իր տեսքով:

-5-

Անցան մի քանի ամիսներ: Եւ մի օր էլ ամբողջ Ամերիկան իր լայնքով եւ երկայնքով ինացաւ, որ պատրաստուել է մի դեղ, որը ցարդ գազտնի էր պահում, այն վերապահելով միայն քիչ թուով տիկնաց եւ օրիորդաց: Բայց որովհետեւ այդ դեղը պատրաստող ընկերութեան անդամները իրենց հոգիներով ժողովրդավարական սկզբունքների տէր անձինք են, վճռեցին այդ հրաշք դեղը դնել նաեւ կանացի լայն դանդաձանների տրանսպորտի տակ: Շուկայ էր Հանուած չորս կողանոց, բայց տափակ ձեւի, դեղով լեցուն օսկեգոյն մի սրուակ:

«Արդ՝ ԱրրՀամսին գեղազիտական ընկերութիւնը այսու գալիս է ծանուցելու, որ իր արտադրած Չարմ /Charm/ դեղը յանձնում է ի օգտագործութիւն այս երկրի եւ այլ երկրների կանանց»:

Գրուած էր սրուակի առաջին կողքի վրայ:

«Միրելի տիկիներ եւ օրիորդներ, խմեցէք մեր Չարմ դեղը եւ գեղեցկացէք: Գեղը մեզնից, գեղեցկանալը՝ ձեզնից:

«Մաւօրօրիսն առաջին: Նայեցէք այդ սրուակի երկրորդ լայն կողքը»:

«Մաւօրօրիսն նրկրորդ: Աւելի լայնօրէն ծանօթանալու Համար մեր այս դեղի գործած բարերար ազդեցութիւնների հետ, անպայմանօրէն ձեր գնած այդ սրուակի հետ պահանջեցէք նաեւ ձրիօրէն ձեզ տրուող բացատրական դրքոյկը»:

Սրուակի երկրորդ լայն կողքի վրայ կար մի չափազանց գէր կնոջ նկար: Նկարի աակ գրուած էր Տիկին «Ն» մինչեւ «Չարմ»ի գործածութիւնը: Գէր կնոջ նկարից մի սանտիմետր հեռու կար մի նրբաՀասակ ու գեղեցիկ աղջկայ նկար, որի տակ գրուած էր՝ Տիկին «Ն»-ը՝ «Չարմ» դեղը գործածելուց յետոյ:

Այդ երկու նկարների տակ մանր տառերով գրուած էր՝

«ԱրրՀամսին ընկերութիւնը, ո՛չ պրոպականդական կենտրոնն է, եւ ոչ էլ ուրիշների պէս պրոպականդա անել գիտէ, որ-

պէսդի ծախել կարողանայ իր հրաշադրութ ղեղը: Մեր գեղն ինքն է իր մասին խօսում:

Գրքոյկի ներսում կային աւելի շատ գէր կանանց նկարներ, որոնց տակը գրուած էր մինչեւ «Չարմ» դեղի գործածութիւնը, եւ նոյն թուով էլ չքնադ գէմքով եւ մարմիններով երիտասարդ աղջիկների նկարներ, որոնց տակը գրուած էր «Չարմ» դեղը գործածելուց յետոյ:

Յետոյ կար մի բաժին, ուր խօսում էր «Չարմ» դեղի առաջացման մասին: Այդ բաժնում ստուած էր, թէ միշտ էլ Արեւելքը, որ խենթ է կնոջ համար, միշտ էլ ձգտել է կանացի սեռը գեղեցկացնել: Դարեր-դարեր շարունակ, շահեր, խաներ ու սուլթաններ, իրենց մօտ են բերել տուել աշխարհի Հռչակաւոր բժիշկներին եւ նրանց պատուիրել, որ գեղեցկութեան դեղ գտնել իրենց հարեմների կանանց համար: Եւ այդ բժիշկներն ու գեղագէտները շատ անգամ ստիպուած, շատ անգամ էլ կամովին լծուել են գեղագիտութեանը եւ աստիճանաբար Հնարել մի գեղ, որի գաղտնիքը միայն «Չարմ» ընկերութեան բժիշկը գիտէ, որը եւ արեւելցի է:

Այդ գրքոյկը բաղկացած էր մի քանի գլուխներից, մէկը միւսից Հետաքրքրական:

Այդ գլուխներից մէկում գրուած էր, թէ «Չարմ» գեղը ո՛չ միայն նիհարեցնում է, այլեւ գեղեցկացնում: Բայց չէ՞ որ նիհարնալն էլ գեղեցկութիւն է: Այո, մէկը կարող է նիհար լինել, բայց եւ այնպէս գեղեցիկ չլինել: «Չարմ» դեղը Հէնց այդպիսիների համար է պատրաստուած:

«Չարմ» դեղը մտնելով ձեր մարմնի մէջ, առաջին մի քանի րոպէները իրեն նուիրում է Հետազօտութիւնների եւ գտնելու համար, ինչն է պակաս, ինչն է աւել: Պակասի դէպքում ինքը կարգադրում է այդ հարցը: Աւելի դէպքում, աւելորդ ճարպերը Հեռացնում է, Հարթում, մշակում:

Վերցնենք մի աղջկայ, որը համարեա՛ թէ ստիւքներ չունի, բայց ունի ասեմը ճարպակալած փոր: «Չարմ» դեղը ծիծաղում է ինքն իրեն եւ անցնում գործի:

«Չարմ» դեղն անմիջապէս անցնելով գործի սկսում է այդ օրիորդի կամ կնոջ ճարպերը հալեցնել, եւ կրծքային մասն ուղարկել: Դրանով էլ «Չարմ» դեղը կրկնակի աշխատանք է տանում: Մաշեցնում է որովայնի վրայ կուտակուած ճարպերը եւ երկրորդ փարթամացնում է ստիւքները, որոնք մի կնոջ ամէնից հրապուրիչ մարմնամասերն են հանդիսանում: Կայ եւ դրա զուգահեռը: Կանաչք կան, որոնք համարեա՛ թէ կոնք չունեն: Արդ՝ մեր «Չարմ» դեղը, որը միշտ Համազօրծակցութեան մէջ է մարդկային ուղեղին, ուղեղից հրահանգ է ստանում, անմիջապէս թեթեցնել փորի վրայ կուտակուած ճարպերը եւ դրանք ուղարկել եմթակայի կոնքը: Եւ, ո՛վ հրաչք: Մի քանի օրից արդէն նկատելի է դառնում, թէ ինչպէս բարակում է փորը եւ թէ ինչպէս ծանրանում է կոնքը:

Քրքոյկում կար գունաւոր մի նկար, որ պատկերացնում էր մարդու մարմնի ներքին գործարանները. թէ ինչպէս «Ջարմ» դեղը կապի մէջ է մտնում ուղեղի եւ դրանից հրահանգը ստանում, թէ ինչ պէտք է անի բարեկաւելու համար տիկնաց եւ օրիորդաց կերպարները:

Յետոյ կար մի գլուխ, որը յատկապէս զբաղուել էր կանացի աչքերով: Այդ գլխում դրուած էր, թէ ինչպէս «Ջարմ» դեղը խոչորացնում կանացի աչքերը, երկարեցնում է թարթիչները, փայլեցնում աչքերը: Ամէնից կարեւորն այն էր, որ «Ջարմ» դեղը սրտանս է դարձնում կանանց եւ աղջիկներին, այնպէս որ, այլեւս ականց կրող կանայք եւ օրիորդները ականցի կարիք չեն զգում:

-6-

Շատ բան էր գրուած այդ կապոյա գրքոյկում: Եւ գործը գնաց:

Երկու շաբաթից յետոյ, Բեն Արրհամարնի Հագուտի խանութը շատ նեղ էր թւում ստացուած պատուէրների համար:


Արրհամարն ընկերութիւնն ստիպուած եղաւ մի գործարան վարձել: Ընկերութիւնը շուտով մի հողամաս գնեց եւ հիմքը զրեց իր սեփական գործարանին:

Պատուէրները զայիս էին գարնան գետի ջրերի պէս վարար ու յորձանուտ: Միլիոններ էին, որ դիզուում էին դրամատներում: Միլիոններ, միլիոններ, միլիոններ:

Տիկին Ստաա Արրհամարնն արդէն Հասել էր իր տարիների քաղձանքին: Այժմ նրա ամուսինը միլիոնատէր էր: Եթէ սկզբներում նա ոչինչ չէր անում, այժմ աւելի քան ոչինչ չէր անում: Նա աղախին էր վարձել, որը ամբողջ օրը նրա համար սուրճ էր եփում եւ մատուցում: Աղախինը վատում էր նաեւ տիկնոջ ծխապանակները եւ մաքրում մոխրամանները:

Բայց նորից Տիկին Արրհամարնը գանգատ ունէր իր ամուսնու նկատմամբ: Եթէ առաջներում տիկինը գանգատում էր, որ իր ամուսինը միլիոնատէր չէ, այժմ էլ գանգատում էր, որ նա իր վրայ ոչ մի ուշադրութիւն չի դարձնում: Որ նա իրեն չըջապատել է գեղեցկուհիներով եւ ցուրի կեանք է վարում:

Այդ հարցում, Տիկին Արրհամարնը ճշմարիտ էր: Նա որ «Արրհամարն» ընկերութեան ընդհանուր կառավարիչն էր, այլեւս, ինչպէս որ ասում են, «վայելում էր կեանքը»: Ինչպէս, որ մի անգամ խօսք էր տուել իրեն, երբ հարստանայ պիտի հետեւի իր աներձագի օրինակին, այն է՝ իրեն չըջապատի գեղեցկուհիներով, այդպէս էլ Պարոն Արրհամարնը հինգ գեղեցկուհի քարտուղարուհիներ էր պահում, որոնք ոչինչ չէին անում, բացի իրենց բոսի հետ պառկելուց: Սակայն, ի վերջոյ Բեն Արրհամարնը ամբողջովին իրեն նախրի ցուլի պէս չէր պահում: Այդ հինգ գեղեցկուհիներից յոս արտին ամէնից մօտիկն



525-2097

էր զգում Ջէյն Վրրնրլին: Ջէյն Վրրնրլը, որ տասնին-քսան տարեկան մի շիկահեր աղջիկ էր, նաեւ գեղեցկութեան, անմեղութեան, ազնուութեան մարմնացում էր: Բեն Արրհամարնը Ջէյնին ընտրել էր, որպէս իր անմիջական անձնական քարտուղարը: Բեն Արրհամարնն այդ արել էր ո՛չ միայն Ջէյնի եղակի գեղեցկութեան համար, այլեւ այն բանի համար, որ Ջէյնը իր չքնաղ մարմնից բացի նաեւ իր լաւ սիրտը նուիրել էր Բեն Արրհամարնին: Ճիշտ է, որ նրանց տարիքների միջեւ մօտ տաս տարուայ տարբերութիւն կար, բայց նրանչւ աւելի շատ զբաղուած էին իրենց սրտերի մօտիկութեամբ, քան տարիքների հեռաւորութեամբ: Ջէյնը Բեն Արրհամարնին սիրում էր ոչ այնքան նրա միտիոնների համար, ինչքան որպէս անձին: Պարոն Արրհամարնի առանձնատենեակում յաճախ ժողովներ էին տեղի ունենում «Արրհամարն» ընկերութեան Հիմնադիր անդամների միջեւ, եւ Ջէյնն այդ ժողովներում տեսնում էր Պարոն Գոլդբերգին, թուրք բժիշկին եւ այդ երկուսին իր մաքում յաճախ համեմատելով Բենի հետ զայիս էր այն եղբակացութեան, որ այդ երեքի միջեւ, եթէ մէկը կայ, որ շատ թէ քիչ մարդ է, ապա այդ Բեն Արրհամարնն է:

Թուրք բժիշկը մի օր Ջէյնին առաջարկեց իր քարտուղարուհին դառնալ, եւ խոստացաւ կրկնակի վճարել, քան վճարում է Պարոն Արրհամարնը: Ջէյնը նայեց թուրքի պղտոր աչքերին եւ սարսուռ զգալով գլուխն օրօրեց բացասաբար:

Այդ օրերին էր, որ թուրք բժիշկը մի բան արեց, որը խորտակեց նրան ե՛ւ նիւթապէս, ե՛ւ քարոյապէս:

Թուրք բժիշկը յաճախ էր լինում Գոլդբերգինց տանը: Նա առանձին ուշադրութիւն էր յատկացնում Տիկին Գոլդբերգին, ինչպէս նաեւ Գոլդբերգին ութ տարեկան տղային՝ Սամին, որին իբր թէ «սիրում էր հարազատ որդու պէս»:

Մէկ անգամ, երբ Սամ Գոլդբերգը զպրօցից տուն էր գառնում, գէմուղէմ եկաւ բժիշկ Մամէդ Թիւրքուն:

-- Հալօ, Սամ, - ցնծութեամբ նրան ողջունեց Թիւրքուն:

-- Օ, բարեւ, լսելի Մամէդ, - անմեղութեամբ եւ ուրախութեամբ բարեւեց Սամը:

-- Սամ, - ասաց թուրք բժիշկը, - ես քեզ ուզում եմ հիւրասիրել:

-- Ինչ լաւ, - ուրախացաւ Սամը:

-- Ի՞նչ ես ուզում ուտել:

-- Պաղպաղակ, անկէ Մամէդ:

Թիւրքուն Սամին տարաւ մի օտաջնակարգ սրճարան, այնտեղ նրան Հիւրասիրեց պաղպաղակով եւ կոկակոլայով եւ յետոյ առաջարկեց գնալ իր բնակարանը տեսնելու, ուր նա մենակ էր ապրում:

Այլեւս մութ էր, որ Սամը տուն եկաւ: Նրա մայրը նրան յանդիմանեց ուչ տուն գալու համար, իսկ Սամը լաց եղաւ եւ ամէն ինչ պատմեց մօրը: Թիւրքուն անպատուել էր նրան եւ

սպառնացել սպանել նրան, եթէ նա իր Հօրը կամ մօրը պատճելու լինէր այդ մասին:

Երբ Գոլգրեբը տուն եկաւ, նրա կինն նրան պատմեց Սամի Հետ պատահածի մասին, Գոլգրեբը կատաղեց:

— Ես շուտուանից աչք ունէի այդ անպէտք արարածի վրայ: Նա ոչինչ չի անում եւ միլիոններ է ստանում «Արքհանսին» ընկերութիւնից: Հիմա պատե՛հ առիթ ստեղծուեց, որ ես նրա ձեռքից յետ խլեմ այդ միլիոնները եւ միաժամանակ դուրս անեմ «Արքհանսին» ընկերութիւնից:

— Իսկ տղայիդ կրած անպատուութի՞ւնը: Իսկ մեր պատի՞ւրը: — անուսնուն զգուանքով նայեց Տիկին Գոլգրեբը:

Գոլգրեբը մի քովէ շփոթուեց, բայց վերջում արդարացաւ.

— Եթէ սպանեմ նրան՝ ցմահ բանտարկութեան դատաւճիտ կը ստանամ, եւ Սամի կրած անպատուութիւնը կը մնայ նոյնը: Ի՞նչ Հաշիւներով այդ թուրքը մեր ընկերութիւնից մինչեւ Հիմա ստացել է ձօտ երեք միլիոն դոլար: Ես Սամի անունից դատ կը բացեմ նրա դէմ, այդ երեք միլիոն դոլարը կը գրաւեմ յօգուտ Սամի եւ նրան էլ ամենաքիչը տաս տարուայ բանտարկութեան կը դատապարտեմ: Ես մարդիկ ունեմ այդ անելու...

Այդպէս էլ եղաւ: Սամի փաստաբանը մի շքեղ ճառ խօսեց եւ կարողացաւ դատաւճիտը յօգուտ Սամի արձակել տալ: Ինքը Սամը դատարան էր կանչուել որպէս թուրքի կատարած քստմնելի արարքի զո՛հ:

Պատարանը վճռեց Մամէդ Թիւրքուի ամբողջ ունեցուածքը բռնագրաւել յօգուտ Սամի՝ որպէս վնասուց Հատուցում եւ միաժամանակ թուրքի դէմ տասնհինգամեայ բանտարկութեան վճիռ արձակեց: Այդ բոլորը կատարուեց շատ արագ, եւ շատ զաղտնի, այնպէս որ, Հասարակութեանը զաղտնի մնաց տեղի ունեցած զգուելի դէպքը: Այլ կերպ, «Արքհանսին» ընկերութեան բարոյական վարկը կ'ընկնէր Հասարակութեան աչքին եւ թերեւս ազդէր «Ջարմ» դեղի սպառման վրայ:

Թուրքին մէջտեղից վերացնելուց յետոյ, «Արքհանսին» ընկերութեան տէրերը դարձան Հայր եւ որդի Գոլգրեբները եւ Բեն Արքհանսընը: Արքհանսընն թէեւ ընկերութեան ընդհանուր կառավարիչն էր, այսինքն՝ այդ ընկերութեան շարժիչ ուժը, բայց նորից երբեմն-երբեմն, ինքն իրեն անբաստանում էր.

«Ի՞նչ ես անում, Բեն Արքհանսըն, Հասարակ Զուր ես ծախում եւ միլիոններ դիզում: Բա, մե՞ղք չէ այդ ժողովուրդը...»:

Մի անգամ նա Համարձակուեց եւ Գոլգրեբին նոյնն ասաց: Գոլգրեբը չքարկացաւ, այլ, ընդհակառակը, ձեռքը դրեց նրա ուսին եւ Հանգստացրեց.

— Մենք ոչ ոքի չենք խաբում, Բեն, մենք չենք ասում, թէ մեր ծախած «Ջարմը» անմահական Զուր է, որ ով խմի՝ էլ չի մեռնի: Աէ, մենք այդ չենք ասում: Մենք ասում ենք, թէ դեղ ենք ծախում: Եւ իրապէս, մեր «Ջարմը» դեղ է եւ ոչ Հասարակ Զուր: Մեր «Ջարմի» մէջ մենք ասպիրին ենք դնում: Իսկ ասպի-

րինը արդէն դեղ է ու դեղ: Յետոյ էլ մենք մեզաւոր չենք. որ ծախում է մեր «Ձարմը»: Եթէ չօգնէր, չէր ծախուի: Ուրեմն օգնում է: Թերեւս, իրապէս էլ, մեր «Ձարմը» հրաշալի մի դեղ է...

Սակայն Բեն Արրհամարներ, չնայած երբեմն երեւացող իր խղճի խայթոցներին շարունակում էր դիզել միջիտները եւ միւս կողմից «վայելել կեանքը»: Անշուշտ ոչ Տիկին Արրհամարնի Հետ, այլ իր քարտուղարուհիներին, եւ տասելի՝ Ջէյն Վըրներին Հետ, որի վրայ նա իրապէս սիրահարուել էր:

-7-

Սակայն մի օր արեւը խաւար երեւաց Բեն Արրհամարներին. երբ մի փաստաբան նրա գրասենեակը մտաւ եւ Ջէյն Վըրներին անուկից միանուազ մէկ միջիտն դուրս վճարելու եւ Հետազայում տարեկան երեք Հարիւր Հազար դուրսը՝ մինչեւ տասնութ տարի նորից վճարելու պայմանով մի պահանջադիր ներկայացրեց:

Պարոն Արրհամարնի եւ Ջէյնի իրաւաբանները երես երեսի եկան, պարզուեց, որ Ջէյնը յղի է Բեն Արրհամարնից եւ այդ մասին փոխանակ ուղղակիօրէն Բենին ասելու, վերցրել է իր մօրաքրոջն է ասել, որի մօտ նա ապրում էր եւ որք մի վճուկ կին էր: Այդ վճուկ կինն էլ, անմիջապէս կոահել է, որ փետուրու Համար մի գէր Հաւ է ընկել իր ձեռքն յանձին միջիտնատէր Բեն Արրհամարնի, անմիջապէս գործը յանձնել է մի փաստաբանի, որը կարող է եղից Հորթ պահանջել, եւ արդիւն է Ջէյնին աշխատանքի ղնալ:

Ջէյնի փաստաբանը Պարոն Արրհամարնի փաստաբանին բացատրեց, թէ իր պաշտպանեալը մէկ միջիտն միանուազ դուրս է պահանջում իր յղիութեան Համար, որպէս վնասուց Հատուցում: Յետոյ նա տասնութ տարի շարունակ, տարեկան երեք Հարիւր Հազար դուրս է պահանջում ծնուելիք երեխայի աճեցման եւ դաստիարակութեան Համար:

Պարոն Արրհամարնի փաստաբանը խորհրդակցելով իր պաշտպանեալի Հետ, եկան այն եզրակացութեան, որ Հարցը փոխադարձ զիջումներով կարելի է կարգադրել, առանց դատու դատաստանի եւ այդպիսով փակել խնդիրը:

Սակայն Ջէյնի փաստաբանը չհամաձայնեց. նախ Հարցի այդպիսի կարգադրութեամբ ինքը պիտի նիւթապէս վնասուէր մեծապէս, եւ երկրորդ էլ, ցանկանում էր Հարցի լուծումը պաշտօնական դարձնել եւ ոչ մասնաւոր կերպով այն փակել:

Եւ այդպէս Հարցը գնաց դատարան:

Պարոն Արրհամարնի պահանջով դատը տեղի ունեցաւ դռնփակ: Սակայն Ստոան ներկայ էր, եւ բարկութիւնից ցանկանում էր իր անհաւատարիմ ամուսնուն Հէնց դատասրահում կտոր-կտոր անել, այն բառի Համար, որ «փոխանակ ծնուելիք

երեխան իր Հետ պատրաստելու, զնացել է ինչ-որ շիկահեր պ...ի Հետ է պատրաստել): Սառան սպառնում էր տուն դարձին սպանել Հէք ԱրրՀամսրնին կամ առնուազը այնքան ծեծել, որ մի քանի օր Հիւանդ պառկէր:

Դատարանում, Սառան մի քանի անգամ փորձեց յարձակուել գեղեցիկ Ջէյնի վրայ, որովհետեւ նա «կարողացել է իր կողմից այնքան շատ սիրուած իր ամուսնուն իր ձեռքից խլել եւ ընտանեկան մի բոյն քարուքանդ անել»:

Պէտք է ասել, որ դատարորը ատում էր պարոն ԱրրՀամսրնին, քանի որ նրա պառաւ կինը օրական տաս դոլարի «Ջարմ» ղեղ էր խմում երիտասարդանալու համար. բայց քանի դնում էր, այնքան ծերանում էր: Սակայն պառաւը յոյսը չէր կորցնում, որովհետեւ «Ջարմ» ղեղի գրքոյկում գրուած էր, որ ճարը շատ անգամ յանկարծակի է գործում:

Դատարորը Ջէյնի ներկայացրած անբաստանութիւնը ընդդէմ ԱրրՀամսրնին իր սրտին մօտիկ էր ընդունում, ուստի եւ վաւերացրեց այն պահանջները, որ Ջէյնի փաստարանը ներկայացրել էր: Եւ դատական քարտուղարը հատ-հատ բաներով բարձր ձայնով կարդաց, թէ Բենիամին ԱրրՀամսրնը պարտաւորում է տասնութ տարի շարունակ տարեկան վճարել երեք հարիւր հազար դոլար ծնուելիք երեխայի անձան եւ դաստիարակութեան համար, մինչեւ նրա շափահաս դառնալը:

Իսկ այժմ, մէկ շաբաթուայ ընթացքում միանուազ վճարել մէկ միլիոն դոլար, վասն յղիութեան եւ հատուցումն վնասուց...

Դատական քարտուղարը ղեռ շարունակում էր կարդալ դատական վճիոր, երբ Տիկին Սառան ինչ-որ ծանր տնքաց եւ գլուխը հակեց կրծքին:

Երբ մարդիկ վրայ հասան, Սառան ոչ եւս էր արդէն:

Կնոջ կորուստի նկատմամբ իր վիշտն արտայայտելու համար Բեն ԱրրՀամսրն թաշկինակը տարաւ աչքերին եւ Հեկեկաց:

Երբ նրան շրջապատեցին եւ սկսեցին մխիթարել, նա ասաց, թէ Սառան լաւ կին էր եւ նրանք սիրային շատ ամուր կապերով կապուած էին միմեանց:

-- Առանց Սառայի իմ կեանքն էլ կեանք չի լինի, այլ՝ տառապանք, - ասաց նա արցունքների միջից:

ԱրրՀամսրնը նոյնիսկ սպառնաց ինքնասպան լինել. երկընթում միանալու համար իր սիրելի կնոջը:

Բեն ԱրրՀամսրնը քանի հազուստավաճառ էր, շատ պարզ ու շիտակ մարդ էր, բայց երբ միլիոնատէր դարձաւ, դարձաւ Հիսյոկրիտ եւ սկսեց ճշմարտութիւնը փոխարինել սուտով եւ սուտը ճշմարտութեամբ:

Նէք Սառայի թաղման եւ յուղարկաւորութեան հարցերը կարդաղրելուց յետոյ, Բենը տուն դարձաւ:

Արդէն իր պալատանման տանն էր, երբ ԱրրՀամսրնը յիշեց Ջէյնին եւ առանց վայրկեան կորսնցնելու վերջրեց հեռախօսի լսափողը եւ սկսեց խօսել իր դեռատի սիրուհու Հետ:

-- Հալօ, Ջէյն...

-- «Հալօ, Քեն»:

-- Ինչպէ՞ս ես, Ջէյն...

-- «Մի կերպ, Քեն»:

-- Ջէյն, ես սիրում եմ քեզ: Այդ դու գիտես:

-- «Գիտեմ, Քեն, եւ ես էլ քեզ եմ սիրում»:

-- Լաւ աղջիկ, գիտես ի՞նչ եմ մտածում:

-- «Ոչ, Քեն»:

-- Ես ասում եմ, Ջէյն, որ Հիմա որ այլեւս Սառան չկայ, ինչո՞ւ մենք չամուսնանանք եւ երջանիկ դառնանք: Երբ մենք ամուսնանանք, մեր երեխան Հայր կ'ունենայ եւ իմ միլիոնները այլեւս չեն կիսուի: Իմ Հարստութիւնը ամբողջովին քեզ կը լինի, ինձ եւ մեր անևճան երեխային: Թող կորչի քո վճուկ ճորաքոյրը, բայց եթէ նա ցանկանում է՝ կարող է մեզ Հեա ապրել: Ի՞նչ ես ասում, Ջէյն:

-- «Ասում եմ, Քեն, ե՞րբ մենք պիտի ամուսնանանք...»:

-- Երկու կամ երեք օրից յետոյ: Սառային Թաղեցիք, թէ չէ, մենք կարող ենք ամուսնանալ:

-- «Օ, Քեն...»:

-- Այո, Ջէյն: Բայց առայժմ վճուկ ճորաքոյրիդ ոչինչ մի ասա...: Մենք նրան կը յայտնենք այդ մասին, երբ արդէն քաղաքապետարանում ամուսնացած կը լինենք...

-- «Օ, Քեն...»:

-- Այո, մեղքս:

Երբ ԱրրՀամարնը Հեռախօսը փակեց, բացեց մեռքերն այնպէս, որ անում են պարողները, եւ սկսեց «Չաչա» պարել. երգելով եւ ցատկոտելով.

-- Մէկ, երկու, երեք... Չա, չա, չա... Մէկ երկու, մէկ երկու... Չաչա, չա... Չաչա, չա... Ռեդճ Ասոա... Ռեդճ Սաոա... Չա', չա', չա', չաչա', չա'...

Ռաշինկերմ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ



Փ. Ճերանեան

Եթէ

Եթէ, աշխարհի ճանապարհները քեզ չտանին,
անհասցի մեկնած ուղևորի պէս,
քեզ պիտի հասցնեն աստղերու ն, յուսնին:

Եթէ, աչքերս ի սպառ բողբոջեն քաղցր հայելացքը,
մութ աչքերուս մէջ՝ աչքեր շարունակ
քեզ պիտի յայտնեն:

Եթէ, չլսեմ շշուկը անգամ,
լեզուիդ քաղցրութեամբ օծուած բառերս
շուրթերու վրայ՝ մեղուներս պէտ պիտի բուսնանան:

Ձեռքերս օտարի ձեռքերու ն մեկնած՝
քեզ գրկեն, մնան...

2002, Պէրուք

ՎԱԽԸ...

Քեզի հանդիպելէ ետք
դիւ համակից վախը:

Քեզ պարուրող գիշերաան
պահեսցի յուսի նը:

Էրբեմնի աստ օտներուդ ճամբուն,
աչքերուս
նստաւ գոյնը իրիկնամերձ ժամերուն:

Իսնալաչնիդ շաւիղով,
սարիները դիւ տարին
այդ հեռուս որ աստղէն ալ անդին:

Արեւն աշխարհ ջրօրցաւ,
դաւն չղարձար տակաւին...

2001, Պէրուք

* * *

Ո՞վ յուզեց
մերթ վաճուղ, մերթ կանչուղ
այդ մոմի ալեակը:

Ո՞վ վառեց
իր մութին սիւ տանող
այդ լույսի շուրիղը:

Ո՞վ աեռու
արտիս մէջ մոխրացուղ
կրակիդ բոցերը:

Ո՞վ լսեց
հեռացող բալլերուդ
իմ սիրտը շլլուղ երկձալներ...

2001, Պէրուք

* * *

Տարիներու մշուշին մէջ երբ հայեացրդ կ'որոնեմ,
դուն կը ծաղկին Օգոստոսի վարդին պէս.
Կը յայտնուիս աշնանարեր իմ ձամբուս,
զարնան վերջին ծաղկին պէս...

2002, Պէրուք

ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆ

Եթէ խորհիս
թէ հողն է լոկ մեկնակէտը,
ուրկէ օր մը թեւեր առած
պիտի թռչիս ատողերն ի վեր,
դուն կը գտնես բու կորուսեալ դիմագիծը
ու կ'ըմբռնես թէ ինչու
Լերշալուսնեաց հայոց արքան,
անյուշ բերդի նկուզին մէջ՝
ամէն անգամ երբ կը կանգնէր
հողին վրայ Հայաստանի,
կը շողային աչքերը կոյր, պայծառ ու թեամբ լուսածագի...

ՀՈՒՔՍ

Երբ կը բալեմ առանձին քիչ մ'արեւոտ այս ճամբէն,
 թափառայում ու տարտամ իմ քայլերուս համընթաց,
 ինձ նման լո՛ւռ, անտրտու նշ, ստուերներէն ասրու բեր,
 կը սահի շուքս կարծես հեռուներուն լուսաբաղձ:

Իր մութին մէջ կայ ժպիտն հիւսիսափայլ աստղիկին,
 զոր կը բաշխէ ան տակաւ ծաղկանց՝ շրթո՛ւնք առ շրթունք,
 մինչ քայլերուս հապշտապ կը հետեւի անմեկին
 ինչպէս տղեկ մը երկջուտ կառչած մօրը քղանգքին...

Այսպէս, գուցէ տարիներ պիտի բալենք միասին
 հալածական, հալածո՛ղ ով իմ շուքս թրվոուն,
 դէպի լրումն այս ճամբուն, դէպի հրաշքն ուրեւին:

Ու երեկոն երբ իջնի, երապի գոչն աչքերուն,
 գուցէ միակն ըլլաս դուն իմ խորհուրդիս չափ անհաս,
 գաս ու կորուսող անդարձ գլխուս վերեւ շշնջա՛ս...

*

* *

Երբ քամին երգն իր յանկարծ աւարտեց՝

Հայեուցքին մէջ՝
 անբացայայտ վայրեր կային:

Լեզուին վրայ՝
 չյօրինուած երգեր կային:

Փամերուն մէջ՝
 չժամանած պահեր կային:

Ու ջութակի լարերուն վրայ՝
 արցունքի տաք շիթեր կային...

* * *

Ո՞վ յուղեց
մերթ վանող, մերթ կանչող
այդ մոմի այեակը:

Ո՞վ վառեց
իր մութին դիս տանող
այդ չոչոսի շախլը:

Ո՞վ տեսաւ
արտիս մ'չ մոխրացող
կրակիդ բոցերը:

Ո՞վ չսեց
հեռացող քայներուդ
իմ սիրտը չլքող երկձայնը...

2001, Պէրուր

* * *

Տարիներու մշուշին մ'չ երբ հայեացքդ կ'որոնեմ,
դուն կը ծաղկիս Օգոստաի վարդին պէս.
կը յայտնուիս աշնանարեր իմ ճամբուս,
գարնան վերջին ծաղկին պէս...

2002, Պէրուր

ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆ

Եթէ խորհիս
բէ հողն է լոկ մեկնակլտը,
ուրկլ որ մը թեւեր առած
պիտի թոչիս աստղերն ի վեր,
դուն կը գտնենք րու կորուսեալ գիմպիծը
ու կ'ըմբռնենք թէ ինչու
Արշակունեաց հայոց արլան,
անյուշ րերդի նկուղին մէջ՝
ամէն անգամ երբ կը կանգնէր
հողին վրայ Հայաստանի,
կը շողային սպերը կոյր, պայծառութեամբ չուսածագի...

ՀՈՒՔՍ

Երբ կը քայեմ առանձին քիչ մ'արևուտ այս ճամբէն,
 թափառայած ա տարաամ իմ քայլերուս համընթաց,
 քնն ճման լո՛ւր, անտրտանջ, սառն երներէն տարուբեր,
 կը սահի շուքս կարծես հեռուներուն յուսաբաղձ:

Իր մութին մէջ կայ ժպիտն հիւսիսափայլ առողիկին,
 չոր կը բաշխէ ան ասկաւ ծաղկանց՝ շրթո՛ւնք առ շրթունք,
 մինչ քայլերուս հապշաապ կը հետեւի անմեկին
 ինչպէս տղեկ մը երկչոտ կառչած մօրը քղանցքին...

Աչսպէս, գուցէ տարիներ պիտի քայենք միասին
 հսկածական, հալածո՛ղ ով իմ շուքս թրվուն,
 դէպի յրումն այս ճամբուն, դէպի հրաշքն արեւին:

Ու երեկոն երբ իջնէ երապի գոչն աչքերուն,
 գուցէ միակն ըլլաւ դուն իմ խորհուրդիս չափ անհաս,
 գաս ու կորուսող անդարձ գլխուս վերեւ շշնջա՛ս...

*
* *

Երբ քամին երգն իր յանկարծ աւարտեց՝

Հայեացքին մէջ՝
 անբացայայտ վայրեր կային:

Լեղուին վրայ՝
 չչօրինուած երգեր կային:

Մամերուն մէջ՝
 չժամանած սպիտակ կային:

Ու ջութակի լարերուն վրայ՝
 արցունքի տաք շիթեր կային...

NOSTALGIA

Կը թալէինք
 տարրեր յուսարուցերէ մեկնած,
 տարրեր մթու թիւ ններու տաճմանուած,
 մատներս մատներուդ մէջ բացարժարժ մոմեր:

Այն ժամանակ,
 սուլոր էինք ասագերն համրել միասին.
 սիրող ամէն նայուածքի մէջ
 մեր աչքերուն բոցը կար:

Չէինք հարցներ մենք մեզի,
 երբ այլևս չեն սիրեր,
 իրենց արդեօք թէ սիրածի կուրծքին տակ
 մեծ սէրերը բարախել կը դադրին...

Արեւը կ'անհետանար
 մեր մանկութեան չափ հեռաւոր հորիզոնին,
 գիշերուան մէջ աչքերուդ
 րուտերսս ջերմ արձագանդը փնտտելու:

ՓԱՆՈՍ ԶԵՐԱՆԵԱՆ

2000, Պէյրուք

4. Մարզաբեան

ՎԱԶԵՄ... ՉՈՒՇԱՆԱՄ

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՈՐՈՒ

(Երևանի սեննակը: Բեմը գրեթէ լեցուած է մեծ ու պզտիկ պա-
յուսակներով):

ՅԱԿՈՐ (րեմը բացուելուն՝ ազած-կեցած՝ պայուսակներուն կը նա-
յի: Կր փորձէ վերցնել, չի կրնար).- **Աս ի՞նչ է: Մեր տի-
կինը Երևանը չայկեր է Հետք Ամերիկա կը տանի:**

(Մարիամ կը մտնէ՝ Բանի մը հատ հաստափոր Եկարճե-
րու պարմներով: Ընդհանրապէս քուսակն եւ գրութիւններ
ունիճ կողմերուն վրայ):

(Յակոբ ուշադիր կը նայի Մարիամին):

ՄԱՐԻԱՄ (Նկատելով Յակոբի յատուկ նայումը).- **Ի՞նչ կայ: (Այ-
պումները գոյց տալով): Մեր ընտանեկան նկարներն են:**

ՅԱԿՈՐ.- Գիտե՛մ:

ՄԱՐԻԱՄ.- Ինչո՞ւ այդպէս կը նայես:

ՅԱԿՈՐ.- Ինչպէ՞ս կը նային:

ՄԱՐԻԱՄ (Յակոբին նայումը ընդօրինակելով).- **Այսպէ՛ս: (Այ-
պումի մը ընտրութիւնը կ'ընէ եւ կը սկսի դանդաղօրէն
թղթատել):**

ՅԱԿՈՐ.- Անոչի ալպո՞մն է:

**ՄԱՐԻԱՄ.- Այո՛: Ինչ անուշիկ է: Նայէ առաջին ժպիտը: Առա-
ջին մատով ցոյց տալը: Ինձի՛ նայիլը:**

ՅԱԿՈՐ.- Ինձի՛ նայիլը: Ինչ երիտասարդ էի, Հա՛:

ՄԱՐԻԱՄ.- Դուն բեզմո՞վ Հիացած ես, թէ Թոռնիկովդ:

**ՅԱԿՈՐ.- Թոռնիկովս անշուշտ: Բայց ինչ բախտաւոր տարի էր:
Ամբողջ գործարանը ինձինքը Յակոբին վստահեցան:**

ՄԱՐԻԱՄ.- Ինձինն՞ր Յակոբին, թէ...

ՅԱԿՈՐ.- Մարիա՛մ, չսկսիմք:

**ՄԱՐԻԱՄ.- Ախր, ինչո՞ւ պէտք: Տասնութ տարեկան էիր, երբ
ներգաղթեցինք: Համալսարանի ուսում ստացանք:
Փաղուն ինձինքը էիր: Լաւ գործ ունէիր, ինչո՞ւ ան-
պայման կոմունիստ պիտի դառնայիր:**

**ՅԱԿՈՐ.- Այն ժամանակ, ամէն մարդ կոմունիստ կը դառնար,
որ ապրէր:**

ՄԱՐԻԱՄ. - Բայց դուն պապէն աւելի պապական եղար: Այդ հրէշին նկարը պատէն կախեցիր: Ազգային երգերը լսել չէիր ուզեր: Եւ ամէնէն անընդունելին՝ Թոռնիկիդ կնո՛ւնքը արդիւեցիր:

ՅԱԿՈՐ. - Ամբողջ գործարանի տնօրէնն էի, ինչպէ՞ս կրնայի Թոռնիկս կնքել տալ:

ՄԱՐԻԱՄ. - Հապա աղջկադ անունին կոհիւր, ելար պարտիայի հերոսուհիի անուն դնել տուիր իրեն: Նոյնիսկ Հայկական դպրոց չէիր ուզեր դրկել պինք:

ՅԱԿՈՐ. - Մարիա՛մ, անցած-դացած բաներ են, մոռցի՛ր:

ՄԱՐԻԱՄ. - Ինչպէ՞ս մոռնամ: Դեռ այսօրուան պէս կը յիշեմ. աղջիկդ օր մը տուն եկաւ արցունքոտ աչքերով: Ուսուցիչը Հարցուցած էր՝ «Ո՞վ գիտէ Սուրբ Հոփիսիմէի մասին», աղջիկդ ըսած էր՝ «Տիկին Հոփիսիմէն Վարսիկ մօրայի մաման է, մեր Հարեւանն է»: Ամօթէս գետնին տա՛կը անցայ:

ՅԱԿՈՐ. - Լա՛ւ, դուն այն ատեն գեանին տակը անցար, ես հիմա՛ անցայ: Հաւատարեցա՞նք:

ՄԱՐԻԱՄ. - Ոչ, չհաւատարեցանք: Էօֆ, ա՛յ ժամանակ չունիմ հետդ խօսելու: Ես մեր բնելիքներու ցանկին վրայէն պէտք է անցնիմ: (Թուրք ու մատիտ կ'ստնէ եւ ցանկին վրայէն կ'անցնի): Ա՛յս՝ եղաւ, ա՛յս ալ եղաւ, ա՛յս ալ եղաւ: Տունէն՝ օղակայան: (Մատիտի շարժումով մը): Եղա՛ւ: Օղակայանէն՝ օղանաւ: (Մատիտի շարժումով մը): Եղա՛ւ:

ՅԱԿՈՐ (ապշած կը նայի պայուսակներուն) .- Ի՞նչը եղաւ: Կը նախիմ այս սնտուկներուն ու կը սարսափիմ: Այս բոլորը ո՞վ պիտի շարկէ:

ՄԱՐԻԱՄ (ժպտուն) .- Ո՞ր օրուան մարդն ես:

ՅԱԿՈՐ. - Մարիա՛մ, տարիքս չե՞ս գիտեր միթէ:

ՄԱՐԻԱՄ. - Ո՞ր մէկ տարիքդ: Մօ՞րդ ըսածը, հօ՞րդ ըսածը, թէ քո՛ւ ըսածը:

ՅԱԿՈՐ. - Քառասունհինգ տարի է ամուսնացած եմք, Հաշուեյարդարդ նո՞ր բռնեց:

ՄԱՐԻԱՄ. - Ինչու կը մոռնա՞մ: Զիս ուզելուն օրը, մայրդ՝ «Յակոբս, ճի՛շդ ձեր աղջկան տարիքին է» ըսաւ: Նշանդրէքի օրը. Հայրդ՝ Հինգ տարով միայն քեզ պզտիկացուց: Ո՞վ ճի՛շդ կը խօսէր, ի՞նչ գիտնամ:

ՅԱԿՈՐ. - Ես քեզի գոնէ սուտ չեմ խօսած, միշտ ալ ըսած եմ, որ քեզմէ միայն տասնհինգ տարի մեծ եմ:

ՄԱՐԻԱՄ. - Այս ի՞նչ նոր տարիք է...: Այս մէկ օրուան մէջ հինգ տարի ալ մեծցար, որ սնտուկնե՞րը չվերցնես:

ՅԱԿՈՐ. - Կատակ ըրի, Մարիա՛մ: Քեզմէ միայն տասը տարի մեծ եմ: (Պայուսակներն մէկը կը փորձէ վերցնել): Այս ի՞նչ է, քա՞ր կը տանիս Հետդ: Ո՞վ պիտի շարկէ ասոնք:

ՄԱՐԻԱՄ. - Մի՛ վերցնեք, մէջքդ կը կոտրես: Ես ամէն ինչ կարգադրեք եմ:

ՅԱԿՈՐ. - Մէյ մը ըսէ, այս կարգադրութիւնդ լսեմ:

ՄԱՐԻԱՄ. - Տունէն մինչեւ օդակայան, Վարսիկի տղան կ'օգնէ:

ՅԱԿՈՐ. - Համբարձու՞մը, էջմիածնէն մարդը պիտի գայ մեզի՞ օգնելու:

ՄԱՐԻԱՄ. - Հայր Համբարձում: Նոր վարդապետ ձեռնադրուեցաւ:

ՅԱԿՈՐ. - Ո՞րք վարդապետ:

ՄԱՐԻԱՄ. - Հայր Համբարձումն ալ Ամերիկա պիտի երթայ կրօնական ժողովի: Այնպէս կ'ընենք, որ նոյն օրը ճամբորդենք:

ՅԱԿՈՐ. - Է, այդ խեղճ վարդապետը ինչպէ՞ս պիտի շարկէ այս բոլորը:

ՄԱՐԻԱՄ. - Վարդապետները չեն շարկեր, միշտ շարկողներ կ'ունենան:

ՅԱԿՈՐ. - Երանի ես ալ վարդապետ ըլլայի:

ՄԱՐԻԱՄ. - Գուն վարդապետ ըլլայիր, ո՞վ կոմունիստ պիտի ըլլար:

ՅԱԿՈՐ. - Է, լա՛ւ: Օդակայանին մէջ մինչեւ ստուգման վայրը ո՞վ պիտի շարկէ:

ՄԱՐԻԱՄ. - Ուուտոն:

ՅԱԿՈՐ. - Ուուտոն ո՞վ է:

ՄԱՐԻԱՄ. - Հօրեղբօրս Թոռան տղուն Հարսին քրոջ քեռիին եղբայրը:

ՅԱԿՈՐ. - Անո՞ր ուրկէ գաար:

ՄԱՐԻԱՄ. - Քեզի ինչ: Իմացայ, որ օդակայան կ'աշխատի: Անցեալ օր Հեռաձայնեցի, պատմեցի, որ Անոյշը մեզ Հրաւիրած է Ամերիկա: Այնքան ուրախացաւ: Մի՛չդ այդ ուրախութեան ատեն խնդրեցի, որ մեզի օգնէ: Ըսի, «Ուուտո՛ ջան, մեր Յակոբին մէջքդ կը ցաւի»...

ՅԱԿՈՐ. - Վարսիկին ըսիր՝ ոտքերս կը ցաւին, Ուուտոյին ըսիր՝ մէջքս կը ցաւի: Աստուած սիրես, Մարիա՛մ, միայն ուղեղիս չղպնաս, յետոյ չեն ձգեր Ամերիկա մտնեմ:

ՄԱՐԻԱՄ. - Ուղեղիդ կոմունիստները ղպան, ինձի բան չմնաց:

ՅԱԿՈՐ. - Միայն թէ միակտու՞ր ուղեղով Ամերիկա երթամ, որ տեսածս լաւ մը վայելեմ:

ՄԱՐԻԱՄ. - Կ'երթա՛ս, կ'երթա՛ս, ես ուղեղիդ պէտք պիտի ունենամ Ամերիկա:

(Կր սկսի սեղանին վրայի տուփերը եւ Յուլիաները կարգի դնել):

(Յակոբ ապշած կեցած՝ Լ տուփերուն կը Յայի եւ մերթ ընդ մերթ ձեռքերը ոտքերուն կը գարնէ):

ՄԱՐԻԱՄ (կը ճկատէ ամուսնոյն շուարած վիճակը).- **Ի՞նչ շուարած-կեցած ես, տուփերը կարգի՛ դիր:**

(Յակոբ կը մօտենայ ու տուփ մը կը վերցնէ):

- ՄԱՐԻԱՄ.** - *Ջգոյշ, ատիկա քրիսթա՛ւ է, չկոտորես:*
(Յակոր պգուշութեամբ վար կը դնէ քրիսթալը: Աւրիշ տուփ մը կը վերցնէ):
- ՄԱՐԻԱՄ.** - *Ատ ալ խաչքար է, ձեռք չտա՛ս:*
(Յակոր կը մօտեմայ նրորոյ տուփի մը):
- ՄԱՐԻԱՄ.** - *Ատ ալ սուճուխ է, չճգմե՛ս:*
- ՅԱԿՈՐ.** - *Լաւ, ի՞նչ ընեմ հասպա:*
- ՄԱՐԻԱՄ** (պզտիկ տուփ մը ցոյց տալով). - *Այդ մէկը վերցուր, ատոր տեղը հոն է:* (Հեռախօսը կը հնչէ: Կը վերցնէ ընկալուչը): *Հա՛, Վարսի՛կ ջան, հիմա՛ վար կ'իջնես:* (Ընկալուչը տեղը կը դնէ):
- ՅԱԿՈՐ.** - *Նորէ՛ն, Վարսի՛կ, հիմա ի՞նչ կայ:*
- ՄԱՐԻԱՄ.** - *էջմիածին պիտի երթամ:*
- ՅԱԿՈՐ.** - *Կաթողիկոսէ՛ն ալ նուէր պիտի առնես:*
- ՄԱՐԻԱՄ.** - *Քեզի ի՛նչ: Նայէ՛ բանի մը ձե՛ռք չտաս, մինչեւ որ ես գամ:*
- ՅԱԿՈՐ.** - *Տիկին Մարիամ, շուարեցա՛յ: Մէյ մը կ'ըսես կարգի դիր, մէյ մըն ալ կ'ըսես բանի ձեռք չտամ: Ի՞նչ ընեմ:*
- ՄԱՐԻԱՄ.** - *Սո՛ւրճ իսմէ եւ թե՛րթ կարդա:*
- ՅԱԿՈՐ.** - *Թերթը վերջացուցի:*
- ՄԱՐԻԱՄ.** - *Նորէ՛ն կարդա:*
- ՅԱԿՈՐ.** - *Երկու անգամ կարդացի:*
- ՄԱՐԻԱՄ.** - *Երրորդ անգամ ալ կարդա՛:*
- ՅԱԿՈՐ.** - *Այդքան ալ հետաքրքրական չէ:*
- ՄԱՐԻԱՄ** (սեղանին վրայէն Աւետարանը կ'առնէ). - *Ա՛ն, Աւետարան կարդա՛:*
- ՅԱԿՈՐ** (կ'առնէ Աւետարանը եւ ամփոջապէս մէկդի կը դնէ):
- ՄԱՐԻԱՄ** (Դուրս կ'ելլէ, նորէն ներս կը մտնէ). - *Մոռցա՛յ:*
- ՅԱԿՈՐ.** - *Հիմա ի՞նչ:*
- ՄԱՐԻԱՄ.** - *Անոյշին պէպէքութեան նկարը տար եւ մեծցնե՛լ տուր:*
- ՅԱԿՈՐ.** - *Նատ լաւ: Ի՞նչ չափով:*
- ՄԱՐԻԱՄ.** - *Աման, խե՛ղքդ գործածէ:*
- ՅԱԿՈՐ.** - *Ոեկք մնա՞ց, որ գործածեն: Դո՛ւն ըսէ ի՞նչ չափով կ'ուզես որ մեծցնեմ:*
- ՄԱՐԻԱՄ** (երկու ձեռներու բուքմատով եւ ցուցամատով իր դէմքը կը շրջանակէ). - *Ասանկ դէմքի մը չափ: (Դուրս կ'ելլէ, նորէն ներս կը մտնէ): Յակո՛ր, մոռցայ յիշեցնել, մեր ընեկիքներու ցանկը դրած եմ սեղանին: Կարգա՛, ինչ որ կրնաս ընել այդ ցանկէն, ըրէ՛:*
- ՅԱԿՈՐ.** - *Կը վստահի՞ս:*
- ՄԱՐԻԱՄ.** - *է՛ճՖ, ժամանակ չունիմ կատակելու, վազեմ՝ շուշա՛նամ: (Դուրս):*

ՅԱԿՈՒ (Կը նայի դրան կողմը, պահ մը նստ)։— **Փնայ կարծեմ**։ (Կը մօտենայ սեղանին՝ դրուած երկա՛ր, իրարու փակած տասը էջ մը-յսակը կ'առնէ, կը նայի)։ **Մեր տիկինը ուղղակի խենթեցեր է, մարդ չէ մնացած, որ չէ Հրախրած**։ Այսքան մարդ ո՛ւր պիտի նստեցնենք։ Ի՞նչ պիտի կերցնենք, ծախսին տակէն ինչօ՞չ պիտի ելլենք։ (Յանկին վրայէն հանդիսատեսին ծանօթ քանի մը անուն կը կարդայ)։ **Ասոնք ովքե՛ր են, չեմ ճանչնար նոյնիսկ**։ **Ես այս ցանկին չեմ խառնուիր**։ (Յունկը կը դնէ սեղանին եւ սնտուկներէն մէկը կը փորձէ վերցնել)։ **Քա՛ր է, քա՛ր**։ (Իրոյսը ձեռքերուն մէջ կ'առնէ)։ **Ի՞նչ պիտի ընեմ, ինչ պիտի ընեմ**։ **Ուստո՛ն, Ուստո՛ն կրնայ փրկել զիս**։ (Կը մօտենայ հեռախօսի՞ն՝ ընկալուչը կը վերցնէ, երկու թիւ կը գարձնէ, կը կննայ։ Անկալուչը ետ տեղը կը դնէ)։ **Ձէ՛, ասիկա Ուստոյի գործը չէ**։ **Մուրա՛տը, Մուրա՛տը կրնայ օգնել**։ (Կը մօտենայ հեռախօսին, չի վերցրնել, կը կննայ)։ **Ձէ՛, ասիկա Մուրատինն ալ գործը չէ**։ (Աչքը կ'իյնայ Աւետարանին։ Իսնդագորէն կը մօտենայ, կ'առնէ Աւետարանը, կը նստի։ Պատահական էջ մը կը բանայ ու կը կարդայ)։ **«Ապաւինեցէ՛ք ինձի, զի ես եմ Ամենակալը»**։ (Անմիջապէս կը փակէ Աւետարանը ու տուփի մը վրայ կը դնէ։ Նորէն կ'առնէ եւ պատահական էջ մը կը բանայ ու կը կարդայ)։ **«Ինձի եկէ՛ք, զի ես եմ փրկութիւնը»**։ (Անմիջապէս կը փակէ Աւետարանը եւ ետ իր տեղը կը դնէ։ Կարճ պահէ մը նստ, վեր կը նայի, ձեռքերը կը տարածէ ու աղերսագիւն)։ **Տէ՛ր, կ'օգնե՛ս քու մուրած ինձիներին**։

ՄԱՐԻԱՄ (Ներս մտնելով)։— **Մոռցա՛յ**։

ՅԱԿՈՒ (տարածած ձեռքերը շուտ մը վար կ'առնէ եւ բարկութեամբ)։— **Ինչ որ մոռցար, մոռցի՛ր, գնա՛ ալիւս, ամօթ է, կաթողիկոսը սպասեցնել չեն տար**։

ՄԱՐԻԱՄ։— **Ի՞նչ կը պոռաս դուն ալ**։ **Ինչ որ մոռցեր էի, մոռցրնել տուիր**։ **Ոռհանոցի գործս վերջացուցի**։ **Ես զացի**։ (Բեմէն սրահ կ'իջնէ, քայլով դուրս կ'ելլէ եւ այդ ընթացքին կը խօսի հանդիսատեսներէն ոմանց հետ)։ **Էջմիածին կ'երթամ, դուք ալ չէ՛ք դար միասին աղօթելու**։ **Երթանք մեր մեռելներուն վրայ աղօթենք**։ **Մեռել չունի՞ք, ինչ երջանիկ էք**։ **Լաւ, ողջերուն համար աղօթենք**։ **Մեռել չունի՞ք, ինչ երջանիկ էք**։ **Լաւ, ողջերուն համար աղօթենք**։ **Ողջերը անլի պէտք ունին աղօթքի**։ **Երթանք ճամբան քիչ մըն ալ կը գրուցենք...**

(Նրաւշտութիւն մը եւ լոյսերը կը մարին)։

**ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ
ՏԵՍՄՈՆ ԱՌՍՏՈՆ**

(Նիւ Եորք: Վալիայենց յարկաբաժինը):

(Վր մտնեն Անոյշ, ձիմ, Յակոբ եւ Մարիամ):

ԱՆՈՅՇ (քարձրածայն).— *Մամ, Պանայ, եկանք:*

(Վալիա եւ Աերգէյ կողքի դուռնէն կը մտնեն):

ՅԱԿՈՐ.— *Ձեռքի պայուսակը դրան մօտ կը դնէ եւ ինքզինքը բազկաթոռի մը վրայ կը նետէ:*

ՃԻՄ.— *Հա՛յ, Տիկին Գարեան, Հա՛յ, Պարոն Գարեան:*

ՍԵՐԳԷՅ.— *Հա՛յ, ձիմ:*

ՎԱԼԻԱ.— *Հա՛յ, ձիմ, ինչպէ՞ս անցաւ:*

ՃԻՄ.— *Շա՛տ, շա՛տ հաճելի:*

ՍԵՐԳԷՅ (Յակոբին ու Մարիամին).— *Անոյշն ու ձիմը լաւ մը յոգնեցուցի՞ն ձեզ:*

ՅԱԿՈՐ.— *Մարդ այս երկիրը երիտասարդ ատեն պէտք է գայ, եւ ոչ թէ մեզի պէս վաթսուներ անցնելէ ետք:*

ՍԵՐԳԷՅ.— *Է՞, ըսէք նայինք, ո՞ւր գացիք, ի՞նչ տեսաք, ի՞նչ ըրիք:*

ՅԱԿՈՐ.— *Այս ինչ քաղաք է, ինչ արագութիւն, ինչ վազվզուք, ինչ թռչումը...: Ես յոգնած եմ, Մարիամ, դո՛ւն ըսէ ինչ ըրինք:*

ՄԱՐԻԱՄ.— *Ինչէ՞ր ըրինք: Ելանք երկինք, իջանք երկիր: Գետնին տա՛կը մտանք, յետոյ երեսը ելանք: Զուրին վրայէ՛ն անցանք, յետոյ տակէ՛ն անցանք: Վազեցինք, յետոյ նստեցանք: Մարդոց հետ քաղեցինք, ինքնաչարժերուն հետ մրցումի՛ ելանք: Այս քաղաքը քանի՛ յարկանի է. հարիւր յարկ գետնէն վեր, տասը հատ ալ՝ գետնին տակը: Վեր նայիս՝ գլուխդ կը դառնայ: Վար իջնես՝ սիրտդ փորդ կ'իյնայ:*

ՅԱԿՈՐ.— *Գացինք Չինաստան:*

ՃԻՄ ԵՒ ԱՆՈՅՇ (խնդայով).— *Չայնաթաուն:*

ՅԱԿՈՐ.— *Գացինք Գերմանիա...*

ՃԻՄ ԵՒ ԱՆՈՅՇ.— *Ճըրմընթաուն...*

ՅԱԿՈՐ.— *Գացինք Իտալիա...*

ՃԻՄ ԵՒ ԱՆՈՅՇ.— *Լիթըլ Իթըլի...*

ՅԱԿՈՐ.— *Գացինք Վիլէն-միլէն...*

ՃԻՄ.— *Միլէն չկայ, Պարոն Յակոբ, միայն Վիլըն կայ:*

ՅԱԿՈՐ.— *«Տաք շուն» կերանք...*

ՃԻՄ ԵՒ ԱՆՈՅՇ.— *Hot dog:*

ՄԱՐԻԱՄ.— *Խանութները լեցուն, շուկաները լեցուն, փողոցները լեցուն...*

- ՅԱԿՈՒՐ.** - Գրպանները լեցուն...: Հապա ինչո՞ւ մեզի կ'ըսէին, որ Ամերիկայի մէջ ամէն մարդ օղջատ է:
- ՄԱՐԻԱՄ.** - Եւ դուք ալ կը Հաւատայիք: Այս քնն առատութիւն:
- ՅԱԿՈՒՐ.** - Սերդէ՛յ, տասնհինգ տարի է, որ Ամերիկա էք, ինչպէ՞ս վարժուեցաք:
- ՍԵՐԳԷՅ.** - Վարժութիւնը երեք շրջան ունի, Պարոն Յակոբ: Առաջին շրջանին, Ամերիկա եկողը լեզուն կը սորվի, կենցաղին կը ծանօթանայ, դործի կը սկսի մինչեւ որ մազերը ճերմկին: Ասիկա տառապանքի շրջանն է: Երկրորդ շրջանին տեսակ մը առեւտուր կ'ընէ: Երկրին բարիքներէն կ'օգտուի՝ տուն կ'առնէ, ինքնաշարժ կ'առնէ, Հանգիստ կեանք կը վայելէ եւ անոնց փոխարէն կը վճարէ ո՛չ միայն դրամ, այլեւ լեզու, սկզբունք եւ ազգային բարքեր: Աս ալ Համակերպումի շրջանն է: Երրորդ շրջանին՝ մազերը կը ներկէ եւ ունեցածը կը վայելէ: Այս ալ այսպէս կոչուած երջանկութեան շրջանն է:
- ՅԱԿՈՒՐ.** - Ճի՛շդ կոմունիզմի նման, տառապանք, Համակերպում եւ երջանկութիւն:
- ՄԱՐԻԱՄ.** - Միայն թէ՛ կոմունիզմի երջանկութիւնը գերեզմանին մէջ է:
- ՎԱԼԻԱ.** - Է լա՛ւ, պատմեցէք, ուրիշ ի՞նչ ըրիք:
- ՃԻՄ.** - Գացինք Ս.Ո. ՄԱԿ: Ետտ լաւ անցաւ: (Ար խնդայ):
- ՄԱՐԻԱՄ** (Յակոբը մտնանշելով).- Բայց այս մարդը մեզ խայտառակեց:
- ՅԱԿՈՒՐ.** - Ինչո՞ւ, ի՞նչ ըրի: Ընկերներուս ինչ որ խոստացած էի, այդ կատարեցի:
- ՍԵՐԳԷՅ.** - Ի՞նչ ըրիք, Պարոն Յակոբ:
- ՄԱՐԻԱՄ** (Յակոբի պայուսակը ցոյց տալով).- Այս պայուսակը կը տեսնէ՞ք: Գիտէ՞ք ինչ կար մէջը: Երկու շիշ քոնեաք եւ չորս բաժակ:
- ՅԱԿՈՒՐ.** - Հայաստանի՞ քոնեաք:
- ՄԱՐԻԱՄ.** - Երբ ՄԱԿ Հասանք, Պարոն Յակոբը Հանգիստուր կերպով պայուսակը բացաւ, քոնեաքի շիշերն ու բաժակները Հանեց...
- ՅԱԿՈՒՐ.** - Նախ ըսէ, թէ ո՛ւր Հանեցի...
- ՄԱՐԻԱՄ.** - ՄԱԿի առջեւ պարզուած Հայկական դրօշակին մօտ:
- ՅԱԿՈՒՐ.** - Է, ամբողջ կեանքս երազած էի Հայկական դրօշ պարզուած տեսնել ՄԱԿի առջեւ, չիսէի՞...
- ՎԱԼԻԱ.** - Ուտիկան չեկա՞ւ...
- ՄԱՐԻԱՄ.** - Անչո՛չտ եկաւ:
- ՍԵՐԳԷՅ.** - Է՛, ի՞նչ ըրիք:
- ԱՆՈՅՇ.** - Մեծ պապան ուտիկանին ըսաւ. «Տօ՛ն, տօ՛ն»: Ուտիկանը ըսաւ. *What's don?* Մեծ պապան ըսաւ. «Ետագոյն դրօշակ, անկախութիւն, տօ՛ն»: Ճիմը բացատ-

րեց կացութիւնը: Ոստիկանը բարեազակամ գտնուե-
լով՝ ըսաւ. «Շո՛ւտ խմէ, վերջացո՛ւր»: Մեծ պապան
գաւաթ մը լեցուց ու ձեռքը պարզեց ղէպի Նոազոյն
դրօշակը ու բարձրաձայն ըսաւ. «Վարդա՛ն, աւ մէկը
քու կողմէն»: Երկրորդ մըն ալ լեցուց, նորէն ձեռքը
պարզեց դրօշակին. «Նոյի՛ա՛, այս մէկն ալ քու կող-
մէն»: Նորէ՛ն լեցուց...: Այս անգամ: (Կը խնդայ):

ՃԻՄ. - Բաժակը տուաւ ոստիկանին. ըսաւ. «Ա՛՛ո, խմէ Հայու-
թեան կենացը»:

ՄԱՐԻԱՄ. - Ես գետնին տա՛կը անցայ:

ՃԻՄ. - Ոստիկանը բարի էր. ըսաւ. «Հասկցուցէ՛ք իրեն, որ
մենք պաշտօնի վրայ լինք խմեր»:

ԱՆՈՅՇ. - Մեծ պապան այս անգամ ըման շինք երկարեց ոստի-
կանին եւ ըսաւ. «Լաւ, տար տունը խմէ»: Ոստիկանը
սկսաւ խնդալ:

ՅԱԿՈՐ. - Աստուած վկայ խմցնել կու տայի. սփօ՛ւ ասոնք ձգէին:

ՎԱԼԻԱ. - է՞, ուրիշ ի՞նչ ըրիք:

ԱՆՈՅՇ. - Մեծ մաման ու ես եկեղեցիներ այցելեցինք: Մեծ պա-
պան ու ձիմը չեմ գիտեր ուր գացին:

ՅԱԿՈՐ. - Գացինք «Պատի փողոցը»:

ՍԵՐՉԷՅ. - Ո՞ւր գացիք:

ՃԻՄ. - Wall street:

ՅԱԿՈՐ. - Ես կեանքիս մէջ ասանկ բան չէի տեսած: Աս «Մթոք
էքսչէյնն»ը ինչ է...: Տոլարի պազար: Տոլարի պա-
զար: Տոլարի գինը ելաւ ու իջաւ, ելաւ ու իջաւ, ելաւ
ու իջաւ, ելաւ ու իջաւ, ելաւ...:

ՄԱՐԻԱՄ. - Ցակո՛ր, կարճ կապէ:

ՅԱԿՈՐ. - Պիլիոնաւոր տոլարներ մէկ վայրկեանի մէջ փոխա-
նակուեցան...: Ուրկէ՞ այսքան դրամ...:

ՄԱՐԻԱՄ. - Ասոնք կ'աշխատին, ծոյլ կոմունիստներու նման
չեն նստիր եւ սպասեր, որ մէկը դրամ տայ իրենց...:

ՅԱԿՈՐ. - Ես Հիմա՛ կ'ըմբռնեմ, որ աշխարհի ճակատագիրը ո՛չ
թէ ՄԱԿի մէջ, այլ՝ «Ուոլ սթրիթ»ի մէջ կ'որոշուի:
Այս ինչ էր...: Ոսկի՛ ծախեցին, արծաթ՛ գնեցին:
Թ՛ուղթ՛ ծախեցին, մելան գնեցին: Համակարգիչ ծա-
խեցին, գիտութիւն գնեցին: Քարիւղ ծախեցին, ար-
դարութիւն գնեցին...: Մեր Հայերը խելք ունենան,
միմիայն քարիւղի ընկերութիւններու բաժնեթուղ-
թեր, սրո՞ւներ կը գնեն, որ տնտեսական ուժ ունե-
նանք:

ՄԱՐԻԱՄ. - Հայերը խելք ունենան՝ իրար Հանդուրծել կը
սորվին...:

ԱՆՈՅՇ (ձիմին). - «Հանդուրծել»: Իմաստը գիտե՞ս, Հասկցա՞ր:

ՃԻՄ. - Հասկցա՛յ, Հասկցա՛յ: Մեծ մաման քանի մը անգամ այդ
բառը զործածեց այսօր: Ի՞նչ ըսաւ, Հա՛. «Այր ու կին
իրար Հանդուրծել պէտք է գիտնան»:

- ՎԱԼԻԱ.** - Օ, օ...: Մաճան իր «դասեր»-ը տալ սկսաւ:
- ՄԱՐԻԱՄ.** - Հայերէնի՛ դասեր տուի փեսացուիդ:
- ՎԱԼԻԱ.** - Եկէք Հո՛ւ կեցէք, որ ձեր թոռնիկին ու փեսային աւելի շատ հայերէն սորվեցնէք:
- ՅԱԿՈՔ.** - Աղջի՛կս, ատանկ բան չըսես, տեսնես կ'ելլենք կու գանք:
- ՍԵՐՉԷՅ.** - Ինչ լաւ պիտի ըլլայ: Մնողքս չկան, դուք գոնէ ձեր թոռնիկին հետ կ'ըլլաք: Տանը մէջ մեծ մայր ու մեծ հայր ունենալը օրհնութիւն է:
- Մարիամ յուզուած է եւ կու լայ:
- ՎԱԼԻԱ.** - Մա՛մ, ի՞նչ եղաւ:
- ՅԱԿՈՔ.** - Եթէ ես մայրդ կը ճանչնամ, անիկա հիմա ոչ թէ թոռ, այլ թոռան թոռի՛ ծոռան ծոռի մասին կը մտածէ:
- ՃԻՄ.** - Չհասկցայ՛, թոռան թոռ, ծոռան ծոռ:
- ԱՆՈՅՇ.** - Our grandchildren-ներու մասին կը խօսի:
- ՃԻՄ.** - Օհ, «թոռան թոռ»: (Յանկարծ): Վայրկեան մը: Մե՞ր թոռներու:
- ՄԱՐԻԱՄ.** - Տեսա՞ք, ճիմի՛ն ալ կ'ուզէ:
- ՃԻՄ.** - Ի՞նչ կ'ուզեմ, մեծ մամ:
- ՄԱՐԻԱՄ** (Ճիմի՛ն).- Երեխայ՛, երեխայ՛: Հիմա՛ երեխայ, յետոյ թոռ, յետոյ՛ ծոռ: Ո՛չ թէ՛ հիմա՛-հիմա՛, ամուսնութեանէն ետք, ինը ամիս ետք:
- ՎԱԼԻԱ.** - Մամ, երեխաները հանգիստ ձգէ: Ըսէ՛ նայիմ, ճիմի՛ն հետ ինչպէ՞ս հասկցուեցաք:
- ՄԱՐԻԱՄ.** - Քիչ մը հայերէն, քիչ մը «ձեռքերէն», քիչ մը «լալերէն», քիչ մըն ալ անգլերէն:
- ՅԱԿՈՔ.** - Դուն ե՞րբ անգլերէն սորվեցար:
- ՄԱՐԻԱՄ.** - Նախակրթարան: (Կ'երգէ): Ալուէթթը ժընթը ալուէթթը...
- ՅԱԿՈՔ** (խնդալով).- Ատիկա Ֆրանսերէն է:
- ՄԱՐԻԱՄ.** - Քեզ փորձեցի...: (Նորէն կ'երգէ): London Bridge is falling down, falling down, falling down...: How are you today? My name is Մարիամ:
- ՅԱԿՈՔ.** - Տիկի՛ն, Աստուած վկայ դուն փրօթեալէօր կրնաս դառնալ:
- ՄԱՐԻԱՄ.** - Ես ճիմի՛ն հայերէն սորվեցուցի, ճիմն ալ ինծի անգլերէն սորվեցուց:
- ԱՆՈՅՇ** (Ճիմի՛ն).- Ի՞նչ սորվեցուցիր մեծ մամային:
- ՃԻՄ.** - Չե՛մ յիշեր:
- ՄԱՐԻԱՄ.** - Չե՞ս յիշեր, «պոչ»ի մասին ինչ սորվեցուցիր:
- ԱՆՈՅՇ.** - Ճի՛մ, ի՞նչ «պոչ»:
- ՃԻՄ.** - Չե՛մ գիտեր:
- ՄԱՐԻԱՄ.** - «Պո՛չ», «պո՛չ», բառերու «պոչ»-ով:
- ՍԵՐՉԷՅ.** - Բառե՞րն ալ «պոչ» կ'ունենան:

ՄԱՐԻԱՄ. - Ամէն ինչ պոչ կրնայ ունենայ: Այս անգլերէնը ինչ դիւրին լեզու է եզեր: Բառ մը կ'առնես, «պոչ» մը կը կապես եւ նոր իմաստ կը ստանայ: Գետոյ «պոչ»ը կը փոխես եւ ուրիշ իմաստ կը ստանայ: Այդքան դիւրին:

ՅԱԿՈՐ (հեզնանգոյ) - Հանեցէք բացատրել, Տիկի՛ն Մարիամ:

ՄԱՐԻԱՄ (ոտֆի) - Նայեցէք step բառը: Stepին up կը փակցնես, կ'ըլլայ՝ Step up, այսինքն՝ վեր ելիր: Down կը փակցնես, կ'ըլլայ՝ Step down, այսինքն՝ վար իջիր: In կը փակցնես, կ'ըլլայ՝ Step in, այսինքն՝ ներս մտիր: Out կը փակցնես՝ կ'ըլլայ՝ Step out, այսինքն՝ դուրս ելիր: Aside կը փակցնես, կ'ըլլայ՝ Step aside, այսինքն՝ մէկ-դի քաշուէ: On it կը փակցնես, կ'ըլլայ՝ Step on it, այսինքն՝ վրան կոխէ: Այսքան դիւրին:

ՅԱԿՈՐ. - Մէկ «պոչ»ով այդքան իմաստ կը կազմուի:

ՄԱՐԻԱՄ (Յակորից) - Աման, Յակո՛ր, դուն ալ բան չես հասկընար, աղջիկդ ու փեսայդ առ ներսը գնա՛ ու Հոն պատմէ մնացեալը:

ՅԱԿՈՐ. - Մարիամ, դո՛ւն ինչ պիտի ընես:

ՄԱՐԻԱՄ. - Ե՛ս բան պիտի չընեմ...: Դուռը գոցեցէ՛ք, խնդրեմ:

ՎԱԼԻԱ. - Պապա՛, երթանք: Համով կարկանդակ շինած եմ:

(Լալիա, Սիրգէլ եւ Յակոր՝ դուրս):

ՃԻՄ. - Մ, օ: Հիմա ի՞նչ:

ԱՆՈՅՇ. - Կարծես գիտե՞մ:

ՃԻՄ. - Անպայման կարելոր բան մը տնի մեօի ռսելիք:

ԱՆՈՅՇ. - Ձե՛մ գիտեր:

ՄԱՐԻԱՄ (ձեռնով նշան կ'ընէ, ձիմիմ եւ Անոյշին կը կանչէ՛ իր երկու կողմերը կը նստեցնէ) - Անո՛յշ, բալաս, երբ ծնար, գիտե՞ս որքան ուրախացանք, բոլոր թաղը: (ձիմիմ): Neighborhood...

ՃԻՄ. - «Մնիկ» գիտեմ, «ուրախ» գիտեմ, «թաղ»ն ալ գիտեմ:

ՄԱՐԻԱՄ (ձիմիմ) - Ապրի՛ս, տղաս: Ուրեմն երբ Անոյշը ծնար, այնքան ուրախացանք, այնքան ուրախացանք: (Սանդավառ՝ Անոյշին): Մեծ պապադ՝ ընտիր քոնեաք եւ քարահունջ օդի բերել տուա:

ԱՆՈՅՇ. - Քարահոնջ ինչ է:

ՃԻՄ. - Ղարաբաղի զօրանոր օդի է:

ԱՆՈՅՇ. - Դուն ուրկէ՞ գիտես:

ՃԻՄ. - Երբ Ղարաբաղ գացի, խմեցի:

ՄԱՐԻԱՄ. - Մեծ պապադ ըսաւ, որ թոռնիկիս ծնունդը կ'ուզեմ որ անմոռանալի ըլլայ: Բոլոր թաղեցիները, բարեկամ-ազգական մեր տուն թափեցան...: Խմեցինք, պարեցինք, երգեցինք: Ափսոս, որ այդ օրերուն վիտօ չկար, որ նկարէինք: Այդ բոլոր ուրախութեան վրայ

քառասուն օր անցաւ: Սպասեցի, սպասեցի եւ իմ փափաքը չկատարուեցաւ:

ԱՆՈՅՇ. - Մեծ մամ, ի՞նչ փափաք:

ՄԱՐԻԱՄ. - Դո՛ւն, Անոյշ ջան... (Յուզուած): Դուն կնքուած չես...:

ԱՆՈՅՇ (ուռի ցատկելով).- *What? Ինձի ուեւ է մէկը չէ ըսած...*

ՄԱՐԻԱՄ. - Հապա՞, դուն տաանց կնունքի մնացիր: Ամէն անգամ, որ ճակատիդ կը նայիմ, կ'ըսես. «Այս աղջկան ճակատէն Սուրբ միւռոնը կը պակսի»:

ԱՆՈՅՇ (չղայնացած).- *Եւ ինչո՞ւ գիտ չկնքեցին:*

ՄԱՐԻԱՄ. - Մեծ պապայիդ Հարցուր:

ԱՆՈՅՇ (դէպի դուրս՝ բարձրաձայն).- *Մեծ պապ:*

ՅԱԿՈՐ (կը մտնէ).- *Այո, Անոյշ ջան, ի՞նչ կայ:*

(Վայիս կը մտնէ՝ Յակոբին եետեսելով):

ԱՆՈՅՇ. - Ինչո՞ւ գիտ կնքել չտուիր:

ՎԱԼԻԱ. - Պա՛պ, պատասխանէ՛:

ՅԱԿՈՐ (դուրս ելլելու փորձ մը կ'ընէ).- *Ջուր մը խմեմ, յետո՛յ կ'ըսես:*

ՄԱՐԻԱՄ. - Յակո՛ր, կեցի՛ր ու պատասխանէ՛:

ՅԱԿՈՐ. - Կոկորդա չորցած է, Ջուր մը խմեմ, յետո՛յ կը պատասխանեմ:

ՄԱՐԻԱՄ. - Ջորցած կոկորդով խօսէ:

ՅԱԿՈՐ. - Անո՛յշ, երկար պատմութիւն է...

ՄԱՐԻԱՄ. - Դուն կա՛րճը պատմէ:

ՅԱԿՈՐ. - Երբ ներդաղթեցինք, կացութիւնք...

ՎԱԼԻԱ (կացութիւնը մեղմացնելու նիգով մը: Արագ).- *Անոյշ, ժամանակները լաւ չէին, օրերը լաւ չէին, կացութիւնը լաւ չէր եւ պապան, իր կարծիքով ի՛ր ընտանիքը պաշտպանելու համար որոշեց... Ը... որ... Ը...*

ՅԱԿՈՐ. - Մարդ ըսածդ, սաանկ զաւակ ունենալու է, որ դժուար պահերուն իրեն օգնէ: Ապրի՛ս, աղջիկս:

ՄԱՐԻԱՄ. - Աղջի՛կս, ըսէ՛ Հայրիկդ կոնունիստ էր եւ արգիլեց կնունքը:

ՅԱԿՈՐ. - Հինա գեանին տա՛կը անցայ...: Ա՞յս կ'ուզէիր, Մարիա՛մ:

(Պահ մը լուրջիմ):

ՃԻՄ. - Անո՛յշ, ինչո՞ւ այգքան ազդուած ես, կնքուէ՛:

ՄԱՐԻԱՄ. - Ապրի՛ս, տղաս, good.

ԱՆՈՅՇ (ձիւմիմ).- *Քառասուն օրուան երեխայ պէտք է ըլլաս կնքուելու համար:*

ՃԻՄ. - Գիտե՛մ:

ԱՆՈՅՇ. - Ես քառասուն օրուայ պէսէ՛ք եմ:

ՃԻՄ (կեղծ լուրջութեամբ).- *Ձե՛մ կարծեք:*

ԱՆՈՅՇ. - Այս մարմնով ես կնունքի աւաղա՞ն կրնամ մտնել:

ՃԻՄ (կեղծ լրջութեամբ).- *Ձե՛մ կարծեք:*

ԱՆՈՅՇ. - Ճի՛մ, խնդալիք չէ:

ՃԻՄ. - Չխնդացի:

ԱՆՈՑԵ. - Այդ ցոլութիւնը խնդալէն աւելի դէշ է, խնդա՛:

ՃԻՄ (շիմծու խնդուրով) - Հը՛, հը՛...

ԱՆՈՑԵ. - Ա՞տ ինչ խնդուք է: Կ՞ուզես ամէն մարդ գիտ մե՞րկ տեսնէ:

ՃԻՄ. - Է. պէթիհիմէ սիւիթ, լողազգեստ: (Կը խնդայ):

ԱՆՈՑԵ (թեթեւ ուսիմ գարնելով) - Ճի՛մ:

ՃԻՄ. - Անո՛յշ, եթէ խկապէս կրօնական այդ ծէսերուն կը հաւատաս, գիտե՞ս, չե՛ս կրնար պսակուիլ մինչեւ որ չկնքուիս:

ԱՆՈՑԵ. - Ես տո՛ւմական ձեռով պսակուիլ կ՞ուզէի...: Մե՛ծ մամ, ճի՛շդ կ՞ըսէ ճի՛մը:

ՄԱՐԻԱՄ (հոգոց հանելով) - Այո՛, ճիշդ կ՞ըսէ ճի՛մը, պէտք է կնքուած ըլլաս, որ պսակուիս:

ԱՆՈՑԵ (յուզուած կը նստի) - Պսակը դալ կիրակի է: Այսօր Ծա-րաթ, վաղը կիրակի: Ինը օր մնացեր է միայն:

ՄԱՐԻԱՄ (կը գրկէ Անոյշը ուսերէն) - Բալաս, ինը օրը, ինը օր է: Աստուած եթէր օրուան մէջ ամբողջ երկիրը ստեղծեց, մենք ալ ինը օրուան մէջ բա՛ն մը կրնանք ընել: Մէյ մը ա՛յս ալ ըլլայ, յետոյ կ՞երթամ հանդիստ սրտով կը մեռնիմ:

ՃԻՄ. - Ո՞վ կը մեռնի:

ՄԱՐԻԱՄ (իմքիմքիբ ցոյց տալով) - Ե՛ս, ե՛ս կրնամ հանդիստ մեռնիլ:

ՃԻՄ. - Ինչո՞ւ:

ԱՆՈՑԵ. - Է՛ժֆ, ճի՛մ, խօսելու ձեռ մըն է: Հայ մայրերը օրական հազար անգամ մեռնելու խօսք կ՞ընեն: Եթէ անոնց խօսքին հաւատաս, այլեւս հայ մայրեր չեն մնար աշխարհի վրայ:

ՅԱԿՈՔ. - Տիկին Մարիամ, եկուր մեռնիլդ քիչ մը յետաձգէ: Հիմա կրնա՞մ երթալ եւ աղջկաս պատրաստած կարկանդակը ուտել:

ՄԱՐԻԱՄ. - Աման, դնա՛:

ՅԱԿՈՔ. - Երթանք, աղջիկս:

(Վալիս, մակուր՝ դուրս):

ԱՆՈՑԵ. - Երթամ մամային օգնեմ: (Ի ուրս):

(Ճի՛մ Անոյշին կը հետեւի):

ՄԱՐԻԱՄ. - Ճի՛մ:

ՃԻՄ. - Այո՞, մեծ մամ:

ՄԱՐԻԱՄ. - Հոս եկուր նայիմ: Տղա՛ս, դուն կնքուա՞ծ ես:

ՃԻՄ. - Մեծ մամ, (ճիգով մը): Ես... ես... what is the word? O, hell, ... athiest եմ: Athiest գիտե՞ս:

ՄԱՐԻԱՄ. - Էթէիստ, ինչպէ՞ս չեմ գիտեր «Անհաւատ» ըսել է: Կեանքիս մեծ մասը անհաւատներու քարոզները լսած եմ եւ մէկուն հետ ալ ապրած եմ:

ՃԻՄ. - Sorry, եթէ նեղացուցի քեզի: (Դեպի դուրս):

ՄԱՐԻԱՄ. - Տո՛նք սօրի: (Խորհրդաւոր): *Էթէի՞ստ, Հը՞, անաստ-
ւա՞ծ:*

ՎԱԼԻԱ (կը մտնէ).- *Մա՛մ, ամէն մարդ քեզի կը սպասէ:*

ՄԱՐԻԱՄ (անհամարտ).- *Վալիա՛, խանութները դեռ բա՞ց են:*

ՎԱԼԻԱ. - Այո՛, ինչո՞ւ:

ՄԱՐԻԱՄ. - Միտքս բան մը ինկաւ, պէ՛տք է շուկայ երթամ եւ
գնեմ:

ՎԱԼԻԱ. - Դնումդ չի՞ կրնար սպասել:

ՄԱՐԻԱՄ. - Աղջի՛կս, երթա՛նք գնումս ընեմ, յետոյ կու գանք եւ
կ'ուտենք: (Դէպի նաշանեմակ): *Մենք շուկայ պիտի
երթանք, չենք ուշանար:*

ՅԱԿՈՔ (դուրսէն).- *Մարիա՛մ, Հո՞ւ ալ կը վազես:*

ՎԱԼԻԱ. - Մա՛մ, Հայրիկը բան մը ըսաւ կարծեմ:

ՄԱՐԻԱՄ. - Քառասունհինգ տարի անոր ըսածը յած եմ, թող
քիչ մըն ալ ինքը իր ըսածը յէ: Լա՛ւ, երթա՛նք,
չուշանանք:

ՎԱԼԻԱ (դէպի նաշանեմակ).- *Մենք գացինք:*

(Վալիա եւ Մարիամ դէպի դուրս):

(Լոյսերը կը մարին):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԱՐՈՐԴ

(Նիւ Ըորժի Յոյն սեմնակը, Երեկոյեան):

(Սերգէյ եւ Ճիմ կը մտնեն):

ՍԵՐԳԷՅ (խմիչքի շիշը եւ գաւաթ մը ձեռքը կը գիճով եւ բերել մը
տատանելով հետեւեայ տողը կ'երգէ կրկնելով).- *«Հայ
ենք մենք, եղբայր իմ, Հայ ենք մենք»:*

ՃԻՄ. - Պարոն Դարեան, միշտ նոյն տողը կը կրկնես: Ուրիշ երգ
չե՞ս գիտեր:

ՍԵՐԳԷՅ. - Անչո՛ւշտ գիտեմ: (Կ'երգէ կրկնելով): *«Հայ ենք մենք,
եղբայր իմ, Հայ ենք մենք»:*

ՃԻՄ (շուրջը նայելով).- *Պարոն Դարեան, մեր տունը իրապէս
Հայաստան մըն է:*

ՍԵՐԳԷՅ. - Երբ քուն Հայաստանէն Հեռու եմ, անոր պատկեր-
ներով պիտի ապրին:

ՃԻՄ. - Մեծ Հայրս ալ այդպէս էր, Երկրէն իր Հօրը փափախը
կրցած էր Հետը բերել: Երբ քսանհինգ տարեկան
եղայ, ինծի տուաւ:

ՍԵՐԳԷՅ. - Ինչո՞ւ Հօրդ չտուաւ:

ՃԻՄ.- Հայրս օտարի Հետ ամուսնացած էր եւ մեծ Հայրս շատ նեղուած էր ատոր Համար:

ՍԵՐՊԷՅ.- Եւ ինչո՞ւ քեղի տուաւ:

ՃԻՄ.- Ձե՛՛մ գիտեր, տեսաւ, որ Հետաքրքրուած էի Հայոց պատմութեա՛նը, Հայերէն լեզուո՛վ: Ղարաբաղ գացեր էի, Արեւմտեան Հայաստան երթալու ծրագիր ունէի. մեռնելէն առաջ ինձի տուաւ:

ՍԵՐՊԷՅ.- Պայման դրա՞ւ, որ Հայու Հետ ամուսնանաս:

ՃԻՄ.- Ո՛չ:

ՍԵՐՊԷՅ.- Որոշումը քո՞ւկդ էր:

ՃԻՄ.- Այո՛:

ՍԵՐՊԷՅ (խմիչքի բաժակներ կը լեցնէ).-- Ուրեմն խմենք որոշումիդ կենացը:

ՃԻՄ.- Պարո՞ն Սերգէյ, ես խմել շատ չեմ սիրեր:

ՍԵՐՊԷՅ.- Ճի՛մ, կեանքիդ մէջ մէկ անգամ դոնէ պէտք է լա՛ւ մը խմես:

ՃԻՄ.- Լաւ, խմենք: Կենա՛ց: (Կը խմէ՛ դէմքը ծամածռելով): Իրականութեան մէջ, երբ Անոյշին Հանդիպեցայ, չգիտցայ, որ Հայ է: Ինքն ալ չգիտցաւ, որ ես Հայ եմ:

ՍԵՐՊԷՅ.- Ինչպէ՞ս, աղջիկս ոտքէ՛ն-գլուխ Հա՛յ է:

ՃԻՄ.- Երբ Անոյշին ծանօթացայ՝ ըսաւ. «Անունս Անիա Սերգէյ է»: Ես ալ ըսի անունս «Ճիմ Բալլերթ» է: Որո՞ւ մտքէն կ'անցնի, որ Ճիմն ու Անիան կամ Սերգէյն եւ Բալլերթը կրնան Հայ ըլլալ: Յետոյ, երբ ըսաւ մականունս «Դարեան է», Հասկցայ, որ Հայ է եւ Հայաստան ծնած է: Ես կը կարծէի, որ դոնէ Հայաստանի մէջ աճէն մարդ Հայկական անուն կ'ունենայ:

ՍԵՐՊԷՅ.- Ճի՛մ, Հայաստանի մէջ մենք պայմաններուն յարմարեցանք, որպէսզի պատմութիւնը պահենք:

ՃԻՄ.- Մենք ալ Սփիւռքի մէջ միջակայրին յարմարեցանք...: Լեզուն մասամբ կորսնցուցինք, բայց ոգի՛ն պահեցինք:

ՍԵՐՊԷՅ.- Հատ մըն ալ խմենք Պատմութեան եւ Ոգիին Համար:

(Կը խմեն: Ճիմ դանդաղ կը խմէ):

ՍԵՐՊԷՅ.- Ճի՛մ, մէկ անգամէն խմէ, կոնծէ՛: Կենացը մէկ անգամէն կը խմեն: Ոմենք մեծ Հօրդ փափախին Համար:

ՃԻՄ (բաժակը բարձրացնելով եւ վեր լայելով).-- Կենա՛ցդ, մեծ Հայրիկ:

ՍԵՐՊԷՅ.- Կենա՛ց: (Կը խմէ): Ճի՛մ, ինչո՞ւ Անոյշը սիրեցիր:

ՃԻՄ.- Ի՞նչ գիտնամ, սէրը չի բացատրուիր: Կարծեմ կարգ մը բաներու մէջ իրարու կը նմանինք, կարգ մը բաներու մէջ ալ իրար կը լրացնենք...

ՍԵՐՊԷՅ.- Ինչի՞ մէջ իրարու կը նմանիք:

ՃԻՄ.- Երկուքս ալ տոհմական բաները կը սիրենք:

ՍԵՐՊԷՅ.- Հոյակա՛պ: Ինչի՞ մէջ իրար կը լրացնէք:

ՃԻՄ.- Անոյշը յոռետես է, ես՝ լաւատես:

- ՍԵՐՊԷՑ** (բաժակը բարձրացնելով).- *Պմենք՝ բոլոր իրար նմանող
 եւ իրար լրացնող բաներուն Համար: Կենա՛ց: (Կը խմէ):*
- ՃԻՄ.**- *Կենա՛ց: (Կը խմէ): Պարոն Սերգէյ, կարծես Հարբեցայ:*
- ՍԵՐՊԷՑ.**- *Ճի՛մ, Հարբելէն ե՛տքն է իսկական կենացը:*
- ՃԻՄ.**- *Ուրեմն խմենք Հարբելուն կենացը: Կենա՛ց: (Կը խմէ):*
- ՍԵՐՊԷՑ.**- *Կենա՛ց: (Կը խմէ):*
- ՃԻՄ.**- *Կենացը ե՞րբ կը վերջանայ, Պարոն Սերգէյ:*
- ՍԵՐՊԷՑ.**- *Ինձի Սարգիս ըսէ: Կենացը կը վերջանայ, երբ տան
 խմիչքը վերջանայ, Ճիմ:*
- ՃԻՄ.**- *Ինձի ալ Յակոբ ըսէ: Ուրեմն, Պարոն Սարգիս, խմենք
 Հայ տան կենացը:*
- ՅԱԿՈՐ** (կը մտնէ գիմով, պարապ շիշը ձեռքը, կը մկատէ Սերգէյին
 եւ ձիմին վիճակը): *Կենաց կը խմէք առանց ինձի՞
 ըսելու:*
- ՃԻՄ.**- *Պարոն Յակոբ, կենա՛ցը: (Կը խմէ):*
- ՅԱԿՈՐ.**- *Ո՛ւր Հասած է կենացի շարքը:*
- ՍԵՐՊԷՑ.**- *Փեսաս ըսաւ Հայ տան կենացը խմենք:*
- ՅԱԿՈՐ.**- *Արդէն Հո՞ն Հասած էք: Բաժակ մըն ալ ինձի՛ լեցուր:
 (Սերգէյ գիմով է: Բաժակի փոխարէն շիշի մը մէջ կը
 լեցնէ խմիչքը: Կ՛անդրադատեալ եւ բաժակի մը մէջ կը
 լեցնէ եւ բաժակը կ՛երկարէ Յակոբին):*
- ՅԱԿՈՐ.**- *Հայ տան կենացը խմելէ առաջ, պէտք է խմել Հայ
 տան սիւնին կենացը:*
- ՍԵՐՊԷՑ.**- *Պմենք...: (Կը խմեն): Միթէ մենք չե՞նք Հայ տան
 սիւնը:*
- ՅԱԿՈՐ.**- *Ո՛չ: Հայ կիւնն է Հայ տան սիւնը:*
- ՍԵՐՊԷՑ** (ձիմին թեւը մտնելով ոտքի կը իսկնէ).- *Փեսայ, ոտքի
 կեցիր, որ Հայ տան սիւնին կենացը խմենք: (Յակո-
 բին): Եթէ Հայ կիւնը Հայ տան սիւնն է, Հապա մե՞նք
 ինչ ենք:*
- ՅԱԿՈՐ.**- *Մենք Հայ տան... դմբէթն ենք:*
- ՍԵՐՊԷՑ.**- *Է՛, առանց սիւնին գմբէթը վար կ՛իյնայ: (ձիմին թեւը
 ձգելով կ՛իյնայ թագկաթոռին): Ուրեմն, մենք բան մըն
 ալ չենք:*
- ՅԱԿՈՐ.**- *Մենք դուրսի ցուցադրութիւնն ենք:*
- ՍԵՐՊԷՑ.**- *Ուրեմն մենք դուրսն ենք, անոնք՝ ներսը:*
- ՅԱԿՈՐ.**- *Ատոր նման բան մը:*
- ՃԻՄ.**- *Ես բան մըն ալ չՀասկցայ:*
- ՅԱԿՈՐ.**- *Ուրեմն խմենք Հայ կնոջ այսինքն՝ Հայ տան սիւնին
 կենացը: (Կը խմեն): Հիմա ոտքի՛ ելէք:
 (Յակոբ, Սերգէյ, ձիմ՝ տատանելով ոտքի կ՛ելլեն՝ բաժակ-
 մերը միացուցած):*
- ՅԱԿՈՐ.**- *Հիմա՛ խմենք Հայ տան կենացը:*

ՅԱԿՈՒ, ՍԵՐԳԷՅ, ՃԻՄ (միասերան).- **Կենա՛ց:** (Կը խմեն: Շորո-
բայով: իրարու յեներով եւ անկապ «Հայ ենք մենք, եղ-
բայր իմ, Հայ ենք մենք» երգելով դուրս կ'ելլեն):

(Լոյսը կը մարի):

ՏԵԱՄԱՍ ԵՐՈՐՈՒ

(Յաջորդ օրը: Նոյն սենեակը):

(Անոյշ եւ Ճիմ՝ կը մտնեն):

ՃԻՄ.- **Քլո՛ւիս, գլո՛ւիս:** Երէկ շատ խմեցի եւ դեռ գլուխս կը
ցաւի: (Ինքզինէր կը թեւեւ քաղկաթոտի մը վրայ): **Անո՛յշ,**
մէյ մըն ալ չձգես, որ խմեմ:

ԱՆՈՅՇ.- Ինչո՞ւ, երեխա՞յ ես, որ Հոգ տանիմ քեզի: Մէյ մըն ալ
ատանկ չխմես...

ՃԻՄ.- Ցիմարութիւն մըն էր՝ ըրի:

ԱՆՈՅՇ.- Քեզ անանկ չե՛մ ուզեր տեսնել...: Ես իմ ճանչցած
ձիմը կ'ուզեմ տեսնել:

ՃԻՄ.- Եւ ո՞վ է այն ձիմը, որ ճանչցած ես:

ԱՆՈՅՇ.- Տրամաբանո՞ղ, Հաւասարակշռուած, խոհուն փրօֆե-
սէօրը... (Մէկէւ): Մտի՛կ ըրէ, ասոնք ո՛չ գուրգուրանք
են, ոչ ալ «փկօ»ղ (ջջ) «պուսթ» ընելու միջոցներ...

ՃԻՄ.- Գիտե՛մ: Անկեղծ արտայայտութիւններ են: Ե՛ս պէտք
ունիմ ատոնց:

ԱՆՈՅՇ.- Ե՛ս ալ պէտք ունիմ: Մեր յարաբերութիւնը անկեղ-
ծութեան վրայ պէտք է հիմնուի:

ՃԻՄ.- Այդպէս չէ՞ միթէ: (Լրջօրէն կատակելով): Եկուր խմենք
անկեղծութեան կենացը:

ԱՆՈՅՇ (յանդիմամակաւ).- Ճիմ:

ՃԻՄ.- Կատա՛կ ըրի:

ԱՆՈՅՇ.- Անանկ կատակներ չե՛մ սիրեր:

ՃԻՄ.- Սորվեցա՛յ:

ԱՆՈՅՇ.- Մի՛ սորվիր:

ՃԻՄ.- Լաւ, մոռցա՛յ:

ԱՆՈՅՇ.- Մի՛ մոռնար: Հետս այդպէս շուտ մի՛ Համաճայնիր:
Լոկցեն՞լ կ'ուզես դիս: Քիչ մը վիճիւք, կոտիւք, յե-
տո՛յ Համաճայնիր:

ՃԻՄ.- Մտահոգութիւնը կը Հասկնամ, Անո՛յշ, պսակի ճնշումն
է, կ'անցնի: Ըսէ՛ նայիմ, ամէն ինչ կարգի՞ն է:

ԱՆՈՑՇ (պայրու սակեթ կը հաճէ տետրակ մը եւ մատիտ մը ու խօսած ատենը մատիտով Ոչաճ կ'ընէ).-- *Մրա՛նը եղաւ, ծաղիկները եղան, Հարսնեւորներու նուէրները եղան...* (Յատուկ շեշտով). *Եկեղեցին ալ եղաւ...*

ՃԻՄ.-- *Իսկ տոհմական ի՞նչ ունինք...*

ԱՆՈՑՇ.-- *Դո՛ւն ես փրօֆեսէօրը, դո՛ւն պիտի ընէիր ատիկա: Ըսէ՛ նայիմ, մեր նախահայրերը ինչպէ՞ս կը պսակէին:*

ՃԻՄ.-- *Հարսը կարծիր կը Հագնէր: Կարծիրը կեանքի նշան է: Փեսան՝ գոյնզգոյն, որ ուրախութեան նշան է:*

ԱՆՈՑՇ.-- *Forget it:*

ՃԻՄ.-- *Հարցուցիր, ըսի:*

ԱՆՈՑՇ.-- *Քաղաւորները ինչպէ՞ս կը պսակուէին:*

ՃԻՄ.-- *Քաղաւորը ծիրանի գօտի կը կապէր գիտուն, իսկ Քաղուհին կանաչ ժապաւէն եւ Հարսանիքին շեփոր կը նուագէին:*

ԱՆՈՑՇ.-- «Ճորկէ՛ք իր»:

ՃԻՄ.-- *Հարցուցիր, ըսի:*

ԱՆՈՑՇ.-- *Մրտանց կ'ուղես որ այդպէս ըլլայ, չէ՞: (Պիտի մը ծոփ): Մաս մը բաներ կարելի է ընել, այդ շեփորը ուրկէ բերենք...*

ՃԻՄ.-- *Կը փոխարինենք գունայով:*

ԱՆՈՑՇ.-- «Ճորկէ՛ք իր»:

ՃԻՄ.-- *Ա՛ս՝ «Փորկէթ իթ», ա՛ն՝ «Փորկէթ իթ», ալ ո՞ւր մնաց տոհմականը...*

ԱՆՈՑՇ.-- *Եկեղեցին: Թէեւ դուն չես Հաւատար...*

ՃԻՄ.-- *Դո՛ւն կը Հաւատաս, կը բաւէ:*

ԱՆՈՑՇ.-- *Ըսա՞ծ էի քեզի, որ մամա ու պապա երկու եկեղեցիներու մէջ պսակուած են:*

ՃԻՄ (մէկէն խաճողով).-- *Ատիկա Հոյակապ է:*

ԱՆՈՑՇ.-- *Մէկ եկեղեցոյ չՀաւատացողը, ինչպէ՞ս երկուքին Համաձայն է:*

ՃԻՄ.-- *Երկու չէ, երեք եկեղեցի:*

ԱՆՈՑՇ.-- *Չե՛մ Հասկնար:*

ՃԻՄ.-- *Պսակ մը Հոս՝ ծանօթներու եւ բարեկամներու Համար:*

ԱՆՈՑՇ.-- *Ցեւո՞յ:*

ՃԻՄ.-- *Պսակ մը Արեւմտեան Հայաստան, Անիի Մայր տաճարին մէջ՝ մեզի՛ Համար:*

ԱՆՈՑՇ.-- *Ո՞վ պիտի պսակէ մեզ այնտեղ:*

ՃԻՄ.-- *Արքազանը Հետերնիս կը տանինք:*

ԱՆՈՑՇ.-- *Արքազանը ուրիշ գործ չունի մե՞զ պիտի պսակէ:*

ՃԻՄ.-- *Արքազանին Համար դիտե՞ս ինչ մեծ Հաճոյք է ատիկա: Մտածէ՛, Հազար տարի է, որ Հոն պսակ չէ կատարուած...*

ԱՆՈՑԵ (խանդավառուած).- Եթէ մինչեւ Անի պիտի երթանք, Սրբազանին ըսենք, որ Վանայ ծովուն մէջ ալ գիտ կնքէ:

ՃԻՄ.- Now you're talking.

ԱՆՈՑԵ.- Է, ըսիր երեք եկեղեցի: Մէկը՝ Հոս, մէկը՝ Անի, երրորդը ո՞ւր:

ՃԻՄ.- Երրորդն ալ Հայաստան, էջմիածնի մէջ, Հայաստանի ծանօթներուն համար: Հոն ալ գունա նաղարայով:

ԱՆՈՑԵ.- Զուռնա նաղարան անպայման տեղ մը մտցուցիր: Բայց շատ ազուր զաղափար է: Միայն մէկ բան, ճիմ...

(Մարիամ, Յակոբ, Արգէշ եւ Վալիս կը մտնեն):

ՃԻՄ.- Ի՞նչ...

ԱՆՈՑԵ.- Այդքան դորաւոր պսակէ ետք, ապահարզան չկայ:

ՄԱՐԻԱՄ.- Ա՞յս ինչ է, դեռ չպտակուած ապահարզանի մասին կը խօսիք:

ՅԱԿՈԲ.- Մարիամ, ես կարծեցի թոռնիկիդ հետ պիտի խօսէիր:

ՄԱՐԻԱՄ.- Ոսեցա՛յ:

ՅԱԿՈԲ.- Ա՞յս սորվեցուցիր:

ՄԱՐԻԱՄ.- Յակոբ, Աստուած սիրես, դուն միայն ՄԱԿով գրադէ:

ԱՆՈՑԵ.- Նայեցէ՛ք, կարեւոր բան մը ունինք ձեզի յայտնելու: Մենք երեք եկեղեցիներու մէջ պիտի պսակուինք:

ՍԵՐԳԷՅ.- Խենթեցա՞ք: Ո՞վ պիտի վճարէ երեք հարսանիքներու ծախսերը...

ԱՆՈՑԵ.- Մէկը դուք, մէկն ալ՝ մենք:

ՍԵՐԳԷՅ.- Կարծեմ երեք լսեցի:

ԱՆՈՑԵ.- Երրորդ պսակը հարսանիք չունի:

ՎԱԼԻԱ.- Ի՞նչ տեսակ պսակ է, որ հարսանիք չունի:

ԱՆՈՑԵ (խորհրդաւոր).- Որովհետեւ միայն ճիմը, ես ու Սրբազանը պիտի ըլլանք:

ՎԱԼԻԱ.- Սրբազանը լուր ունի՞:

ԱՆՈՑԵ.- Ոչ գեռ:

ՎԱԼԻԱ.- Եւ ո՞ւր պիտի ըլլայ այդ պսակը:

ԱՆՈՑԵ.- Անիի Մայր տաճարին մէջ:

ՄԱՐԻԱՄ.- Դպրաց դասի պէտք չունի՞ք:

ՅԱԿՈԲ.- Սարկաւադի՞:

ՎԱԼԻԱ.- Մադիկ նետողի՞:

ՍԵՐԳԷՅ.- Դրամ նետողի՞: Կնքահայրը ո՞վ պիտի ըլլայ:

ՃԻՄ.- Եղբայ՛րս, բայց ան լուր չունի դեռ:

ՄԱՐԻԱՄ.- Այս ի՞նչ տեսակ պսակ է, որ մարդ լուր չունի դեռ:

ՅԱԿՈԲ.- Ոչխար մըն ալ մորթել տանք...

ՄԱՐԻԱՄ.- Քանի մը նուագածուներ ալ բերել տանք...

ՍԵՐԳԷՅ.- Ազգականներուս լուր տամ...

ՎԱԼԻԱ.- Ընկերուհիներս հրախրեմ...

ԱՆՈՑԵ.- Հէ՛յ, լուր չիւն...: Նայեցէ՛ք, զայլ չարախոսայ առաջին պսակին մենք ձեր ուզածը կ'ընենք: Այդ միւս պսա-

կին դո՛ք՝ բոլորդ ալ խելօք-խելօք մեր ըսածները պիտի ընէք:

ՄԱՐԻԱՄ. - Ես ամէնէն խելօք աշակերտն էի դասարանին մէջ:

ՅԱԿՈՐ. - Ես քեզմէ աւելի խելօք էի...

ԱՆՈՅՇ. - Ճի՛մ, բան մըն ալ դո՛նք ըսէ...

ՃԻՄ. - Այդ պսակին ի՞նչ պիտի հազնիս...

ԱՆՈՅՇ. - Չի՛մ, մենք պատերազմի մէջ ենք, դուն հազուստի մասի՞ն կը մտածես...

ՃԻՄ. - Այս պատերազմը կարճատեւ պատերազմ է...: Ըսէ՛, ի՞նչ պիտի հազնիս...

ԱՆՈՅՇ (նեղուած). - Ի՞նչ դիտեամ, կարմիր...

ՃԻՄ. - Ես ալ ծիրանի թիկնոց...

ԱՆՈՅՇ (մտեմալով ձիմին եւ քացառապէս փաղափշական). - Ճի՛մ, ատրկա հոյակապ պիտի ըլլայ...: Ենկոր մըն ալ կը բերենք ու տոհմական խկական պսակ մը կ'ունենանք... (ժամացոյցը նայելով): Երթանք, կ'ուշանանք:

(Ճիմ, Անուշ դուրս):

(Մարիամ, Յակոր, Անուշ, Վալիա գարմացած ձիմին եւ Անուշին ետեւէն կը նային):

ՍԵՐՓԷՅ. - Աստեղ շնորհքով խելքերնին թոցուցեր են:

ՎԱԼԻԱ. - Ո՛չ, հոգիս, խկական հայութիւնը գտեր են...: Եւ մտահոգ էիր, որ ձիմը Աստուծոյ չի հաւատար:

ՅԱԿՈՐ. - Ճի՛մն ալ կոմունիստ է:

ՄԱՐԻԱՄ. - Դուն ալ ամէն ինչ կոմունիզմին կը կապես: Իսկական հայ է, ուղն ու ծուծով ու ոգիով հայ է:

ՍԵՐՓԷՅ (Վալիային). - Աղջիկնիս փրկուեցաւ...

Վալիա՛, դուն լըլլայիր՝ ես մինակս չէի կրնար այս ամէնը ընել: Երթամ վերջին կարգազրուեցիւնները ընեմ, յետոյ կու գամ: (Դուրս):

ՎԱԼԻԱ. - Մա՛մ, պա՛պ, երթանք բան մը ուտենք: (Դուրս):

ՅԱԿՈՐ. - Մարիա՛մ, դուն այս բոլորին մէջ մատ ունի՞ս:

ՄԱՐԻԱՄ. - Մեղա՛յ...: Քառասունհինգ տարի հետդ ապրած եմ, դեռ կը հարցնե՞ս...: Երթանք, վաղը շատ գործ կայ կատարելիք...

ՅԱԿՈՐ. - Ի՞նչ կայ վաղը...

ՄԱՐԻԱՄ. - Յակո՛ր, դուն ո՞ր մոլորակին վրայ կ'ապրիս, պսակէն առաջ գիտե՞ս ինչքան գործեր կան: Քալէ՛, քալէ՛՝ երթանք:

(Յակոր եւ Մարիամ դուրս):

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐՈ

(Պսակնն եօրը օր առաջ, Կիրակի: նոյն յարկարաժիմը):

(Վալիա կը մտնէ տօնական զգեստով, ձեռքը՝ մեխակներ: Աննակը կը յարդարէ, մեխակները կը տեղափոխուի):

ՅԱԿՈՐ (կը մտնէ պաշտօնական զգեստով).- **Ճիշդ է, որ կ'ըսեն, լա՛ն Հազնիս՝ լա՛ն կը զգաս:**

ՎԱԼԻԱ (Ձեռքը երեք կարմիր մեխակ: կը մօտենայ եւ մեխակ մը Յակորի կուրծքին կը գետեղէ): **Պա՛ս, մեխակը վայելեց քեզի:**

ՅԱԿՈՐ.- **Նայինք. Տիկին Մարիամը ի՞նչ պիտի ըսէ:**

ՄԱՐԻԱՄ (կը մտնէ: Տօնական զգեստով: Կուրծքին մեծ՝ անբնական ծաղիկ: Վալիային): **Վալիա՛, ջանս, օգնէ՛ այս խաչը վիզէս կախան:**

(Վալիա մօրը կ'օգնէ):

ՅԱԿՈՐ (հիացած եւ ջերմօրէն).- **Տիկին Մարիամ, Հարսնութեանդ օրուան կը նմանիս:**

ՄԱՐԻԱՄ.- **Ա՞յդ ալ մտածես: Այն ատեն ճերմակ Հազած էի:**

ՅԱԿՈՐ.- **Գիտե՛մ, ճերմակ Հազած էիր, բայց խա՛չը, վիզէդ կախուած խա՛չը պսակիդ օրուան խաչն է: Ո՞ր պահած էիր այսքան տարի:**

ՄԱՐԻԱՄ.- **Ա՛խ, Յակոր, յիշեցիր: Մօրս նուէր տուած խաչն է: Պահած էի այս օրուան Համար: (Պահ մը): Վալիա՛:**

ՎԱԼԻԱ.- **Այո՛, մամ:**

ՄԱՐԻԱՄ.- **Աճէն ինչ կարգի՞ն է:**

ՎԱԼԻԱ.- **Այո:**

ՄԱՐԻԱՄ (սեղանի վրայէն կ'առնէ տետրակն ու մատիտը).- **Մտուգե՛նք:**

ՅԱԿՈՐ.- **Երեսանի տետրակը Հե՞տդ բերած ես: Ես դուրս ելլեմ քիչ մը օդ առնեմ:**

ՄԱՐԻԱՄ.- **Յակոր՛, Հո՛ս կեցիր: Իո՛ն ալ օգնէ քիչ մը:**

ՅԱԿՈՐ.- **Լա՛ն: Կազմ ու պատրաստ կը սպասեմ:**

ՄԱՐԻԱՄ (տետրակը կը բացայ).- **Վալիա՛, ոչխարի խորովածը եղա՞ծ է:**

ՎԱԼԻԱ.- **Այո՛, Սերգէյը զնաց բերելու:**

ՄԱՐԻԱՄ.- **Կարկանդակնե՞րը:**

ՎԱԼԻԱ.- **Պատրաստ են:**

ՄԱՐԻԱՄ.- **Միրզե՞րը:**

ՎԱԼԻԱ.- **Պատրաստ են:**

ՄԱՐԻԱՄ.- **Ոտրտիկնե՞րը:**

ՎԱԼԻԱ.- **Պատրաստ են:**

ՄԱՐԻԱՄ.- **Յակոր՛, Հայաստանի քոնեաքները սեղանին դրի՞ր:**

- ՅԱԿՈՐ.** - Բոլորն ալ:
- ՄԱՐԻԱՄ.** - Ապրիս:
- ՅԱԿՈՐ.** - Պարտականութիւնս վերջացա՞ւ:
- ՄԱՐԻԱՄ.** - Ո՛չ: Հանիս գնա՞ իմ այդ կապուած տուփը բեր:
- ՅԱԿՈՐ.** - Հրամանքդ, Տիկին:
- ՄԱՐԻԱՄ.** - Գիտե՞ս որ մէկը:
- ՅԱԿՈՐ.** - Այն՝ որ օղանաւին մէջ, ամբողջ ճամբան գիրկդ առած էիր:
- ՄԱՐԻԱՄ.** - Գնա՛ բեր, խնդրեմ:
- (Յակոբ դուրս):
- (Իրան գանգ):
- ՄԱՐԻԱՄ** (դիպի դուռ).- Եկա՛ն:
- (Սերժ եւ Հայր Համբարձում կը մտնեն):
- ՍԵՐՃ.** - Հայր սուրբ, հրամանեցէք:
- ՎԱԼԻԱ.** - Աստուած օգնական:
- ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.** - Աստուած պահապան, Վալիս ջան:
- ՄԱՐԻԱՄ.** - Աստուած օգնական, Հայր սուրբ:
- ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.** - Աստուած պահապան, Տիկին Մարիամ, ինչպէ՞ս հանեցաք Ամերիկան:
- ՄԱՐԻԱՄ.** - Ես եկած եմ հարազատներս տեսնելու, պարտականութիւնս կատարելու եւ վերադառնալու: Ձեր ժողովները ինչպէս անցան, Հայր սուրբ:
- ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.** - Լա՛ւ անցան: Պսակ մըն ալ ըրի: Ամիսէ մը ետք. նորէն կը վերադառնամ էջմիածին:
- ՅԱԿՈՐ** (կը մտնէ տուփով, կը տեսնէ Հայր Համբարձումը, բայց չի նկատեր ով ըլլալը).- Բարե՛ւ Ձեզ, Տէր Հայր:
- ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.** - Ողջո՞յն, Պարոն Յակոբ:
- ՅԱԿՈՐ** (ուշադիր կը նայի).- Վա՛յ, Վարսիկի տղան՝ Համբարձումն է:
- ՄԱՐԻԱՄ** (կշտամբելով).- Հա՛յր Համբարձում:
- ՅԱԿՈՐ** (Մարիամից).- Մարիամ, Հայր Համբարձումը ե՞րբ բերել տուիք:
- ՄԱՐԻԱՄ.** - Մեզի չես օղանաւին մէջն էր, մոռցա՞ր:
- ՅԱԿՈՐ.** - Դուն խելք ձգեցի՞ր վրաս:
- ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.** - Ո՛ւր է, կըբուռզը ո՞ւր է:
- ՄԱՐԻԱՄ.** - Վալիս, կանչէ՛ Անոյը:
- ՎԱԼԻԱ** (դիպի դուրս).- Անո՛յը, կընաս գալ:
- (Անոյը ու Ճիմ ներս կը մտնեն):
- (Անոյը հագած է միմչեւ ծուծկը ճերմակ զգեստ, կարծ, ճերմակ գուրպակ):
- (Ճիմ հագած է տօնական զգեստ):
- (Անոյը եւ Ճիմ կը մտնեն Հայր Համբարձումից):
- ԱՆՈՅԵ.** - Աստուած օգնական, Հայր սուրբ:
- ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.** - Աստուած պահապան, Անոյը, յիշեցի՞ր:
- ԱՆՈՅԵ.** - Անշո՛ւշտ յիշեցի:

ՃԻՄ. - Աստուած օգնական, Հայր սուրբ, ես ալ ճիմն եմ, Անոյ-
չին նշանածը:

ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ - Աստուած պահապան, ճիմ:

ՎԱԼԻԱ (կարմիր մեխակը կը բերէ եւ ճիմի կուրծքին կը դնէ եւ
հպարտօրէն Հայր Համբարձումին): **Փեսաս է, փեսաս:**

ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ - Ուրախ եմ: **Սկսի՛նք:** (Պայուսակն կը
հանէ խաչ ու Աւետարան, փորակայլը կը կապէ): **Սկսի՛նք,
ուրեմն:**

ՄԱՐԻԱՄ - Վայրկեան մը սպասէ՛, Հայր սուրբ: (Իւզի դուրս):

ՅԱԿՈՔ - Մարիամ, կ'ուշանանք, ի՞նչ կայ նորէն:

ՄԱՐԻԱՄ - Քսանհինգ տարի սպասեցնել տուիր, մէկ վայր-
կեան ալ դուն սպասէ: (Դուրս):

(Ներկաները գլուխնին բեւաճ կը նային Մարիամին ելած
կողմը):

(Մարիամ ներս կը մտնէ՝ փրսքիւք տաշտ մըն ալ հետը):

ՅԱԿՈՔ - Ա՛յս ինչ է:

ՄԱՐԻԱՄ (վար կը դնէ տաշտը) - Վալիա՛, ջուր բեր:

(Վալիա դեպի դուրս կ'ուղղուի):

ՄԱՐԻԱՄ - Ո՛ւր կ'երթաս:

ՎԱԼԻԱ - Քոհանոցէն ջուր բերելու:

ՄԱՐԻԱՄ - Սեղանին վրայ շիշով Սեանայ լիճի ջուր կայ,
ատիկա՛ բեր:

ՅԱԿՈՔ - Սեանէն ջուր բերիր:

ՄԱՐԻԱՄ - Առանց Սեանի ջուրին կնո՞ւնք կ'ըլլայ:

(Վալիա սեղանի վրայի շիշով ջուրը կը բերէ):

ՄԱՐԻԱՄ - Լեցո՛ւր տաշտին մէջ:

(Վալիա կը լեցնէ):

ՄԱՐԻԱՄ - Անո՛յչ ջան, կօշիկներդ ու գուլպադ հանէ եւ մէջը
կեցիր:

(Անոյչ կը հանէ կօշիկները եւ գուլպաները ու տաշտին
մէջ կը կենայ):

ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ - Ո՛ւզ է կնքահայրը:

ՃԻՄ - Եղբայ՛րս, քայց դեռ արտասահման է: Կը ցաւիմ, որ
այսօր չկրցաւ գալ:

ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ - Ինչպէ՞ս կրնանք կնքել առանց կնքահայր:

ՄԱՐԻԱՄ - Ճի՛մ, կօշիկներդ հանէ: (Տաշտը ցոյց տալով): *Step up.*

ՃԻՄ - Ըսել կ'ուզես՝ *"step in"*.

ՄԱՐԻԱՄ - Նախ՝ *"up"*, յետոյ՝ *"in"*: Հո՛ն մտիր եւ կնքահայր
եղիր Անոյչին:

ՃԻՄ - *This is cool.* (Կը հանէ կօշիկները եւ գուլպաները եւ Անոյչի
կողմին տաշտին մէջ կը կենայ: Յանկարծ բան մը յիշե-

լով, Մարիամին): **Վայրկեան մը:**

ՄԱՐԻԱՄ (շատ պարզմտօրէն) - Ի՞նչ կայ, ճիմ:

ՃԻՄ - Կնքահայրը խաչ չի՞ բռներ:

- ՄԱՐԻԱՄ.** - Պուստօ փեռայիս: Յակո՛ր, այդ տուփը ինձի տուր:
 (Յակոբ տուփը կու տայ Մարիամին):
 (Մարիամ տուփը կը բանայ, մէկական խաչ կու տայ Անոյշին, Յիմին, Վախային, Աերգէյին: Յակոբին խաչ չի տար):
- ՅԱԿՈՐ.** - Ինձի խաչ չկա՞յ:
ՄԱՐԻԱՄ. - Դուն կոմունիստ ես, ի՞նչ գործ ունիս խաչին հետ:
ՃԻՄ. - Վայրկեան մը:
ՄԱՐԻԱՄ. - Հիմա՞ ինչ կայ, Ճիմ:
ՃԻՄ. - Դուն ինձի ըսիր, որ կնքահայրը չի կրնար իր սանուկին հետ պսակուիլ:
ՅԱԿՈՐ (հեզանմեով). - Մարիա՛մ, դէ՛, Հիմա եկուր եւ այս քրածիդ մէջէն ելիր:
ՄԱՐԻԱՄ (իւր ձեռքի խաչը Յակոբին կ'երկարէ). - Յակո՛ր, ա՛ն այս խաչը եւ եկուր ասոնց կնքահայր եղիր:
ՅԱԿՈՐ. - Հայր Համբարձում, մեծ Հայրը կրնա՞յ կնքահայր ըլլալ:
ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. - Այս օրերուն ամէն ինչ կարելի է: Սկսինք, որ վերջացնենք:
ՄԱՐԻԱՄ. - Յակո՛ր, Հայր սուրբը մտի՛կ ըրէ: Ա՛ն այս խաչը:
ՅԱԿՈՐ. - Սպասէ՛ Մարիամ: (Գրպանէն կը հանէ շղթայով խաչ մը եւ կը կախէ Անոյշի վիզէն): Անո՛յշ Զան, ասիկա մեծ մօրդ, ի՛մ մօրս Հարսնութեան խաչն է, քեզի ժառանգ կը մնայ: (Մարիամին): Մարիա՛մ, Հիմա տուր խաչը: (Խաչը կ'առնէ):
ՄԱՐԻԱՄ. - Հայր սուրբ, մարդ երկու անգամ կրնա՞յ կնքուիլ:
ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. - Պարոն Յակոբ, այս օրերուն ամէն ինչ կարելի է: Սկսինք, որ վերջացնենք: Տիկին Մարիամ, կրնա՞նք սկսիլ վերջապէս:
ՄԱՐԻԱՄ. - Մեղայ, Հայր սուրբ, մեր տան մէջ ամէն ինչ Յակոբը կ'որոշէ: Յակո՛ր, բան մը ըսէ:
ՅԱԿՈՐ. - Լա՛ւ, լա՛ւ, ըսեմ: Ճի՛մ, Անոյշին ձեռքը բռնէ:
 (Ճիմ Անոյշին ձեռքը կը բռնէ):
ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. - Պարոն Յակոբ, կրնա՞նք քիչ մը ածապարել, դեռ պսակ մըն ալ ունիմ այսօր:
ՅԱԿՈՐ. - Այո՛, Հայր սուրբ, ածապարե՛նք: Լա՛ւ, ի՞նչ պիտի ըսէի, ի՞նչ պիտի ըսէի...
ՄԱՐԻԱՄ. - Յակո՛ր, մէ՛կ բան ձգեցի քեզի, մէջէն չես կրնար ելլել:
ՅԱԿՈՐ. - Ինչո՞ւ, խե՞ղք մնաց:
ՄԱՐԻԱՄ. - Աման, Յակո՛ր, ըսէ՛, վերջացուր այլեւս:
ՅԱԿՈՐ (շուարած). - Ի՞նչ պիտի ըսէի...
ՀԱՅՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. - Պարոն Յակոբ, եթէ մեզի չես կրնար ըսել, (հանդիսատեսը ցոյց տալով) անո՞նց ըսէ, միայն չո՛ւտ ըսէ:
ՅԱԿՈՐ. - Հոյակա՛պ: (Դերակատարներուն): Դուք անչա՛րժ կեցէք: (Խօսքը հանդիսատեսին ուղղելով): Աեզի բան մը պիտի ըսեմ, բայց Աստուած սիրէք, Մարիամին չըսէք:

Յը մը, երբ Մարիամը էջմիածին գացած էր, եւ Անուշը
առի ու ընկերոջն՝ Մուրատին տունը տարի: Մուրատին
Հայրը քահանայ էր եւ Անուշը գաղանօրէն կ'ըսէր: Հի-
մա եթէ ըսեմ, մարդ պիտի չհաւատայ ինծի եւ այս ու-
րախութիւնն ալ ջո՛ւրը պիտի իյնայ: (Դեպի դերակա-
տարները): Հա՛յր սուրբ, կրնանք սկսիլ:

ՀԱՅՐ ՀԱՄԱՐՁՈՒՄ (հանդիսաւոր եղանակով).- Անուն Հօր եւ
Որդոյ...

ՅԱԿՈՔ (ընդհատելով).- Հա՛յր սուրբ, կը ներէք, մէ՛կ վայրկեան,
մէ՛կ վայրկեան եւս...

ՄԱՐԻԱՄ.- Մեղա՛յ, աղօթքն ալ կ'ընդհատուի: Ի՞նչ ըսեմ,
կոմունիստ ես:

ՅԱԿՈՔ.- Է, Հայր սուրբը ըսաւ. «Այս օրերուն ամէն ինչ կ'ըլլայ»:
Սերգէ՛յ, ո՞ւր ես:

ՍԵՐԳԷՅ.- Պարոն Յակոբ, աւազանի անունս Սարգիս է:

ՅԱԿՈՔ.- Սարգի՛ս, անունովդ մեծնաս: Բոլորին բաժակները
Հայաստանեան քոնեաք լեցուր:

ՍԵՐԳԷՅ.- Լեցուած է: (Սերգէյ ափսոսով քոնեաքները կը բերէ եւ
կը հրաձգէ Անրկաներում):

ՅԱԿՈՔ.- Ճի՛մ...

ՃԻՄ.- Պարոն Յակոբ, աւազանի անունս Յակոբ է:

ԱՆՈՅՇ (տարուած).- Ճի՛մ-Յակոբ, չէ՛ք ըսած...

ՃԻՄ (մոյնպէս տարուած).- Առիթը չէր եղած:

ԱՆՈՅՇ (ձիմիմ երկու ձեռքերը քննելով եւ շատ սիրայիտ).- Մ՛հ, ճի՛մ...

ՄԱՐԻԱՄ.- Ինծի նայեցէ՛ք, Համբարումի չկա՛յ այսօր:

ՀԱՅՐ ՀԱՄԱՐՁՈՒՄ.- Շո՛ւտ, կնուներ սկսինք, այլեւս ես շատ
ուշացայ:

ՅԱԿՈՔ.- Հա՛յր սուրբ, կը ներէք, վերջին կենաց մըն ալ, յետոյ՛
կնուներ... (Բոլորին): Բարձրացուցէ՛ք բաժակները...
(Բոլորը կը բարձրացնեն բաժակները):

ՅԱԿՈՔ.- Խմենք մեր տոհմականութեան կենացը...

ՄԱՐԻԱՄ.- Չեղաւ, Յակոբ: Նախ կնուներ կ'ընենք եւ տոհմա-
կանութիւնը կը վերահաստատենք, յետո՛յ կենաց կը
խմենք:

ՅԱԿՈՔ.- Մարիա՛մ, Աստուած վկայ, ճիշդ ես: Ամէն բանէ
առաջ, ես կը խմեմ քո՛ւ կենացը, որ տոհմական ծէ-
սերը նորէն տուն բերիր:

(Բոլորը ձեռներնին բարձրացուցած խմիչքի գաւաթնե-
րով՝ կ'արձանանան):

(Կը սկսի ուրախ երաժշտութիւն մը եւ լոյսերը դանդաղօ-
րէն կը մարին):

(Շար. 2 եւ վերջ)

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ի՞նչ էլի, ի՞նչ էլի սիրելիս

Այ՛նքա՛ն ըստ շտեղծագործության ի՞նչ էլի
Եւ ի՞նչ էլի ըստ ի՞նչ էլի, դուք ի՞նչ էլի սիրելիս եւս.
Պատճառով էլ, դուք էլի, դուք էլի, դուք էլի շտեղծագործության
Երջանակները սիրելիս էւ ի՞նչ էլի սիրելիս:

Անբարեբաղի քաղաքները, դուք էլի էլի, ի՞նչ էլի.
Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Այնպիսի ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի:

Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Երջանակները սիրելիս էւ ի՞նչ էլի սիրելիս
Այնպիսի ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Եւ ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի:

Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Այնպիսի ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Անբարեբաղի քաղաքները, դուք էլի էլի, ի՞նչ էլի
Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի:

ՅԱՆՔ
Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Այնպիսի ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
ՅԱՆՔ ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի
Ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի, ի՞նչ էլի

Շահանդուխտ

ՎԵՐԱԴԱՐՁԸ

- Բարեւ ձեզ, - ըսի ու մտայ բարեկամուհիի մը բնակարանէն ներս: Բարեւս ընդունելէ ետք, նստեցայ երիտասարդ կնոջ մը կողքին, որ Հիւրաբար այցելութեան էր եկած: Կարճատեւ զրոյցէ մը ետք, ինչ որ Լիբանանի մէջ ընդհանրապէս կը խարսխուի օդի-կլիմայի մասին խօսելէ առաջ, ելեկտրականութեան ընդհատման, ջուրի մատակարարման չափին ու ժամերուն շուրջ: Կողքիս նստած կինը խոժոռ էր, դժգոհ՝ ինչպէս բոյոր լիբանանցիները՝ երկրին մէջ երկար տարիներէ ի վեր տիրապետած անբնական կացութենէն: Ոսքը ուղղելով ինձի՝ ըսաւ.

- Երանի թէ միայն ելեկտրականութիւնը, ջուրը ըլլային երկիրը խանգարող հարցերը. հապա՞ ընկերային անարդարութիւնը, հապա՞ մեր Առաջնորդարանները, հոն ընտանեկան դատեր տեսնող մեր ազգայինները, անոնք արդա՞ր են...: Տարիներէ ի վեր կը խնդրեմ, կ'աղաչեմ, որ հարցիս լուծում մը գտնեն. լսող չկայ:

Հարմացած՝ մտիկ կ'ընէի գրեթէ գայրացած երիտասարդ կնոջ բարկանայթ խօսքերը: Ան շունչ մը առաւ, «ախ» մը քաշնց սրտին խորէն ու շարունակեց առանել բարձրաձայն ու ջղապիտ.

- Երկու աղջիկներս ալ հօտը տարաւ. պարտն ամուսինս, մեծս՝ 11 տարեկան, փոքրս՝ 5 տարեկան: Ըլլալիք բա՞ն է այս: Ախ, այդ օրը, դուք մեր քովը ըլլայիք ու մեր ողբերգութիւնը դիւ...էիք: Ամբողջ դրացիները ոտքի ելան մեր պոռչաուէէն. աղջիկներուս ձեռքերէն կ'ը քաշքշէի...: Անոնք՝ «Մամա» կը ճշային, մինչ ամուսինս բռնակալի մը նման իր բազուկներով խլեց զանոնք ու տարաւ...: Ես ինչպէ՞ս դիմանայի իր ուժին...: Տարաւ, իր սիրած կնոջ հետ Պրազիլ գացեր են...: Գացին, ոչ մէկ լուր՝ երեք տարիէ ի վեր: Հարցս ներկայացուցի Առաջնորդարան, որ թելադրեցին դիմել Պրազիլի Առաջնորդարան: Վերջապէս, աղջիկ զաւակներ էին, իրաւունքը իմս էր. անիրաւը տարաւ ու յանձնեց խորթ մօր մը...: Ով գիտէ ինչ դժուար կեանք մը կ'ապրին հարազատ զաւակներս...: Մինչեւ իսկ դիմեցի պրազիլական Հիւպատոսարան ճար մը գտնելու, վերադարձնելու զաւակներս, անկարելի եղաւ: Իսկ ես միլիոնատէր չէի, որ կարենայի դրամէն՝ զօրութեամբ տիրաւորալ իրաւունքիս:

Կինը այնպիսի ջղագրգռութեամբ պատմեց այս բոլորը, կարծէք ես ըլլայի այդ ամէնուն պատճառը: Բացի լուելէ, ոչինչ կրնայի ընել: Մեղմելու համար իր բարկութիւնը, եւ շունչ մը տալու համար իր շնչասպառ յարձակողականին, ըսի.

- Երեք տարի անցած է այդ օրէն: Մեծ աղջիկը Հինա 14-16 տարեկան եղած, ան կրնայ հասկնալ, թէ ինչո՞ւ հայրը այդքան փայրագ ձեռով դինք խլեց քեզմէ: Ձէ՞ք կրցած խօսիլ իրեն Հետ Հեռաձայնի միջոցաւ:

- Ինչեք կ'ըսէք...: Կր Հեռաձայնեմ, ընկալուչը ամուսինս կ'առնէ ու կ'ըսէ. «Հոս զաւակ չունիս, մոռցիր զանոնք...: Անոնք իմ զաւակներս են»:

- Այսպիսի դաժան ու անզուժ մարդու մը դիմաց ինչ կրնամ ընել,- բաւա ու ձայնը խեղդուեցաւ արցունքներու Հեղումէն: Ամպոտ ու փոթորկոտ երկինքէ մը ետք տեղացող յորդ անձրեւին տեսարանը կը պարզուէր: Լուռ էինք տան մէջ դանուողներս, իսկ կինը կը հեկեկար անզուսպ:

Երբ լացին կշռոյթը թեթեցաւ, հարցուցի՝ իր ջղայնութիւնը մասամբ մեղմելու համար.

- Ո՞ւր հանդիպած էք այս երիտասարդին, ինչպէ՞ս ամուսնացած էք անոր Հետ, չէի՞ք ճանչցած զինք, Տիկին Շուշան:

- Երանի հանդիպած չըլլայի իրեն, այնքան անուշ լեզուով, բարեկիրթ երիտասարդ մըն էր, որ...: Ով որ ըլլար՝ կը սիրահարուէր: Նոյն հաստատութեան մէջ կ'աշխատէինք: Ես դպրոցէս նոր վկայուած էի, քարտուղարութեան պաշտօն կը կատարէի, իսկ ինք այդ մեծ դերձակատան պատասխանատու պաշտօնեան էր, դործին ղեկը իր ձեռքն էր: Հագի, քանի մը ամիս աշխատած, սկսաւ շուրջս զառնալ: Ձերկարեմ, սիրեցինք զիրար, ամուսնացանք, բայց...

- Բայց ի՞նչ,- ըսի Հետաքրքրուած պատմութեան շարունակութեամբ:

- Յակոբին մայրը Հակառակեցաւ մեր մտերմութեան: Քոյրերը Հետեւեցան մօրը որոշումին: «Անկարելի է, աղաս, այդ աղջիկը չի կրնար մեր տունը հարս զալ...» ըսեր է մայրը: Մենք կը շարունակէինք մեր սիրալիր պտոյտները, մտերմիկ Հանդիպումները: Կը հաւատայի Յակոբի խոստումներուն, «Ոչ ոք կրնայ քեզ խլել ինձմէ» կը կրկնէր անդադար, ու ես կը Հաւատայի իր խօսքերուն, որոնք երդումին ուժը ունէին: Ձէի հասկցած պատճառը: Երբ Յակոբին հարցուցի, թէ ինչո՞ւ մայրը կը հակառակի մեր ամուսնութեան, ան ըսաւ, «Կ'ուղէ հարուստի մը աղջիկը ունենալ իբրեւ Հարս, որովհետեւ դուն դրամական առաւելութիւն չունիս: Իսկ իր ներկայացուցած աղջիկը ես չեմ սիրած. ո՛չ միայն տղեղ է, այլեւ՝ տգէտ, ուսում չունի, դրամօժիտ պիտի բերէ Հետը: Ու ես Հակառակ եմ առանց սիրոյ ամուսնութեան»: Յակոբին խօսքերուն հաւատացի, առ ոչինչ նկատեցինք սպանալիքները մօրը, որ օր մը ինձի բաւա բարկաճայթ. «Դուն չես կրնար աղուս կինը ըլլալ...: Դուն մեր տունը հարս պիտի չգաս: Յակոբը մի երագեր...»: Երբ այս մասին ըսի Յակոբին, ան հանդարտեցուց զիս՝ ըսելով, «Կիններուն խօսքին մի հաւատար, ես կամ ու կը մնանք միասին...»: Պսակի պատրաստութիւններ տեղի ունեցան: Ամէն ինչ

դասաւորուած էր, ու Հակառակ մօրը ընդգիւժութեան, որոշուած Կիրակին տեղի պիտի ունենար պսակը, երբ Ուրբաթ, ուչ երեկոյ-
եան, կին մը մեր տան դուռը բախեց. ան իրեն Հետ բերաւ
երկտող մը ու յանձնեց ինծի. Յակոբին գիրն էր. «Մեր պսակին
որոշումը ջնջուած է... Ձեռն կրնար մօրս Հակառակիչ, որովհետեւ
ան պիտի գրկէ ընտանեկան ժառանգութենէ»:

Շուշան գլխու պտոյտ մը ունեցաւ, աչքերուն առջեւ ամէն
ինչ կլոր-կլոր դարձան, ցնցուեցաւ Հոգեպէս ու գետին ինկաւ
նուաղած: Ձկրցան սթափեցնել զինք սովորական միջոցներով.
փոխադրեցին Հիանդանոց:

- Պսակուելու փոխարէն ես մնացի Հիանդանոց: Յնցումը
ծանր ազդած էր Հոգեկան վիճակիս, ու անզազար կու լայի...:
Երբ բնական վիճակս վերագտայ չարաթ մը ետք, մտածեցի
Յակոբին խոստումներուն, ջերմ Համայններուն եւ յետոյ զըր-
ժումին մասին: Ուրեմն՝ զինք Հետաքրքրողը նիւթական ժա-
ռանգութեան տիրանալու Հարցն էր:

Շուշանի Հոգեկան աշխարհին մէջ փուլ եկած էր Հաւատք
մը՝ Հանդէպ մարդուն, մանաւանդ այնպիսի մարդուն, որուն
սիրոյ խոստումներուն Հաւատացած էր: Ինք եւս սիրած էր
Յակոբը, քայց այդ ինչպէ՞ս պատահած էր, որ մայրը տիրա-
պետած էր անոր Հոգեկան աշխարհին: Ուրեմն՝ դրամը աւելի
զօրաւոր է, քան սէրը, մտածեց Շուշան, ու յուսախաբութեան
վիշտը դինք վերածեց ապրելու իրաւունք շունեցող էակի:
Ինչո՞ւ ապրիմ այլեւս այս փուն աշխարհին մէջ, երբ սիրածդ
իսկ կ'ուրանայ քեզ...: Որոշեց անձնասպան ըլլալ, կամ՝ երթալ
վանք մը ու Հոն ընդունիլ կրօնաւորուելի դատնալու ուխտը:
Նոյն օրն իսկ Հեռաձայն մը կը Հնչէր.

- Այո, - դիմացէն պատասխանողը Յակոբն էր, որ զզջու-
մով ցաւ կը յայտնէր պատահարին, ու կը խոստովանէր, թէ
այդ երկտողը ինք զրած էր մօրը ստիպումով, գինովութեան
պահուն: Ու կը շարունակէր կրկնել խոստումը: «Այս Կիրակի,
նոյն եկեղեցւոյ մէջ պիտի պսակուինք, սիրելի իմ Շուշան: Հոգ
լէ թէ ամիս մը անցած ըլլայ առաջին թուականէն»:

Ուրախացա՞ւ, թէ զարմացաւ, Շուշան կու լար...: Մայրը
իր կարգին զարմացաւ, երբ տեղեկացաւ այս Հոգեփոխութեան:
«Անտուծոյ կամքը ըլլայ, աղջիկս, Աստուած միշտ պիտի օգնէ
բարի սիրտ ունեցողներուն»:

*
* *

Երկու ժամ անցած էր մեր անակնկալ Հանդիպումէն: Կին
մը այսքան եղելութիւն փոխանցեց մէկ-երկու ժամուան մէջ.
պատկերասփիւռէն դիտուած փոքր պատատի ժապաւէնի մը
նման Հետեւած էի կնոջ մը արկածախնդրական պատմութեան:
Ան կը շարունակէր ներկայացնել սննաբիտն, մերթ լալով, ու

մերթ ջղային շեշտով: Ինձի այնպէս թուեցաւ, թէ նստած եմ իր կողքին դատախազի դերով, ու պիտի կարենամ քակել զորդեան Հանգույցը: Երկու զաւակներու մայր մը օգնութիւն կը խնդրէր ինձէ: Իսկ ես կը Հարցնէի.

- Բայց այդքան սիրալիր ամուսնութենէ ու երկու անուշիկ աղջիկներու ծնունդ տալէ ետք, ինչո՞ւ Հեռացաւ Յակոբ:

- Մեր ամուսնութեան տասներորդ տարեդարձին, երբ Հանդիսաւոր տասնամեակ մը կը տօնէինք, ան Հրախրած էր նաեւ քարեկամուհի մը, որուն ծանօթ չէի: Ներկայացուց զայն ինձի,- Տիկին Սիրան: Մեր գործատեցիին նոր քարտուղարուհին:

Երկու կիները իրարու ձեռք թօթուեցին ժպտուն: Տարեդարձի երեկոն անցաւ բնական, զուարթ:

Ու յետոյ...

Պատմութիւնս երկար է...

Ի՞նչ անծանօթ կին մը, ձեզի բացի սիրտս տանջող ցաւերը: Կը ներէք: Ճակատագիրս է եղեր...

Ի՞նչ կը Հաւատա՞ք ճակատագրի,- Հարցուց ինձի թափանցիկ կանաչ աչքերը կեղրոնացնելով վրաս, սպասելով պատասխանիս:

- Ճակատագիր, դիպուած, բախտ, բոլորն ալ աստուածային կարգադրութիւններ են դժբախտանալու կամ բախտաւորելու: Բայց ես կը Հաւատամ, որ Աստուած չարիք չի ցանկար մարդուն. մենք ենք չարերը, երբ կը Հակառակինք Աստուծոյ կարգադրութեան: Տորին պատմութիւնը կը յիշեն միշտ դժբախտ մարդիկ. Տորը չար չէր, բարի էր, բայց Աստուած տեսակ-տեսակ փորձանքներ տուաւ անոր, որպէսդի Հաւատքը զօրանայ, շուրանայ զԱստուած: Ու այդպէս ալ եղաւ: Ես լսած եմ կրօնաւորներէ, թէ Աստուած բան մը կ'որոգէ դժբախտացած արարածներէ: Նպատակ մը ունի Աստուած, պէտք է Համբերել...

- Ասոր կ'ըսեն ծակ փրփստփայութիւն...: Աստուած մեզ պիտի պատժէ իր կամքը յայտնաբերելո՞ւ: Աստուած ամենակարող է, կրնայ իր կամքը արտայայտել մեզ բախտաւորելով: Չէ՞ որ իր զաւակներն ենք:

- Ես չեմ կրնար այսպիսի զրոյցներ շարունակել՝ Աստուծոյ գոյութիւնը, կամքը Հաստատելու Համար: Ուրեմն՝ ըսնեք ճակատագիր...: Աստուծոյ փայտուն չէ եղած Հակառակ այսքան գեղադէմ ու առողջ ըլլալուդ: Ի՞նչ կրնաք բախտաւորուիլ...: Բայց շարունակեցէք պատմութիւնը ձեր ճակատագրին, ո՞ւր ու երբ պիտի աւարտի այս «երկար մեթրած» ժապաւէնը:

- Ճիշդ բնորոշում մը տուիք, տիկին,- կը ներէք, տիկին կոչեցի ձեզ, ամուսնացա՞ծ էք: Եթէ այո, ստաւել լաւ պիտի դառնայ կացութիւնս: Քիչ առաջ պատկերասփիւռի փոքր պատառին վրայ պարզուած արկածախնդրական պատմութիւն մը նկատեցիք ողիսականս: Հիմա զայն կ'որակէք «երկար մեթրած» շարժանկար: Ծառ ճիշդ է, այս երկրորդ բնորոշումը:

Ուրեմն՝ տարեդարձի այդ դուարթ երեկոն վերջ դրաւ մեր ամուսնական երջանկութեան: Հարուստ կին մըն է եղած այդ էգը, սմուսնայութուած, սիրահարուած է Յակոբին, երբ գրադումի Համար մուտք գործած է Յակոբին աշխատանոցէն ներս, ուր մենք նոյն «քախտաւորութեան» արժանացած էինք: Միրային պատմութիւններու կեդրոնատեղիի մը վերածուած էր այդ վայրը Հիմա: Ու այլեւս ես գոյութիւն չունէի սիրելի ամուսինիս համար, որմէ ծնունդ տուած էի երկու աղջիկ զաւակ: Ու Հիմա կ'իրականանար կեսուրիս քանիցս կրկնած թունաւոր խօսքը, որ անէծքի պէս փլաւ զլիսուս...

«Նոյնիակ Հինգ զաւակի մայր ալ ըլլաս, դուն Յակոբիս կինը պիտի չմնաս»...: Տարի մը քաշքշեցինք վէճերով լեցուն անհամ մեր օրերը, ու օր մըն ալ Յակոբ Հեռացաւ տունէն, երկու զաւակներս իրեն Հետ քաշքշելով: Միրուհին Հետ մեկնած է Եւրոպա, Հոնկէ՝ Պրազի, օտարութեան մէջ վայելելու իրենց երջանկութիւնը: Ապօրինի կապ մը, զաւակներուս զլիսուն վերեւ խորթ մայր մը...: Այս է խիղճը մարդկութեան: Ոչ ոք օգնեց ինձի, ո՛չ ազգային մարմիններ եւ ոչ ալ պետական Հասարակութիւններ, ո՛չ եկեղեցի եւ ոչ՝ ընկերութիւն կոչուած Համայնքը: Ծառէն կտրուած ճիւղի մը նման մնացի չոր Հողին վրայ, ոչ մէկ զարուն ժպտեցաւ երկար տարիներէ ի վեր: Այսօր մեծ աղջիկս 26 տարեկան է, փոքրս՝ 20...

- Երիտասարդուհիներ եղած են: Անգամ մը եւս Հետաքրքրուեցէք անոնցմով, թերեւս այլեւս դուրս եկած են Հայրական բռնակալութենէ: Նոր դարու մէջ կ'ապրինք, տիկին: 21րդ դարու երիտասարդ սերունդները տարբեր կը մտածեն:

- Շատ փորձեցի, բարեկամներու միջոցաւ զտայ անոնց Հասցէն: Հեռաձայնեցի: Կը փափաքին զիս տեսնել, որովհետեւ տասը տարի կենակցելէ ետք նոր կ'նոջ Հետ, մանչ մը եւ աղջիկ մը ունենալէ ետք անկէ, ձգած են իրար ու բաժնուած: Պատմութեան մնացեալ մասին ծանօթ չեմ: Մրտցաւ ծանօթներէ իմացայ այս ամէնը: Երանի թէ միանայի զաւակներուս: Հիմա 60 տարեկան է ամուսինս, գուցէ քիչ մըն ալ աւելի:

- Ուրեմն՝ ծերութեան սեմին կը մտածէ ձեր մասին...
 - Իմաստ չունի այլեւս: Երիտասարդութիւնս փճացնելէ ետք ինքն ալ իր ծերութիւնը թող ապրի առանձին...

- Կը խղճա՞ք իր վրայ:

- Երբեք, օձ մըն էր ան, որ օր մը փաթթուեցաւ ինձի, խայթեց, թունաւորեց ու դնաց: Օձը կը մնայ օձ...: Ափսոս, որ աղջիկները դժուար կը Հասկնան այսպիսի տխարներուն ինքնութիւնը, ու կը Հաւատան անոնց լորձնոտ խօսքերուն: Միսի Հոտ առած կատուներ են ինձի Համար բոլոր արու կոչուած արարածները, որոնք գողութեամբ լափելէ ետք միսերը, անկրնի մը մէջ կ'ըսքեն իրենց աղտոտած դունչը. կշտացած ըլլալու զոհունակութեամբ մլաւելով...: Երանի թէ աղջիկներս կարե-

նային վերագառնալ ինձի: Եթէ Հարուստ բլլայի. կը զրկէի անոնց օղանաւի տոմսը, 15 տարի ետք կարօտս առնելու...

Լուսթիւն տիրեց. իր կեանքին ողիսականը պատմող կինը յոգնած էր: Աչքերը փակեց, հեռացաւ ինքնիրմէ, կարծես ինկած էր երազին գիրկը ու կը տեսնէր իր դաւակները իր գիրկին մէջ:

- Սուրճ մը առէք,- ըսաւ տանտիրուհին, որուն այցելութեան եկած էր: Շուշան աչքերը բացաւ, առաւ սուրճին գաւաթը ու ա՛յ ոչինչ խօսեցաւ: Իւրաքանչիւրս իր մտածումներով օրօրուն, կ'ըմբռնէինք սուրճը: Արդեօք այսքան ցաւ ծանր չէ՞ կնոջ մը համար, որ մայրացած է՝ յոյսերով վառ օր մը, իր կեանքին ծաղկումը տեսնելով իր ծնած դաւակներուն թարմ դազարումին մէջ: Գազան մը պէտք է ըլլայ այս մարդը,- ըսի մտքէս, յետոյ՝ բարձրաձայն կրկնեցի մտածումս, մինչ Շուշան աչքերը լայն բացած գոռաց:

- Գազա՞ն...: Գազանները խիղճ կ'ունենան, իրենց շուրջը կը նային խոհեմութեամբ, եթէ վնասողներ չկան, անոնք կը մեղմանան: Օձն իսկ կը հմայուի. ինքն իր վրայ կը ծայուի, երբ քաղցր ձայն մը իմանայ, երբ երգի մը Հնչիւնները լսէ, չի խայթեր...: Օձը սիրելի գիտէ: Կը պատմեն, թէ կիներու սիրահարւած օձեր ալ կան: Ես լսած եմ այդպիսի պատմութիւններ մանկութեանս օրերուն, մեր զրացիներէն:

- Բայց Յակոբ քեզ սիրած է, յետոյ սիրած է երկրորդ կին մը եւ անկէ եւս դաւակներ ունեցած:

- Ես ալ ձեզի պէս կը կարծէի, բայց ատիկա սէր չէ եղեր, տեսակ մը զգացում կամ ուրիշ բան մը, որուն անունը չեմ գիտեր: Սիրելի կը ձեռացնեն մինչեւ որ... ուտեն միտը: Քիչ առաջ ըսի, թէ կատուի կը նմանին անոնք...

- Բոլոր արունները ձեր Յակոբին չեն նմանիր, տիկին: Շատ բարկացած էք եւ կորսնցուցած դատելու ձեր կարողութիւնը:

- Այնպէս կը ծեծէր գիս, անխնայ: Սրերով մարմինս կը ցաւէր...: Ու դաւակներու դիմաց կը ծեծէր, անոնք ալ կը կարծէին, թէ յանցանք մը գործած են: Կը յիշէր մայրը ու կը Հայհոյէր, թէ ես պատճառ եղած էի մօրմէն բաժնուելուն, թէ՛ մօրը խօսքը չէ կատարած, ապա թէ ոչ հիմա Հարուստ անձնաւորութիւն մը կ'ըլլար: Այդ է իր պատրուակը: Զիս մղեց, ստիպեց աշխատելու, որպէսզի կարենայի դաւակներու գրաւորականը ճարել: Բայց ձգեց հիմա այս փուն խօսքերը, կրնա՞ք օգնել ինձի՝ դաւակներու միանալու: Ի՞նչ միջոցներ կը թելադրէք զանոնք մօտս բերելու:

- Փափուկ Հարց է, Տիկին Շուշան: Ենթադրենք, թէ օղանաւի տոմս մը ճարեցինք, դաւակները պիտի յօժարի՞ն երկար տարիներ իրենց Հօր Հետ ապրելէ ետք: Աորթ մօր Հարցն ալ կայ, ան եւս թող պիտի չտայ անշուշտ...

- Արդէն երկրորդ կնոջմէ ալ բաժնուած է տարիէ մը ի մեր: Ան էր Հարազատ զաւակները Հետը տարած է:

- Ուրեմն՝ կ'արժէ փորձ մը եւս ընել. նամակներ գրեցէք, Հեռաձայնեցէք, թերեւս ճՅ տարեկան ըլլայէ ետք քիչ մը փափկանայ սիրտը:

- Չեմ կարծեր. չեմ կարծեր...

Պահը հասած էր հրածեչտ առնելու այս տառասպած մօրմէն, Հետս տանելով դառնութիւնը ճակատագրի մը, որ միայն Հոգին կը սպաննէ. յոյսեր կը ըզկտէ, մարդը կը Հեռացնէ դեղեկութիւններէ, բնութեան բարիքներէն: Վերջապէս էգ մը եւ արու մը երբ միացած են իրարու աստուածային օրհնութեամբ, ա'լ ատկէ ետք ինչո՞ւ Հանդիպէին դաւադրութեան, անհաւատարմութեան խրամատին: Ինչո՞ւ բացուած են անդունդներ այս կնոջ դիմաց: Ինչո՞ւ Յակոբ եղած էր այդքան անդուժ դեղեկ կնոջ մը կեանքը խորտակելու, անոր երազները ցամքեցրնելու: Արդեօք Շուշան յանցանք մը չունէ՞ր...: Այս ալ Հարցին կասկածի բաժինն է: Կասկած մը մտաւ մտքիս մէջ տուն վերադարձիս: Բայց ինչո՞ւ յանցաւոր ըլլայ մայրացած, աշխատող կին մը, որ արցունքի Հեղեղներ ունի Հոգին խորը: Եթէ խննթ ըլլար. կր խնդար պատահարին վրայ, իսկ յացող այս կնոջ արցունքները սիրտս խռովեցին: Եթէ թշնամի մը ըլլար զաւակները խլողը, իրաւունք կու տայիր թշնամիին: Բայց երբ ինքզինք Հաւատարիմ Հայր մը դաւանած մարդ մը չարչարէ մայր մը, որուն մայրութեան Հեղինակն է ինք. այս պարագային բառ մը կայ, օտարՀունչ բառ մը, աստի՛...: Հայերէ՞նը այս բառին: Լաւ որ չեմ չսած: Թող Հայերը շունենան այս բառը, չթափանցեն անոր իմաստին, կր բաւէ, որ Արեւմուտքը ծնունդ տուած է անոր: Մենք ունինք ընտանեկան սրբութիւն, որ միայն սիրոյ խորհուրդին վրայ հիմնուած է: Երանի՛ սրբակեաց Հայ բնտանիքներուն...

Մտածումներս երկարեցան յաջորդ օրերուն, չկրցայ ելք մը գտնել Շուշանին բարդ ու կնճռոտ Հարցին: Ուղեղիս մէջ մնաց սատիք բառը, ու Հոգիս ցաւեցաւ սատեղմի զո՛հ բոլոր կանանց Հաշուոյն...

Իժրախտ կնոջ Հետ անակնկալ ծանօթութիւնը վերածուցաւ բարեկամական կապի: Պարբերական Հանդիպումներ, ցաւին դարման մը որոնելու առիթներ կ'ըլլային: Ինչպէ՞ս կարելի պիտի ըլլար մանկութենէ դուրս ելած, երիտասարդ դարձած զաւակներուն միանայլ:

- Մեծս Հիմա 26 տարեկան է, փոքրս՝ 21,- կր կրկնէր ան: Հարսնցու աղջիկներ եղան, բայց չեմ հասկնար, թէ ինչո՞ւ չեն կրնար դուրս գալ իրենց Հօր շղթային փշոտ օղակներէն: Որոշեցինք միասնաբար դիմել արեւադարձային այդ գօտիներուն մէջ մեր ունեցած բարեկամութեան ճամբով բախտ փորձելու. նամակագրութիւն, Հեռաձայնային կապ, եւ այլն: Կողմնակի միջոցառումներ, որոնց պիտի խառնէինք քիչ մը դիւանագիտու-

թիւն, քիչ մը բարոյական պարտաւորութիւններ եւ քիչ մըն ալ մարդկայնական զգացողութիւն: Նամակներ գացին-եկան դէպի Հեռաւոր աշխարհներ: Պատասխաններ չէինք ստանար, այլ միայն կողմնակի շուկներ, թէ՛ պարոն Հայրը արգիլած է նոյնիսկ Հեռաձայնային կապը Պէյրութի Հետ: Ու երկար ժամանակ մը ետք, Շուշան կը ստանայ նամակ մը իր օրինաւոր ամուսինէն: Հրա՞ջք էր պատահածը, թէ խորամանկ ու նենդ մէկ խայծ, թակարդը ինչպիսի տրամաբանութիւն: Բայց ո՞վ պիտի ինկար լարուած թակարդին մէջ, իր կեանքը քանի մը կիներու Հետ երջանկացուցած եւ ապա ընտանեկան բոյներ աւերած անխնայ մա՞րդը, թէ սա կինը...

- Չեմ Հաւատար այս մարդուն խօսքերուն, - կ'ըսէր Շուշան, զիս տեղեակ պահելով նամակին բովանդակութեան, - ան զրած է՝ «Մոռնանք անցեալը եւ միանանք դարձեալ»:

- Իսկ դուն ի՞նչ պատասխանեցիր:
- Եթէ փոքր աղջիկս ինձի դրկես՝ կը Հաւատամ առաջարկիդ...: Բայց ինք կ'ուզէ աղջիկներէն առաջ զայլ, ճամբայ բանալ: Գրած է նաեւ, թէ տնտեսական դէշ պայմաններու մէջ է եւ առողջութիւնն ալ խախտած...

- Արեմն ապահովութիւն գտնելու պիտի գայ, - ըսի անվերապահ:

- Այ, չեմ Հաւատար իր խօսքերուն. քանի՞ անգամ պիտի ինկամ իր բացած ցեխոտ փոսերուն մէջ...: Տեսնենք, նախ թող աղջիկներէս մէկը դրկէ: Վերջապէս, անկարելի է ներել այս մարդուն, որ ամբողջ կեանքս խորտակած է:

*
* *

Պէյրութի միջազգային օդակայանը էջը կատարող, արեւադարձային երկիրներէն թողչք առած օդանաւ մը իրեն Հետ կը բերէր մանկամարդուհի մը: Հազիւ երեք շաբաթ առաջ իմացած էր Շուշան փոքր աղջկան փափաքը իր մօտ գալու, խնդրելով նոյն ատեն օդանաւի տոմսի ապահովում, շուտափոյթ կերպով:

Շուշան կատարած էր իր կրտսեր աղջկան փափաքը, օր առաջ կ'ուզէր տեսնել 15 տարիներէ ի վեր չտեսած իր աղջընակը: Արդեօք ի՞նչ ձեւ առած է. մաղերը սեւ էին, աչքերն ալ, Հասակը արդեօք բա՞րձր էր, թէ միջակ...: Օդակայանի սպասման սրահին մէջ վայրկեանները ժամեր կը թուէին: Որդեկորոյս մօր սիրտը կը բաբախէր արագ կշռոյթով. պահ մը կարծես թէ պիտի նուազէր, բայց զօրացուց կորովը լաւատեսութեան մղուճով: Երա՞զ էր արդեօք պատահածը...: Հօրը դէմքին ու աչքերուն գոյնը ունէր Շողիկ: Առաջին անգամ կրկնեց այս անունը քիչ մը բարձրաձայն: Մօտը կեցած օտարականներ իր կողմը նայեցան: Ինքնիրեն Հետ խօսող կինը ցաւագար մը

նկատեցին: Շուշան անդրադարձաւ իր ինքնակորոյս վիճակին: Աչքերը կեղրոնացուց շարան-շարան դուրս եկող ճամբորդներուն վրայ: Անոնց մէջ պարմանուհի մը տեսնել կ'ուզէր: Արդեօք խաբուած էր: Համբերութիւնը հաստաւ, մօտեցաւ օղանաւի ընկերութեան պատասխանատուին եւ ճամբորդներու մէջ իր աղջկան անունը փնտռեց:

- Այո, տիկին, Շողիկ եկած է արդէն...

Շուշան վերադարձաւ ապակեպատ միջանցքին, կարծես նշմարեց բարակ մարմին մը, իր ամուսնոյն երիտասարդութիւնը յիշեցնող պատկեր մը ու ճշաց.

- Շողիկ...

Պարմանուհին գեղուղէշ, նայուածքը դարձուց ճիչին կողմը, ու լսուեցաւ «Մամա» բացազանչութիւնը...

Հարազատ արիւնը յատկօրէն ցոյց տուաւ անխարդախ սէրը մօր ու զակին: Անոնց ողջագործումը յորդահոս հեկեկանքով թրջուած, տեւեց երկար: Վերագտնում մըն էր, թէ երազի մը կենդանացումը: Կարծես չէին հաւատար պատահածին: Զղջումը խստասիրտ հօր մը, սուր դաշտյնի մը նման կըտրած էր տարիներու ոխը, ատելութիւնը, շարամիտ դաւերը, նենգ որոշումները:

- Հա՞յրդ, Շողիկ, պիտի գա՞յ...

- Կարծեմ՝ այո, հրաւերիդ կը սպասէ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Յունուար, 2002



Ս. Քիչճեան

ԴՈՒՆ ԵՒ ԵՍ / ԵՍ ԵՒ ԴՈՒՆ

Մարմինս ունի
 իր երաժշտութիւնը
 կորագիծ լար վր՛
 ուր սեղմաարսփ
 սատներու խաղով
 լարատեւ քնքշանքիդ
 մտերմութեան մէջ
 դանդաղօրէն
 սուգուեցայ,
 կողերուդ տրոփից
 հեթանոսաբար
 արձագանգելու...

Եւ գիշերը
 խտացաւ
 սեր սիջեւ
 մութին ցնորքը
 տարածուող թելերուս
 ճերմակ դողից
 երանութեան
 խառնելով...
 սեւից
 անջատուող գոյնը մարմնէս
 սաւառի թագ երազից տեւողութիւնը
 կրկնուպատկելով

հոսեցաւ
 բերնիդ
 անդիմադարձ գաղտնիքէն
 եւ
 ուշացող թէկուսներու
 ծիրանահաս կաթկթումին,
 քացիփումով
 տաղաչափեց
 հրախաղութիւնը
 ներսերուս

ու
 մարմնացայ

յարատեաբար
բացուելով

չրթունքներուդ անսպառելի խենթութեան,
տարանջատուելով,
արքնթացօրէն բազմապատկելով
հրախաղութիւնը
մարմիններու երկխօսութեան...
անդադար բախելով
գաղտնաշխարհիդ հնոցին՝
բազմահիւ
որոյէջքով
քերթուածագրեցի
իգութիւնս պատռուող
եւ
շնչահատ անմատչելիութեան կշռոյթով
խաղաշարժեցի
ընթացող
հրանցումդ

միսերէս,
միմչէ որ
կիզակէտիս ծայրամասերով
դպայ

անսպառելի տեսողութեան
ուր ըլլաս
արմատներ ցետեց
ոլլալուդ
անդիմադրելի խորութեան...

ու
աչքերուս փակ թարթումով
լուսին
համատարած փայլատակումը
թնդացող քանդումով
ցերդրաւեցի
մեր միջեւ
տարածուող խտութեան մէջ
եւ
անյայտացայ
բերնիդ
ճոճահամ անձկութեան
չվերջացող հրկիզման ճարճատումէն...
անմատչելի լեղաստեղծմամբ
եղայ
թելերուդ փակագծեալ տարածքին մէջ,
ուր
ըլլալը՝
ապրիլ մըն է
ճորէն եւ ցորէն

ու
սիրելի՛
ներքնբռնում սը

քերթողութեան վայելքին,

արձակուելով,
ինքնակշռոյթ ձեռագեղծմամբ,
ժայթքումներու ծայնային ընդարձակմամբ,
մորթին հնչեղութեամբ
յայտնունցայ
անդիմադրելի

ողողումիդ
կարմրծուփ ալիքները
քակելու,

թափանցկաստոյգ
միտոնուելով
տարերջիդ
խմորումէն,
անպարփակ լիութեամբ քմպեցի
հնչ ող ունէիր մէջդ պահուած
ու

շնչեցի
համդ
ուժասպառ քանդումովս յեղյեղուն
հառաշանքներուդ նոյնահունչ ձայնախաղերով
քրտնաթոր,

ընծայաբերելով
կիճը
պահուած մէջս
եւ

քողագերծելով բանաստեղծութեանս տարփանքը
անխորագիր,

մորթին շիկացմամբ
բաղահիւսունցայ
ըլլալուդ անդիմակալելի վերացման
եւ

տարբերակուելով
մարմնիդ
գիշերուան հետ,
մարմնիս նորաստեղծ երաժշտութիւնը
ունկնդրեցի...

ՍՈՆԻԱ ՔԻԼԷՃԵԱՆ

Վաղֆին Եուզանֆան



Վ. Շուշանեան

ՕՐԱԳԻՐ

Դեկտեմբեր տասներորդ

Յոյժ խարտեաչ աղջիկ մըն էր: Քնքշօրէն կանաչ աչքերուն խորը՝ վտանգաւոր լոյս մը կը ցոլար: Մորթը խիստ ներմալ էր ու նուրբ, օժտուած զարմանալի թարմութեամբ մը: Առաջին անգամ տեսնելու իսկ՝ անմիջապէս ցանկացի զինքը, նախազգալով այսուհանդերձ, թէ երբեք ինչ պիտի չլլայ: Եարաթ մը յետոյ մեր հանդիպումէն՝ լաւ բարեկամներ, մտերիմ ընկերներ էինք արդէն, - այսքան միայն:

Երբ շաջողէր իր ազատ բարքերով ուսանողուհի ելեմուտը հաւասարակշիռել ու հետեարար վճարել սենեակին վարձքը, կ'ապաստանէր ինձ մօտ: Այդ խորունկ սենեակին մէջ ուր կը սիրէի յամենայ, ինձ ջերմօրէն հաճելի կը թուէին մարմնին մեղմ տեղափոխութիւնները, հանդարտ քալուածքը, դանդաղ երթիւն ու լռին փափկանկատութիւնը: Կատուի մը պէս էր՝ ազնուական ու հեռաւոր, վեհափառ ու վերապահ: Եղբայրութեամբ կը կիսէինք անկողինս, - ծածկոցներէն մէկը ինձ, մէկը իրեն, եւայլն ու մեղմօրէն կը շատախօսէինք, մինչեւ ուշ առաւօտ: Երբ ներսը շատ տաք ընէր՝ փայտի կրակին պատճառաւ, ծիւնելոյզին մէջ՝ պարզօրէն մէկ կողմ կը ձգէր շապիկն ու ներսի ճերմակեղէնները եւ իր խոշոր, խարտեաչ կուրծքերը կը վառէին, շիկահեր քոցերու՝ լոյսին մէջ, զարտուղի յուզում մը պատճառելով ինձ:

Զմրան յիշէր մըն էր, մէկը այն ժամերէն՝ երբ մարդ Հաճոյք կը զգայ ներսը մնալով: Անկողնիս մէջ երկնցած էի, իսկ ան կեցած էր կրակին առջեւ, կիսանդրին քոլորովին մերկ, երկարօրէն դիտեց զիս ու անշուշտ զգաց տենդայոյզ ցանկութիւնս: Իր կանաչ աչքերուն խորը Հրեշտակային քաղցրութիւն մը կար: Յայնժամ քոլորովին Հանուեցաւ, շատ դանդաղ շարժումներով ու առաջին անգամ բլլալով տեսայ, որ աղուոր մարմին մը ունէր, ինչպէս ես կը սիրեմ ցայժմ: Սրունքները նուրբ էին, այլ գիրգ: Երաստանը քիչ մը ծանր էր, այլ դաշն: Երբ գլուխը կը դարձնէր ինձ խօսելու համար՝ ձեռքով կը ծածկէր ազունը ու տրտմօրէն կը ծպտէր: Այդպէս է որ մտաւ անկողին, թող տալով որ երկար ատեն հեռազգամ իր մերկութիւնը, ծածկոցին տակ: Որովայնի վրայ՝ բարձրաձայն կը կարդար բանասցին տեղծութիւն մը, որ շատ կը սիրէինք ու իւրաքանչիւր յամբ

չարժումի մարմնին վարի մասը կը դողար: Այդ վայրկեանին զգացի, թէ կրնայի սիրել զինքը, կրնայի բազուկներուս մէջ գորովով գրկել: - այլ չէի ուզեր եղծել մեր խորին բարեկամութիւնը: Գուցէ Համարակութիւնն ալ կը պակսէր քիչ մը: Անզգայիօրէն գլուխը դարձուց զէպի գիս ու դիտեց զիս, անգամ մը եւս, երկարօրէն: Յանկութիւնը կը ցնցէ՞ր միթէ զինքը: Յետոյ աստիճանաբար քունը եկաւ վրաս ու գրաւեց զիս: Առաւօտը ուշ էր, երբ արթնցայ: Մոլայր ճառագայթ մը կը խաղար զէմքիս վրայ ու ան քովս էր, անկողնիս եզերքը, աստուածօրէն մերկ: Աչքերս հազիւ շփած՝ ելաւ ոտքի ու ծածկեց իր աղուոր իրանը, իսկ ես ոչինչ ըրի զինքը պաշտելու Համար:

Արդէն վեց տարի կ'ընէ մեկնիլը ու ո'չ մէկ լուր իրմէն: Զոջումը սակայն երբեմն կը սողոսկի վրաս: Այլ թերև ու դէմը կշռելէ յետոյ՝ չեմ գիտեր, թէ Հա՞րկ է իրապէս զոջալ վերապահութեանս Համար: Անմատչելի՛ յիշատակներուս պատճառին վրայ, ցայժմ ան ինձ կ'երեւի յոյժ ցանկալի, քաղցր:

Արգ՝ քանի մը ամիսներէ ի վեր աւելի յաճախ կը մտածեմ վրան - ինձ կը թուի, թէ Հետզհետէ աւելի կը նմանիս այդ Հեռագնաց աղջկան, գուցէ նաեւ այս պատճառաւ է, որ սէքս զէպի քեզ այսքան սաստիկ է ու բռնակալ: Առտուները, առաջին լոյսին, քու աչքերդ աւելի՛ քաղցր են, քան իրենները, իսկ կուրծքերդ նոյնքան աղուոր ու լի: Նոյն ոսկեայ երանգը անոնց պերճ գունդերուն վրայ, ինչպէս Հասուն պտուղներու:

Կը յիշե՞ս, կը յիշե՞ս, - կ'ելլէիր անօրինակ թեթևութեամբ անկողնէզ, - անապարանքով աթոռի մը վրայ կը ձգէիր շապիկդ: Յայնժամ կը ցայտէր ճերմակ կուրծքդ: Կը ցայտէին աղուոր ու խոշոր ծիծերդ: Արդարեւ շատ կը սիրէի զանոնք, այլ աւելի կը սիրէի Հայնացքիդ քաղցրութիւնը, ինչո՞ւ երբեք չզգացիր գորովիս խորութիւնն ու սաստկութիւնը, երբ այսպէս ինձ համարող մը կը գրոշմէի կռպերուդ վրայ, երբ ծարաւով կը համբուրէի դեռ տաք բերանդ: Կը կարծէիր, թէ լոկ եղբայրսկան ու բարեկամական արարք մըն է այդ համբուրը, - որ ողջ գուրգուրանք էր ու սէր: Յաճախ չէի՞ ըսեր քեզի միթէ, որ չես կրնար դրսեւորել գորովս: Միշտ շատ հպարտ եղած եմ գործածել կարենալու Համար բառեր, որ անընդհատ կը դաւաճանեն:

Կը կարծէիր, թէ լոկ մարմինդ կը սիրէի: Առաւօտեան ոչնձօր մը, անգամ մը միայն, ինձ թուեցաւ, թէ զգացիր խորապէս, որ ողջ անձս գորով էր ու բարախուն հաւատարմութիւն: Որքան երջանիկ ըլլալ կը թուէիր: Այսուհանդերձ վերջին օրը մեղմօրէն ըսիր, թէ գորովի բառերս ժլատ էին, - ես որ ա՛րողջովին գորով էի: Քովէս անցար ուրեմն, առանց զիս իրապէս ճանչնալու, այդպէս՝ ինչպէս որ էի, վասնզի չէիր գիտեր, թէ սէրը Համբերութիւն է ու յաղթանակ: Այլ ոչինչ կուրուսեալ է, քանի որ աչքերուդ խորը գարունը կը վառի ու իմ ձեռքերուս վրայ նոր գգուանքներ կը ծլին, - բոլորովին նոր գգուանքներ:

Թո՛ղ գրկէ ուսերդ ջերմութիւնն անուշ ու իրիկունը
 քո՛ղ նետէ վրայ շղարշն իր մոլոր պագնէ դէմքդ նուրբ
 ու կուրծքերդ պերն: Ձեռներուդ վրայ ծաղկեալ ու բուրեան
 գորովդ ներքին վերածուի սիրոյ՝
 փաղափաշ, անմեղ ու երկնային:
 Եղի՛ր անաղարտ, այս գիշեր, եղի՛ր
 ջինջ, եղբայրակաթ ու մերկութիւնդ
 քո՛ղ բլրայ մախուր, հրեշտակային:

Կառքր գիշերուան, զանգուածնդ ու սել,
 կը քաշէ զանդաղ իր յոգնութիւնը, - օ՛, տարօրինակ
 է յոյսը հիմա, փաղափին վրայ: Մարմինս կը զգայ
 զետը դարաւոր, որ կը հոսի յոյժ վեհափառ, հանդարտ:
 Ինչ օճագալար գոհիներուն մէջ՝ հովը ծովային
 կը շաչէ արագ՝ զէմքերուն վրայ նաւազներու բերք:
 Եղի՛ր անաղարտ այս գիշեր, եղի՛ր՝
 հովին պէս քեքեւ: Թո՛ղ իջնէ վրայ գիշերը քեքեւ
 բուններուն համար ու հանդիներուն
 ու գգուաններուն համար աղուական:

Թո՛ղ իջնէ վրայ հովը՝ մոզական
 երազներու խօյ ու նամբորդութեանց համար ապառնի
 ու անվերադարձ: Թ՛, լինելէն վեր ամպեր մանիշակ
 ու գիշերները քարքարոսութեան: Լուսինը բոսոր՝
 ծառերուն վրայ այդ հմայական ու խուճապահար:
 Հովտաց մէջ անդին գիշերն է կարմիր: Ինչ գազանները
 կ'ոռնան աստղերուն հայցելով հանգիստ,
 խորին լռութիւն ու արձանական ու վեհապանծ մահ:

Եղի՛ր անաղարտ այս գիշեր, եղի՛ր ջինջ ու կուսական,
 զանունկներու պէս, որ նոր կը ծնին, գարնան ձիւնին հետ:
 Եղբ հպանցիկ գգուէ երեսդ, օճէ մեղմօրէն
 ձեւերդ շքեղ ու մաքրօրէն մերկ: Ինչ վերադարձօ՛ր
 սարսուռն առաջին, - զեփիւռին պէս նուրբ
 մաքրութիւնս հպարտ, պատանեկութիւնս: Հպումդ բնուշ
 պիտի ցնցէ զիս, ինչպէս խօյ բարտին կը դողայ հովէն, -
 որ գիշերուան մէջ անցելոյն արծաթ՝ կը սուլէ կամաց:

Գիշերն էր շքեղ ու տարօրինակ, պատարագային, -
 իր շունչը անուշ կը սողար վրաս հովի պէս հոսուն,
 ու աչներու մէջ, հայելի երկնից, գիսաւոր աստղեր
 կը շողշղային: Այսպէս կ'անէի, շուշանի մը պէս,
 ցորեններու պէս մատղաշ, դիրարբեկ ու կը նետէի
 պատաղիներ խօյ դէմքի այգերը խաղաղ ու ներմակ,
 դէպի առաւօտն յաւիտենական ու լուսահմայ
 ամանց մանկութեան:

Եղի՛ր անաղարտ, այս գիշեր, ինչպէ՛ս՝
 Երգ մը այգային, որ կ'նյլէ հողէն, որպէս շարական
 ու որպէս կնդրուկ, խորը բիրերուդ պիտ' ըլլան արտերն
 ոսկեայ, արծաթեայ ու ծոփածուայ: Մտերն անձնատուր
 տարերէն կամշոտ: Իտարեաց վրայ բզկզներ նրբին:
 Ջանգակատունը գիւղի մը շարժաշ՝
 մանկակազոյն մշուշին մէջէն նիզակի մը պէս պիտի արիւնն
 կողը նիւսի: Ին հաւատարիմ շուն մը, պատին տակ
 պիտի սրունն ձեռքը իր տիրոջ, - օ՛, խաղաղութիւն:

Թո՛ղ իյնայ վրագ գիշերը խորունկ՝
 ինչպէս սրբազան գետի մը վրայ, կորուսեալ այնտեղ
 անապատին մէջ: Թո՛ղ կեանքը մնայ հոգւոյդ մէջ վնիտ՝
 ինչպէս գլխան ջուրը հոգտին մէջ: Ջնտերս այս գիշեր
 կը մերժեն աղու որ ողկոյզները մեծ ներմակ ծիծերուդ:
 Ին բիկունքներդ, ծունկերդ սատափեայ, գորովն իրանիդ,
 որունքներուդ տենդն ու կունքդ հեշտական:

Ձի հեշտութիւնը դառն է հացի պէս, գերութեամբ շահուած:
 Անունզներու պէս ու սեւ քմպեխաց՝ բշնամի արեան:

Եղի՛ր անաղարտ այս գիշեր, Եղի՛ր դարձդարձիկ քոցի պէս
 մա՛հուր՝
 ու հրավառէ երկինքը մոայլ մեր հողիններուն: Ին Եղի՛ր անուշ
 աւիշին նման, որ մեղմիւ կ'նյլէ, մեղմիւ կը պագնէ
 ծաղիկներն վսիտ ու մեր գրութեան ցօղունները զէզ,
 ու մեր տենդերուն առիթն մակարոյծ, - ինձ վերադարձուր
 ապշութիւնս մանուկ, գարմանքս անմիտ, հայեացքս սղու
 որ պիտ' արտասուէ ու մա՛հուրութիւնը
 ձայնիս տրամական: Տո՛ւր ինձ յիութիւնն իրերուն պատիկ,
 անշունչ, հնազանդ ու մտերմութիւնը տան մը ուր՝ չէ՛
 ու Երգը բոյնոց, պարսպի մը մէջ:

Եղի՛ր անաղարտ ու Եղի՛ր վնիտ, գիշերը ամբողջ՝
 օ՛, մեա՛ք բարով շրթներուդ ծարաւ ու պարանոցիդ,
 ցունցին իրանիդ, տենդերուդ անուշ ու սրունքներուդ,
 որ գիտեն սիրել: Եղի՛ր մեզմ, հանդարտ՝
 մայրական երգի պէս Բաղրազանգիւն ու հեզամբմունջ՝
 Եղի՛ր մեզմ, փափուկ՝ գիշերուան մը պէս անշարժ ու ներսնայ
 տափերու վրայ ու յո՛ւ՛՛ այժմ:

Ձի Բանն յաղթական ու որոտընդոսս, զը բուխ դառն, -
 գիտութենէն վերջը բոյնը մեղներուն:

Յայնժամ երբ ծագի այգը Էրժմագեղ, պարտեզիմ վրայ,-
մեր մարմինները պիտի բլլան հեզ՝
մեղմ հանգիստներում, միմքերուն եամար ու գորովներուն՝
հազի պէս անուշ: Մեր բազուկները յայն պիտի բանանք
մարդոց, տարերէին, անասնոց, ծաղկանց: Մեր ձեռքերը հեզ՝
յոզնուրի մներուն հանապազօրեայ ու մեր ճակատներն
հոգներուն բուրեանն ու գարնանային:

Եղի՛ր անաղարտ, այս գիշեր, վնիտ: Տակաւիթ ուրիշ
յուսաւոր օրեր պիտի յաջորդեն այս գիշերներում,-
օ՛, եղի՛ր մա՛քուր ու երգէ՛ մեղմի:
յոուրի մն անափ հողին մայրական:

Յունուար ինը 1937

Գուցէ տասնեօթը տարու էի: Գարունը, այդ տարին,
եզակի Հրաչքի մը պէս էր: Հակառակ մեր խորին թշուառու-
թեան, զրկանքին ու մեր ատելութեան, որ կը սողար մեր
կրունկները լզելով,- արաւետները վերածաղկեալ էին, արտե-
րը ցօղաթուրմ: Առաւօտները կ'արթննայի թեթեւ ամէն Հոգէ,
գինով թռչունի մը պէս: Մեծ ու անորոշ Հրճուանք մը կը ցնցէր
գիւ: Այժմ գիտեմ, թէ Պան բանաստեղծ աստուածն էր, որ կը
ձգէր վրաս իր խօս շունչը: Իրերուն վրայ լոյսը անուշ էր: Զար-
թօնքները անէական էին:

Կ'եղի՛ր վեր մահի՞նէս յոյ՛ ու մեղմօրէն
այգը ներմակ գիւ կը նետէր ճամբաներուն վրայ մոլոր:
Արահետները մանիշակ կը հոսէին, կը հոսէին
գետերու պէս վաղմբական: Դեղդուկներ հետտ,
կիներ շէնադ, աշիոյժ ու շէժ
ու մարախներ, անասուններ հեղ, բնանի
կ'երբայիմ ծոյլ միջօրէի ուրախութեան: Ին մեղմօրէն
օրը կ'իյնար, օրը կ'իջնէր: Ակի մը մօտ
կը յուային ծուկներն իրենց մարմարակերտ
ու սրունքներ նուրբ, յրապիրկ
աղջիկներ խօյ ու մեղմօրէն
կը դիտէին դէմքս գուարբ ու այգայիին: Ին մեղմօրէն
կ'երբայի մեր արկարծներուն օրուան մը մեղմ,-
իմս էր բարի երգը օրուան,
զաղջ ու անուշ ժամը հեշտին, շուքերը ջիւնը,
օրերն արբուն: Իմս էր նրբին յոյսն իրիկուան
անուններուն, մացառին մէջ: Ին կարկայնները միղմասոյլ:

ու հոգի՞ն սոյր հեզածայն: Բն մեղմորէն
 հոգիկը տա՛լ կը պաղնէր զիս դէմքիս վրայ,
 շղուտ էի՛ն սրունքներըս եւ ունէի
 քո՛հերս աշխոյժ, որ շնչէի՛ն բոյրերն անգայտ
 հեռուններուն, պուրակներուն, որ շնչէի՛ն
 կեանքն ուրախ ու արբեցեալ: Բն մեղմորէն
 կը մեկնէի դէպի գիշերն արեւելեան:—
 դէպի գիշերն աստեղագարդ ու սիրայեղջ:

Օ՛, ծաղիկներ մոյճապոյն արահետեաց
 ու քայնակներ գորովաբեկ ձայներով ջիճջ,
 գառներ բրդոտ՝ ակնարկներով, ուր կը պտղի
 խաղաղութիւնը անասնոց: Սանուկներ դեմ
 ու ազդիկներ նորարարոջ, քրտնց ծիծերը կը խայտան
 հոգիքէ խօյ: Բն դու՛ք ուղտեր համբերատար
 ու մեղմընքաց: Բն բոժոժներ արեւելեան,
 մեղեդիներ քափառայած, որ կը ծորի՛ք: Ծուներ տրտում
 ու անտէրունջ ու վայկատում օ՛ մանուկներ
 ու դու՛ք գեղջուկ, գորեղ տղաք, որ կ'ելլէ՛ք վաղ առաւօտեան
 անասնոց հետ ու անասնոց հետ կը ննջէ՛ք, կ'ելլէ՛ք վեր
 մահի՛նէս յոյ ու մեղմորէն
 այգը մերմակ զիս կը նետէր արտերուն մէջ այծփիկ,
 կը խմէի շունչը հոգի՛ն, ծունկերս մերկ՝ դարբեաց մէջ
 կը շնչէի բոյրը հողի՛ն ու մեղմորէն
 կը մեծնայի: Բն մեղմորէն հոգիս կ'անէր,
 ինչպէս արտերը կ'անէին վերջին անգամ: Կուրծքս կ'ուռէր
 ու փնդուս վրայ մատղաշ կը ծաղկէի
 այծտերեւի փափուկ փունջեր: Բն մեղմորէն,
 ու մեղմորէն կը հոսէին ողջ օրը յոյ
 արահետները մանիշակ, գետներու պէս վաղնջական...

Յունուար տաւը

Հակառակ Հեղինակին Հանգադու քաջութեան, որով ան կ'ու-
 գէ իր դուարի՞ յոյսը ցայտաղբիւրի մը պէս շողացնել այդ գիշերուան
 մէջ: Բն մեղմորէն: Կուրծքս կու գայ Անդրէաս Ժիտի վերջին
 գրքի շնչերը: Կուրծքս, մեր Հողիները ինչ որ կը սպասէին
 իրմէ խորին երգ մըն էր, վերստին ոսկեկտրակաչ, վերստին աւելի յա-
 ճարժ երիտասարդութեամբ: Մինչդեռ մեծ դրագէտին շրթներուն
 վրայ Հաւասարի խօսքերը ցուրտ են, յոյսի բառերը կը մսին:
 Երկրային սնունդներու մեծ դրագէտին վերադարձը Եւր-
 Հրդային Միութեան սահմաններէն ո՛չ միայն վերջին բրիլի Հար-

ւածը կու տայ մեր վերջին խարխուլ յոյսերուն, այլեւ կը մթազնէ ապագան: Գուցէ աւելին գիտէինք՝ ինչ որ ժիտ ծայրագոյն կաղապարումով ու տաղանդով կը բանաձեւէ, այլ կ'ուզէինք տակաւին յուսալ, կ'ուզէինք տակաւին հաւատալ, թէ Թուսական Յեղափոխութիւնը գերագոյն ճիգով մը պիտի յաջողի վերագտնել կամ գտնել վերջապէս իր բուն էութիւնը, թոյլ չտալ, որ մարդկային պատմութիւնը պահէ իրմէն խեղաթիւրեալ, աղարտեալ, վայրագ պատկեր մը:

Չկայ առարկութիւն մը, չկայ խորհրդածութիւն մը այդ զբոյժին մէջ. խորհրդային վաղաձեւի իրական դիմագծի մասին, որ հայ մամուլին մէջ ծեծուած չըլլայ: Ո՛վ է մեղաւոր, եթէ տարիներէ ի վեր, արեւմտեան յառաջադէմ մտաւորականները կը շարունակեն արհամարհել դառն իրականութիւնը՝ կարենալ անխախտ պահելու համար իրենց գորովն ու յոյսը: Խորապէս դժգոհ գրամատիրական կարգերէն, զգուած արիւնզակ իշխանապետութիւններէն, արհամարհոտ դէպի քաղցրեկի ռամկավարութիւնը՝ անոնք կ'ուզեն ամէն զնով իրենց ազատական խորունկ ներշնչումներուն գոհացումը գտնել Խորհրդային միութեան սահմաններէն ներս: Ու ճշմարտութեան կը վերագտնան լոկ անձնական փորձառութեան հանապարհով: Մինչեւ որ չկոխեն իրենց վեճերոտ մատները խորհրդային վէրքին խորը, մինչեւ որ չտեսնեն արեան ցայտքը ժողովրդին կողերէն՝ չեն ուզեր ընդունիլ իրենց երազներուն փլուզումը: Այսպէս նաեւ ժիտը:

Ուշ գրեթէ շատ ուշ մետասաներորդ ժամուն՝ ժիտ յանկարծ զգացած էր, թէ մարդկութիւնը կը բորբոսի, կ'արբնի, կը հիննայ, կը պոռնկանանայ ամէն օր. - կը քայքայուի, կը հիծի, կը փոփ բոլոր հիւանդութիւններով: Վասնզի լոյսը, ուրախութիւնը, գարունը, պտուղներն ու աղուոր աղջիկները միշտ զօրեղներունն են, - զօրեղ՝ կեղծարարութեամբ, ուժով, տաղանդով, շնութեամբ, սուտով, անբարեխղճութեամբ, ազնուութեան պակասով. ոչքեղ ստորնութեամբ վերջապէս: Հա՛րկ կար միթէ երեսուն տարուան քար լուծենէ, կուրութենէ, խլութենէ յետոյ յեղակարծօրէն յարիլ շարժման մը, որուն էութեան շուրջ վերապահութիւններ ունէին ամէն երկիրներու կազմակերպչւած աշխատաւորութեանց մեծամասնութիւնը, ժողովրդին ծոցէն ծնած ու արի գործիչներ, մտածողներ, գրադէտներ: Եարժում մը, որ կը ներկայացնէր միայն յեղափոխական մարդկութեան փոքրամասնութիւնը: Անդրէաս ժիտ պարտաւոր էր իր տաղանդը սիրող, իրեն հաւատացող ընտրանին այդ արկածախնդրութեան մղելէ առաջ՝ կշռել թերն ու դէմը ու այսօր մեզ չղնէր այս տրտմութեան դիմաց: Մեզ ըսելով կը հասկնան՝ ժիտի հաւատացող երիտասարդ մտաւորականները:

Չվերջացուցի սակայն: Ետևով պիտի վերադառնամ այս հարցին:

ՎԱՉՉԵՆ ԾՈՒԾԱՆԵԱՆ

(Շար. 2)

Վարանդ

ԴԱՆԹԷԱԿԱՆ

Ապրիլ ամիսը քնդգրկող մեր ներկայ թիւին մէջ տրուող այս եւ յաջորդ երեք նիւթերը, որոնք տարբեր անկիւններէ կ'անդրադառնան ապրիլեան մեր մեծ ցաւին, համարեա՛ ինքնաբերաբար կազմուեցան:

Դետաքրքրական է նշել, որ ջարդերէն ու հալածանքներէն ճողոպրած բեկորներուն տառապանքը առաջին տարիներուն առաջացուցած էր պարտուողական տրամադրութիւն մը, համատարած նահանջ, ու նահանջը յորովայնէ իրենց արեան մէջ կրած անձերուն համար անյոյս պահ էր, մինչդեռ այսօր, պայմաններուն պարտադրած հիւծումին զուգահեռ կը պարզուի ուրիշ երեւոյթ մը, զոր կ'անձնաւորեն ու կը կրեն մտածող տարրերը. նահանջի տեղ յարձակողական տենդէ մը բռնուած:

Ութերցողը քիչ անդին պիտի տեսնէ նորոգ հանգուցեայ Անրի Վերնէօյի «Մայրիկ» ին մայրական պոռթկումները եւ աւելի անդին յղացման նոյնքան երկարատեւ հոլովոյթ ապրած Ժանսեմի լուռ վկայութիւններ, ինչպէս նաեւ Անրի Վերնէօյի ու Ժանսեմի տարիներուն հազիւ կէսը ապրած բանաստեղծ Վարանդի եւ արձակագիր Ջիֆլեանի ժառանգական ցաւը, որ կ'եռայ ու կը պղպջայ եւ ըստ երեւոյթին պիտի չհանգչի, մինչեւ նաբուզողոնոսորեան աչքերէն զղջման ու հատուցման արցունքները տեղատարափ չանձրեւեն անոնց վրայ:

Ուշադրութեան յանձնուած գրութեանց նկարագիրը այնքան էական չէ այս պարագային, որքան, ինչպէս ըսել ուզուեցաւ, անոնց յայտնաբերած ու թելադրած ոգին...

Արդէն հասած խօյ ամառին կոթողական այս դարի,
Տեսած, ապրած, կտրած-անցած ողբեր ու արհաւիրքներ բազում,
Վերջին ճիգով ու տքնանքով փորձում ենք մէջք ուղղել
ու լինել արի.
Ռրաւեստի գերբն ու դրօշը մեր ցեղի շմնայ հողին ու շլքուի
ագագուն:

Հազար յոյսեր փայփայած ու կորցրած մարդու վշտով
 ու վճռակասութեամբ,
 կրկին ուզում ենք հառատալ արշալոյսներին, որոնց
 ոտնաձայնը առանք,
 Ուզում ենք Գալիլի երկաթէ նժոյգի համար պատրաստել
 երասան ու թամբ,
 Որ ընթացանք Նոր Դատի վիճերով, անդունդներով,
 խորխորատներով, յաղթահարելով ամէն խութ ու խարակ:

Ելնել, շարժուել տոհմով, ցեղով, ազգովին,
 Հաւաքել մեր ուժը ողջ՝ երկրում եւ սփռուած աշխարհով սէկ,
 Ելնել՝ հրթիռային-հիւլէական արհաւիրքից՝
 ապաստանել բիբլիական լերան վերանորոգ նախն,
 Ու փրկել տեսիլը մեր վարդաճեղեղ ու հանճարը շէկ:

Իսկ ես, իբրեւ Հաղէսի արքայութեան տարտարոսից
 փրկուած մի ուրու,
 Ոգու եւ մարմնի սպանդանոցի արեան բծերը ծալքերին իմ
 թեզա միջի,
 Անշահած օտարութեան ու խորթութեան ցորտը բովանդակ
 աշխարհի անկիւններում ամենաճեռու,
 Ու տակաւ չգտած Աստղա՝ կամարների տակ եօթնառաստաղ
 այս երկնքի...

Կամօքն ճակատագրի կամ ինչ-որ խաղով սահմանուած վերից,
 Եւ կամ գուցէ Մեծ օրէնքներով կենդանի, ապրող թնութեան
 Դատապարտուած եմ երգել վերածնեալ կեանքն ու սնուել
 յար Սէրից,

Սակայն եւ՝ շանթել ու նշառակել սնաստուէր սիւներն ու
 կայները Բռնութեան:

Չճայած կամօքն Բարձրեալի կամ ինչ որ խաղով
 սահմանուած ի վերուստ,
 Ես ծնուել ու ապրել եմ արեւառատ ու արեւաՎառ երկրում մեծ
 բանաստեղծների,
 Սակայն բախտն ու ճակատագիրը մեր եղել է այնքան
 արճարալից, ժլատ եւ եղել այնքան ցորտ,
 Որ ես միայնակ չեմ կարող բացել բովա յղակ անկիւնները
 դրա պաստառի:

Ռուտի աղերսող ձեռք եմ մեկնում քեզ, իմ հայրենակից մեծ
 մակուեցի

Ու դիմում եմ հանճարիդ ուժին ամենազօր,
 Եւ չճայած արարիչ աջդ հատել է մի օր կայ մրաբոսոր մի կացին,
 Սակայն քո ձեռքը ամբողջում է իբրեւ հայրենական հողերը
 յար ակօսող արօր:

Եւ ելնում ենք մենք ճամբաներով հաղէսեան տարտարոսի,

Շատուհակում Ուղին այնտեղից, ուր անջատուեց քո կեանքի
 ճիւղը բերքառատ եւ իմաստուն.
 Գծողային գորքերի դէմ գիւտում ենք՝ սիրով, հաւատով ու
 գրահով յոյսի,
 Որպէսզի գտանենք գաղտնիքը մեր գոյութեան ու շմանք
 անտուն:

...Ահա էլնում է մեր դէմ տեսիլք մի սոսկալի արհունուայ,
 Տարուերում է դէմքը նրա փայլատակմամբ կարմիր ալիքի.
 Քունքերի, յօնքերի, այտերի ու ծնօտի վրայ
 Յորձանք է տալիս արհունը՝ կրակուած իոցից ծոծրակի:

Փողկապի սեւ ժապաւենը սեղմում էր ամէն վայրկեան,
 Կայծ, մոխիր ու փրփուր թոցնելով կոպերից իր խեղդուողի,
 Սեղմումն այդ առաւել բացում էր ծակ-ակունքը արեան,
 Որ դէմքին վերածում էր բոսոր փայլատակման ու ցօղի:

Նա դեկավար էր, քարտուղար ու յեղ. գործիչ,
 Բայց վզին կար հետքը «Յուդայի համբոյրի»,
 Որ իբրեւ աքիլլէսեան գարշապար՝ խոցելի նիշ,
 Նրա դէմքը ազնուական վերածել էր զահագնական բոյ...

* * *

Մենք թողնում-հեռանում ենք կերպարին այդ յաւետ
 խեղդուող ու խոշտանգեալ,
 Բռնում մեր Ուղին՝ եռեւեփող եզերքում ոխի ու սարսափի.
 Մեզ հետ մթնում ասես վազվզում են հազար գորշ գայլ,
 Մինչ հասնում ենք յուսնի լոյսով հազի լուսաւորուած ուրիշ
 մի ափի...

Յանկարծ հռովմէական հին ճանապարհից երեւում է այր մի
 կապուտաշեայ.
 Մի ձեռքում՝ ծաղիկներ բաց կապոյտ, մի ձեռքում՝ հրկիզուած
 թղթեր,
 Հայեացքով որոնում է ամպերում լուսնեակն ու շշնջում՝
 «Լուսինկայ պապ»,
 Յանկարծ ճակատն ու դէմքը ոլորում է զերդ թիթեղ:

Նա երկար նայում է դէպ՝ նոր Բիզանդիոն, Մեզրէ ու
 Խաբբերդ,
 Նայում իր կտրած-անցած բոլոր ոլոր կածաններին.
 Ապա հէնց այդպէս՝ թիթեղէ երեսը դէպի ետ՝
 Մանկան աշխուժով թոչում-ցատկում է հասնելու ոխի ու ողբի
 կարաւաններին:

Ապա մեր դէմ բարձրանում է տեսիլը ոռշնական մի կնոջ,
 կրակէ շապկի յետէ թաքցրած ծիծերը յուրոթի եւ պայծառ,
 ճերմակ քողերը նրան ծածկում էին թելերն ու ոտները՝
 հասակը ողջ,
 Ձախ ձեռքում գիրք կար, իսկ աչքում՝ շահ մի խիստ բոցավառ:

Պրոմթեւեան հուրն այդ նա պահել էր աւիրողիտեան
 վարսերից վեր,
 Մերթ մրմնջում էր խօսքեր սիրոյ, մերթ բարբաջում բառեր
 բողոքի-
 Նրա հետ շարժում էր հոյլը սրնգահար Պաների, որ
 քարձրացրել էր մեհենական մի երգ
 Ու խլացնում էր վայնասունը տազնապահար, թափառող այդ
 վոհմակի...

Նրա նուշ շրթները շշջում էին շոյող ու շանթահարող բառեր,
 Բարբառում մերթ գաղղիերէն, մերթ պատմում կարմիր Բոսֆորից,
 Երբ քրմական թափօրին մօտեցաւ այր մի մրայօն ու սեւահեր,
 Որ ուրուականի պէս դուրս էր եկել կողքի անդնդախոր
 մթնաձորից:

Նա ջլապինդ ու անրարագույ ձեռքին ունէր փող մի ծիրանի
 Եւ փորձում էր ճարտար ու հանճարեղ նուագածութեամբ
 դառնալ երգին ներդաշնակ,
 Պարանոցից կախել էր փայտէ կոտ՝ ցելեր սշակող սերմնացանի
 Ու փողի բերանից թափում էր ալպիական մանուշակ:

Քիչ անդին նրա օրինակով ընթանում էր շեփորահար մի այր,
 Նա բարձրանում էր սոխրակոյտից միլիոն, միլիոն նահատակների
 Նա շեփորով փորձում էր հրդեհել անարդար աշխարհի
 սրտերը սառն,
 Իսկ ձեռքի ձերումական գաւազանով՝ մոխրակոյտերը
 վերածել հրի:
 ... Բորբոքուած հրից բարձրանում են փիւնիկներ հրաշագուն,
 Նրանք դառնում են սպաներ, կազմում բանակ մի
 դիցազնազարմ,
 Հետեւելով մոգական գաւազանին, որ ճեղքում էր մեր արեան
 ծովը Դեր-Ջօրի աւազում՝
 Մոլեզուն է բանակը ասպետօրէն, հարուածելով մէկ աջ,
 մէկ՝ ձախ:

Մեր դէմ յայտնում է ապա ահեղատեսիլ արձան մի
 զօրավարի,
 Հեծած ճերմակ իր ձիւն՝ նոյնպէս կտրած քարէ արձան,
 Ջօրավարի ձեռքը երկարել էր դասնկլեւեան իր թրին,
 Որ դժոխային վիշապի եօթ գլխին ամէն վայրկեան թափում
 էր շանթ ու կայծակ:

Նրա տրոյական Պեգասը, շարժուող կտոր-անիւնների վրայ,
Քաշում էր այր մի խիզախ՝ ձեռքում լապտեր.
Լապտերն այդ մերթ վառում էր բոցով, շողով, հրով անխնայ.-
Մերթ մխում իրրեւ փամփուշտ՝ մխրճուած սիրտն ի վեր:

Նա փշում էր սրտին, որ բոցավառուի հուրն այդ անագորոյն
ու արնագոյն,
Որ մղձաւանջ խաւարում գտանի ճամբան՝ վերադարձի.
Նրան հետեւում էր սոսկատեսիլ բանակ մի, գունդ առ գունդ,
Որ իր հերթին բերում էր մի Առիւծ, մի Թուր, մի Արծիւ:

Անցնում տեսիլն այդ կազմուած զօրկանցներից բազում,
Նրանք մերթ աղաղակում, մերթ երգում են երգեր ռազմի ու
սխրանքի.

Ջեռներին տանում են գերբեր, դոշոներ, լոզուցներ
մեսրոպալեզու
Ու հեռանում սառցադաշտերով՝ կորստեան, դաւի ու սադրանքի:

Քիչ հալում, հոսում է սառոյցը, բայց յանկարծ լսում է
երկաթի, շղթայի հեծկտոց,

Հետում են հալոցներ, փշրում պողպատ ու ապակի,
Մետաղի հեծձանքից բարձրանում է կերպար մի այլեկոծ,
Գանգրահեր, սեւաչեւ, մրայօն, քիչ նման հաստաշորթ
խափշիկի:

Կերպարն այդ նախ թում է խիստ դաժան,
Ապա երբ ցրում է մէգ-մոայլը յստակուող հայեացքի,
Ժպիտը դառնում է երփներանգ, եօթներանգ ծիւծան,
Թոյր թափում խաւարչտին այդ տարածքին:

Եթերում են հնչիւններ, մեղեդիներ տարաշխարհիկ ու չքնաղ,
«Սոնա եար», «Չիմար ես...», «Անտունի»,
Էոյս է կաթում բոյսին. տաղ ու խաղ են ասում շող ու շաղ,
Խափշիկը պտոյտներ է անում, ափերը կարկառած անհունին...

Բայց յանկարծ բարձրանում է երկաթի բախիւն ու հեծկտոց,
Հետում են հալոցներ, կոհնչ կայ պողպատի, կապարի,
Մետաղի մսաքառսում բացում է մէկ քունքը նրա բոց
Ու քիչ-քիչ վերածում... Մատուռի:

Բայց տակաւ զառանցում, կաղկանձում է շղթան,
Բարձրանում է թաւ անտառ ռոնոցի.
Յայտնում է այր մի յաղթահատակ, տիտան,
Մտրակուած, մոլեգնած, մեծ բաշով մոնչող առիծի...

Նրան հետեւում է այր մի շիկաւուն, շէկ,
Թում է՝ քաջ որսորդ առնացի,
Երկնագոյն աչերում՝ հեռաւո՛ր, երկնահա՛ս լեռներ սէգ,
Իսկ կրծքին՝ խորին խոց կարմրածիր:

Ելնում են առիծն ու հերոս այրն այդ հայարտ,
 Բայց ոչ թէ մէկը զո՞ն միսին,
 Այլ երկուսը վճռական ու հաստատ,
 Մեկնում են ուս ուսի՝ միասի՛ն:

Մեր հայեացքը դառնում է խառար երկնականարում
 միբճուած Մասիսին.
 Տուք է արձակում Լեռը՝ վուկանական հրաբուխ եւ շառաշ.
 Խլրտում է ընկնում բանակի շարքերում, նաեւ գորասիւներում
 մեկուսի,
 Բարձրանում են նոր ճիշեր, ահեղագոռ լոզուցներ,
 ահագնադողորդ կանչ:

Եւ կանչերն այդ, որ սկզբում թում էին լոկ բողոքի ազդանշան,
 Քիչ-քիչ վերածում են արծուակոհինչ մարտակոչի.
 Հսկաներ են դուրս պրծնում խառարանած թաւուտներից
 անկեճղան,
 Վագրեր են լարձակում դժոխային վիշապներին,
 բարձրացնելով շամանդաղ եւ փոշի:

Ամէն տեղ պայթեցին արկեր ու ոռոմբեր ահեղաշառաշ,
 Երկնականարը վերածուեց բորբ, կարմրաւուն հնոցի,
 Մոյլ արձակող օձերը ճողոպրեցին ահից դուրս թռած
 աչքերով կանաչ,
 Բովանդակ տարածութիւնը վերածելով հազարաւոր գծի:

Նահատակաց բանակը հարուածում էր հրաբուխի թէժ,
 յորդացաւտ կայծերով,
 Լեռը, պահ առ պահ, իր ոխի ու ցասման երախն էր առաւել
 բացում,
 Բանակը յաղթանակում էր, ինչպէս հրահեղուկ-լաւան է
 թռչում ապառաժներով, քերծերով,
 Բախում, բաբախում եւ բղաւում՝ «Միացո՛ւմ, միացո՛ւմ,
 միացո՛ւմ...»:

Յանկարծ Արարատի կատարը հագում է, արձակում սեւ մոխ
 ու մոխիր, իբրեւ հերձուած հագագ մի ահագին.
 Սաւանում, շարժում է երկիրը՝ աւերում են ճամբաներ,
 շէնքեր ու քաղաքներ բազում,
 Մի վայրկեան շրջում է աշխարհը, վերածում փլատակի,
 աւերակի,
 Իսկ ահեղ բանակը շանթահար՝ մի պահ շփոթում է, կակազում...

Յետոյ տարածքը ծածկում են ծաղկաւոր պատանքով
 ծպտուած ուրուակացներ,
 Ձեռախեղուած, ալլանդակ, հաշմանդամ մարմիններ աճահշիւ,

Նրանք մի պահ թոււն են կարմիր պատարագ գնացող
 վանականներ,
 Մի պահ՝ երկնային զօրք, որ գնում է Չարի ու Բարու
 տիեզերական, տարերային կոիւ:
 Մինչ հողեպէն քանակը գտնոււմ էր իրեն ու ելնոււմ վերահաս
 շփոթնունքից,-
 Փլատակների տակ մնացած զանգուածի արիւնը հասաւ
 երկրի շնորհքին թաքուն ու գաղտնի գծով,
 Եւ ինչպէս դիրավատ վառելանիթն է բարձրանում ցամաքած
 պատրոշգից՝
 Արիւնն այդ ոտոգում է Արարատի կատարը, որ փայլատակում է
 նոր բոցով:

Հրաշափառ յարութեան հուրը յիշեցնող այդ շողարձակման
 ներքոյ
 կրկին կուում է կուռ բանակն ու նոր կապեր արձակում-բացում,
 Կուում ու կոչում է մերթ աղաղակով, մերթ ջանքով. մերթ երգով՝
 - «Միացո՛ւմ, միացո՛ւմ, միացո՛ւմ...»:

Միացման այդ կանչով մենք էլ թեւ առած նոր թոհչքի ու
 նախրանքի,
 Մաքրուած մանկան պէս ցատկում, հասնում ենք հազարներին
 այդ յաւերժապսակ
 Ու մերձենալով՝ բարձունքի վրայ բոցավառած-արծարծած
 նրանց հուր-խարոյկին,
 Զերմանում եւ ապա քաշում, կանգնում ենք գլխահակ:

Այնպահ ինձ առաջնորդող բանաստեղծը, ցաւումով ու
 վերացումով մի անմեկին,
 Բարձրացնում է ձեռները, կուրծքը դէմ տալիս, աչքերը
 յառում երկինքներից անեզրական,
 Փիւնիկի պէս մօտենում է նրանց արծարծած, բարձրացրած
 կրակին
 Եւ արձակում է խիստ եւ հաստու մի պատգամ՝

- Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը
 Ուժի մէջ է քո հաւաքական...

* * *

Արդէն հասած խօլ աւարտին կոթողական այս դառի,
 Տեսած, ապրած, կտրած-անցած ողբեր ու արհաւիրքներ բազում,
 Մեզ նշանաբան է դառնում կրկին պատգամն այդ արի,
 Որ չկորչենք անվերադարձ ու չդառնանք երազ՝ երազո՛ւմ...

1999-գարուն

ՎԱՐԱՆԴ

Թ. Զիֆլեան

ՄԱՐԵՄԱՆՕԹԸ

Պոլիս, Սեպտեմբեր 1948:

Եղեռնէն երեսուներեք տարի ետք էր:



Փէշիվան Մելիք այն օրը սովորականէն կանուխ արթըն-
ցաւ ու դունա ու կոր մարմինը առնական Հայրապետութեամբ մը
Հիւրանոցի պատուհանին առջեւ տարաւ:

Միգամած առաւօտ էր:

Ութսունամեայ ծերունին, վարագոյրին ետին կանգնած,
պատուհանէն դուրս գողտուկ նայուածք մը նետեց: Առտուան
այդ ժամուն, դրացիներու միջեւ սուրճի արարողութիւնը սկսած
էր արդէն, իսկ թաղին ինքնակոչ կատուները, քնկարաննե-
րուն առջեւ տեղաւորուած օղիի սեղաններուն վրայ կը թա-
փառէին, զիշերուցնէ մնացած պատառիկներուն բաժնեկիցը
դառնալու տենչով:

Յանկարծ, Մարմարայի ասիերէն ցրտաշունչ Հով մը փչեց,
փողոցէն ներս առդին-անդին թափած տերեւները Հաւաքելով
Հոլի պէս չըջեց ու տարածեց օդին մէջ:

Թաղը արթուն՝ սակայն լուռ էր:

Սեպտեմբեր ամիսն էր ու ինչպէս ամէն տարի, այն տա-
րին եւս պատշգամէ պատշգամ կապուած գերձաններու վրայ
փամփուռներու նման կախուած էին Միջերկրականի բիւնիկ
ձուկերը, որոնք ձմրան պաղ օրերուն, բանուորներուն պատ-
ւաւոր սեղանները շէնցնող աղանդներէրը պիտի Հանդիսանա-
ին:

Առտուան ժամը վեցն էր:

Փողոցին լոյսերը շատոնց մարած էին, իսկ չըջանին
խլխլած գիշերապահը ժամանակէն առաջ կծիկը դրած էր:

Մերունիին անթարթ Հայեացքը փողոցը ծայրէ ծայր զննելէ
ետք, գիմացի երկարականի շէնքին վրայ Հանգչեցաւ, որուն Հո-
վանիին տակ պաշտօնական տարազներով երկու Հոգի կեցեր
էին, գաղտնի ոստիկաններու յաւակնութեամբ:

«Արդէն կը սպասեն կոր սրիկաները», Հայհոյեց Փէշի-
վան Մելիք քթին ասկէն, երբ Հապճեպով մը պատուհանին
առջեւէն Հեռանալու կը պատրաստուէր:

Պոլսոյ Հայաչէն արուարձաններէն Սամաթիոյ մէջ ընակող Եանպագանեան գերդաստանին Համար անձկալի օր մը կը ծագէր:



Հասած էր այն տրտմելի պաշր. երբ գերդաստանին միակ որդին՝ Արմենակ, Կարին՝ զինուորութեան պիտի երթար:

Երիտասարդը իր քսանմէկ տարին բնակած Թաղին եւ ընտանիքին աւանդապաշտ երգիքին տակ անցուցած, բարոյական ու ազգային սահմանափակ դաստիարակութիւնը չըջանի Սուրբ Քաղէոս-Քարդուղիմէոս եկեղեցիներուն եւ Պէղազեան վարժարանին մէջ ստացած էր:

Զքաւորութեան պատճառաւ, պատանին երկրորդական ուսումը չէր կրցած շարունակել: Տասներկու տարեկանին ան Հայ շապկագործի մը քով աշկերտ մտած՝ քսան տարեկանին Քերայի անուանի վաճառականներէն մէկը դարձած էր:

Իսկ Հիմա, քաղաքացիական պարտականութիւնը կատարելու կ'երթար:

Եթէ Արմենակի Համար պարզ չէր, թէ թրքական բանակին ծառայելը ինչ կը նշանակէր, անիկա բացայայտ էր տակայն իր մեծ Հօր՝ Փէհլիվան Մէլիքի Համար: Մերունին զիտէր, շատ լաւ դիտէր, թէ Պոլսէն Կարին զինուորութեան դացող Հայու մը գլխուն ինչէր կրնային գալ:

Քանի Հոգիներ Կարին զինուորութեան գացեր ու շատեր անդամայոյժ եղած դարձեր են, ոմանք ալ երբեք չէին վերադարձեր:

Փէհլիվան Մէլիք Եանպագանեանին մշուշապատ աչքերը շատ բան տեսեր էին:

Ու ծերունին անյաղթաւարելի տուայտանքով Համակուած, թոռան ննջասնեակը մտաւ:

Երիտասարդը մեկնելու պատրաստուած էր արդէն: Ճամբորդութեան պայուսակը ձեռքին, պատուհանին առջեւ աթոռի մը վրայ կծկուած, ալեկոծ Հայեացքը դրան առջեւ զինք ճամբելու եկած Քաղեցիներուն վրայ, ան կը շրջէր յիշողութեան ամբողջին մէջ վերջին տպաւորութիւն մը արձանագրելու իղձով:

Փէհլիվան Մէլիք թանձր մատներուն մէջ պահարան մը բռնած, աթոռ մը քաշեց ու թոռնիկին քով նստեցաւ: Երիտասարդն ու ծերունին պաշտ մը իրարու նայեցան տրտմագին ու անձայն:

- Պէտք չունի՞մ, պապ,- ըսաւ երիտասարդը մեծ Հօր ձեռքի պահարանը նկատելով,- զացած տեղս դրամի պէտք պիտի չունենամ:

Մերունին, միտքը սարսափելի յիշատակներու մէջ թափառուն, Հերաթափ գլուխը կղակին վրայ հանդիցուց:

- Պէտք պիտի ունենա՛ս, օղո՛ւլ,- չեշտեց ան խորունկ շունչ մը ատենելով,- պէտք պիտի ունենաս...

Երբուկը կամացուկ մը պահարանը բացաւ, գորավար Քեմալ Աթաթուրքին լուսանկարը Հանեց ու թռանկիկն առջնւ գրաւ:

Երիտասարդը դարմանահար մէյ մը նկարին՝ մէյ մը մեծ հօրը կը նայէր:

- Ա՞ս ինչ է,- բացազանչեց խնդուքը հաղի զսպելով:

- Նայէ, օղո՛ւլ,- շարունակեց Փէշիվան Մէլիք մտալի դէմքով,- ողորմած Աստուած քեզ պահեց-պահպանեց ու բամամ քսանմէկ տարի այս խրճիթին մէջ Հայ ապրեցար: Ամնա, Հիմա տեղ մը կ'երթաս կոր, որ նէ՛ մեծ-մօրդ, նէ՛ տէ մեծ-հօրդ խօսքը կ'անցնի: Մինչեւ այսօրս Հայ ապրեցար, այսօրուրնէ անդին Հայու գաւակ չես, օղո՛ւմ: Հիմա քեդի բան մը պիտի ըսեմ, թող ականջիդ օղ ըլլայ: Ասկէ վերջ քու Հայրդ-մայրդ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքն է: Եղա՞ւ: Երբոր Էօղուլ (գօրանոց) մտնես, այս նկարը կ'առնես, անկողինիդ վերեւը կը կախես ու ամէն օր անոր առջնւ բարեւի կը կենաս: Կը Հասկնա՞ս: Տիգ դափայտ-թիւն (ցից գլուխ) չես ըներ: Հայ գինուորներէն Հետու կը մնաս: Հայերէն չես խօսիր: Ուշ չես Հաներ: Եթէ պիտի աղօթես՝ մտքէդ կ'աղօթես: Խրատներս թող ականջիդ օղ ըլլան: Եղա՞ւ:

Բացարձակ ինքնուրացութիւն Հետամտող այս բուն թեւադրանքները ապշեցուցած էր Արմենակը:

- Պապ, ինչո՞ւ Համար կ'ուզես, որ այս նկարը Հետու տանիմ,- Հարցուց՝ Հարցական նայուածքը մեծ հօր թթուած դէմքին յառած:

Երբունին ոտքի ելաւ, պատուհանին մօտենալով սեւ, թափանցող Հայեացքը մայթին վրայ սպասող ստիկաններուն վրայ կեդրոնացուց:

- Որովհետեւ դուն Հայ ես, օղո՛ւլ: Ինչքն օտարի աչքով կը նային: Բերնովդ թռչուն բռնես՝ նորէն մարդու նարար (օգտակար) չես:

- Պապ, կրնայ ըլլալ, որ Հայ ըլլամ, կրնայ ըլլալ, որ Հաւատքս ու լեզուս տարբեր ըլլայ, սակայն Հոս ծնած, Հոս մեծցած մա՞րդ եմ: Իստեւ այս երկրին քաղաքացին, որոշ իրաւունքներու եւ պարտաւորութիւններուն ենթակայ եմ:

Փէշիվան Մէլիք պատուհանին առջեւէն Հեռացաւ, կամացուկ մը թռանկիկն մօտենալով ձեռքը անոր ուսին վրայ Հանգչեցուց:

- Նայէ, օղո՛ւլ, դուն խաւ տղայ ես, ամմա պահա (տակափն) շատ ջահիլ ես: Այս երկրին մէջ երբ Հայ ես, պարտաւորութիւններ ունիս՝ ամմա իրաւունքներ չունիս: Այս խօսքնրա շող ականջիդ օղ ըլլան: Կ'իմանա՞ս:

Արմենակ առանց պատասխանելու նկարը սեղանէն վերցուց ու պայուսակին մէջ տեղաւորեց:

- Խօսքերդ մտիկ կ'ընեն, պապուկ. Խախդ հալալ ըրէ.-
 փսփսաց ան տխրագին, երբ մեծ հօր հետ կ'ողջագութուէր:

Երիտասարդը, հօր մահէն ետք մեծ հօր ասիերուն մէջ
 մեծցաց էր:

- Աստուած հեագ, օղո՛ւլ,- փսփսաց ծերունին խեղդուկ,
 ընկճուած ձայնով:

Երբ Արմենակ պայուսակը շարկած տունէն գուրս կ'ելէր,
 դրան առջեւ հաւաքուած դրացիներէն մէկը անոր ետեւէն դոյլ
 մը ջուր թափեց, ուրիշ մը ասի մը ցորեն սրսկեց, տակաւին
 ուրիշներ, քահանայ Տէր Արամին միանալով՝ կ'աղօթէին միա-
 բերան.

«...Տէր, ուղղեա՛ գգնացս մեր ի ճանապարհս խաղաղու-
 թեան. Տէր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հողոց եւ ամենայն
 հաւատացելոց գնալ յարդարութեան...»:

Իսկ Փէհլիվան Մէլիք, պատուհանին առջեւ կանգնած,
 երեխայի նման կ'արտասուէր:



Տասնութ ժամ տեւող ճամբորդութենէ ետք, Արմենակ
 առտուան դէմ կարին հասաւ: Մովէն երկու հաղար մեթր
 բարձրութեան վրայ տեղ գրաւող կարինի լեռնազաւոր,
 առտուան այդ ժամուն մշուշով պատած էր:

Երիտասարդը առանց ժամավաճառ ըլլալու կայարանին
 դիմաց գտնուող զինուորական գրասենեակը մտաւ ու վաւե-
 րաթուղիները յանձնելով ներկայացուց ինքզինք:

Զօրանոցը, Աս-գալէ կոչուած գիւղաքաղաքին մէջ, մի-
 յարկանի ու լայնածաւալ համալիր մըն էր:

Եւ Արմենակ առաջին անգամ հոն ծանօթացաւ գնդապետ
 Ջաղըր Ջաղմագին:

Նորեկներէ բաղկացած երեսունհինգ հոգիեց խմբակը
 շարաթ մը ետք զինավարժութեան սկսաւ:

Շարաթ մը ինքնիրեն առնել-տալէ ետք, Արմենակ մեծ
 հօր թելադրանքը կիրարկելով Քեմալ Աթաթուրքին նկարը
 անկողինն վերեւը կախեց:

Զօրանոցին միակ զինուորն էր, որուն մահճակալին վերեւ
 թուրք զօրավարին նկարը կախուած էր:

Քանի մը օր ետք, երբ առտու կանուխ գնդապետ Ջաղըր
 Ջաղմագ անակնկալօրէն ննջարանէն ներս մտնելով շտկուած
 անկողինները քննելու ելած էր, պատին վրայի նկարը նշմարե-
 լով՝ մօտեցաւ Արմենակին:

- Անպարտելի թուրք բանակին՝ աննկուն թուրք զինուոր՝
 Եանպագանեան Արմենակ, ինչո՞ւ համար այդ նկարը անկողի-
 նիդ վրայ կախեր ես, օղո՛ւմ - Հարցուց գնդապետը յատկանը-
 չական շեշտով:

Արմենակ արձանի պէս բարեւի կեցաւ:

- Պատրաստ եմ ձեր հրամանները լսելու, գնդապետս,- որոտաց ան կարճ ու կտրուկ,- այդ նկարը կախած եմ հոն, որովհետեւ ամէն օր կ'ուզեմ յիշել, թէ մեր այսօրուան վայելած քարերախառութիւնները որո՞ւն կը պարտինք:

Քնդապետը պրպտող նայուածք մը նետեց գինուորին դէմքին, հեղնանքի կամ ծաղրանքի նշոյլ մը նկատելու մտադրութեամբ:

Սակայն Արմենակին անխռով դէմքը գերծ էր այդպիսի արտայայտութիւններէ:

- Էֆէրիմ, օղլո՛ւմ, արդէն թուրք գինուորին բերնէն ուրիշ պատասխան մը չէի սպասեր,- չեչտեց գնդապետը երկմտութեամբ:

Ետքաթ մը ետք, երիտասարդ գինուորը զօրանոցին գիշերապահը կոչուեցաւ:

Զինուորի մը հանգստեան պահերը օրական վեց ժամ էին: Պահակութեան սկսելէն ի վեր Արմենակի հանգստեան պահերը կրճատուած՝ չորս ժամի իջեր էին: Սակայն Արմենակ չէր գանգատեր: Ընդհակառակն, ան ուրախ էր, որ իրեն պատասխանատու պաշտօն մը վստահուած էր:

Ոստաքարոյ գնդապետին հսկողութեան տակ մարտական եւ գինական փորձերը վեց ամիս տեսցին, որուն ընթացքին Արմենակ զձի պէս սողալ, յովազի պէս վազել ու կապիկի պէս կապկել սորվեցաւ: Զօրանոցին օրինապահ կեանքը համեմատաբար սահուն՝ առանց արկածախնդրութեան կ'ընթանար: Ու հիմա գինուոր Արմենակը համոզուած էր, թէ մեծ հօր յայտնած մտահոգութիւններն ու թելադրանքները իսկապէս անտեղի մտմտուքներ էին:

Իրազմափորձերու աւարտին՝ դասախօսութիւններու շարք մը սկսաւ, որ տեղի կ'ունենար ամիսը անգամ մը, ուր ազգային եւ պատմական եղելութիւններ կ'արծարծուէին, յանձին գնդապետ Զազմազի:

Այդ դասախօսութիւններէն առաջինը տեղի ունեցաւ ձմեռնային երեկոյ մը, երբ րոյտը գինուորները վառարանի մը շուրջ հաւաքուած էին:

.. Թուրք հանրապետութեան անպարտելի գինուորներ,- խոսքոտ շեշտով մը խօսելու սկսաւ գնդապետ Զազրը Զազմազ-յարմար կը նկատեմ, որ այս դասախօսութիւններուն շարքը սկսի մեր պատմական ու պատուական Հայրենիքին դարաւոր ու հռչակաւոր քաղաքով՝ չքնաղ էրզրումով:

«Տերեմն, Արեւելեան Անատոլուի Հինաորուց էրզուրումը, Բրիտանիայի թեմէնէն առաջ ուրարտական, վեցերորդ դարուն սկիզբները բիւզանդական եւ արաբական քաղաքակրթութիւններու օրրան եղած է: 1070 թուականին Մշանը Սելճուքներու կողմէ կը գրաւուի եւ շնորհի յառաջադէմ թուրք սուլթաններուն, մինչեւ տասնչորրորդ դարուն սկիզբը տնտեսա-

կան, քաղաքական եւ մշակութային Հսկայ նուաճումներ կ'արձանագրէ:

«Հոյարձակ լեռներով շրջապատուած անդուղական էրզրումը, 1516ին Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ անցաւ, սակայն 1829ին, 1878ին, եւ 1919ին, քաղաքին մէջ Հաստատուած Հայ մարտական ուժերուն դաւաճանութեամբ, ոռուսերուն ձեռքը ինկաւ:

«Այս շրջանին, էրզրումի մէջ պատահեցան պատմութեան ամէնէն զարհուրելի, ամէնէն սարսափելի եւ անմարդկային արարքները, որոնց նմանը երկրագունդին վրայ պատահած չէ:

«Հազարաւոր երեխաներ, Հայրեր, մայրեր, ծերունիներ, ընտանիքներ ու գերդաստաններ բնաջնջուեցան, օր-ցերեկով սպաննուեցան ու ջարդուեցան Հայերու կողմէ: Այս Հողը, որուն վրայ այսօր կը կոխէք, թուրքի արիւնով թաթախուած է»:

Փնդապետը խօսքը ընդհատեց ու պիտեբը շփելով նախ սուր նայուածք մը նետեց զինք ապշահար դիտող զինուորներուն վրայ, յետոյ, կշտամբող Հայեացքը Արմենակին վրայ սեւեռելով՝ զոտաց.

- Անպարտելի թուրք բանակին աննկուն զինուոր Եանպազանեան Արմենակը ըսածներս լսած է:

Արմենակ զսպանակի պէս տեղէն ցատկեց, արձանի պէս քարելի կենալով՝ որոտաց.

- Լսած է, զնդապետս,- պատասխանեց Արմենակ շանթաւար,- պատրաստ եմ ձեր Հրահանգները իրագործելու:

Փնդապետը Արմենակին մօտեցաւ ու անոր շուրջը անզգի եման շրջելէ ետք, պահանջիտ շեշտով Հարցուց.

- Եանպազանեան Արմենակը ըսածներս կրնա՞յ կրկնել:

- Կրնայ կրկնել, զնդապետս,- բացազանչեց Արմենակ միակրտուր:

- Էֆէրիմ, օղլո՛ւմ, թուրք պետութեան Հաւատարիմ թուրք զինուորին բերնէն ուրիշ պատասխան չէի սպասեր արդէն,- վրայ տուաւ զնդապետը, Հանգամանքին տէր զինամարզի մը յաւակնութեամբ:

Արմենակ մէջտեղ ելաւ ու անայլայլ, առանց նոյնիսկ աչքերը թարթելու, թութակի պէս լսածները բառ առ բառ կրկնեց:

Սենեակին մէջ պրկուած լուսթիւն մը կը տիրէր: Բոլորը իրենց դէմքերու արտայայտութիւններու մէջ նոյնացած, զարմանահար ու գողունի նայուածքներով, փոխնիփոխ, Արմենակը ու զնդապետը կը դիտէին:

Փնդապետ Ձազըր Ձազմազին սեւեռուն, Հայուենչոտոջ նայուածքը գրակալին առջեւ արձանի պէս բարունք կնքող Արմենակին վրայէն սահելով սենեակին խուլ մէկ անկիւնը առանձին նստող զինուորի մը վրայ կնդրոնացաւ: Ահռելի դէմքով, թիկնեղ, մկանուտ ու ախտանեան Հասակով սարսափադադու երիտասարդ մըն էր ան:

- Թուրք բանակին աննկուն զինուոր Ալիշանըն թրքերէն չի գիտեր,- Հնչեց զինուորը նստած տեղէն համարձակ, ձեռքովը ջրայնուտ շարժում մը ընելով:

Հաստ ու կարճուկ վիզին վրայ Հաստատուած գնդապետին իւզոտ գլուխը ջրայնութենէն կարմրած էր: Այնուամենայնիւ, իրեն հանդէպ ցուցաբերուած այս անիշխան կեցուածքը առանց ինքզինքը կորսնցնելու, արտակարգ Համբերութեամբ մը դիմագլորեց:

- Հանրապետութեան Հաստարիմ զինուոր Ալիշանըն բռածներս կրնա՞յ կրկնել:

Զինուորը, առանց տեղէն շարժելու, արհամարհական նայուածքը գնդապետին վրայ գամեց.

- Զինուոր Ալիշանըն թրքերէն չի գիտեր,- կրկնեց ընթուտը՝ ձայնին մէջ նախատական անտարբերութիւն մը զննելով:

Զօրանոցէն ներս սարսափը իր գազաթնակէտին Հասած էր:

- Զինուոր Ալիշանըն թող քո՛վս գայ,- որոտաց գնդապետը բարկութենէն փրփրած:

Ալիշանըն տեղէն ելաւ ու Հաստատուն քայլերով սենեակին մէջտեղ կեցաւ, ուր Արմենակ տակաւին անշարժ ու անշունչ բարեւի կեցած էր:

- Ողջում, Արմենակ,- վրայ տուաւ գնդապետը Հին բարեկամներուն յատուկ մտերիմ շնչտով,- Հաստարիմ զինուոր Ալիշանըն կ'ըսէ, թէ մայրենի լեզուն մոռցեր է:

Արմենակ վախէն փայտ կտրած էր: Ծոհուն ճակտին վրայ քրտինքի պաղ կաթիլներ Հասարուած՝ անտոյ զգացում մը էութիւնը պայարած էր կարծես:

- Աննկուն էսկեր Եանպազանեան Արմենակ, Հիմա, Հայրենիքին Համար զէնք վերցնող այդ ձեռքերովդ էսկեր Ալիշանըն գլխուն զա՛րկ... զա՛րկ այնքան ուժղին ու այնքան զօրաւոր, որ անոր ջնջուած յիշողութիւնը վերականգնի ու տատամտող լեզուն վերաբացուի:

Այս արտաոտց եւ սահմանէց... շէշ Հրահանգը այնպիսի անակնկալ մըն էր, որ Արմենակի պրկուած մարմինը փշաքաղուեցաւ ու դողդողալու սկսաւ: Անհատական եւ մարդկային ապրումներու պայքար մը սկսած էր անոր մէջ, որուն նմանը իր կեանքին մէջ չէր ունեցած տակաւին: Ստացած ընտանեկան, կրթական եւ ազգային դաստիարակութիւնը անոր չէր թոյլատրեր, որ նոյնիսկ մըջին մը կոխկռտէր, ո՛ւր մնաց գիտակցօրէն Հարուածել իրեն պէս զինուորադրեալ մը, որուն Հետ Հարկադրուած էր ապրիլ ճակատագրական երեք տարիներ:

Յետոյ կային ուրիշ երեւոյթներ, որոնք Արմենակին զգացական անկազմակերպ ըմբռնումներուն մէջ խառնաշփոթ տազնապներ յառաջացուցած էին:

Լեոնային դիմագիծի տէր այս գինուորը ինչո՞ւ Համար ինքզինք անբան ձեւացուցած էր, Հակառակ անոր, որ յստակ եւ սահուն թրքերէն գիտէր:

Եւ վերջապէս, ինչո՞ւ Համար զնդապետը իր սահմանած պատիժը իր ձեռքով չէր գործադրեր, որուն Համար պաշտօնական ամէն իրաւասութիւն ունէր:

Սակայն, ամէն բանէ առաջ, Արմենակ կը գիտակցէր, որ ինքը գինուոր, իսկ ստացածը գինուորական Հրահանգ էր, եւ այդ Հրահանգը պիտի գործադրուէր:

- Ո՞ր կողմէն զարնեմ, զնդապետս,- Հարցուց ան միամըտօրէն, յուսալով, որ եղածը անհամ ու անտեղի պահանջք մըն էր ու թերեւս զնդապետը միտքը փոխէր:

Պարզամտութեամբ ուղղուած այս Հարցումը խնդրին թատերական բնոյթ մը տուած ըլլալուն, տեղւոյն վրայ զուսպ ծիծաղ մը յառաջացուցած ըլլալով՝ զնդապետը ա՛լ աւելի կատղնցուցած էր:

- Զա՛րկ, ուրտեղէն որ ուզես՝ Հոնտեղէ՛ն զարկ,- պոռաց ան ջղայնութենէն մեծ ու կլոր աչքերը զուրս ինկած,- միայն զա՛րկ, զա՛րկ, որ խելքը զլուխը գայ...

Ընթատ Ալիշանլըն, որ մինչ այդ լռելեայն կը դիտէր Արմենակին տուայտանքը, ճառագայթող նայուածք մը նետեց անոր դարկաւար դէմքին ու մեղմօրէն զլուխը ծոց:

Երկու երիտասարդներուն միջեւ միայն երկվայրկեան մը տեւող այդ խուսափուկ նայուածքին խորքին անյաղթահարելի դժբախտութեան մը վիշտը կ'արձագանգէր:

Արմենակ ցնցուեցաւ:

Ալիշանլըն պատրաստ էր Հարուածը ընդունելու:

Զինուոր Եանպազանեան ուժգին թափով մը ձեռքը բարձրացուց ու մատներուն ծայրով դիմացինին դէմքին վրայ յափուած-ձեւուած ապտակ մը իջեցուց:

Հարուածին շինծուութիւնը զնդապետին աչքէն չէր վրիպած:

- Անպարտելի թուրք բանակին աննկուն գինուոր Արմենակը թող քո՛վս գայ,- Հրամայեց զնդապետը ռիսերիմ:

Արմենակ զնդապետին մօտեցաւ.

- Օղլում, Արմենա՛կ,- շնջաց ան ակոսներուն մէջէն օձի խորամանկութեամբ,- ասկէ վերջ երբ քեզի զա՛րկ ըսեմ, ասանկ պիտի զարնես, օղլո՛ւմ...

Ու իր առջեւ բարեւի կեցող Արմենակին երեսին ահուկի բռունցք մը իջեցուց: Հարուածը այնքա՛ն ամուր, այնքա՛ն ուժգին էր, որ Արմենակ պատին զարնուելով ինքզինք կորսնցուց ու կոնակին վրայ գետին փռուեցաւ:

Երբ աչքերը բացաւ, գաւաթ մը ջուր խմել ուզեց: Ձկրցաւ: Կզակը տեղէն խախտած՝ բերանը անշարժացած էր: Իսկ գետինը, գինուորական արիւնտտ տարագին վրայ երկու ակոսներ ինկած էին:

Պատահած արարքը, սակայն եզակի երևույթ մը չէր:

Ամիս մը ետք, դասախօսութիւններուն երկրորդը տեղի ունեցաւ. որուն նիւթը թրքական դրօշակին պատմականն էր:

Ամէն ինչ նոյնութեամբ կրկնուեցաւ. ինչպէս պատահած էր առաջին դասախօսութեան ընթացքին, այն տարբերութեամբ, որ այս անգամ Արմենակին վիճակը ա՛լ աւելի վատթարացած էր: Անոր արիւնլուայ դէմքին մէկ կողմի այտուկը փչրուած, շրթունքները ճզմուած, ակոսներէն երկու հատը եւս թափած էին:

Կ'ըսեն, թէ կեանքի մէջ վայելքի օրերը չեն, որ յիշողութեան խորունկ հետքեր կը ձգեն: Կ'ըսեն նաեւ, թէ տառապանքը ինքնաճանաչման ակունք է:

Այն օրուրնէ սկսեալ ատելութեան նման կարծրացած ու տիրական գգացում մը սկսաւ խմորուիլ Արմենակին մէջ, յատկապէս գնդապետին հանդէպ:

Երիտասարդ գինուորը կը գիտակցէր, որ վերջին երկու դասախօսութիւններուն ընթացքին տեղի ունեցած չարամիտ վերաբերմունքը իր գոյութեան սպառնացող ծրագրուած արարք մըն էր:

Կը մօտենար այն օրը, որ դասախօսութիւններուն երրորդը տեղի պիտի ունենար: Կուտակուած, սակայն անստոյգ մղձաւանջ մը Արմենակին հոգին պատած էր: Գալարուն ենթադրութիւններով Համակուած, կը մտածէր, թէ ինչպէ՞ս կրնար խուսափիլ երրորդ հարուած մը ուտելէ, որուն հետեւանքը կրնար նոյնիսկ մահացու ըլլալ:

Սակայն ինչպէ՞ս խուսափիլ:

Որո՞ւն կրնար ապաւինիլ:

Ու կոտտացող մտորումներու մէջ թափառուն, թուրք բանակին աննկուն գինուոր Արմենակ Եանպազանեան, մարդազաշտին մէկ անկիւնը ծառի մը տակ նստած, մեծ հօր՝ Փէհլիփան Մելիքին խրատները վերջիւնց:

Եւ հոն, իր առանձնութեան մէջ առաջին անգամ ըլլալով անզրադարձաւ, որ ինք, իբրեւ Արմենակ Եանպազանեան, «եթէ նոյնիսկ բերանովը երկու թռչուն» բռնէր, թուրք Հանրապետութեան Հարազատ քաղաքացին պիտի չնկատուէր:

Եւ այս ճշմարտութիւնն էր. զոր մեծ Հայրը փորձած էր իրեն փոխանցել:

Սակայն ինչպէ՞ս խուսափիլ երրորդ հարուած մը ուտելէ:

Արմենակ ինքնայորդոր մտորումներու մէջ թաղուած էր, երբ դաշտին դիմացի կողմէն բազի նման շորորալով իրեն մօտեցող մէկու մը յաղթանդամ ուրուագիծը նշմարեց:

Շատ չանցած, իր դիմացը տիտանեան Հասակով գինուոր Ալիշանլըն երեւցաւ:

- Դո՛ւն, կեալո՞ւր (անասունած) ես,- բացազանչեց ան՝
 ձեռքերը մէջքին:

Արմենակ վախէն առանց պատասխանելու գլուխը ծռեց:
 Ալիշանլըն լարուածութեամբ դիմացինին ընկճուած դէմ-
 քը զննելէ ետք, կամացուկ մը անոր մօտեցաւ:

- Դուն Հա՞յ ես,- հարցուց ան մեղմօրէն, զաւառացիի
 բարբառով:

Արմենակին վիրալիբ աչքերուն մէջ արտակարգ հրայրք
 մը փայլատակեց ու բոլոր էութեամբը ցնցուեցաւ: Անձկութե-
 նէն մտածելու եւ արտայայտուելու կարողութիւնը կորսնցու-
 յած կ'երեւէր: Առանց խօսելու գլուխը շարժեց:

- Ե՛ս ալ Հայ եմ,- աւելցուց Ալիշանլըն կարեկցարար ու
 Արմենակին քով նստեցաւ:

Հիմա երկու զինուորներ անձայն-անչուկ քով քովի
 նստած, զօրանոցը շրջապատող կարինի ձիւնապատ լեռները
 կը դիտէին:

- Ուրտեղէ՞ն ես,- հարցուց Արմենակ չնշաւեղծ:
 Ալիշանլըն սիկարէթ մը վառեց ու խորունկ-խորունկ
 ներշնչեց: Մուխը բերնէն դուրս կ'ելլէր այնպէս, որ կարծես
 կրակ կար սրտին մէջ:

- Քիթաշեայէն: Անունս Ալիշան է: Դո՞ւն:
 - Պոլսէն:

Ճնշիչ լուծիւն մը սիրեց երկուքին միջեւ:
 - Աէի դիտեր, որ Քիթաշեայի մէջ ալ Հայութիւն կայ,-
 րաւ Արմենակ թերահաւատութեամբ:

- Կայ եղբր, ամ՛ա շատ չմնաց,- պատասխանեց Ալիշան
 յոգնած:

- Ինչո՞ւ, ինչ եղաւ,- հարցուց Արմենակ:
 - Ինչ մը եղա՞ւ,- կրկնեց Ալիշան փրփրած,- ամէնը ջար-
 դեր են: Ան որ փախեր է՝ միւսլիման քրեր են: Նէնէս կը
 պատմէ:

Օղին մէջ կախուած, ձգտուած լուծիւնը զգալի էր:
 - Վաղը նորէն դասախօսութիւն կայ,- շարունակեց Ալի-
 շան:

- Ինչո՞ւ Համար շուն-շանորդիին քսածները չես կրկնել
 կոր,- հարցուց Արմենակ մտայլ:

Ալիշան սուր, հարցական նայուածք մը նետեց քովինին
 վրայ:

- Որովհետեւ քսածները կրկնուելիք բաներ չեն,- պոռթը-
 կաց ան ջղայնութեամբ,- էրզուրումի մէջ, Ատանայի մէջ, Ար-
 տաշանի մէջ, Մուադի մէջ, Կեսարիոյ մէջ, Անթէպի մէջ, Պոլսոյ
 մէջ, Կարսի մէջ, էրզինճանի մէջ, Վանի մէջ, Սամսոնի մէջ ո՞վ
 որո՞ւ ջարդեր է... Հա՞:

Յանկարծ, Արմենակին գլուխէն մինչեւ ոտքերուն ծայրը
 ջերմութիւն մը տարածուեցաւ:

- Խարուած ենք,- փսիսաց Արմենակ յուսահատօրէն,
տարտամ հայեացքը դետին յառած,- երկուքս ալ խարուած
ենք:

- Ի՞նչ ըսել է խարուած ենք:

- Խարուած ենք, որովհետեւ մենք մեզ այս երկրին քա-
ղաքացին կը համարենք, հաւատարմութիւն կը ցուցարերենք,
սակայն մեզ մարդու տեղ զնոյ չկայ:

Ջգտուած լուծիւնը շարունակեց:

- Քովդ Սուրբ Փիրք ունի՞ս,- Հարցուց Ալիշան խորհրդա-
ւոր շեշտով:

Արմենակ անակնկալի եկած էր:

- Ո՛չ, չունիմ, քայց Հոս ասանկ բաներու մասին մի խօ-
սիր,- թելադրեց մտերմաբար:

Ալիշան շապիկին զրպանէն մետաքսեղէնի մէջ փաթթը-
ւած, եռանկիւնաձեւ թուղթի կտոր մը հանեց:


- Ասիկա առ՝ վրադ կախէ: Ազօթք է: Նէնէս տուած է:

Արմենակ խոր նայուածք մը նետեց Ալիշանին ու առանց
պատասխանելու ոտքի ելաւ: Երկչոտ քայլերով անոր քովէն
հեռանալու վրայ էր:

- Արմենակ, մտիկ ըրէ,- թնդաց Ալիշան անոր ետեւէն
գոռ ու առնական հեշքով,- վաղը, երբոր քեզի զարկ ըսէ, մի
վախնար, զա՛րկ, զա՛րկ, զօրաւոր զա՛րկ, ուզածի՞դ չափ զարկ,
բոլո՛ր ուժովդ զա՛րկ: Որովհետեւ երբոր գուն ինձի զարնես,
հէ՛չ չի ցաւիր: Ամմա երբոր այդ փեղկ վէճկը քեզի զարնէ, սիրտս
չա՛տ, շա՛տ կը ցաւի կոր...

ԹՈՐՈՍ ՉԻՃԼԵԱՆ

Սիւնի-Ալեւտրայիա, Մարտ 14, 2002





«ՄԱՅՐԻԿ»Ը

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻ ՀԻՄԱ

1985ին, ֆրանսական գրական աշխարհը ողջունեց «Մայրիկ»ին յայտնութիւնը: Հեղինակը ակադեմական գրող մը չէր, ոչ ալ վիպասան մը: Քեմադրիչ մըն էր, որ իր ասկուն անունը ապաւոճած էր սինեմայի աշխարհին մէջ: Բայց, յանկարծ շքեղ կերպով մուտք կը դործէր ֆրանսական ժամանակակից գրականութեան մէջ՝ իր «Մայրիկ» հատորով: Անունը՝ Անրի Վերնէօյ: Աշոտ Մալաքեան: Գաղցր եւ սիրելի անուն մը ֆրանսահայութեան համար, որ իր յուշերուն ճամբով, եւ իր մօր հանդէպ խանդադատակից սիրոյն արտայայտութիւն իբրեւ՝ գրին կը յանձնէր իր որդիական սէրը: Հիմա գիրքը չորս անգամ վերահրատարակուած է Ֆրանսայի մէջ, թարգմանուած է տասը տարրեր լեզուներու, եւ Արժանթինէն մինչեւ Հիւսիսային Եւրոպայի երկինքը կը ճանչնայ հայ մայրը՝ Աշոտի «Մայրիկ»ին ընդմէջէն:

Մինչեւ հիմա օտարախօս էր սակայն «Մայրիկ»ը: Հիմա, վերջապէս, երջանիկ է, որ կը դառնայ իր արեան ձայնին, իր լեզուին եւ հայերէնով կը ներկայացուի բոլոր հայ որդիներուն, որոնք, իրենց կարգին, «Մայրիկ»ին մէջէն պիտի յիշեն իրենց անուշ եւ անդին մայրիկը, սիրեն եւ յարգեն իրենց մայրերը:

Ասիկա հնարաւոր եղաւ շնորհիւ գրագէտ ժիրայր Աթթարեանին, որ քաջածանօթ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներուն, կարճ ժամանակի մը մէջ հայացուց «Մայրիկ»ը, որուն կը յայտնենք մեր անկեղծ գնահատանքն ու շնորհակալութիւնը: Ենորհակալութեան մեր խօսքը քնականաբար կ'երթայ հեղինակին, որուն մասին, հանգուցեալ Կարօ Գէորգեան տարիներ առաջ գրած էր՝ «Աշոտ Մալաքեան մնացած է միշտ Աշոտ Մալաքեան, - այսինքն՝ հայ, լրիւ եւ ամբողջական: Ձորս չորրորդ: Հայ՝ իր ընտանեկան դաստիարակութեամբ, իր լեզուով, իր մտածումներով, ազգային արժէքներու եւ սրբութեանց հանդէպ իր պաշտամունքով, այլ մանաւանդ, ամէն տեղ, նաեւ ֆրանսական շրջանակներու մէջ, իր հայ մը եղած ըլլալը յայտնելու նախանձախնդրութեամբ»: Ենորհակալութիւն նաեւ Բոպէր Լաֆօն հրատարակչականին, որ Աշոտ Մալաքեանի միջնորդութեան վրայ, մեր Առաջնորդարանին վերապահեց «Մայրիկ»ի հայերէն հրատարակութեան իրաւունքը, մինչ հեղինակը, ինք, հրաժարեցաւ որեւէ պատուագին պահանջելէ, զայն նուիրելով հայ մայրերուն, իսկ «Հոգո՛ւ թին»:

Ի վերջ բանիս, սրտագին շնորհակալութեան մեր խօսքը՝ ազնուական մէկ ուրիշ Հայորդիի մը, Նիւ Ճըրզիէն Արթոր Հալփաճեանին, որ Հոգաց գրքին Հրատարակութեան ամբողջ ծախսը, եւ Հայերէն Հատորը ընծայեց իր թանկագին մօր, Հաւատար եւ քաջ Հայուհիի մը՝ Տիկին Ազնի Հալփաճեանին:

Տիկին Ազնի Հալփաճեան այժմ կ'ապրի Ֆլորիտա, ուր կ'անցընէ իր կեանքի ոսկի աշունը, եւ խանդավառ եւ խանդավառու ներկայութիւն է ամէնուր: Վատա՛հ ենք, ինք, «Մայր որդու՛մ բերկրեալ», երջանիկ է, որ նման Հատոր մը իր որդուն կողմէ կ'ընծայուի իրեն, իբրեւ գերագոյն առհասարակեայ որդիական սիրոյ:

Եւ, ահաւասիկ «Մայրիկ»ը:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

7 Մեյտ - 1987

Ա. Վերնէօյ

ՄԱՅՐԻԿ

- 1 -

Պիտի մեռնի:

Այնպէս՝ ինչպէս ապրեցաւ, ծածուկ, անշուկ, առանց մէկու մը նեղութիւն տալու: Կը դիտեմ զինք իր մերմակ սասաններուն մէջ պառկած, քնքուշ, մաքրասէր, ամբողջական իր քաղցրութեան մէջ, մահուան դիմաց առանձին, քանզի դիտեմ այլեւս Հիմա, մարդ առանձին կը մեռնի: Հարց է, թէ ինչո՞ւ, այս ծայրայեղ կսկիծի պահուն, երբ մարմնիս մէջ ամբարուած արցունքները նուազագոյն ցնցումի մը կը սպասեն ողորելու Համար այտերս, ինչո՞ւ այդպէս միտքս գնաց այդ մեծ ողբերգութիւններուն, որոնց մէջ գերակատարները կ'արտասանեն վերջնական խօսքեր եւ կը սպասեն պատասխանի վերջին, վերջնական կէտին՝ իրենց աչքերը առյաւէտ փակելու Համար: Խարդախութիւն մըն է այս, որուն դէմ կ'ընդվզիմ այսօր: Մարմնին ամբողջ մեքենականութիւնը անձկութեան մէջ է: Երակներուն, ջիղերուն եւ անօթներուն ամբողջ կառուցը կը մերժէ արիւնը փոխադրել դէպի սիրտ եւ ուղեղ եւ պիտի ուզենք, որ այս թմբիրին, կիսամահաբունին ժամանակ մարդիկ արտայայտուէին Ռասինի մը եւ կամ Եեքսփիրի նման: Ո՛չ: Մայրս այլեւս երբե՛ք պիտի չխօսի:

Կարճ ու կտրատուած շնչատութեան մը ցնցումներուն ենթակայ իր նիւհարցած, թշուառ մարմինը պատառ մը եւս թթուածինով կը ջանայ մատակարարել ինքզինքին, քիչ մը եւս Հետս կարենալ մնալու Համար:

Հակառակ իր կորսնցուցած տասնեակ մը քիլոներուն, ահաւասիկ այստեղ է, ընտանեկան սիրոյ այս իմ մեծ, աննման լէյտիս: Երիտասարդ աղջկայ իր ողորկ մորթով, առանց նոյնիսկ կնճիոի մը:

Երբ դիտել կը տրուէր իրեն, երբ կը ներքողուէր ժամանակի աւերներուն այս բարեբաստիկ բացակայութեան Համար, ինք ալ կը պատասխանէր պճնասիրութեան պզտիկ ձեւեր առնելով. «Փիտէք, որ շպար, սնքոյր գործածողը չեմ եղած երբեք, ոչ իսկ քրնձափոշի: Երբե՛ք: Այդ բոլոր քիմիական նխթերն են, որոնք մորթը կը փճացնեն»:

Կայսրիկ

ԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ



ՀԱՅԱՑՈՒՑ
ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

Լսած էի շատ յաճախ, երբ խօսք կ'ըլլար ծանր Հիւանդի մը մասին. «Մ, տեսէ՛ի՛նք, անճանաչելի դարձած է»:

Եւ կը խորհէի, որ չափազանց դաժան է, որ այդպէս դատաւարտուած ըլլաս կորստեան, մոռացութեան մութ վիճին, պարզապէս որովհետեւ փոփոխութեան ենթարկուած են չափող ու ծաւալող:

Այս «անճանաչելի» ըսուածը շատ աննշան քան մը ձգած էր մեր յիշողութիւններուն մէջ, երբ իրեն հետ կը քալէինք կողք կողքի, կը շօսէինք, կը խնդայինք միասին, որովհետեւ ամէն ինչ լուծուած, անէացած էր այն կորսուած քանի մը քիչ կըտող միտին մէջ:

Մահուան տեսիլը ոչինչ կրնայ ընել բոլոր անոնց դէմ, որոնք ներքին պզտիկ լոյսի մը գերբնական, պահպանիչ շնորհքը տակաւին կը վայելեն, այնքան առեն, որ կը պահեն տակաւին իրենց աչքերը, իրենց հայեացքն ու ժպիտը:

Իսկ մը գրեթէ տեսողութեամբ սիրոյ, գոհարեցութեան ու գուրգուրանքի իր բարձունքին վրայէն, մինչ գոցելու վրայ է կեանքին մեծ փակագիծը, աշուստիկ դիմացս է ձեր մայրս, անփոփոխ ու անաղարտ: Միայն քիչ մը նուաղած է ծաւալով: Այգքան:

Կիսով մը գոց, կրկնակ վարագոյրներով պատուհանին մօտ, վկայեալ Հիւանդապահուհի Տիկին Սփաքս, սիրոյ, սուսերամարտի խոշոր վէպ մը կը կարդայ: Ատենը անգամ մը, վիպային իր հերոսները կը լքէ՝ գալ եւ մօրս ճակատը իննսուն աստիճան օտրոյնի մէջ թաթխուած անպէտք, անիմաստ անձեռոց մը քսելու համար: Վեր կը քաշէ նաեւ մօրս ծածկոցը, որ չէ շարժած նախորդ անգամէն ի վեր, յետոյ իր վէպին կը վերադառնայ, սպասելով զինք փոխարինող գիշերային պաշտօնակիցին: Իր այդ ուշադիր, հոգածութիւն ցոյց տուող արտաքինին տակ թաքնուած է անկասկած մարմնի ցաւերուն ու թշուառութեանց վարժութիւնով կարծրացած սիրտ մը: Հաւանարար այսօր քիչ մը աւելի հոգատարութիւն, յաւելեալ եռանդ կը ցուցարբէ. որովհետեւ ես, մահամերձին դաւակր, սոսորեայի վճարադիրը ստորագրողը, ինչպէս նաեւ ձաշերուն եւ ընկերային այլ տուրքերուն հատուցումը կատարողը, ներկայ եմ այստեղ: Դեռ քիչ առաջ կը փորձէր հետս խօսակցութիւն մը բանալ սա ձեռի նախադասութիւններով:

- «Այս է կեանքը, յարգելի պարոնս, ութսուն եւ եօթներորդ իր տարիքին կը հասնէր»:

Ոչ մէկ փափաք կայ մէջս քացատրելու իրեն. որ զրոյս ձգող-հեռացող անձին յառաջացեալ տարիքը ոչինչով չի մխիթարեր զիս: Իրեններուն սիրոյն շոայլած ութսուն եւ եօթը տարիներու ազնիւ եւ երախտաշատ ծառայութիւնը պիտի այստեղ շուտով կանգ առնէր եւ ինծի համար կարեւորը այս մէկն էր: Կը գիտակցի հիմա այլեւս Տիկին Սփաքս, որ պէտք չէ խօ-

սանցի Հետս: Ոչ երբեք: Յարկարածին դրան երկձայն զանգակը Հնչեց այդ պահուն: Հիանդապահուհին դնաց բանալու: Մեր բժիշկն էր:

Մորս Համար չէ, որ կու գայ, ոչ, ես եմ, առողջը, որուն բարեկամական այցելութիւն մը տալու եկած է: Կը սեղմէ ձեռքս, սովորականէն քիչ մը աւելի ուժեղ: Ականատես կ'ըլլամ յետոյ առօրեայի սովորութեան կարգ անցած մեքենական շարժումներուն, որոնք զոց դիտեմ: Արեան ճնշումը, իր տրոփող բազկերակը, սիրարը, որ այնքան ծառայութիւն մատուցած է եւ որ կը մերժէ բաժնուիլ կեանքէն... քանի մը յաւելեալ վայրկեաններ եւս, ժամ մը, իրիկուն մըն ալ տարտամ թերեւս, ո՛վ գիտէ, ոչ ոք կրնայ նախատեսել:

Շատ քան չունինք ըսելու իրարու՝ այս պատուական բժիշկ Արմանն ու ես: «Հիանդանոցներու գիշերապահ նախկին պատասխանատու, դատարաններու մօտ խորհրդատու, մասնագէտ ներքին հիանդութեանց... ժամադրութիւնով»: Մայրս չի տառապիր, այն, ինչպէս որ սովորութիւն դարձած է ըսել՝ «երկարատեւ ու ցաւատանջ» ինչ-որ հիանդութիւնով: Ոչ, ինք պիտի չիջի շատ դանդաղօրէն, «մաշումի» Հետեւանքով, միշտ մոմի մը պէս, որ Հասած է իր վերջաւորութեան:

Եւ որովհետեւ պատշաճ պիտի չըլլար երբեք, որ բժիշկ մը առանց դեղագիր գրելու մեկնէր, բժշկական իր ձեռագրով Հակա չես գիտեր ինչ օժանակ մը կը յանձնարարէ:

Կ'ընկերանամ իրեն մինչեւ դուռը: Դուրս գալէ առաջ տատամսում մը կ'ունենայ, յետոյ ինծի կը թելադրէ փոխադրել մայրս աւելի չիք, փայլուն, վայելուչ հիանդանոց մը, ուր դէպքերը կրնան ընթանալ շատ աւելի պատշաճ, վայելուչ կերպով...

Ժիշդ այդ պահուն, Հազարամեակներէ ի վեր ծովամայն եղած երեւակայական Խյս քաղաքի զանգակներուն պէս, որոնց ձայնը իրրեւ թէ ծովուն խորութիւններէն կը բարձրանայ խաղաղ ժամանակներուն, զանկիս մէջ Հնչել սկսան մեր եկեղեցիներուն զանգերը, յիշեցնելու Համար կարծէք ինծի իմ արմատներս, մեր ծագումը, ուրկէ սերած ըլլալը, մեր աւանդութիւնները նաեւ: Ես Հայ եմ եւ մեզ մօտ, մայրերը իրենց Հոգին տան մէջ կ'աւանդեն:

Ոչ: Մայրս պիտի դուր չերթնայ ապրողներու այդ վատութեան, որ կը պարտադրէ վերջին ճամբորդութիւն մը դէպի Հրաչագործ հիանդանոց, ուրկէ ամէն մարդ շատ վստահ գիտէ, որ պիտի երբեք չվերադառնայ: Սուր եւ չրնդհաւատող ճիշեր արձակող ինքնաշարժ պիտի չըլլայ, որ քաղաքին փողոցներուն երկայնքին սուրայ, ալլեւս աւելորդ դարձած աճապարանք մը Հնչեցնելով:

Հիանդապահուհին, դուրս ելլելու պատրաստութեամբ նետեց վերարկուն ուսին, դեղագիրը՝ ձեռքին:

- Շուտով կը վերադառնամ, պարոն:

Անգամ մը, որ դուրս փակուեցաւ, ուղղուեցայ մօրս մօտ, վերադառնելու համար մեր մտերմութիւնը:

Հակառակ շափազանց յոգնած, սպառած վիճակին, դանդաղօրէն կը յաջողի իր ծածկոցէն դուրս սահեցնել թեր: Հաւանարար զիս չի տեսներ այլեւս, սակայն ցցուն երակներով իր ձեռքը սողոսկումներ կը կատարէ ծածկոցին վրայ, մինչեւ որ հանդիպի իմինիս: Զերմօրէն կծկուած գուրգուրանքի այս հեղեղին մէջ, կը սկսիմ սեղմել իր նուրբ մատները, վստահեցնելու համար զինք, որ իր մօտն եմ:

Դուրսը վատեցան քաղաքին լոյսերը: Գիտեմ հիմա, որ ոչ ոք պիտի այլեւս զգուշացնէ զիս գիշերներու գովութեանը դէմ, ոչ ոք պիտի երկարէ ինձի այդ պզտիկ, անիմաստ բուրդը. որ զիս այնքան կը տաղտկացնէ...: Եւ այժմ, կը մնամ առանձին մօրս շափազանցուած մտահոգութիւններուն դիմաց իմ ցուցադրած քարկութիւններու խղճի խայթին հետ:

Մեծ ցաւերուն մէջ կայ երբեմն քիչ մը դերասանութիւն: Բառեր կ'ըսես դուն քեզի. քառերը նիւթ, ինզիր կը դառնան, կը սկսին ունկնդրել քու ներքի պզտիկ թատրոնդ. արցունքները կը հասնին յետոյ դժբախտութեան օգնութեամբ. վիշտիդ մէջ կը տեղաւորուիս. կ'առնես դայն շալակդ եւ կը սկսիս վազել իրեն հետ:

Այս իրիկուան իմ վիշտս կրճտող որդերու անսակէն է: Թատրոնս փակեցի մահուան վախճանման առիթով... կամ գրեթէ: Արցունքներու ժամանակը պիտի գայ յետոյ:

Ժամանակի վերաքաղ մը ընելով, կ'անդրադռնամ. որ ամբողջ այդ տարիներուն, որոնց ընթացքին այնքան սիրեցինք զիրար, երբեք առիկա չըսինք իրարու:

Հասարակաց անթիխածութեամբ մը, շատ ակներեւ. մնայուն, անդառնալի իրավիճակ մը աւելորդ ծանրութեամբ բեռնաւորած ըլլալու վախէն թելադրուած, քառերու ապաւինիլը կը թուէր անիմաստ:

Կը սիրէինք զիրար ծնունդով:

Մնացեալ ամբողջը կը դառնար մէկ անօգուտ ենթախորագիր:

Սիրոյ այս դպրոցին մէջ սորվեցայ տազնապիլ այն բանով, որ կրնար պատահիլ միւսին: Սորվեցայ ցաւ զգալ, (իրական, ֆիզիքական ցաւ) միւսին հետ, երբ անոր մէկ տեղը կը ցաւէր:

Հինգ Հոգի կը հաշուէինք մեր ընտանիքին մէջ եւ իմաստուն բժիշկները երբեք չկրցան գիտնալ, որ մեզ բոլորս ձրիաբար կը դարմանէին, տրուած ըլլալով, որ մեզմէ մէկուն ցաւին դարման գտնելով, մէկ հարուածով Հինգ Հոգիի ապաքինում մը խած կ'ուլայինք մէկ հատին սակով:

Աստուած իմ, որքան պիտի պակսի ինձի «մայրիկս»: Այսպէս կը կոչուի «մամա» անունը իմ ճնշեան լծողովս: Իր անունը գրելով կ'անդրադռնամ սա "R" տառին անկարողու-

թեան, տալու Համար Հայերէն նոյն գիրին ընծայուած Հարուստ Հնչիւնը: Լեզուները միայն իրենց բնածին չարակցութեանց մէջ կրնան պահել իրենց գեղեցկութիւնը:

Այս իրիկուն, տրամութեանս խորերէն, բառերը պիտի զան այնպէս՝ ինչպէս կտօնեան, այնպէս՝ ինչպէս սրտի բարբառէն երբ գուրս նետուած են նորածնութեան անպատկառ Հանդակատարութիւնները:

Աւելի ուշ, արցունքներու միջնարարէն ետք, երբ այլեւս պէտք պիտի ըլլայ վերստանման նախկին տեղդ խոշոր կատակերգութեան մէջ, ուշ պիտի չըլլայ վերագտնել նախկին չարութիւնները, ճարպիկութիւնը, խորամանկութիւնները, նրբամըտութիւններն ու Հնարամտութիւնները, աղուխութիւն խաղալու Համար իմաստուն երեւնալու չըջագիծին մէջ:

Առաւօտը պիտի բացուի, քայց կեանք Հնձող այս օրը ինձի Համար տակաւին գիշեր մը պիտի ըլլայ:

Այս սրբնթաց վազող ժամերը կասեցնելու Համար, ես չըջած եմ ժամանակին անիւը, որպէսզի այսպէս, դէպի ետեւ քալելով կարենամ վերագտնել սիրոյ միլիոնատէր իմ մանկութիւնս:

Մանկութիւն՝ մեծնալու ահեղ ցանկութեամբ, պատանւութիւն մը՝ հսկայական փառասիրութիւններով, որոնք կը լափեն, կը յօշոտեն քեզ, իրիկուն մըն ալ առաջնորդելու Համար Հոգեվարքի մէջ ինկած այն էակներուն, որոնց ծերանայր չկրցար տեսնել, մինչգետ իրենց ճերմակ մազերուն խրաքանչիւր մէկ թելը կը գուժէր արգէն գարնան գերեզման:

ԱՆՐԻ ՎԵՐՆԷՕՅ





ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԺԱՌԱՆՔԱԿԱՆ ԱԻԻՇՆԵՐՈՎ...

Ուրբաթ, 11 Յունուար 2002ին, սրտի տազնապի հետեւանքով, 81 տարեկանին, Փարիզի մէջ մեռաւ ֆիլմաշխարհի նշանատր վարպետներէն Անրի Վերնէօ, աւագանի անունով՝ Աշոտ Մալաքեան:

Անչի բան երեսուն ֆիլմերու հեղինակ՝ ան առաջին օրէն նուաճեց դժուարահաճ ֆրանսացիներուն համարումը ու կարճ ժամանակի մէջ թեւածեց Ֆրանսայի սահմաններէն դուրս ու ծափահարուեցաւ եօթներորդ արուեստի բոլոր երկրագոյններէն: Շնորհիւ իր նուաճումներուն, ֆրանսական, անգլիական, հայկական եւ այլ լեզուներու մամլոյ գործակալութիւնները լայնօրէն անդրադարձան անոր կենսագրութեան, նախածեռնած գործերուն որակին, բնատրութեան մարդկայնական գիծերուն եւ կսկծացին այդ արժանիքները անձնատրած մարդուն կորուստին դիմաց:

15 Դոկտեմբեր 1920ին Ռոստոքօ ծնած Աշոտ Մալաքեան, ծնողներուն ու մօտիկ-մերձաւորներուն հետ, 4 տարեկանին կը ժամանէ Մարսէլ, թրքական հալածանքներէն ճողոպրած մեր բոլոր բեկորներուն պէս ապրելով տառապալից օրեր, տարիներ, միշտ շնչելով ընտանեկան հարազատ մթնոլորտին մէջ ու ներծծելով ցեղային ասանդութիւններուն որոշիչ աւիշը:

Կենսագիրները կ'ըսեն, որ դարապետ հօրը՝ Յակոբ Մալաքեանին հետ, պատանի Աշոտ, ամէն Կիրակի ներկայ կ'ըլլայ Մարսէլի Սրբոց թարգմանչաց Մայր եկեղեցին ու, հօրը հետ նորէն, կ'երգէ մեր շարականները, որոնք անբնօշի հետք մը կը ձգեն կազմաւորուող հոգիին վրայ ու կը շարունակեն պահել իրենց հմայքը մինչեւ օր ծերութեան:

«Փարի Մաս» շաբաթաթերթի բրոնհիկագիրներէն Ժան-Փիեռ Դուիգու իրեն նուիրած էջին մէջ, հետեւեալ ձեւով կը նշէ ֆիլմաշխարհին նուիրուելու Անրի Վերնէօյի որոշումը.

«14 տարեկանին, երբ ան, տարագիր ուրիշ հայու մը՝ Ռուբեն Մամսեանի կողմէ գլուխ հանուած «Զրիստին թագուհին» անուն ֆիլմին մէջ կը տեսնէ Կրեթա Կարպուն, արդէն որոշուած էր իր ասպարեզը»:

Կ'արժէ թերեւս հոս փակագիծ մը բանալ ու շարունակել վարկածային հարցումով. թէ Կրեթա Կարպոյի խաղարկու-

թիւնն էր Անրի Վերնէոյի կեանքը անկիւնադարձի մը վրայ դնող թովջանքը, թէ Կրեթա Կարպոն թագադրած Մամուլեանի թագաւորական արուեստը:

Անցնինք:

Եօթներորդ արուեստը, որ համադրական սկզբունքի մը վրայ կը կոթնի, միւս արուեստներուն յար եւ նման է այսինքն՝ դիրքին յաղթանակներ արձանագրող ձեռնարկ մը չէ, ինչպէս կը հաստատեն ասպարէզին մասնագէտները: Միտք, հոգի, շարժում, գոյն, վայր, առաւել՝ հսկայ երեակայություն, առաւել՝ ձեռքն-հաս ուժերը «ձգողական իր դաշտին» մէջ ունենալու յարաբերական ձիրք, առաւել՝ հսկայ գումարներ վտանգի ենթարկելու արկածախնդրական ոգի, եւայլն, եւայլն:

Եօթներորդ արուեստին պահանջած բոլոր արժանիքները իր անձին մէջ միաձուլած կարողականութեամբ մը Վերնէոյ մօտեցաւ գործերուն ու գործող անձերուն եւ կատարած իր ընտրությունները պզտիկ նպաստ մը չբերին իր արձանագրած յաղթանակներուն մէջ: Գործերէն անչի գործող անձերը յիշելու համար, տանք Ֆրանսական ու հոլիվուտեան աշխարհէն կարկառուն հինգական անուն. - Ֆերնանտել, Ֆրանսուազ Արնուլ, ժան Կապէն, Ալէն Տլոն, ժան-Փոլ Պելմոնտօ, եւ Անթոնի Զուին, Եուլ Պրայնըր, Դանրի Ֆոնտա, Օմար Եերիֆ, Զլոտիա Կարտինալէ:

Ու գործ մը եւ դերասան մը միաժամանակ - «Զսանհիկներորդ ժամը» եւ Անթոնի Զուին:

Ինչպէս ամէն արուեստագէտ, Անրի Վերնէոյ ինք եւս ընդհանրապէս իր ժառանգութեան պրիսմակէն դիտեց աշխարհը, ու աշխարհին մէջ՝ մեր աշխարհը, ժողովուրդները, ու մեր ժողովուրդը, որ ապրած ողբերգութեանց հետ ունեցաւ եւ ունի հերոսական դրուագներով հիւսուած հրապուրիչ պատմություն մը, ցաւ մը՝ ու արդարութեան անյազուրդ ծարաւ մը, որոնց ճանաչման ու հատուցման համար ոչինչ խնայեցաւ իր երաններուն մէջ անարատ արիւն մը կրող այս հայր, ոչ ժամանակ, ոչ տաղանդ, ոչ մանաւանդ, արություն:

Ուրուագծուած այս վարկածին ճշմարտութեան մօտիկ համարելու համար պիտի քաւէր ննպտի ունեւազ ԻՅԵՏԻՆ իր իրագործած Զոնսթանթին Վիրճիլ Կեօրկիու «Զսանհիկներորդ ժամը» անուն աշխարհահռչակ վէպին «Էկրանացումը», գլխաւոր դերին մէջ ունենալով նոյնպէս աշխարհահռչակ Անթոնի Զուինը, եւ մասնակցութեամբ ուրիշ անուանի դերասան-դերասանուհիներու, որոնց մարմանաւորած տառապանքներուն իւրաքանչիւր փուլին հետ, Անրի Վերնէոյ անտարակոյս ապրեցաւ իր ժողովուրդին բեկորներուն զողզոթան, արիւնոտ երկու բռնակալութեանց սարքած ճամբարներու դժոխքներուն մէջ, հարաւի խորշակահար անապատներուն ու հիւսիսի սառնամանիքներու սուրբերուն տակ:

Թայաթ-Էնվերեան, ստալինեան եւ որդիերեան թայօնրուն ներքեւ մարդկային դիմագիծը կորսնցուցած ուժերուն արիւնոտ արարքները պատկերացնելու եւ անոնց կրկնությունը կրկնակ ոճիւր համարել տալու լուռ պատգամ մը կայ Վերնէոյի «Զսանհիկներորդ ժամը» ընտրելու նախաձեռնութեան մէջ, որ արուեստին զուգահեռ ունի, կը կարծենք խորհրդանշական այդ արժեքը:

*
* *

Չաղթական հայ, չարչարալից պատանուֆին, զարգացման տատասկոտ ճամբաներէ անցած յօդուածագիր, երիտասարդ խմբագիր, ֆիլմաշխարհով կախարդուած այր էւ իր կարգին կախարդական դէմք դարձած Անրի Վերնէոյ, 1980ական թուականներուն, գրեց իր ինքնակենսագրական վէպը՝ «Սայրիկ», որ տասը տարին չբոլորած թարգմանուեցաւ տասը լեզուներու մինչ յաջորդ տասնամեակին եռապատկուեցաւ թարգմանութեանց թիւը, իսկ հայերէնի վոյսադրուեցաւ երեք հեղ, առաջին անգամ Արփի Թոթոյեանի թարգմանութեամբ իբրեւ թերթօն երեւցաւ Փարիզի «Յառաջ»-ի էջերուն՝ 13 հեկտեմբեր 1986էն սկսեալ, տարի մը ետք, արձակագիր ժիրայր Աթթարեանի թարգմանութեամբ հատորով լոյս տեսաւ Լիւ Նորթի մէջ, իսկ հայերէնի թարգմանչուիի Սոֆի Աազեանը զայն թարգմանեց արեւելահայերէն, որ լոյս տեսաւ 30 հարզար տպաքանակով:



Անրի Վերնէոյ իր աշխատանոցին մէջ

«Սայրիկ»ը, որ իբրև կենսագրավէպ գրուած էր, հետագային ֆիլմի վերածուեցաւ նոյնինքս հեղինակին կողմէ՝ Զլուտիա Կարտինալի. Օմար Շերիֆի եւ Զլարիս Կարտինըրի դերակատարութիւններով ու շրջեցաւ ամբողջ աշխարհը, ապրուած կեանքի մը սահմակեցուցիչ պատկերներուն հետ աստիճանաբար պայծառացող ու ծաւալող Դատի մը արդարութիւնը յուզելով:

Այն հարցին, թէ ինչպէս էր «Սայրիկ»ի տիպարները անձնատրած դերասաններուն վերաբերումը, Անրի Վերնէյը կը պատասխանէ.

«Աներեւակայելի: Ռեժիսորն, անոնք իրենց սրտին շատ մօտ ընդունեցին Յայկական Յարցը: Ամբողջովին ընկղմած են այդ հարցին մէջ: Ֆիլմի ընթացքին դարձեր են հայ: Երբ կը տեսնէք Օմար Շերիֆը ինչպէս կը գրկէ ու կուրծքին կը սեղմէ որդին, ան ազգութեամբ հայ իսկ է՝ Յակոբ Ջաքարեանն է: Ես գրուցած եմ անոնց հետ օրեր շարունակ, անոնց ցոյց տուած եմ իմ ծնողներուն, բարեկամներուն, 1920ական թուականներու հայերու յուսանկարները: Անոնք ամբողջովին ներծծուած են մեր պատմութեամբ, եւ ամենքս ալ ֆիլմին համար կ'ընեն հնարաւոր ամեն ինչ»:



Անրի Վերնէյը եւ Զլուտիա Կարտինալի

**En 1924,
Achod
Malakian, un
petit garçon
de 4 ans,
débarque à
Marseille**

Fils de rescapés du génocide de 1915, Henri Verneuil n'a jamais oublié ses origines, mais il attendra d'avoir 65 ans pour rendre enfin hommage à son peuple et à sa famille. De ses souvenirs de petit réfugié arménien, il fait en 1985 un livre, «*Mayrig*» (Maman), qui devient un best-seller. Mais, pour lui, l'émotion se transmet avant tout par l'écran : «*Ma Mayrig, j'ai voulu la revoir, donner corps à ce fantôme.*» Dans son film, une grande fresque en deux parties, il donne à sa mère le visage de Claudia Cardinale et dit à son père, joué par Omar Sharif, un dernier adieu : il joue lui-même le rôle du prêtre lors de la scène de l'enterrement. «*Là, j'ai triché avec la réalité. J'ai écrit non ce que ce prêtre a dit, mais ce que j'aurais voulu qu'il dise.*»

Realiser «*Mayrig*» lui a permis de retrouver ses parents. Il a préparé son film pendant cinq ans, dans son hôtel particulier de Neuilly la gauche en 1991, avant de «*reconstituer*» sa famille le temps du tournage.



**1924ԻՆ,
ԱՇՈՏ ՄԱԼԱՔԵԱՆ,
4 ՏԱՐԵԿԱՆ
ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅ ՄԸ
ԿԸ ՆԱՍՆԻ ՄԱՐՍԷՅԼ**

1915ի ցեղասպանությունն ճողոպրած մարդու մը զաւակը, Անրի Վերնէոյ երբեք չէ մոռցած իր ծագումը, այլ սպասած է ամբողջ 65 տարի, որպէսզի ի վերջոյ կարենայ յարգանք մատուցանել իր ժողովուրդին ու ընտանիքին: Պաշտական պատիկ հայու մը յիշատակէն, ան 1985ին կազմեց գիրք մը՝ «Մայրիկ», որ դարձաւ պէտք սելըր: Իրեն համար, սակայն, առաջնակարգը յուզումը պատատին փոխանցելն էր: «Իմ «Մայրիկ»ը ես ուզեցի դարձեալ տեսնել, տալով այդ ուրուականին մարմին մը»: Վերնէոյ ի այս ծապաւենին մէջ կան երկու մասեր, ան մօրը կերպարը անձնատրեւու դերը վստահած է Էլուտիա Կարտի-Լալէին, իսկ հօրը կերպարը՝ Օմար Շերիֆին, որ ըսէ իր վերջին հրաժեշտը: Անրի Վերնէոյ ինք անձամբ խաղացած է քահանային դերը թաղման արարողութեան ատեն: «Յո՛ր, կ'ըսէ ինք, - ես հաւատարիմ չմնացի իրականութեան, գրեցի ոչ թէ այն, որ քահանան ըսած է, այլ այն որ պիտի ուզէի ըսել ան»:

*
* *



զրականության եւ շարժապատկերի փոխարարբերութիւնները, այսինքն՝ անոնց փոխադարձ ազդեցութիւնները նիւթ ունենալով Փարիզի «Սակագին լիթերը»ը 1997 Մայիսի իր համարին մէջ լոյս ընծայեց ընդարձակ թղթածրար մը, ուր հաշուի առնուած էին նաեւ զրականութենէն շարժապատկեր մուտք գործած հայազգի էրկու դէմքերէն մէկական գործ, Ռիչեըմ Մարոյեանի «Մարդկային կատակերգութիւնը» եւ Անրի Վերնէոյի «Մայրիկ»ը:

Ստորեւ տրուածը Անրի Վերնէոյին մասին արձանագրուած նոթին հայացումն է:

Աքսորուած Հայու այս գաւազը՝ Անրի Վերնէոյ, միշտ նէոյի մէջ ապրած չէ:

Քրքական ցեղասպանութենէն ճողուարած Մալաքեան ընտանիքը, Համաշխարհային Երկու պատերազմներուն միջեւ Մարսէլի Հասնելով՝ ճաշակած է թշուառութեան բոլոր տեսակները: Վերնէոյ կը նկարագրէ այդ ժամանակներու տառապանքները եւ ուրախութիւնները՝ «Մայրիկ» խորագրած իր ինքնակենսագրական վէպին մէջ:

Փոքր գլուխներէ կազմուած այս գիրքը կը կարգացուի այնպէս՝ ինչպէս մարդիկ կը թերթատեն ընտանեկան ալպոմ մը: Այս գործին բովանդակած գորովին ու կարօտախտին պէս գորով ու կարօտախտ կայ նոյնպէս Հանրի Վերնէոյի միւս գործին՝ «Վարդանի ձիւն» վէպին մէջ:

Ինչպէս իր շարժապատկերներուն, յիշեալ գործերուն մէջ եւս առկայ են անանձնական նոյն դասականութիւնը եւ բարիք գործելու նոյն կամեցողութիւնը, բայտ Հաստատուած եւ ընդունուած սեփական բարքերուն:

Այսուհանդերձ, Մարսէլի, անոր Հին նաւահանգիստին ու խճողուած փողոցներուն մասին գրուած քանի մը ուժեղ էջերուն Հետ, կարգ մը դէմքերու գունազեղ նկարագրութեանք ընդձէջէն կը տարուինք երեւակայել, թէ ուր կրնար Հասնել «Անկաղբուր ոսանստ մարդիկ»ի սքանչելի Փիլմարտադրիչը, եթէ իր արձատներուն Հետքը զոհաբերած լքուար իր փառասիրութեան («Սակագին լիթերը», 1997 Մայիս):

ՍՏԵՖԱՆ ԼԷԻԻ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Անրի Վերնեյը ըլլալով համեստ, պատմութեան ողբերգութիւններուն ենթարկուած տարագիր ընտանիքի զաւակ, կըրցած է մօտենալ կեանքին՝ զգայուն եւ գորովայի հայեացքով մը, խորապէս սիրած է իրեն ապաստան տուած երկիրը՝ Ֆրանսան, անոր սուիրելով իր տաղանդը՝ իր ամբողջ նրբութեամբ եւ վեհանձնութեամբ:




ԺԱԳ ՇԻՐԱՔ
Ֆրանսայի նախագահ



Ես տխուր եմ, բայց միաժամանակ նաեւ գոհ, քանի որ Վերնեյը զնաց միանալու ժան Չաքէնին, Լիւսօ Վենտուրային եւ կը կարծեմ երջանիկ կ'ըլլայ անոնց հետ: Բայց բարեկամի մահը ցաւալի է միշտ: Բացի այդ, Անրի Վերնեյը Ֆրանսական շարժապատկերի մեծերէն էր եւ կրնամ ըսել, որ անոր մահուան հետ կանխտանայ նաեւ իմ կեանքին մէկ մեծ մասը:

ԱԼԷՆ ՏԼՈՆ
Շարժապատկերի ղերասան



Բագին

ՄԵՐ ՑԱԲՈՎ ՀԱՂԱԽՈՒԱԾ

ՄԻԷՍ ՄԵԾԸ՝ ԺԱՆՍԵՄ

Ողբացեալ Անրի Վերնէոյի յիշատակին կազմուած նախընթաց էջերուն հետ, յուզիչ պարտականութիւն զգացիսք մեր ուսերուն բանի մը էջ բանալ ուրիշ ֆրանսահայու մը, նշանաւոր նկարիչ ժամսեմին, որուն կտաւներուն վերջին շարքը, հայութեան դէմ գործած թուրք պետութեան տարբեր գործողութիւնները պատկերող շուրջ վաթսուն պաստառները ցուցադրուեցան քնթացիկ տարուան սկիզբը, Մաթիևիոն ցուցասրահին մէջ, իրականութիւնը հարազատօրէն ընկալած ըլլալու բնագոյն ու արուեստիս գորութեամբ ափ ի բերան ձգելով հազարաւոր դիտորդներ:

Թրքական հալածանքները ուղղակի ապրած կամ անոնց հետեանքները անուղղակի կրած սերունդներու դասուն կը պատկանին թէ Անրի Վերնէոյ եւ թէ ժանսեմ, ժառանգորդները ժողովուրդներու մեծ մասին համար անըմբռնելի ապրումներու որոնք պայթեցան իրենց հասունութեան բացառիկ պահերուն, բառով ի լուր մարդկութեան, գոյնով ի տես մարդկութեան, շարժումով նաեւ, գիծերով, խորիւրդով, թելադրական համադրութիւններով:

Ժառանգուած ցաւ ու ապրումին ուժգնութիւնը պիտի չբաւէին հարկաւ, եթէ պակասած ըլլար իրենց ցեղային միւս ժառանգութիւնը՝ տաղանդը, առանց որուն որոշիւ ուժին ոեւէ մէկը ափտի չհետեւէր պաստառին վրայ թաւալող շարժումին, թուղթին վրայ աղաղակող բառերուն կամ կտաւներուն վրայ պարող գոյներուն, հետեւաբար նաեւ ընդգրկուած ցաւը վարակիչ պիտի չըլլար ու ուժգին պիտի չըլլար արդարութեան մեր տենչը, ինչպէս եղան այս ընտիրներուն գրչին ու վրձիկին տակ:

Կը հետեւի, թէ թրքական հալածանքներուն հետեանքով սանկոյթեան ու պատանութեան օրերուն Ֆրանսիա ինկած այս ընտիրները, իրենց ընտրած կամ կազմած երկրորդ անուններուն հետ նոր հոգի ու աշխարհահայեացք կազմելու փորձութեան չենթարկուեցան, ինչպէս ըրին այլասերման սպիտակ դրօշակներ պարզաւ ուրիշներ, այլ կերպընկալ իրենց տարիներուն միջազայրային հարստութիւններէն առին իրենց էութեան համապատասխանող տարրեր, բայց նաեւ իրենց ներգոյակ գանձերով հարստագուտին նոյն միջազայրը:

Լիոնի «Ֆրանսարմենի» ամսաթերթին մէջ Ֆլորանս Կոփիկեան-Երեմեան ստորագրող բրոնզիկագիր մը ժանսեմի վերջին գործերուն առիթով հրատարակած է տեղեկագրական ու վերլուծական գրութիւն մը, զոր հայացներով կը ներկայացնենք «Բագին» ի ընթերցողներուն:

ԺԱՆՍԵՄ-ԱՌԵՂԾՈՒԱԾԱՅԻՆ ԱՆՈՒՆ ՄԸ

Ժանսեմ ծնած է 1920ին, Թուրքիոյ Սէօյէօզ գիւղին մէջ: Աւագանի անունով Յովհաննէս (Ժան) Մեմերճեան - Ժան-Անմ, - իր ընտանիքին հետ խոյս տուած է Թրքական Հարածանքներէն, 1931ին Հաստատուելով Յունաստան, հիւրընկալ Յրանսան ընտրելէ առաջ:

Տասնչորս տարեկանէն սկսեալ, երիտասարդ Ժանսեմը ինքզինք կը նուիրէ նկարչութեան, յաճախելով Մոնպառնասի ակադեմիան, զարդանկարչութեան արուեստներու դպրոցը: Ան կ'այցելէ արուեստի բազմաթիւ աշխատանոցներ եւ կը հանդիպի շարք մը արուեստագէտներու, 1939ին իր առաջին կտաւները Անկախներու Սալոնին մէջ ներկայացնելէ առաջ:

Իր առաջին գործերը ցոյց կու տան իր մանկութիւնը, իր մայրը...: Այսուհանդերձ, կամաց-կամաց Ժանսեմ կը հեռանայ այս շատ մտերիմ թեմաներէն եւ կը նախընտրէ խիզախել թեմաթիք ուրիշ ավեր, - յունական դիցաբանութիւն, կրօնական ուխտագնացութիւններ, ցլամարտ, պարոք դիմակահանդէսներ եւ, անշուշտ, պարու հիներ:

1960էն սկսեալ, իր գործերը կը սկսին երեւիլ Իտալիոյ, Զուիցերիոյ եւ, մա'նաւանդ, Միացեալ Նահանգներու մեծ ցուցասրահ-թանգարաններու մէջ: Իր տաղանդը այնքան մեծ է, որ ճափոնցիները չվարանեցան անոր գործերը ցուցադրել երկու թանգարաններու մէջ:

*

* *

Ժանսեմի ոճը եզակի է, զի՞ծերու եւ բանաստեղծութեան միաձուլում մը, ուր կը քողազերծուին հոգւոյն տարբեր վիճակները, յուզական ամբողջ աշխարհը: Իր գծագրութիւնը ճկուն է շատ, որովհետեւ ան կ'երթնիկէ իր կաղապարներուն շեղ եւ սրածայր զի՞ծերուն միջու: Երբ Ժանսեմ կը նկարէ, կտաւին վրայ կը տեղադրէ իր ներաշխարհին ողջ տակնուվրայութիւնը: Կը մերկանայ լրիւ: Մեղմ եւ ծաւալուն գոյներու ընտրութեամբ ան մեղեդիի մը հնարքով կը յաջողի դիտորդը մղել դէպի կտաւը...

Ինչ ալ ըլլայ թեման, Ժանսեմի կտաւներուն բոլոր անձնատրութիւնները անպայմանօրէն կը հաղորդեն արժանապատուութիւն մը՝ միաձուլուած յուսարեկութեան, որ գործին կ'ընծայէ ողբերգական շեշտ մը: Բազմաթիւ քննադատներ արդարօրէն կը համարեն զինք այն Հագուագիւտ արուեստագէտներէն մէկը, որ գիտէ այնքան զգայուն կերպով արտայայտել ժամանակակից վիշտը: «Ճողորմոր» իր շարքը լրիւ կը հաստատէ այս տպաւորութիւնը, որ ձեռով մը կը հանդիսանայ գազաթնակէտը ողբերգական իր բոլոր գործերուն:

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՎԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ



ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՎԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՎ ԵՎՐՈՊԵԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՎԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՋԱՐԴԵՐԸ» ԴԻԲԱՆԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՐԴԵՕՔ

«Ջարդեր»-ու իր շարքին միջոցաւ, ժանսեմ կը քողադերձէ իր էութեան վշտաւար մէկ մասը, վիրաւոր մարդու ա՛յն տարրը, որ երկար ժամանակէ ի վեր կը պաշտօնէր արուեստաղէտին ետին: Դառն զգացումներով լի այս ութսունամեան իր վրձինով կը փորձէ թեթեւցնել իր ներքին դեմին ծանրութիւնը: Կտաին վրայ կը յաջողի սփռել անցեալի իր տառապանքը, ինչպէս նաեւ տառապանքը ընտանիքին եւ ամբողջ իր ժողովուրդին:


Իր կտաւները քրտութիւն եւ ատելութիւն կը չնչնն: Անոնք կը յորդին դիակներով, շարժարուած մարմիններով եւ տառապանքով: Անոնցմով ըսել կ'ուզուի ա՛յն՝ որ շատեր չեն համարձակիր ուղղակի անուանել. — խօլ բնաջնջումը մարդուն՝ մարդու ձեռքով: Բռնութիւններու մոլեգնութիւն մը, զոր ժանսեմ կը պարզէ աշխարհին յետին թուր մանրամասնութիւններով: Մանուկի մը սպանութիւնը, բռնարարուած կիներ, խաչուած կամ կախուած մարմիններ: Այս դիակներուն մէջ կ'առանձնանայ իր ինքնանկարը, ոչ թէ այն մեծ արուեստագէտին, այլ այն տխուր վերապրողին, որ կը գոյատեւէ տակաւին, վկայելու համար յանուն այդ լուռ մահացածներուն:

Կայ նաեւ խիստ եւ խուզարկող նայուածքը Գերաշնորհ Նորվան Զաքարեանի, եպիսկոպոս՝ Լիոնի եւ Ռոն-Ալփի, որ կը նմանի անաչառ դատաւորի մը՝ այնքան նախատինքներու դիմաց: Ինչ ըսել տակաւին քով քովի գետին փռուած այն դիակներուն եւ կամ արիւնամած գանկերու այն կոյտերուն մասին, զորս ժանսեմ կը կոչէ «Փեռեկտուած ծաղիկներ», թերեւս Հեգնանքի կամ յուսահատութեան պատճառով: ...Որովհետեւ ժանսեմ յուսահատ է: Այս կտաւները նկարելով, այս աղէտին դիմաց ան ի գուր կ'աղաղակէ իր անզօրութիւնը: Ան կը թուի պատրանքներէ փարատած ըլլել, պարպուած: Հարկ է ըսել, որ ժանսեմ պէտք ունեցած է մեծ քաջութեան, իր մղձաւանջային տեսիլները բացայայտելու ամէն օր, երկու տարիներու ընթացքին:

Բառերը չեն կրնար նկարագրել վիշտի եւ սարսափի այս նկարները: Միայն նկարներն են, որ կը խօսին իրենք իրենց մասին:

ՃԼՈՐԱՆՍ ԿՈՓԻԿԵԱՆ-ԵՐԵՄԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ



Շնած է Պէրրութ, ուր ստացած է Նախակրթութիւնը, իսկ երկրորդականը՝ Նշան Փայանճեան Ճեմարանի մէջ, Լեւոն Շանթի տնօրէնութեան շրջանին: Նախակրթարանի ուսումնական շրջանին յաճախած է նաեւ Պէրրութի Պետական երաժշտանոցը:

Պէրրութի Ամերիկեան համալսարանը երկու տարի ուսանելէ ետք, կը մեկնի Պեւնիքա, ուր Լուվէն քաղաքի համալսարանին մէջ կը հետեւի դեղագործութեան: 1961ին վերադառնալով Պեւնիքայէն, կը ստանձնէ հորը դեղատունը իսկ 1965ին կրկին կը մեկնի

Պեւնիքա, այս անգամ Պրիւքսելի Պետական համալսարանէն ներս հետեւելով երաժշտական ենգամեայ դասընթացքներուն:

Պէրրութ վերադարձին, Ալահայտոյեան կը ծառայէ երաժշտական ու մշակութային եռուն գործունէութիւն մը, աշխատակցելով մեր մամուլի զանազան անդամներուն:

1975ին բնակութիւն կը հաստատէ Պեւնիքայի մէջ եւ 1977էն սկսեալ տարիներ շարունակ ան կ'աշխատակցի Պեւնիքայի ձայնասփիտի եւ պատկերասփիտի կայարաններէն ներս:

Պետրոս Ալահայտոյեանի հիմնական ու մնայուն գործը անկասկած կը հանդիսանայ վերջին 12 տարիներուն վրայ երկարող երգահաւաքի եւ վկայահաւաքի հետազօտական գործունէութիւնը: 1585էն ի վեր ան կը շրջի Սփիւռքի հայահոծ քաղաքները, ի մասնաւորի Փարիզի, Գալտի, Աթէնքի, Տիբորոյի, Լոս Անճելըսի հայրենիք: Զեբանոցները եւ կը հարցուփորձէ 1915ի ցեղասպանութենէն վերապրած մեր մամիկներն ու պապիկները՝ ձայնագրիչ գործիքի վրայ արձանագրելով յետին մանրամասնութիւնները անոնց վկայութիւններուն:

Առ ի գնահատութիւն իր ազգագրական երգերու հաւաքածոյին, Ալահայտոյեան Երեւան հրատիրուած է երկու անգամ, 1987ին եւ 1988ին:

1996ին ան վերջնականապէս կը հաստատուի Լոս Անճելըս եւ կը պարապի իր հաւաքածոյին ուսումնասիրութեամբ:

7. Ալահալստոյեան

...Յոյսերն ափ էին նետուած
եւ մի անմեղ երապի միջով,
մեն մենակ լողում էր
տղայի հոգին:

Ա. Աւագեան
(«Ձրատոյց արեւ»)



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵԼԼԱԼԵԱՆԻ ՄԱՀՈՒՄՆ ԴԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

3. ԴԵԼԼԱԼԵԱՆ ԿԱՄ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԿՈՂԻՆ ԽՐԱԾ ՄԵԽԸ

Տասներկու տարի առաջ, 1990ի Ապրիլին, Երևանի մէջ իր մահկանացուն կը կնքէր. տարածամօրէն, 53 տարեկանին, արդի Հայ երաժշտութեան ամէնէն կարկառուն ներկայացուցիչներէն՝ Յարութիւն Դելլալեան:

Յ. Դելլալեան Հեղինակն է միայն 20էն 25ի մօտ զանազան ժանրի ստեղծագործութիւններու, որոնց մէկ մասը տակաին ձեռագիր վիճակի մէջ է, եւ վերջին երկը՝ «Լիլիթ» Թատերապարբ (պալէթ)՝ անաւարտ: Եթէ նկատի ունենանք, որ Դելլալեանի անբարեխիղճ ճակատագիրը զինք ստիպած է, զեռ երիտասարդ տարիքին, դպրոցը ձգելով ընդունելու ապրուստը հոգալ, ըլլալով փոխն ի փոխ կօշկակարի աշկերտ, բանուոր, աշխատաւոր, ապա՝ Ոորհրդային բանակի զինուոր, եւ

մինչև 24-25 տարեկանը երաժշտական առանց դոյզն կրթութեան, մենք կը գտնուինք Հրաչքի Համազօր երեսօթի մը առջև:

Գեղարեան կը ծնի Աթէնք՝ Կեսարիայէն դաղթած ընտանիքի մէջ: Հազիւ 10 տարեկան՝ ընտանիքով կը ներգաղթեն: Յունաստան եղած շրջանին պատանի Յարութիւն արդէն ամբողջութեամբ ներծծած է Կոմիտասն ու Հայ եկեղեցւոյ սրբազան երաժշտութիւնը՝ իր նրբաճաշակ եւ զարգացած մօր «Աուրր Աուրր»ը, «Հայր Մեր»ը, «Դարուն ա»ն խարիսխ նետած էին անոր սրտին մէջ, երբ կը Հասնի Հայրենիք: Ան իր ներաշխարհին ամուր քանդակած՝ Հայրենիք կը տանի նաև 1916ի արհաւիրքներէն ազատած իր ծնողքին պատումներն ու վկայութիւնները, ինչպէս նաև անոնցմէ ժառանգած գերզգայուն, ներամփոփ, անմնուրաց, սակաւսխօս, նրբազգաց եւ յափազանց ազնիւ նկարագիրը:

ԱՀա այսպէս գինուած, ան իր կեանքի մնացեալ 43 փոթորկալից աշունները, մինչև 1990ի կանխահաս մահը, պիտի ճաշակէր կեանքի բազում դառնութիւնները, պիտի պայքարէր անգութ ճակատագրին Հրամցուցած բոլոր խոչընդոտներուն դէմ եւ անհամար մարտահրաւէրները պիտի շկարենային կասեցնել իր տկարութիւն չնանչցող կամքին խոյանքը: Եւ երբ կը մահանար, ցաւօք սրտի, կարելի չէր եղած իրագործել իր սրտի ամենաջերմ փափաքը ու ամէնէն մտերիմ ծրագիրը՝ Լեւոն Շանթի «Հին աստուածներ»էն կերտել թատերախաղ մը, որուն կեդրոնական կերպարը՝ Արեղան, պիտի եղած ըլլար... Կոմիտասը, ինքը:

Երաժշտական որեւէ ուսումէ շատ առաջ, ուսում՝ որ իրեն զյացուեցաւ երկար տարիներ, ան Հայրենիքի մէջ իր ներաշխարհէն ներս զագտնօրէն կը սնուցանէր զոյգ սրբութիւններ, որոնք անուսուցանելի են՝ - Կոմիտասի Հոգին եւ 1916ի Հայ ժողովուրդին կրած անջնջելի արհաւիրքը: Այն՝ որ ան օր մը պիտի յղանար կամ յօրինէր, երաժշտական ինչ սեռի ալ պատկանէր իր գրչէն ելածը, անպայմանօրէն պիտի կրէր 1915ի դրոշմը, նոյնիսկ եթէ ան իր ստեղծագործութիւնը յատուկ ձօնած չըլլար Եղեռնի զոհերուն: Կարծես ան դաշինք կնքած ըլլար անտեսանելի ուժի մը Հետ, սեւ եւ դաժան ուժ մը, որուն կեդրոնը Հայուն ճակատագրին մէջ մխրնուած է, իսկ տրամագիծը կ'անցնի իւրաքանչիւր Հայու սրտէն՝ Հասնելու Համար Մասիսի գագաթին. ան գրաւի եկած էր Մասիսին Հետ, որ պիտի յաղթէր այդ ուժին, որ զինք կը կրծէր, թայց որմէ երբեք չկրցաւ ձերբազատուիլ: Այդ սեւ ուժը կը նմանէր պողիպոթի արիւնկզակ, արիւնածուծ լպրծուն թաղանթներուն, Հուժկու թիւերուն, որոնք յանկարծ կը պլլուէին իր Հոգիին թեւերուն եւ կը ջանային զինք արիւնաքամ ընել: Այսպէս, «Նուիրում Կոմիտասի» սոնատը, «Յաղթական ռեվիւն»ը, թէ «Տոփոփոն»ն այդ սեւ ուժին դէմ պայքարն է, կամ այդ ուժէն շղթայազերծման ու ազատագրման ճիգի արդիւնք երկեր են:

Մինչ Խորհրդային Հայաստանի մէջ մեծ ու փոքր յորինողներ գիրար կը հրմուխէին կարմիր քանակին կամ «պիտներական» խումբերու առատ ներրողներ թիւելու համար՝ *par excellence* անհամ. անարուեստ, անհայրենիք եւ սնամէջ Դեյլայեան, Նոր Աէյթուն թաղամասի իր անկիւնին մէջ իր փոքրիկ ընտանիքին տաքուկ շունչով կը բոցավառէր եւ կը ստեղծէր հոն իր ուրոյն հայրենիքը, եւ անկէ թուղթին կը յանձնէր անմահ գործեր, որոնց բոլորին ենթարնագիրը եւ բարախումը 1916էն կը սերին:

Դեյլայեան իր յուշերուն մէջ կը խոստովանի, թէ դաժան օրեր էին օժական թուականները, երբ համալսարհային ջարդարար պատերազմէն նոր պրծած Խորհրդային կայսրութեան տարածքին կը տիրէին չքաւորութիւնն ու սովը: Այս ընդհանուր մտայլ պաստառին վրայ կը գծագրուէին իր կեանքին անողոք եւ անողորմ հանգրուանները: Ռուսմեական տարիները կ'ընդհատուին յանկարծ, երբ մօրը մահուան կը յաջորդէ հայրը անդամալուծող արկածը: Ան ստիպուած է իր ուսերուն վերցնել հաշմանդամ հօր եւ փոքր եղբօր ամէնօրեայ հոգերը: Կը ճաշակէ ամէն կարգի արհեստներու փորձառութիւնը, միաժամանակ կը յաճախէ գիշերային դպրոց, ուրկէ բացակայ է երաժշտական տարրական կրթութիւնն իսկ:

Վրայ կը հասնին գինուորագրութեան տարիները, 1956ին իբրեւ գինուոր կ'ուղարկուի Հայաստանէն շատ հեռու, բիէլո-ուսական հանրապետութեան տարածքները: Թէեւ երաժշտութենէ բոլորովին անտեղեակ, սակայն բանակին մէջ մաս կը կազմէ սիրողներէ կազմուած երգչախումբի մը: Շատ շուտով, սակայն, իր երաժշտական ուշիմութեան եւ ղեղեցիկ ձայնին շնորհիւ, կը դառնայ այդ խումբին մենեքիւրը: Բանակին մէջ իր ունեցած յաջողութիւնները զինք կը տողորեն երաժշտութեան նուիրուելու աննկուն կամքով:

Ճօական թուականներուն, բանակէն վերադարձին, մուտքի քննութեան դիմում կը կատարէ Երեւանի Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանը: Հիասթափութեամբ կը տեղեկանայ զինք ունկնդրող ուսուցչապետէն, որ չի կրնար արհեստավարժ երգիչ դառնալ. վնասուած են ձայնալարերը՝ բանակին մէջ բարձր նոթաներ երգելու ընթացքին: Ճարահատ՝ կը հեռանայ եւ կը մտնէ ծանր աշխատանք պահանջող գործատան մը մէջ: Այդ կոշտ գործին ետեւը կանգնողը, սակայն, նրբաճաշակ եւ համակ երաժշտութիւն բուրոզ Դեյլայեանն էր, ինչպէս կ'ըսէ Քամար Յովհաննիսեան. «Երաժշտութիւնը, որ նա յտմ էր, հեռու եւ խոր ակումբներ ունէր, ծնունդ էր Մասիսից այն կողմ, պապեմական օջախից, տանիքից հարցականի պէս կախուած կոկորդաւեկո՞ւ արագիլի կանչից...»*:

*... Յովհաննիսեան Քամար, Ֆարոսիւն Դեյլայեան, Երեւան, 1992, էջ 9 (Յ.Ք.Յ.Կ.):

Հոն եւս կը յաջողի կազմել երգեցիկ խումբ՝ գործաւոր քանի մը ազոց Հետ: «Մեր խումբը», կը պատմէ ան պոսթրնարնակ լրագրող Ճէքի Արրաւաճեանին, «կը կրօնիւրուէր երեւելի անձնաւորութիւններու տուները եւ հոն կ'երգէինք մեր երգացանկէն կտորներ: Այդ նշանաւոր անձերէն էին Մարտիրոս Սարեան, Հրաչնայ Ներսիսեան, Խորեն Արրահամեան, Դրիգոր Խաննեան... Անոնք անկեղծօրէն կը գնահատէին մեր կատարումները»^{**}: **Վահրամ Փափաղեանի գրողուժով, ան կ'որոշէ մանկ Երեւանի ժողովրդական երաժշտանոցը:**

Հասած ենք 1963 թուականը. Դեկտեմբերի 26 ամսական է, դեռ ոչինչ գիտէ երաժշտութենէն: Այս Հաստատութիւնը երաժշտական ուսում կը մատակարարէր եւ Հնարաւորութիւններ կ'ընծայէր օժտուած, սակայն երաժշտական կրթութիւն չունեցող տղոց, ինչպիսին էր Դեկտեմբերի 26 ամսականը: Վերջինս կը գառնայ սանը անուանի երգահան եւ մանկավարժ է. Միրզոյեանի եւ չուտով ձեռք կը բերէ Հիմնական գիտելիքներ եւ կը սերտէ ստեղծագործութեան (երգագրութեան) Հիմնասարքերը: Կ'ըսուի, թէ Դեկտեմբերի 26 ամսականը ժողովրդական երաժշտանոցի պատմութեան «ամենադժուար» ուսանողը: Արդարեւ, իր երաժշտական բացառիկ օժտուածութիւնը եւ ստեղծագործելու ներքին յախտուն փափաքը մէկ կողմէն, մասնագիտական գիտելիքներու պակասն ու անփորձութիւնը միւս կողմէն, չափազանց բարդ կացութեան մատնած էին թէ՛ ուսանողը, թէ՛ դասախօսները: Չնոտնանք այնատանքը գործատունէն ներս, իսկ ընտանիքի Հոգը շատ ջանքեր եւ ժամանակ կը խլէր իրմէ: Այս շրջանի իր գործերէն մէկը կը կոչուի «Նրազ օայնի», կիթառի եւ ձեռնադաշնակի (սփորտլոն) համար»:

Ժողովրդական երաժշտանոցը Հաղիւ աւարտած՝ Դեկտեմբերի 26 ամսականը Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանը եւ կը յաճախէ հտուարդ Պաղտատարեանի յօրինումի դասարանը: Հոն եւս իրացումներն ու ուսման յառաջխաղացը կ'ըլլան աննախադէպ, իսկ ստեղծագործական առաջին քայլերը անելի քան խոստմնալից. «Իսկ աշխատանքի հաստոցի գործարանում՝ երաժշտի յողորմեան համար անտանկի, մղձաւանջային աղմուկի մէջ, շարունակուեմ էր», կը վկայէ Քամար Յովհաննիսեան, «այստեղ Յարութիւնի ներկայութիւնը անհրաժեշտ էր. առանց նրա հմտացած ձեռքերով պատրաստուած արտադրական մանրամասի կը կտնձկէր աշխատանքի իրիստ կանոնաւորուած ընթացքը»^{***}:

1972, Ծննդոց օրեր Ին, Յ. Դեկտեմբերի 26 ամսականը ի վերջոյ կը մտնէ իր այնքան երազած ու փայփայած Երեւանի խոստացանք

^{**}... Abramian Jackie, Conversations with Contemporary Armenian Artists, Amana Books (U.S.A.), 1990, p. 49:

^{***}... Տես Յ.Մ.Յ.Ի., էջ 12:

Կոմիտասի անուան երաժշտանոցէն ներս: Ան 35 տարեկան է, ամուսնացած է եւ Հայր երկու դուստրերու: Եւ սակայն «... ես սովորում էի իմ կէս տարի՛ք ունեցող ուսանողների եետ, 17 կամ 18 տարու երիտասարդներ, որոնք աւարտած էին բնականոն պայմանների մէջ (Ռ. Մելիքեանի անուան կամ Չալոբուսկու անուան երեսնամի ուսումնարանները: Ես ինքս շատ վատ էի գգում. բոլորից գաղտնի էի պահում, որ ես ամուսնացած եմ...: Իմ առաջին երգերից մէկը, որուն անունը չեմ յիշում, շէկ կարողացել գրանցել. այդ ժամանակ ժողովրդական կոմսերվատորիայում էի եւ յիշում եմ ինչպէս նորա անունով մի աղջիկ ինձ օգնեց. ես կիրառը վերցրի, երկու տընկ-տընկ, երգեցի եւ այդ աղջիկը գրի առաւ այդ երգը, որը անմիջապէս շատ սիրուեց եւ տարածուեց...»**: **Պետական երաժշտանոցի իրրեւ աւարտածառ ան կը գրէ սրինգի եւ դաշնակի սոնատ մը:** «Կարելի է ըսել», կը շարունակէ Դեյլայեան, «որ այդ սոնատը իմ առաջին գործն է»:**

1988 Յուլիսին տեղի ունեցած վերոյիշեալ Հարցազրոյցին մէջ Դեյլայեան կ'արտայայտուի իրրեւ Հեղինակը «մօտաւորապէս» 25 գործերու: Ըսինք, որ վերջին երկը, մանկական «Լի-լիթ» բենախաղը, սկսուած այդ թուականին՝ անաւարտ պիտի մնար, իսկ «Հին աստուածներ»-ու թատերախաղը՝ լոկ ծրագիր եւ իղձ... 53 տարեկանին, ստեղծագործական երկունքներու ուժեղ յորձանքին անձնատուր, երբ կը մահանար, Դեյլայեան գրեթէ անծանօթ մըն էր Հայաստանի մէջ (բացի իրրեւ ուսուցիչ, եւ իրրեւ այդ՝ չափազանց յարգուած իր սաներէն), եւ սակայն այդ 20-25ի սահմաններուն սակաւաթիւ երկերու ընդմէջէն, որոնց կարգին երեք սիմֆոնիաներ, արտակարգ «Թոփոփոնօ»ն, «Նուիրում Կոմիտասի» կոթողական սոնատը, «Մահ» սիմֆոնիկ պոեման, «Յաղթական ռեֆլիքս»ը, ան կը Հանդիսանայ արդի երաժշտական բարդ թեքնիքներու սխրանքնով եւ աննախատեսելի դիւտերով Հարուստ, միաժամանակ Հայ Հոգիին մէջ թաթխուած ու անկէ տառապանքի ճիշեր եւ փայլակներ, սարսուղացիչ ահազանգեր Հնչեցնող աննման ստեղծագործը:

Ազնուակերտ, մեղմասիրտ, գորովագութ, ծառայատէր մարդու կերպարին կը Հակադրուէր Հեղինակի աննախատես(ան)ելի ներաչխարհը, (քիչ մը վաճէ Օշականին նման), մշտական Հրաբխային ցնցումներու եւ պոթթկումներու թատերավայր, ուրկէ կը բոցավառէր անընդհատ յեղափոխութիւն ապրող եւ ընդմիշտ ըմբոստութեան յաճախանքին ենթակայ ստեղծագործողը: Ապրիլ 24ի թաթը չէ՞ միթէ, որ կը Հրահրէր անդադար իր Հոգիին կայծերը: Ան այն քիչերէն է, որոնք վերջնականապէս խզեցին իրենց կապերը թէ՛ ուսուսուսն

****... Abramian Jackie, Conversations with Contemporary Armenian Artists, Amana Books (U.S.A.), 1990, p. 49:

կլինքա-Ձայրուսկի-Ռախմանինով երբեակի դասական դպրոցին Հեա, թէ՛ ձերբազատուեցան Քորհրդային շրջանի պարտաորիչ եւ պայմանադրական՝ «պրոլետար» լուստեսութիւնը հե ի հե պանծացնելու ծառայող կեդրոնախոյս, պոռտարանութիւն բուրող դրոյթէն: Ահա վերջապէս մէկը, որուն առանցքը եղաւ Կոմիտաս-Եղեռն (1916) - արդիականութիւն երթուղին: Հոն այլեւս կարելի չէ դուարձանալ՝ ենթարկուելով կրաւորական, իզամերձ մեղեդիներով ծանրացած, ենթակայաձիգ թոյլատա ոճին, այլ՝ ներապրումներու եւ վերապրումներու մոլորակները շանթաւարիչ ուժգնութեամբ պայթեցնող անտարադելի ոճ մըն է իրենը, որ կը բնորոշուի իր բացարձակ անկեղծութեամբ եւ խրոխտ ազատութեամբ:

Ինչպիսեանի կարեւորագոյն երկերէն առնուազն երեքը դինք անմահութեան պատուանդանին կանգնեցուցին, եւ այդ՝ շնորհիւ սփառքահայ երեք նուիրեալ երաժիշտներու ջանքերուն: Անոնց հանգէպ Ինչպիսեան յաւերժ երախտապարտ գտնուեցաւ եւ զանոնք որակեց իր կնքահայրերը: Ան զաշնակահար Արթուր Փափագեանին կը պարտի «նուիրում Կոմիտասի» զաշնակի (եւ ձայնի) սոնատին (1982) փառաւոր Ա. կատարումը Երեւանի մէջ, խմբավար Արամ Դարարեկեանին՝ «Քոլիոֆոնո»ին համաշխարհային Ա. ներկայացումը Պոսթընի մէջ (1986), իսկ աներիկահայ երգեհոնահար Պերճ Ժամկոչեանին՝ իր «Յաղթական հոգեհանգիստ» (Ռեքվիեմ)ը երգեհոնի համար (1984): Այս «Յաղթական Ռեքվիեմ»ի Երեւանի Ա. կատարումը տեղի պիտի ունենար 1990 Ապրիլ 25ին, Պ. Ժամկոչեանի կողմէ, որուն նուիրուած է այս գործը. հեղինակը հիւանդ է եւ հիւանդանոց փոխադրուած է դարմանումի համար. չըջապատուած իր անմջական հարազատներով. ամէն ոք սրտատրոփ կը սպասէ, որ երգահանը նուագագոյն կազդուրման նշաններ ցոյց տայ, որպէսզի, նոյնիսկ անհանգիստ վիճակով, կարենայ գէթ վերջապէս լսել իր յորինումը առաջին անգամ ըլլալով: Այս գործը արդէն չըջած էր, Ժամկոչեանի մեկնարանութեամբ. աշխարհի շարք մը մայրաքաղաքներու մէջ եւ բարձրացուցած անզուսպ ոգեւորութիւն եւ աներկբայ գնահատանք: Ինչպիսեաններու ուրախութիւնը չափ ու սահման չունի: Ապրիլ 16ին լուստեսութիւնը իր բարձրագոյն կէտին վրայ կը դտնուի: Բայց Ապրիլ 17ին սիրտը կը վատթարանայ եւ հիւանդին թոյլ չեն տար, որ անկողնէն ելլէ: Լուստեսութիւնը կը փոխակերպուի ծանր յուսահատութեան եւ որոշում կը գոյանայ, որ գոնէ իր կողակիցը, Հերմինէն, ներկայ ըլլայ մենահամերգին, բայց, կը պատմէ Հերմինէն, «Աստուած ա՛յս է, շատ տեսաւ...»: Ապրիլ 22ի դիշերը կացութիւնը անյոյս է եւ 23ի առաւօտեան սիրտը կը զաղրի բարախելէ: Համերգը, 25 Ապրիլին, տեղի կ'ունենայ հեղինակին թաղման օրը... «Յաղթական հոգեհանգիստը» կը վերածուի սուգի հոգեհանգիստի, կարծես զայն գրած

ըլար իր յուղարկաւորութեան համար: Դեյլայեանը՝ Ապրիլ 24ի ուշացած զոհերէն. կրնայ ըլլալ չէ՞ որ «Աստծու ծաղրն է աշխարհն այ արլէն»:

Ինչպէ՞ս կրնայ Հոգեհանգիստը «յաղթական» ըլլալ: Հարցը, մաշէն անգին շնորհուած, վերջականացած, Հանգիստին չի՞ վերաբերիր արդեօք: Լսենք երգեհոնին պատգամը – ահա խույ Հոնգիսն մը, որ կը ծագի պերճ նուագարանին խորերէն, բամբ, ճնչիչ, միաշառաւիղ, կարծես անծանօթ մուրաւկի մը կեզրոնէն ձգուած ըլլայ: Անգոյութեան թէ սկզբնական խաւարի տիրապետութիւնն է: Քիչ ետք այդ մէկ հատիկ թաւաշի խորքին վրայ կը հակի խոկացող միտքը. չորցած արցունքներու բովէն կը հեւայ անանուն աղօթք մը, որ կը հլուսուի ինքն իր վրայ եւ տակաւ կը ձուլուի երկինքէն փոխ առնուած «ապրիլեան» սրմունջի մը մէջ: Լոռութիւնը խաւարի տիրապետութենէն կը զատորոշուի եւ կ'ոճնայ իր գոյութիւնը. Յաւն ու Տանձանքն են, որ կ'ապրին իրենց երկունքը Լոռութեան ծոցին մէջ: Յանկարծ լոռութիւնը կը պայթի...: Մենք կը լսենք երկար Հոսքը՝ բռնուած, ղնչակալուած ձայներու, կոսբրբներով շանթահար, որ կը հասնի մեզի եւ կը բռնէ մեր կոկորդէն:

«Ինքվիմ»ը յաղթական... Հոգեհանգիստ՝ իրենց Հանգիստը չգտած Հոգիներու: Ապրիլ 24 է: Արարատը սուգի մէջ է, եւ սակայն իր ամենի անշարժութեամբ արեւացած, մեր դիմաց, մեր վերեւ, մեր մէջէն, ան, Արարատը, մեզի կը յիշեցնէ, պիտի յիշեցնէ մշտնջենապէս, թէ մաշը պարտուած է: Ահա այդպէս է, որ Հոգիներու Հանգիստը յաղթանակ կը պարզէ: «Մարտական ռեփ-վիմս», բոլոր մը սեւ արեւ պարտուած մահուան իբրեւ պատանք:

Իմ առաջին ծանօթութիւնս Դեյլայեան մուրաւկին Հետ տեղի ունեցաւ 1986ի նոյնքեր 16ին: Այդ կիրակի երկրորդեան Լոս Անճելըսի Միուզիք Սէնթրի մէջ, ծովածաւալ երաժշտասէրներու ներկայութեան, ելոյթ պիտի ունենար պոսթընաբրենակ Արամ Ղարաբեկեան՝ իր «Արմֆոնովա» լարային նուագախումբին զլուխը անցած: Պիտի կատարուէին չորս կտորներ սենեկային նուագախումբի համար գրուած, որոնց երկուքին Հեղինակները Հայ էին: Այդ կատարումները յայտագրուած երկերուն Արեւմտեան ափի առաջին ունկնդրութիւններն էին: Ե. Միրզոյեանի համբաւուր «Թիմրանի»ի սիմֆոնիային ծանօթ էի, բայց Յարութիւն Դեյլայեան անունը բնաւ չէի լսած: Ներկայացուելիք գործը կը կոչուէր «Թոփոփոնո»: «Թոփոփոնո»ն ունէր անսովոր կառոյց եւ արտակարգ կազմութիւն. լարային-սենեկային նուագախումբին կը միանային դաշնակը (դաշնակահարն էր Աւօ Գոյումճեանը) եւ զալարափողը (Փրէնչ Հորն): Կատարումի ընթացքին պիտի լսուէր (արտասանու-

թիւն) Վ. Տէրեանէն քերթուած մը - ԱշուՑ է՝ անձրեւ / ստուեր-
ներ տնձել / զողովմ են դանդաղ / պաղ, միասպաղ:

Նուագահանդէսը կազմակերպած էր «Հայ ամերիկեան
թատերա-երաժշտական ընկերակցութեան» նախագահ Վիկ-
տոր Մարտիրոսեան: Խնքովարը գործին քաջածանօթ էր,
Պոսթընի մէջ կատարուած էր, նոյն դերակատարներով, այս
գործին Ա. ունկնդրութիւնը՝ նոյն տարուան Փետրուար 28ին
(գաշնակահարը՝ Արթուր Փափազեան):

Այս դիշեր «Թոփոփոն»ն թողուց ցնցիչ տպաւորութիւն:
Հեղինակին հետ չկրցայ ծանօթանալ:

«Թոփոփոն»ն Հեղինակին ամէնէն իրայատուկ եւ ինք-
նազոչն ստեղծագործութիւններէն է: Հոն կարելի չէ նշմարել
իր ուսուցիչներուն՝ Է. Միրզոյեանի կամ Է. Պաղտասարեանի
ստուերը, ոչ ալ Արամ Խաչատրեանի Հովանին կը վայելէ:
Անոր սլայմանաձեւ-նախատիպարները (մոտել) արդի ու գե-
րարդի երաժշտութեան արդէն դասականացած հսկաներն են՝
Էլնիթըր, Տէնիզով, Փէնտէրէցքի, Այվզ, Վարէզ, որոնք ան
ուսումնասիրած է գրեթէ իր ուսուցիչներէն գաղտնի եւ ան-
ցուցած իր Հոգեմտաշխարհի պրիսմակէն, ինչպէս, միւս կողմէ,
Կոմիտասը եւ աւանդական երգն ու պարը: Ահա Հոս է Հրաչըր:
Ինչպէ՞ս կարելի է այս երկու գերծայրայեղ աշխարհները Հաշ-
տեցնել, կարելի՞ է ի մի ձուլել Հայրենի արեւն ու արեւմտեան
մետաղեայ քանականութիւնը, մէկ գրչի տակ Հնագանդեցնել
ակնբախ անհամատեղելիութիւնները, ինչպէս Սասունցի Դա-
ւիթի մոզական ցուպին ենթարկուող «գառնուկը» (Հայ երգը)
եւ «գայլը» (Արեւմտեան երգազրութային քարդ ոլորտները):
Այս գործը իրմէ խնդրած էր Արամ Արարեկեան: «Միմֆոնո-
վա» նուագախումբին ղեկավարը Երեւանի մէջ լսած էր «Նուի-
րում Կոմիտասի» սոնատը, դմադած այս կտորին անստգիւտ գե-
ղեցկութենէն՝ փափաք չապտնած էր, Պոսթընէն ուղարկուած յա-
տուկ նամակով (1986), որ Դեյլայեան իր գրիչով պատուած ըլ-
լար «Միմֆոնովա»ն: Կը խոստանար գրուելիք կտորին Համաշ-
խարհային առաջին կատարումը Հրապարակել Պոսթընի մէջ՝ իր
ղեկավարութեան ներքեւ: Այս առաջարկը մեծ ազդեցութիւն
ունեցած էր Համեստութեան մարմնացումը եզոզ Հեղինակին
վրայ լրջօրէն պարտաւորեցնող խոստում էր եւ մեծ պատիւ: Այս
խնդիրքը իրագործելու վճռակամութեամբ ան կը մեկնի Դիլիջան,
ուր եւ կը յօրինէ «Թոփոփոն»ն:

Առաջին եւ երկրորդ ջութակները նստած են կիսարդո-
րակաձեւ, առաջին շարքի վրայ, խմբավարին դիմաց, կը գտնը-
րին ջութերը (վիոլա), ջութակներուն եւ ջութերուն միջեւ՝ թա-
ջութակները, թաջութերը (տապլ պաս)՝ բնին խորքն են: Դաշ-
նակը դրուած է խմբավարին աջ կողմը, չըջանակէն դուրս:
Ո՞ւր է գալարափողը...: Կը տիրէ քար լուսութիւն: Խմբավարը
արձանացած է: Ցանկարծ լուսութիւնը կը ճեղքուի Հեռուէն

(անտեսանելի) եկող փողին միայնակ կանչով, վշտահար եւ մեղամաղձուտ, հաղի գծագրուող յուշանուագ՝ Կոմիտասի ոգին յուշող եւ «կար ու յկար» թախծուտ հեքիաթ մը սկսելով...: Ինչպէս պիտի գիտնայինք հետագային, Գեղարեան իրաքանչիւր ստեղծագործութեան մէջ, հոս եւս, կը ծաւալէ խոհափեմաստասիրական խորհուրդ: Միայնակ զալարափողը կը խորհրդանշէ լեռներու մէջ իր անցեալը վերապրող ծերունի Հայր՝ հին օրեր, կցկտուր յուշեր, տխուր ծառեր, վար ու ցանքի պատկերներ...: Գալարափողի այս հեռաւոր (րեմին ետելէն եկող) կազկանձին յանկարծ կը հակադարձեն, ուժգին զարկերով, դաշնակէն ժայթկող քամր որոտներ (թաւ լարերուն վրայ մէկ ձայն իր ութեակով, հաւասար հեռաւորութեամբ հնչող), այս ահեղ դողանջը, ծանր զանգերու նմանակ, ահագանգն է՝ Եգեոնի սուկումէն չարաքաստիկ յուշեր վերակոչող: Գալարափող եւ դաշնակ երեք անգամ իրարու կը բախին եւ այսպէս, մէկը միւսին հակադրուելով, կտորին սկիզբը կը ձեւաւորեն, ինչպէս միեւնոյն կեանքով ապրող հուժկու հակաբեւեռներ, նիւթն ու աննիւթականը, միեւնոյն էակին էութեան մէջ միաժամանակ կը բնակին մշտնջենական պայքարով եւ անքակտելի ամբողջականութեամբ: Այնուհետեւ դաշնակին ամբողջ ստեղնաշարին վրայ կը փայլատակէ «ճարճատիւն» մը, որ պատուածք մը կը գոյացնէ իրար խաչաձեւող, միաժամանակ իրարու լրացուցիչ վերոյիշեալ հակասութիւններու միջեւ: Գեղարեանի սոյն գործը անվերջ կը բարախէ, հրաբխային մոլորակներու նման, միայնակ (մէկ նոթայով գոյացած) ձայներու պայթիւններով, որոնք եռուելի եկող ձայնային լաւաններով կը զալարուին եւ իրենց հեքին մէջ կ'առնեն մեր ողջ էութիւնը: Այս կարգի մութ ու լոյս նախազգացումներն ու յանկարծ փոթորկող սարսափները կը լեռնանան ու կը պայթին ահեղ Էրէչէնտոյի վրայ: Այնուհետեւ արեւը կը ծագի սոյո ջութակի պայծառ զարթունով (կոմիտասեան քներգ): Այս երկակենցաղ երաժշտական քջիջները իրարու կ'ընդելուզուին եւ կը զարգանան զուգահեռաբար: Շատ ներթափանցող է, երկրորդ մասէն առաջ, երկարատեւ թրթռացող ջութակներու ընկերակցութեամբ, դաշնակին լուսաթափանց հծծիւնը, ափսոս, շատ կարճ՝ ներսի լարերուն վրայ մատներով տաւղահարուած եւ, անոր հակազդող, նոյն լարերուն (քամր կողմը) տրուած ափի դոփիւնները, որոնց երկարաձգուող արձագանգը կը գուժէ մօտալուտ աղէտներ...

«Թոփոփոն»-ի երկրորդ մասը (առանց ընդմիջումի) յաճախանքներու եւ բանդագուշանքներու վախազուր շարք մըն է, երկու անգամ յայտնուող քոչարիներու միջեւ, որոնք մահապարներու (տանս մաքապրը) վերածուած ըլլալ կը թուին իրենց շրջակ կրկնութիւններով, կոմիտասեան պայծասութիւնը կրկին կը ցուլայ: Հոս կը լսենք մէջբերում մը՝ Շոփէնի «Մահերգ»ը: Շոփէնի ծանօթ մահերգը կը խորհրդանշէ համամարդկային եւ համատարած մահուան ուրուականը՝ մարդ արարածին ողբերգութիւնը

ընդգծող: Հոս է, որ կը լսուին Վ. Տէրեանի վերոյիշեալ տողերը, կարծես կեանքին անհեթեթութեան նուիրուած Հմայական ծաղկեփունջ մը ըլլան: Դեյլայեանի կեանքը ինքնին փաստ մըն է, որ մարդ զատապարտուած է ապրելով տառապելու եւ տառապելով ապրելու այս մոլոր մոլորակին վրայ: Յանկարծ կրկին կը լսենք, տաղնապարտոյց ձայներու վրայ, գաշնակէն փրթած «անյատակ» պատուածքը: Վերջին անգամ զայարափողը կ'ոտնայ իր վիշտը մէկ նոթայի ենթահողին վրայ՝ անանուն, սեւ եւ խոր վիրապի («ունայնութեան փոսը») մը առաջնորդելով մեզ:

Ինչպէ՞ս շնորհակալ, այս գործին ունկնդրութենէն ետք, Փէնտէրէցկիի «Հիրոշիմայի դոճերուն» նուիրուած «Տրևա»յին (THERENE) մասին. նոյն «օրհասական անհաշտութիւններու» քախումներն են, նոյն ահագանգ-մահերգանքներու սպառնալիքը: Սակայն կը խորիմ, թէ Յ. Դեյլայեանի «Փոթոֆոնո»ն աւելի «մարդկային» է՝ իր փիլիսոփայական խորքով եւ կոմիտասեան զուլալ ներկայութեամբ, մինչ լե՛հ Հեղինակին յոռետեսութեան զժոխային ուժղնութիւնը կը խորհրդանշէ Համաշխարհային երկրորդ պատերազմին աղէտը եւ Հիրոշիմայի հարուածը:

Յ. Դեյլայեանի սոյն երկը վերջին անգամ տրուեցաւ Երեւանի մէջ, միշտ Ա. Ղարաբեկեանի ճիւղտին ներքեւ՝ Հայաստանի Պետական Սենեկային Նուագախումբի նատարումով, 1998ի Նոյեմբեր 14ին եւ 15ին: Գայարափողահարը եղած է Արտաշէս Գարոյեան, իսկ գաշնակահարուհին՝ Հեղինակին զուտորը՝ Մարինա Դեյլայեան, յատուկ հրաւիրուած Լիզպոնէն, ուր ան կը բնակի, այս Հանդիսաւոր առաքելութեան համար: Երկը ներկայացուած է «Թատերական տեղափոխութիւն»ներու սկզբունքին ընդառաջելով: Այս սկզբունքը կը հիմնուի «Փոթոֆոնո», «չարժուող Հնչիւն» վերնազրի թելադրութեան վրայ: Բեմականացման իրագործումները կատարած են Ալտա Ամիրխանեան (Աւտորալիա) եւ խմբավար Ղարաբեկեան: Գործը կը ներկայացուի իբրեւ բեմական շարժախաղ: Նուագախումբին անձնակազմին կողքին կը գործեն վեց պարողներ, երեք մեջախաղ կատարողներ, զուգուկ եւ զՀու. նաեւ Հորովել երգող մեներգիչ (Յովհաննէս Պատալեան), երկու շրջիկ երաժիշտներ, խաղատիկնիկներ (խամաճիկ): Գործին մաս կազմող Գոչարիին զուգահեռ օգտագործուած է նաեւ Ռուբէն Ալթունեանի «Գոչարի»ն: Ամէն ինչ եւ բոլոր գերակատարները կը շարժին եւ կը տեղափոխուին (չոյսերու զանազան խաղեր), մինչեւ իսկ նուագող երաժիշտները, գաշնակահարուհին. յանկարծ ղեկավարն ալ բեմը կը ձգէ եւ ներս կ'անցնի՝ կրկին երեւնալու համար, գաշնակահարուհին՝ նոյնպէս: Սրահին մէջ աթոռներ չկան, Հանդիսատեսները մօտ մէկ ժամ յոտնկայս պէտք է Հետեւին այս քարղ կտորին բոլոր շերտերուն եւ յարանուն գարգացումին:

Նոյեմբեր 14ի ծանուցաթղթիկին մէջ գրուած է. «Այս ստեղծագործութիւնը մեղիտուցիա է (meditation, խոկում, մտա-

խոհարարները) իրար հակառակ եւ միեւնոյն ժամանակ իրար լրացնող երաժշտական եւ փիլիսոփայական շերտերի»:

Մենք, դիտելով 14 Նոյեմբերի ներկայացման տեսաերկը, կը դռնուինք երկրնորանքի մը կեդրոնը: Ըստ մեզի, այս ուժեղ երկը, այո՛, աւելի շատ «մեզիտացիա» է, քան շարժուող եւ տեղափոխուող թաղութակներ, ջութակներ, խամանիկներ, մնջախաղցողներ: ...Ըստ երեւոյթին, այդ շարժական վիճակի մէջ, խոկումի տեղ չկայ, միջոց չկայ, երբ այդքան ոչ-անհրաժեշտ շարժումներ տեղի կ'ունենան, մանաւանդ յունկայս (կարծես պատժուած...) Հանդիսատեսներէն կարելի չէ խոկում ակնկալել, ոտքի վրայ մէկ ժամ՝ յարաշարժ հնչուններու տարափին ներքեւ: Ըստ մեզի, ինչպէս կ'երեւայ վերի քննարկումէն, «Թոփոփո»ն բեմատեսարան (spectacle) չէ. կը խորհնք, թէ «Թոփոփո»ն պէտք է նկատել ոչ թէ «շարժուող», այլ շարժող հնչյուն, այսինքն՝ շարժող-յեղաշրջող, շարժող-տեղաշարժող, երկրաշարժող, ալեկոծող իմաստաւորումով: Ըստ մեզի, «Թոփոփո»ն այսպիսի բեմատարած շարժուող տարրերու խնդումով կորսնցուցած է իր պայթուցիկ, ահազանդային կեդրոնաձիգ պատգամը եւ զգեցած կեդրոնախոյս, քիչ մը «էքսանտրիկ» (արտակեդրոն) հանգամանք: Ջութակը եւ անկէ ձիգ տրուող ձայնը շրջազայելու կարիքը չունի, ձայնի ալիքները, ուժգին կամ մեղմ, ինքնաբերաբար կը նուաճեն մեզ իրենց բնական ոլորտներով եւ հոյովոյթով. միւս կողմէ՝ այդ կարգի տեղափոխութիւնները ո՛չ նորութիւն կը բերեն, ոչ ալ երաժշտականորէն յանձնարարելի են. ի՞նչ կ'ըլլար տաճարէն ներս հաւատացեալին կեդրոնացումը, եթէ տէր հայրը քայելով բարձրաձայն աղօթէր ժողովուրդին մէջ: Դեյլլաեանի գործը ուրիշ կարգի եւ մակարդակի յղացք է. անոր իմացական, խոհարարական, էաբանական, ինքնակորիզ-ներհայեցող նկարագիրը խոտոր կը համեմատի իսանգարիչ շարժումներու հետ:

Վերը յիշեցինք Փէնտէրէցկիին *THRENE*ը, լե՛հ Հեղինակին այս գործը այն աստիճան ուժեղ է, որ դող կը բռնէ քեզ, եթէ ջանաս ոտքի մնալ զայն ունկնդրելու ատեն, իսկ նուագողները չափազանց կեդրոնացած են անհամեմատորէն խրթին իրենց ձայնատետրերուն առջեւ՝ կարենալ ոտքի ելլելու եւ քայելու համար իրենց նուագարաններով, եւ այդ՝ առանց նուագածութիւնը դադրեցնելու: (Այս բաղդատութիւնները արտօնուած կը համարենք, տրուած ըլլալով, որ երկու գործերն ալ գրուած են լարային նուագախումբի համար):

Նոյեմբեր 14ի ելոյթին նկարահանուած տեսաերկը մեզի բացայայտ կը դարձնէ ապակեդրոնացած մարդոց այս ու այն կողմ նայող դէմքերը, նաեւ ցրուած կամ յոգնած նայուածքները, որոնք Հոռելաոթման կամ ուժեղ ցնցումի պէտք է ենթարկուած ըլլային, ինչպէս մենք 1986ի Նոյեմբերի անմոտանալի

օրը. ինզորոյ առարկայ գործը ատակ է պղտորելու մեր ներաշխարհի անձաներուն խորքը պառկած թմրիքը, վարժուած ձայներու «ապահովութեամբ» գոյացած խաղաղ յատակը, կը յիշեմ. որ վերոյիշեալ անմոռանալի ելոյթին ազդեցութեան տակ ուժգին պրտալու. խենթենալու բուռն փափաք արթնցած էր մէջս, ի մասնաւորի առաջին մասի վերջաւորութեան, երբ աչքերս փակ կ'ունկնդրէի ու ձայները կ'անցնէին Հոգեմտային պաստատէս անդին. այո՛, փակ աչքերով: Օրինակ. փոխանակ փողկապաւոր պարօններու անխմաստ մարմնաձեւաչարժումներուն, կարելի էր ներկայացնել կիսամութ բեմ մը, զանկ մը հոս, խաչ մը հոն կամ խաչուած կիսատ մարմին մը, իբրեւ պատկերը մեր ենթագիտակցութեան մութ աշխարհին, ուր չկան միմոսներ եւ խամահիւններ. չէ՞ որ զրսահայեաց գործողութիւններ անյարիր են ընդդատակեայ պոռթկումներով «չարժուող» կտորի մը: Նոյնիսկ Հայկական պարն ու տհոլ-զուռնան անժամանակ արտայայտութիւններ են այսպիսի փոթորկայոց գործի մը մէջ՝ գերադանցապէս անհատակորից: Կարելի՞ է տրեխի մը կամ կուժի մը ներկայութիւնը ընդունիլ մութ եւ խիտ բեկորներով պոռթկացած վերացական պաստառի մը վրայ: Այդ կարգի գրեթէ կենցաղադիտական «Հորիզոնականութիւններ»ը գործ չունին գերբնական տենդով քարախող ուղղահայեաց ու «մերկ» ապրումի մը նգնաժամը գրանորոգ երկի մը մէջ, դժոխքէն մինչեւ երկինք Հրթիռուող երկունքի ընթացքին, երբ անհատը կը կերպարանափոխուի բոցէ մեխէակի եւ կը յանդգնի խրիլ ճակատագրին կողք:

Արդ՝ մէկ ծայրը երկինք, միւս ծայրը գեհեմ մեխէակին բոլոր յատկանիշները գիտէր եւ ճաշակած էր «Թովոթիոնօ»ի տարաբախտ հեղինակը. գիտէր, որ անոնց միջեւ է, որ կը տատանի Մարդը, թէ՛ իր տմարդիութեամբ (դէպի գեհեմ ձգտող), թէ՛ իր մարդեղութեամբ (աստղահիւս երկինքը փնտռող): Ահա, ըստ մեր Հայեցողութեան, «Ծարժ(ու)ող Հնչիւն»ը, Մարդը, իր ծայրայեղ բեւեռներով, մշտնջենականօրէն անջրպետային եղերականութեամբ: Այս ենթահողին վրայ է, որ քոչարին կրնայ վերածուիլ մահապարի եւ թեւերնին տարածած պարողները՝ խաչերու եւ խաչեալներու: Այդպէս լեղա՞ւ մեր Օղեանը, գլխաւոր առանցքներէն մէկը այս կտորին. երէկ կը պարէինք մեր պապենական լեռներուն վրայ, յանկարծ՝ արիւն, խաչելութիւն, կմախացում: Երկրին մէջ Հերթականօրէն շայտնրուող յաճախանքային կրկնութիւնները կամ միայնակ ձայներու անվերջ վերադարձը՝ դէպի մահ շարժուող մեր Հայրերու կարաւաններն են, հեղինակին ենթագիտակցութեան մէջ միբրճուած աղեխարչ պատկերներ:

Եթէ կ'ուզէք, բառին ընթացիկ իմաստով, «հետաքրքրաշարժ» առարկայ չկայ այս գործին մէջ. տեսանք արդէն քոչարին կամ Ծովէնի «Մահերգ»ին խորհրդապատկերները. այո՛, հոն կայ խորհուրդներու հետ Հաղորդութիւն, Հաղորդութիւն

խաշուող անձի մը ներքին ըմբոստութեան հետ: Սրինակ, սրահին կիսամթաթիւնը ուշադրութիւնները սրել, պիտի տար զէպի տրամին կեդրոնը, ոտքի վրայ պիտի ըլլար միմիայն խաշուող Մարդը, ճակատագրին դէմ ծառայող կայծը, ճակատագրին խաշը կրող, բայց կողը պատող փոքրիկ, բայց վճռական մեխ-էակը. մնացեալը անխնայ շարժում է: Ներաշխարհի ողբերգութիւնը կարելի չէ փոխարինել զբաշխարհի Հանդիսութեամբ: «Թոփոփո»ի նման գործեր կրնան գերհոգեպրկումի առաջնորդել ունկնդիրը: Պէտք չէ զլանալ այդ պրկում-գերպրկումը անոր յնորհելէ: Հոգիի պահանջը կարելի չէ փոխանակել, աչքին պահանջած շարժումներով:

Յ. Դելլալեանի «Թոփոփո»ն արժանացած է Գալիֆորնիոյ Ծարժանկարի եւ Պատկերասփիւռի Խորհուրդի «մակէ փառապսակ»ին եւ "Super Star" վկայականի:

«Թոփոփո»ն միակ ստեղծագործութիւնը չէ, որուն ընդերքներէն կ'արտացոլայ Դելլալեանի ներաշխարհային ողջ դիմագիծը: Եթէ «Թոփոփո»ն Հեղինակին էարանական կորիզին մէկ երեսն է, այսինքն՝ կեանքի Հակասական երեւոյթներու խոհափիլիսոփայական բախումը կը բնութագրէ երաժշտականօրէն, էարանական միւս կորիզը կը կազմէ «Նուիրում Կոմիտաս»ին սոնատը: Հոս է, որ զմայելի գեղեցկութեամբ կ'երաժշտաւորուին, ձեռք ձեռքի տուած, Հոգիին անբեկանելի երազը եւ Հեղինակին գաղտնի կեանքը:

12 վայրկեան տեւող եւ երկու մասերէ բաղկացած այս սոնատը գրուած է 1982ին: Առաջին կատարումը տեղի ունեցած է Երեւանի մէջ՝ դաշնակահար Արթուր Փափազեանի կողմէ, 1983 Ապրիլ 23ին, կրկին խորհրդաւոր զուգադիպութիւն...: Այդ Ապրիլ 23ը Հեղինակին մահուան օրը պիտի ըլլար ուղիղ եօթ տարի ետք:

Եթէ «Թոփոփո»ի ունկնդրութեան ընթացքին բոլոր զգացումներու իրարանցումին ենթակայ ենք, աղաղակելու կամ խենթենալու պատրաստ, Հոս, արտայայտչապաշտ փոթորիկներու փոխարէն, ներաշխարհէդ կը ծագի խորատուգուելու բուն բաղձանք եւ յուզումնատարսուող զող մը կը շարունակէ մէջէդ «երգել» «նարօ»ի Հծծիւնները՝ «Անշունչի զանգակատուն»ի խորանէն, եւ դեռ չես ուզեր արթննալ այս դիւթիլ երազէդ...: Իրաւամբ, «Նուիրում Կոմիտասին» սոնատը Հիւսուած է Պարոյր Աեւակի մագնիսացնող վերոյիշեալ պոեմին խորը ըմբռնումին թելադրանքով. Սեւակի անմար ղօղանջները կը միանան Դելլալեանի սրտին մէջ ընդմիշտ բնակող կոմիտասեան անջրպետին: Կոմիտաս ո՛չ միայն ներկայ է իբրեւ մոգական արեւազայ, որուն ընդմէջէն կը նաւարկես դէպի բիւրեղացած Հայու ոգին, այլեւ սոյն սոնատին մէկ մասը «Անտունի»ի ոսկէ թելերով է Հիւսուած եւ կտորք անդիմադրելի, սակայն մեղմ ու զուլալ խոտվքի մէջ կը ձգէ մեզ. Հոս է, որ ձայնը, դաշնակահարին

կողմէ մրմնացող «Նարո»ն, կու գայ գրկելու նոյն դաշնակահարին մատներէն միաժամանակ ծորող մաշերգը եւ նուագարանին ներսի լարերէն Հոսող, տաղահարուող մրմունջները (այս գրելածներ գործածուած է նաեւ «Թոփոփոն»ին մէջ): Հայ երգին, «Նարո»ի մրմունջները (չորս նոթա, բայց ինչ վսեմ մեղեդի) վստահի նուագողին՝ գիտ է, Հազիւ լսելի, ուրուականային եւ անկանխատեսելի գեղեցկութիւն, որուն Հմայքը շնչահեղձ կ'ընէ մեզ եւ չի մարիր կտորին ձայնական աւարտէն վերջ իսկ:

Վերոյիշեալ ձայնա-նուագային հատուածը կը գտնուի կտորի վերջաւորութեան, սակայն սոնատին երկրորդ մասը կը սկսի առնական, Մասնոյ պարերէն մէկը յիշեցնող, կշռոյթով: Հոս Հեղինակը վերակոչել կ'ուզէ մեր աւանդական կեանքի պատկերներէն մէկը, նման Բ. Կանաչեանի «Նախոր»ին. խորհրդապաշտական սրբազան հաղորդութեան վերակոչումին կը յաջորդեն հայկական պարն ու խրախմանքը: Հոս պարի խորհրդանշանը կայ միայն, ինճոյքը յկայ, ընդհակառակն, «Նարո»ի երգային երեւոյթը, Հեղինակին տուած բացատրութեամբ, մեզի կը յայտնէ պանդխտութեան մեկնած մինուճար, մենակեաց, մեկուսացած, ծով թախիծներու գիրկը ինկած, տունէ եւ Հարազատէ զրկուած հայ տղուն տառապանքը: Այս կսկծալի, բայց Հարազատ պատկերը տալու համար, Դեպքեան չի մխրճուիր ոճային բռնագրօսիկ բարգոթիւններու մէջ, արդի երաժշտութեան բարդ կառոյցները դիմք չեն կալանաւորած, այլ, ինչպէս տեսանք նախորդ գործի քննութեան ընթացքին, այդ նոր արտայայտչական կերպերը օգտագործուած են նուրբ ճաշակով, ճարտար եւ զուսպ երգագրութային խաղերով եւ Հաւաստիքն են խոր ճանաչողութեան: Ծրինակ, մատներով դաշնակին ներսի լարերուն վրայ տաղահարումը կամ ափով թմբկահարումը կատարուած են լուսամբա գիտակցութեամբ. առաջինը ստեղծած է պատկերը գեփխոթին թեթեւ շնչումին խոնար մակերեսներու վրայ, իսկ ափով նոյն լարերուն տրուած Հարուածները՝ եղբերգական մթնոլորտ կամ խորհրդաւոր անկում կը նշեն, միշտ զոյգ իմաստներով, մէկ կողմէն քննութենէն քաղուած պատկերը, միւս կողմէ՝ ներաշխարհային Համապատասխան դրոյթներու երաժշտական դրսեւորումը: Դեպքեան այս եւ այլազան ճարտարագիտական հնարքներու շնորհիւ կարողացած է ստեղծել, մեծ ստեղծագործներու յատուկ, մազնիսական դաշտեր, որոնց կ'ենթարկուինք անզգայարար եւ սիրով, եւ որոնց ներգործութեամբ մե'ր մազնիսական տարրերը կը վերադասաւորուին գործին տրամադրութեան համեմատ, մինչեւ կտորին վերջը եւ անկէ ալ անդին եւ, այսպէս կ'ապրինք չափազանց Հարազատ, նաեւ առեղծուածային ու յեղաշրջիչ, երաժշտական գոյացումը հայ Հոգեմտաւոր քնաշխարհին:

Հեղինակէն մեզի ժառանգ մնացած տեսողական մէջ արձանագրուած յուշերէն կը օտոնենք. «Նուիտում Աոմիտասիմ»

դաշնամուրի եւ ճայմի սոնատում ըստ իս Կոմիտասը իմաստաւորում է հայկական ոգու եղբրական տուայտանքների հաւաքական կերպար. եւ միաժամանակ այդ սոնատը երաժշտական յուշարձան է Մեծ Եղեռնի գոհերին: Երբ ինքն եւ կատարում այդ, ի՞նչ յուզումներով եւ տոգորում...»: Արդարեւ, 1988ի Դեկտեմբերին Լոս Անճելըսի «Հոլիվուտ» պանդոկի մէջ ի պատիւ իրեն կազմակերպուած Հանդիսութեան ընթացքին կը հրահրուի իր «խօսքը» ըսելու: Հոն, Դեկտեմբեր կը նուազէ (եւ կ'երգէ) իր այս եզակի գործը: «Բարձրացնում եմ ձեռքերս՝ դաւիչներ լռում է: Այս գործը՝ «Նուիրում Կոմիտասին», սկզբից կանգնած եմ նուազում, դաշնամուրի լարերի վրայ: Կոկորդս կրկին խեղդում է կծիկ դարձած կարօտի գգացումը, որն առկայ է սոնատիս դաշնութիւններում: ...Նարօ, նարօ, նարօ ջան, պանդոխտ տպան յիշում համդում քաղիան անող իր եարին»: ****

Ուրիշ տեղ, Հեղինակը իր այս գործին մասին արտայայտւելով կ'ըսէ. «...Ազգայնասիրտների հեշտութիւնը յիշեցնում է այգաբացին պղնձացած ժայռերից քարձրացած գոյորշու շղարշ եւ մեղմ փշոզ գեփիւ... որ սակայն շուտով վեր է ածուելու փոթորիկի: Դա, սակայն, Կոմիտասի իտովայոյզ եղբին է...»: ***** Հեղինակ-կատարողը կը հասնի ինքնաարարման եւ ինքաարարումը Հեղինակ-կատարողէն փութով կը հասնի՝ գործին ներգործութեամբ վերածնած, քար լռութեան մէջ անէացած ունկնդիրին: Այս կարգի հրաշք շատ չի պատահիր արդի երաժիշտներու արդի ստեղծագործութիւններուն ունկնդրութեան ընթացքին: Այս դերագոյն փաստն է, որ երկը կը չնչէ, կ'ապրի ու կ'ապրեցնէ, եւ չէ՛ թերնիքական իտաղ՝ Հագի բանականութիւնը զարգարող:

Վերջին անգամ այս սոնատը լսեցինք Լոս Անճելըսի մէջ, 1998ի Փետրուար 19ին: Լիզպոնէն հրահրուած էր «Դեկտեմբեր երբեակ»ը, երբեակին անդամներէն էին դաշնակահար Մարինա եւ Զուլթակահար Նարինէ Դեկտեմբերները, Յարութիւն Դեկտեմբերի դուտորները, եւ Թաւրթակահար Լեւոն Մուրատեան՝ Հայրիկ Մուրատեանի թոռը: Այս Համերգն ալ կազմակերպած էր Վ. Մարտիրոսեանի «Հայ Ամերիկեան Թատերա-երաժշտական Ընկերակցութիւն»ը: Այդ օր, Մարինան մեզի կը հրամցնէ «Նուիրտասի բառամթերքով» հիւսուած եւ «Տօ՛ լան տնայեր»ի արեան կաթիլներով կենդանացած» այս նոյն սոնատը: Մարինան, իր անմահ հօր յիշատակով թաթխուած, Հագի կը յաջողի զսպել իր շեռնացած լուսումը եւ ունկնդրութիւնը վերջ կը գտնէ առանց «Նարօ»ի երգասացութեան...: Մարինան չէր կրցած երգել եւ զսպութեամբ նախընտրած էր կտորը աւարտել անսայթաք: Իր

***** ... ՏԵՄ Ե.Թ.Յ.Դ., էջ 90:

***** ... ՏԵՄ Ե.Թ.Յ.Դ., էջ 30:

ալեկոծ սրտի խորերէն մենք լսեցինք իր Հօր լուռ ներկայութիւնը փոխան «նար»ի չորս նոթաներուն:

Հոս քննարկուած երկու գլխաւոր գործերէն ետք, որոնք ամբողջականօրէն կը ներկայացնեն Հեղինակը, պէտք չէ կարծել, որ Յ. Գեղարեանի միւս կտորները կարելի է երկրորդական համարել. պարզապէս Հոս տեղը չէ բոլոր գործերը նկատի ունենալ: Անոնցմէ են, ի միջի այլոց, երեք Սիմֆոնիաները, որոնք, ցաւ ի սիրտ, ցարդ մատչելի չեն, ինչպէս նաեւ երգային-երգչախմբային ստեղծագործութիւններէն ոմանք, ինչպէս «Փեփուշ» մանկական օփերան (1976), երբ իրմով Լ. Միւշչալը՝ «վոկալ շարք կանացի բարձր ձայնի համար» (1984), «Լուսինան րոպէ»՝ կանանց երգչախումբի համար (1986), եւ ուրիշներ:

«Մեղիտացիաներ», քլարինէթի եւ դաշնակի սոնատը (1981) բարդ ծաւալումներով զարգացած վերացական շաղախով գործ մըն է: Անիկա, ինչպէս իր միւս սոնատները (Զութակի եւ դաշնակի, Թաջութակի եւ դաշնակի,...), «տարածական Հնչողութիւն»ներով եւ շերտաւորումներով կը Հոլովուի. հարուստ է երգագրութային հնարքներով եւ գիտերով: Մահուան ու կեանքի «երկխօսութեամբ» ընթացող եւ կեանքի ու սիրոյ յաղթանակին յանգող այս Հոգեմիտակները երաժշտական Հնչիւն մտորումներ են: Կտորը դժուարամերձ ստեղծագործութիւն է զոյգ կատարողներուն համար: Հոն կան «հարց ու պատասխան» ելելէջներ, կշռութեամբեղեղիական բանուածքը յանախակի փոփոխութիւններով եւ դաղարներու լուծիւններով համեմուած է: Ահա ուրիշ մը. «Մեղիում» Փակոթի (bassoon) համար (1984) գրութիւնը փաստ մըն է, որ Հեղինակը եթէ ուզէ կրնայ գրել «Արեւմուտքի մտաւորականութիւնը գոհացնող» բարդ ստեղծագործութիւն: Հոն օգաագործուած են փակոթի ծայրագոյն հնարաւորութիւնները: Այդ է պատճառը, որ անոր կատարումը հնարաւոր չէ եղած Երեւանի մէջ: Այս տասը վայրկեան տեղողութեամբ ծայր աստիճանի դժուարամերձ կտորը կատարուած է 1990ի Փետրուարին, Գերմանիոյ Հանովը քաղաքի միջնազգային փառատօնի ընթացքին՝ փակոթաւար Ֆոլկներ Թեսմանի կողմէ:

«Զրաւոյց տրեւ» դրամատիկ քանթաթա, կանացի բարձր ձայնի, երգչախումբի, ասմունքողի եւ սիմֆոնիկ նուագախմբի համար: Խօսք՝ Ա. Աւաղեանի: Գրուած է 1988ին: Հոս եւս լսելի են անագորոյն ձայներ, կացինահարուածներու նմանակ թրմրկահարումներ, կրկին միայնակ, մերկ ձայնի անվերջանալի պրկումներ...: Սոփրանոյի անխօսերգութիւնը (վոքալիզ) լացող մայրն է՝ տարագրութեան անապարհին իր կորսնցուցած զաւկին վրայ:

Սորախորհուրդ երկ մըն է «Մահ» սիմֆոնիկ պոեման (1978), ներչնչուած Ա. Բասակեանի համանուն գրութենէն: Համեմատաբար սկզբնական այս գործը առաւելապէս պատ-

կերպին է, ուր գրելաձևի խիստ հնարամիտ միջոցներով, Հեղինակը ստեղծած է բազմամարմին «Մահ»ի կերպարներ՝ մերթ ծաղրող, շարախինդ, մերթ ահաբեկող՝ արտայայտուած «ճշացող» տարահնչիւն ուղղահայեաց դաշնեակներու (ազօռ) շարահիսուիթեամբ: Կոթողերգութիւն, թէ մահնչիւնակերտում - մահի ամէնուրեքութիւն, մահաշունչ ճնշող զանդեր, մահասարսուռ լուսիւններ, մահաշրջիկ հիծածանքներ՝ տրուած փայտա-պղնձեայ փշուոր նուագարաններու շքեղ հիսուածքներով, մահասիւռ մթնոլորտ, մահաբեր ահազանդեր, մահախոտով խունապներ, եւ, հիմնականօրէն՝ մահատարած նահատակները մեր 1915ի Յղեռնի: «Ապրիլ 24ը մշտավառ ներկայութիւն էր իր հոգիին մէջ: Ամէն երկի մէջ մի քանի կաթիլ ծորած է այդ կանթեղի խղէն, Տէր-Ձօրի անապատներու անպարագլծ, քայց կիզիչ ու քանկացած լուսիւնը վերածուած է, իւրաքանչիւր գործի մէջ, խտացած վրէժի եւ ցասումի, արեան կանչի...» (Հերմինէ Դեյլալեան): Արգարեւ, ինչպէս բնորոշած ենք սկիզբը, իր ստեղծագործական երթուղիին առանցքը եղաւ, սկիզբէն իսկ, Կոմիտաս-Յղեռն-արդիականութիւն երրորդութիւնը, որուն հաւատարիմ մնաց մինչեւ իր վերջին շունչը:


Մեր ունկնդրած «Մահ» սիմֆոնիկ պոեման կատարուած է գմայլելիօրէն «Նովոսիբիրսկի ակադեմական նուագախումբ»ին կողմէ, խմբավար՝ Ա. Քաձ (Katz):

Ցարութիւն Դեյլալեան կը մարմնաւորէ ներքին անդու պայքարի երաժշտա-ողբերգական խմորումներու պայթուցիկ արտայայտութիւնը: Տ. Դեյլալեան իրեն վիճակուած սեւ ու դաժան ճակատագիրը վերածեց ստեղծագործական լուսեղէն աղբիւրի: Ան օրինակելի է իր անտեսանելի եւ յարատեւ վերելքով, որուն ընթացքին, աննկուն կամքի եւ աննահանջ ճակատումի շնորհիւ, իր սեղը ապահովեց պատմութեան բեմին վրայ՝ նոր արժեչափեր ստեղծելով Հայ ստեղծագործութեան երկնակամարին:

Երեսնի քաղաքապետարանի որոշմամբ նոր Զէյթունի թաղամասի փողոցներէն մէկը, ուր ապրեր է Տ. Դեյլալեան 1947էն մինչեւ իր մահը, 1990, վերանուանուած է մեծ յօրինողին անունով (2001էն ի վեր):

Լոս Անճելըս

ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ



ՐԱԳԻՆ

«ՓՈՔՐԻԿ ԻՉԽԱՆԸ»

Անթուան Տը Սէնթ Էկզիպիէրիի «Փոքրիկ իշխան» անուն հռչակաւոր գործին հետագայ էջերուն արտագրուած գլուխը ունի զարմանալի պատմութիւն մը, սխալ ըսինք՝ ուղղակի առեւ-ծրածային բնոյթ մը, հայաստանեան առաջին թարգմանութենէն (1966) մինչեւ այս տարուան «Գրական թերթ»ի ընթերցողներուն ուշադրութեան յանձնուած խնդրոյ առարկայ հատուածը:

Պարզ հետաքրքրութեան համար բացինք մեր տրամադրութեան տակ գտնուող «Փոքրիկ իշխան» ին նորագոյն հրատարակութիւնները, Կալիմարի 1999ին լոյս ընծայած Ֆրանսերէնը, ինչպէս նաեւ անգլերէն հրատարակութիւնը (1995), որունց մէջ գուր փնտռեցինք հայրենի գրականութեան ծանօթ անուններէն Սաղաթել Յարութիւնեանի թարգմանած «Փոքրիկ իշխան» էն (1966) դուրս մնացած հատուածը:

1966ին Նայաստանի մէջ տիրող գրական բարբերուն... «մութիւն» տակ դիտին է հասկնալ տունայ հատուածին յապաւման շարժառիթը, միակուսակցական համակարգին մէջ կուսակցութիւններու մասին կը խօսուի հոն, տարբեր մտայնութիւններ հանդէս կու գան, տեղի կ'ունենան բախումներ, որոնք երբեք չէին կրնար տեղ գտնել այն օրերու ինքնագիր թէ թարգմանական գործերուն մէջ, բայց հարցը նոյն հանգամանքներուն առկայութեամբ իր լուծումը չի գտներ այս պարագային ու հարցումը կը մնայ ուժի մէջ:

- Սաղաթել Յարութիւնեան ո՞ր հրատարակութենէն թարգմանած է այս հատուածը, որուն հետքը դժուար եղաւ մեզի գտնել ֆրանսերէն եւ անգլերէն հրատարակութիւններուն մէջ:

Ստուգումը անլի հաւաստի դարձնելու համար, մենք ֆրանսերէնին ու անգլերէնին հետ համեմատեցինք նաեւ անուանի թարգմանիչ Կարայիս Սուրէնեանի «Պսակ թարգմանութեան» (2001) անուն հատորին մէջ զետեղուած «Փոքրիկ իշխան» ին հետ (էջ 241-310), բայց խնդիրը դարձեալ մնաց խնդրական փուլին մէջ:

Ուրեմն՝

Սեղանի վրայ ունինք չորս գործ, «Փոքրիկ իշխան» ին ֆրանսերէնը, անգլերէնը, Սաղաթել Յարութիւնեանի թարգմանութիւնը եւ Կարայիս Սուրէնեանի թարգմանութիւնը:

Որոնք, թարգմանչական նրբերանգները չհաշուած, հարագատօրէն կը կրկնեն գիրար, նոյն ատեն ստիպելով մեզի կրկնել նոյն հարցումը:

• Ասղաթել Յարութինեան որ տարբերակէն կատարած է իր թարգմանութիւնը, որ 1966ին լոյս ընծայած հատորէն դուրս մնացած է «Գրական թեոր» ին մէջ հրատարակութեան տուած հատուածը, որուն պատահած դժբախտ ճակատագրին համար հրապարակաւ ներողամտութիւն կը հայցէ:

«Բագին» երախտապարտ պիտի ըլլայ այն անձին կամ անձերուն, որոնք կրնան լոյս մը նետել մեր ճիգերով անկոյծ մնացած այս հարցին:

«Փոքրիկ իշխան»-ը իր յայտնութենէն սկսեալ միայն ֆրանսական գրականութեան չպատկանեցաւ, բոլոր ճշմարիտ գործերուն պէս պատկանեցաւ զիր ու գրականութիւն ունեցող բոլոր ժողովուրդներուն, ընդ որս էլ մեր ժողովուրդին, որուն ընթերցող տարրը հարազատ լեզուով թէ թարգմանաբար անպայման կարդացած է փոքրերուն անունով մեծերուն հասցեագրուած այս յոյժ արժէքաւոր ստեղծագործութիւնը:



SAINT-EXUPÉRY

Il était un homme complet. Il y en a peu, mais lui en était un, et naturellement, sans le vouloir, par talent naturel. Son visage était complet : à la fois sourire enfantin et séneux d'un savant; héroïsme discret et fantaisie spontanée; beauté de l'œil et souplesse du corps; compétence en technique, en sport, en poésie, en politique, en morale, en camaraderie, en élégance d'âme. C'était toujours un événement que de lui semer la main. On l'apercevait, on l'abordait, on s'emplissait d'idées nouvelles de sentiments durs, et l'on était heureux. Ici se présentait cet homme unique. Il faut bien se rendre compte que nous vivions toujours, avec lui, dans ses bruits et dans ses couleurs, une page de légende de France, une de ces pages que nous retrouverons plus tard dans les almanachs, sur les murs des mairies et dans le tiroir des commodes exilées. Quand nous serons bien vieux, devisant et filant nos souvenirs les mieux tournés, nous penserons au rude visage de notre Tonio, drapé dans son lyrisme bon enfant et circonvenu d'essaims mécaniques, d'avions-lyres... Saint-Ex, c'était toujours un ambassadeur de la création du monde qui nous offrait une chance de plus. Pour ceux qui le lisent dans les familles, dans une chambre d'étudiant, sur un champ de bataille, en solitude, il est resté de lui un grand passage d'anges sur la page blanche, sur la première page blanche de nos vies fragiles, possibles encore, qui tremblent cependant de connaître une mort moins pure que la sienne.

Léon-Paul Fargue (Confluences, 1947).


ՄԱՂԱԹԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԹԱՐԳԱՆԻՅԵ ՆԵՐՈՅՈՒԹԻՒՆ
ANTOINE DE SAINT-EXUPÉRY

Է ԽՆԴՐՈՒՄ

Le Petit Prince

Ներողութիւն եւ խնդրում ընթերցողից ցաւալի բացթողման համար: Այնքան լիցիւզիայի «Փոքրիկ իշխանը» հրատարակելիս՝ զրոյսից դուրս է մնացել մի անբողջ գլուխ: Հասարակ չգիտեմ դա ի՞նչ մեղքով է եղել, թէ՛ հրատարակիչների: Բայց ներողութիւն ե՛ս եւ խնդրում: Յիշո՛ւմ էք, Աշխարհագրագէտի մոտորակից հետահայիս, Փոքրիկ իշխանը լինելով վարհականի վերջին խօսքերը. «Այցձե՛րք Նրկիր մայրամուտը, բոլորովին համբոս ունի»: Դրանից յետո՛ւ, ինչ որտէ՛ս Նրկիր մոտորակի եւ նախքան անապատը, ընկնէ՛ք վայրէջք կտրարեց մարդանկազմը: «Հ» կէտում: Հէնց այս պահին էլ բաց է բողմուկը գրքում: Երբ հազար ներողութիւն խնդրելով, ուզում եմ ներկայացնել ընթերցողին:



folio

Մ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՆ. ՏՐ ՍԷՆՔ ԷԿԳԻԱՎԵՐԻ

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԻ

ԱՆՅԱՅՏ ԱՐԿԱԾԸ

Անթափանց խաւար էր ամէնուր: Փոքրիկ իշխանը չգիտէր. թէ ուր է ընկել եւ ինչ է սպասում իրեն: Մի քիչ վախենում էր: Ուզեց-չուզեց կը վախեննաս, երբ շուրջդ այնքան մութ է, որ ոչինչ չես տեսնում եւ չգիտես. թէ ինչ է քեզ շրջապատում: Փորձեց տեղաշարժուել, բայց դէմ առաւ սուր-սուր, ճկուող բաների, որոնք օտոն էին ու խոնար: Երկար սպասեց այդպէս: «Վերջապէս,- մտածեց նա,- այս անտէր մոլորակի վրայ արեւ պիտի ծագի». թէ՞ ոչ: Կամ մի լապտերավառ չի՞ գտնուի, որ դոնէ լապտեր վառի»: Սա նրա վերջին մտածմունքն էր, եւ նա, երկար թոփռից յոգնած, ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս քուն մտաւ:

Երբ արթնացաւ, արդէն լոյս էր: Տեսաւ, որ ընկած է սուր-սուր, բարձր թփերի մէջ, իսկ շուրջը Հսկայական ծառեր կան: Փոքրիկ իշխանն անմիջապէս որոշեց, որ դրանք բաղաբաններ են: «Ինչքան ծոյլ են այս մոլորակի բնակիչները: Մի՞թէ կարելի է թոյլ տալ, որ բաղաբաններն այսքան մեծանան: Հարկաւոր է դրանք ոչնչացնել այն ժամանակ, երբ նոր-նոր ծիւեր են տալիս: Թէ չէ, պարզ է, Հիմա այնուս ոչինչ անող չեն կարող: Ես ամէն օր արմատախիլ էի անում իմ բաղաբանների ծիւերը, դրա համար էլ այսքան չէին մեծանում», - մտածեց Փոքրիկ իշխանն ու թփերի միջով առաջ գնաց: Քիչ անց նա դուրս եկաւ թփերից եւ բաղաբաններից ազատ մի տեղ: Հողն այստեղ Հարթ էր ու պինդ, քայլելը Հեշտ էր, ինչպէս իր մոլորակի վրայ, բայց այստեղ էլ նա դէմ առաւ քարէ Հսկայական մի պատի: Գլուխը բարձրացրեց, բայց պատը կարծես թէ վերջ չունէր, մխրճուած էր երկնքի կապոյտի մէջ եւ վրան էլ փայլող խոռոչներ կային: Խեղճ Փոքրիկ իշխանն առաջին անգամ էր չէնք տեսնում, այն էլ այսքան մեծ, էլ ո՞նց չզարմանար: Հետաքրքրուած, նա մօտեցաւ չէնքին եւ դէմ առ դէմ հանդիպեց մի մարդու, որը լուրջ ղէմքով ցոյց կանգնած էր դրան մօտ: Սկզբում նա վախեցաւ այդ խոժոռադէմ մարդուց, բայց յետոյ նկատեց, որ մարդը ուշադիր նայում էր Հեռուն եւ իրեն իսկի չէր էլ տեսնում: Փոքրիկ իշխանը մարդու ոտքերի արանքով սողոսկեց կիսաբաց դռնով

ներս եւ յայտնուեց մի երկար միջանցքում: Յետոյ նա նկատեց գորգապատ աստիճանները եւ սկսեց աստիճաններով արագ վեր բարձրանալ: Դէ մոլորակից-մոլորակ թռչող Փոքրիկ իշխանի համար դա այնքան էլ դժուար չէր:

Երկար թափառեց նա այդ իր համար տարօրինակ, անսովոր վայրում: Աճէն ինչ այստեղ նրա համար նորութիւն էր: Յարկից յարկ բարձրացաւ, մտաւ միջանցքից միջանցք: Երբեմն նրան այս ու այն կողմ շտապող մարդիկ էին հանդիպում, սակայն Փոքրիկ իշխանին չէին նկատում: Նրանք շատ լուրջ դէմք ունէին եւ հազիւ թէ նկատէին Փոքրիկ իշխանի նման մի փոքրիկ էակի:

Մեծուպէս նա ընկաւ մի մեծ, շատ մեծ սենեակ: Այդ հսկայական սենեակի հետաւոր պատի տակ մի մեծ, շատ մեծ սեղան էր դրուած, իսկ սեղանի ետեւում նստած էր Մարդը, որ մատր ճակատին դրած նայում էր առաստաղին, իսկ միւսով՝ դիմացի պատին: Ինչ Հետաքրքիր է, - մտածեց Փոքրիկ իշխանը, - տեսնես ինչքան կը նստի այսպէս»:

Ու մարդն իսկապէս երկար մնաց այդ դիրքում: «Ձիւնի՛ արձան է», - մտածեց Փոքրիկ իշխանը, բայց շուտով համոզուեց, որ սխալւում է: Մարդը մատը ճակատից հեռացրեց, նայեց սեղանին ու եռանդով սկսեց վերադասաւորել սեղանի վրայի իրերը՝ թանաքամանը, մատիտների տրցակը, թղթապանակները եւ քառական մեծ զանգը: Երբ աշխատանքը վերջացրեց, նորից մատը, ի հարկէ այս անգամ միւս ձեռքի մատը, դրեց ճակատին եւ այս անգամ հսկողութեան տակ առաւ առաստաղն ու միւս պատը: «Այս մարդը, - մտածեց Փոքրիկ իշխանը, - աւելի լուրջ է, քան քիչ առաջ Հանդիպածներս... Տես, թէ ինչքան ուշադիր է նայում առաստաղին»: Յետոյ մարդը նորից ձեռնամուխ եղաւ սեղանի իրերը վերադասաւորելուն: Այսպէս կրկնուեց մի քանի անգամ, մինչեւ որ Փոքրիկ իշխանը ձանձրացաւ եւ որոշեց խօսել այդ Հետաքրքիր մարդու հետ: Նա արդէն իր այցելած քոլոր մոլորակների բնակիչների հետ զրոյց էր ունեցել: Խօսել էր թագաւորի, լապտերաժառի, Հարրեցողի ու պարծենկոտի հետ, զործարար մարդու ու աշխարհագրագետի հետ: Հետաքրքիր էր, թէ այս մէկն ինչ կ'ասի: Նա մօտեցաւ սեղանին եւ քաղաքավարի ասաց.

- Բարեւ ձեզ...

Պատասխան չեղաւ:

Փոքրիկ իշխանը տեղը փոխեց եւ աւելի բարձրաձայն կրկնեց.

- Բարեւ ձեզ...

Դէ նա շատ քաղաքավարի տղայ էր, հօ չէր կարող առանց բարեւելու միանգամից խօսակցութիւն սկսել ու որոշելով, թէ մարդը լաւ չի լսում, այս անգամ արդէն ճչաց.

- Բարեւ ձեզ...

- Հասկացանք,- յանկարծ պայթեց լուրջ մարդը,- ինչ ես անընդհատ շուրջս պատում ու գողգողում, չե՞ս տեսնում, որ մտածում եմ: Քեզ ո՞վ ներս թողեց:

- Ոչ ոք, ես ինքս ներս մտայ,- ձայնը ցածրացնելով ասաց Փոքրիկ իշխանը:

- Պէտք է, որ քեզ ներս լքողն էին,- ասաց լուրջ մարզն ու ձեռքը տարաւ դէպի սեղանին զրուած գանգը, բայց Փոքրիկ իշխանը մի այնպիսի Հարց տուեց, որ նա ձեռքը ակամայ ետ քաշեց:

- Սա ո՞ր մոլորակն է:

- Ի՞նչ...- զարմացաւ մարդը:

- Ասում եմ, սա որ մոլորակն է:

- Դու օտարակա՞ն ես,- Հարցրեց մարդը:

- Երեւի... սա ո՞ր մոլորակն է:

- Տարօրինակ մարդ ես եղել... ինչքան էլ փոքր ես... եթէ օտարերկրացի ես, քո մասին պիտի յայտ լինէր: Յայտ լինելու դէպքում ես քեզ Հանդիսարութեամբ կ'ընդունէի:

- Սա ո՞ր մոլորակն է:

Այսպէս էր Փոքրիկ իշխանը, մի Հարց որ տալիս էր, մինչև պատասխանը չտանար, չէր Հանգստանում:

- Ուղում ես ասել, թէ ո՞ր երկիրն է:

- Լսա, ո՞ր երկիրն է:

- Աճենալաւ,- դո՛ւ պատասխանեց լուրջ մարդը:

- Ա՜... Դու թագաւոր ես:

- Դրա նման մի բան... Բայց ես ընտրուած եմ:

- Ո՞վ է ընտրել:

- Փողովուրդը... Դու նրանց չե՞ս Հանդիպել:

- Ոչ, ես ուղիղ ձեզ մօտ իջայ:

- Իջա՞ր... ինչպէ՞ս թէ իջար: Ինձ մօտ առանց անցաթղթի-թի չի կարելի իջնել: Սպասիր, ես Հիմա քեզ բռնել կը տամ:

- Ինչ բան է անցաթուղթը:

- Լսիր, դու Հօ երկնքից չե՞ս ընկել:

Ճիշդ այդպէս, երկնքից: Այնպարհազրագէտի մոլորակից... Իսկ ի՞նչ բան է անցաթուղթը:

- Ի՞նչ մոլորակ, ի՞նչ աշխարհազրագէտ... ես այդպիսի մոլորակ չգիտեմ, մենք չենք անցել. դու երեւի Հնարում ես: Ի՞նչ է ուզածդ, ասա: Դու շատ տարօրինակ Հպատակ ես:

- Ես Հպատակ չեմ: Մի թագաւոր կար, որ իր մոլորակի վրայ մենակ էր: Բոլորովին Հպատակ չունէր: Ուղում էր, որ մնամ իր մօտ, Հպատակ դառնամ, բայց ես չմնացի: Ինչ է դո՞ւ էլ Հպատակ չունես:

- Ոնց չէ, ունեմ... շատ, շատ Հպատակներ ունեմ, մօտ չորս միլիոն:

- Ջորս միլիոն... էն ինչո՞՞ թագաւորը ոչ մի Հպատակ չունէր, իսկ դուք Հրէն, չորս միլիոն ունէք: Արդար բան չէ:

- Այդպէս էլ պիտի լինի՝ շուկայական յարաբերութիւններ են, մէկը շատ կարող է ունենալ, միւսը՝ ոչինչ: Նորմալ բան է: Աս...

Այդպէս էլ Փոքրիկ իշխանը, մի բան որ չէր Հասկանում, «աս» էր անում: Քաղաքավարութեան Համար: Յետոյ նա աւելացրեց. - Ի՞նչ ես անում այդքան Հպատակը:

- Կառավարում եմ, ինչ եմ անում:

- Ձգիտեմ... Իմ մոլորակի վրայ մի ծաղիկ կար, երեք Հրաբուխ՝ երկուսը գործող, մէկը Հանգած: Յետոյ կային բառարարի ծառեր: Ես Հազիւ էի այդքանը կառավարում: Մանաւանդ բառարարի ծառերը՝ այստեղ արմատախիչ ես անում, այնտեղ նորից դուրս են դալիս:

- Ճիշտ եւ ճիշտ ընդդիմադիր թերթերի նման, մէկը փակում եմ՝ տասը ժուճ եմ:

- Ժամանակին պիտի արմատախիչ անել. որ ամբացան՝ կորած ես:

- Ճիշտ է, որ ամբացան կորած ես: Դէ, ես էլ քնած չեմ:

- Եւ դեռ չարաթը մէկ պէտք է մաքրէի Հրաբուխների խառնարանները: Իսկ ծաղիկը... օ՛, ծաղիկը շատ Հոգատարութիւն է պահանջում... մաքրու նման: Այնպէս որ, ես Հազիւ էի գլուխ Հանում, դու ո՞նց ես գլուխ Հանում չորս միջիտնից:

- Ոչ մի դժուարութիւն... Իմ Հպատակներին Հեշտ է կառավարելը... Կարելի է ասել՝ ես ոչինչ էլ չեմ անում, իրենք են ամէն ինչ անում: Դէ, իրենց Համար ապրում են, էլի՛:

- Ինչպէ՞ս են ապրում:

- Լաւ... այսինքն, իրարից պարտք են անում ու ապրում են, Հօ չեն մեռնում:

- Իսկ դու նրանց Համար ոչինչ չե՞ս անում, - մտախոհ Հարցրեց Փոքրիկ իշխանը:

- Մտածում եմ: Օրական մի ժամ ես նրանց մասին մտածում եմ:

- Իսկ մնացած ժամանակը ի՞նչ ես անում:

- Էլի մտածում եմ, բայց ոչ նրանց Համար... մի ժամը նրանց լիովին բաւարարում է:

- Իսկ մնացած ժամանակը ի՞նչ ես անում:

- Սպասում եմ... Գուցէ իշխանաւորներին մի բան է Հարկաւոր: Գայիս խորհրդակցում են ինձ Հետ... Բայց դա չիլ է պատահում: Յետոյ, էլի մտածում եմ:

- Ինչի՞ մասին ես մտածում:

- Իմ մասին... Եթէ ես իմ մասին չմտածեմ, ուրիշ ո՞վ կը մտածի:

- Այդ էլ ճիշտ է: Երեւում է, որ դու լաւ թագաւոր ես:

- Ասացի թագաւոր չեմ, ես ընտրուած եմ:

- Իսկ ի՞նչ է նշանակում ընտրուած:

- Ինչպէս ասեմ... Թագաւորին որ մի անգամ օծում են, նա յաւիտեանս յաւիտենից մնում է թագաւոր... այսինքն, որ մեռ-

նում է, նրա ժառանգը գրաւում է իր տեղը... Իսկ իմ դէպքում Հինգ տարին մէկ նոր ընտրութիւններ են անում: Հասկանո՞ւմ ես. սա այնքան էլ պարզ բան չէ, մի-երկու խօսքով չեմ կարող բացատրել:

- Իսկ ինչո՞ւ չորս միլիոնից յատկապէս քեզ ընտրեցին:

- Հաւատացին՝ ընտրեցին: Ծուռով ժամկէտս լրանում է, նորից պիտի ընտրեն:

- Իսկ եթէ չընտրե՞ն:

- Կ'ընտրեն... նրանք այլընտրանք չունեն:

- Ինչպէս է որ...

- Ծառ պարզ, մինչեւ ընտրութիւնների ժամանակը գայ՝ այլընտրանք չեն ունենայ: Ուզեն-չուզեն՝ ինձ վրայ պիտի կանգ առնեն, քանի որ ամենախելօքը ես եմ:

Փոքրիկ իշխանն այս խօսքերը լսելիս յիշեց երկրորդ մուրակի պարծենկոտին, բայց ոչինչ չասաց: Չասաց, բայց մտածեց: Ախր, երկրորդ մուրակի վրայ բացի այդ մէկից ուրիշ մարդ չկար եւ, բնական է, որ նա կարող էր իրեն Համարել ամենա-ամենա-ամենալաւը: Իսկ այստեղ, Հրէն ինքն է ասում, որ չորս միլիոն մարդ կայ: Ձէ,- մտածեց Փոքրիկ իշխանը,- այստեղ ինչ-որ մի բան այնպէս չէ: Այսպէս մտածեց, բայց ասաց.

- էլ ինչի՞ մասին ես մտածում, ամէն ինչ կարգին է, ուրեմն քեզ էլ կ'ընտրեն:

- Մտածելու բան կայ, այգպէս մի՛ ասա: Ընդդիմութիւն կայ, կուսակցութիւններ կան: Այնպէս որ, անելու բան դեռ չատ ունեմ:

- Ի՞նչ են կուսակցութիւնները, ինչի՞ Համար են:

- Խանգարելու... Նրանց գործը խանգարելն է: Խանգարում են կառավարութեանը, խանգարում են ինձ: Նրանք կարող են դեռ շատ բան փչացնել... Բայց ոչինչ, ես էլ քնած չեմ: Մինչեւ ընտրութիւնները ես նրանց Հախից կը գամ:

- Այդ ինչպէ՞ս:

- Մէկիկ-մէկիկ:

- Այդպէս աւելի յարմա՞ր է, աւելի Հե՞շտ...

- Այդպէս մի՛ ասա, ոչ մի բան Հեշտ չի լինում: Դեմոկրատիա կայ, բան կայ:

- Իսկ դեմոկրատիայի Հախից չե՞ս կարող գալ...

Լուրջ մարդն աւելի լրջացաւ եւ ուղիղ նայելով Փոքրիկ իշխանին՝ Հարցրեց.

- Լսիր, չի՞նի՞ դու ինձանից խօսք ես քաշում:

- Ի՞նչ է նշանակում «խօսք քաշել»:

- Տեսնում եմ, որ դու իսկապէս ուրիշ մուրակից ես: Ինչ-որ շատ ես տարօրինակ... Մօտ արի, ուզում եմ քեզ աւելի մօտիկից դիտել:

Փոքրիկ իշխանն այնքան մօտեցաւ, որ սեղանը ծածկեց նրան:

- Ձեզաւ, ես քեզ չեմ տեսնում: Աւելի լաւ է բարձրացիր սեղանի վրայ, կը գրուցենք... Բայց սպասիր, հօ գէնք լունե՞ս...

- Ի՞նչ բան է գէնքը:

Լուրջ մարդու գէնքին ժպիտի նման մի բան երեւաց:

- Դէ լաւ, բարձրացիր:

Փոքրիկ իշխանը մի ակնթարթում յայտնուեց սեղանի վրայ, ու կանգնեց թանաքամանի ու զանգի արանքում:

- Ի՞նչ էլ ճարպիկ ես, այդ ո՞նց բարձրացար... Ահա թէ դու ինչպիսին ես, հինա նոր լաւ տեսնում եմ քեզ: Այդպէս... լսի՞ր, դու իսկապէ՞ս օտար մոլորակից ես եկել, թէ՞... Ապա- սիր, դու հօ թմբանիւթերի բիղնէսով շե՞ս զբաղում:

- Ի՞նչ է թմբանիւթը:

- Կամ գուցէ Հետախույզ ես:

- Ի՞նչ է անում Հետախույզը:

- Պաղտնիքներ է տանում:

- Ի՞նչ է տանում:

- Դա արդէն ինքը գիտի...

- Իսկ դուք գաղտնիք լա՞տ ունէք:

- Շատ...

- Մի քիչ գաղտնիք ինձ չէ՞ց տայ...

- Ահա դու ինձ ձեռ ես առնում: - Լուրջ մարդը ձեռքը մեկ- նեց, որ բռնի Փոքրիկ իշխանին, բայց սա մի ակնթարթում յայտնուեց պատուհանի քիւին:

- Կ'ընկնես, ի՞նչ ես անում,- անհանգստացաւ լուրջ մարդն ու ձեռքը իսկեց զանգին:

Անմիջապէս սենեակ նետուեցին չորս հոգի:

- Բռնէք դրան, դա լրտես է,- որոտաց լուրջ մարդը՝ ցուց տալով Փոքրիկ իշխանին:

Չորսն էլ նետուեցին դէպի պատուհանը, բայց Փոքրիկ իշխանը սլացաւ դէպի երկինք ու ձուլուեց երկնի կապոյտին:

Ահա այս հանդիպումից յետոյ էր, որ Փոքրիկ իշխանը վայրէջք կատարեց Մահարա անապատում եւ հանդիպեց օղա- չուին, այսինքն՝ Մէնթ-էկզիպէրիին:

Մնացածն՝ ինչպէս գրքում:

ՍԷՆԹ ԷԿՉԻԻ ՊԷՐԻ



Հղճարներ

«ՈՒՂՂԱՓԱՌՕՐԷՆ»...

Հայրենիք-Սփիւռք երկրորդ խորհրդածողովին քննարկելու առիթով նաեւ ուղղագրութեան ցաւոտ Հարցը, որուն մասին արտասանած Սիլվա Կապուտիկեանի խօսքը երեւցաւ Հայրենի «Գրական բերք»-ի ներկայ տարուան թիւ 21ին մէջ, «Ուղղագրութեանը չվերաբերուեմք ուղղափառօրէն» վերատառութեան մը տակ:

Ընդունելով Հանդերձ, որ «Միասնական լեզուն եւ ուղղագրութիւնը մեծապէս կ'օգնէր աշխարհասփիւռ ժողովրդի համախըմբմանը», քանաստեղծուհին իսկոյն կ'աւելցնէ.

«Սակայն պէտք է իրատես լինել: Ձի կարելի միանգամից, վերելից երամանով փոխել իրադրութիւնը, որը հաստատուել է տասնամեակներով, փոխել առանց լրջօրէն մտածելու դրա ետեւանմանի մասին»:

Ուրեմն ի՞նչ:

Դարերով Հաստատուածը-դասականը-կարելի է փոխել՝ առանց մտածելու «դրա Հետեւանքների մասին», իսկ տասնամեակներէ ի վեր ու Արագածի փէշերէն մինչեւ Հեռուոր ծագերը երերացողը-Արեղեանականը-կարելի չէ հրամանով փոխել:

Յետոյ՝ ո՞վ հրամանի պայման դրած է, որ առարկութիւն կ'ըլլայ այդ մասին:

Պայմանը Հրամանագրով խեղաթիւրուածին սրբազրութիւնն է, եւ որքան մենք գիտենք ձեւական նախաձեռնութիւններէն աւելի սրբազրութեան ձեւը պիտի գտնեն Հայաստանի եւ Սփիւռքի խորահմուտ Հայերէնագէտները, Համադրութեան սկզբունքի մը վրայ թիւրեղացնելով ամէնուն ընդունելի ուղղագրական Համակարգ մը:

Սիլվա Կապուտիկեան կը խօսի Հասանական Հետեւանքներու մասին, բայց արդէն Հրամանագրով ստեղծուած Հետեւանքները իրենք չե՞ն, որ կը ստիպեն Հայ մարդուն, որ ձայնը բարձրացնէ՝ ըսելու Համար, որ կը բաւէ, արդէն յագեցած ենք Հետեւանքներուն դատնութիւններէն եւ ութսուն տարիներէ ի վեր փնտրուած դարմանը պէ՛տք է գտնուի այլեւս:

Հրամանագրով պարտադրուածը իր առաջին մէկուկէս տասնամեակը Հազիւ բոլորած անդրադարձաւ իր առաջացուցած անհեթեթութեան ու անօթին, իր դրացոյցներուն, Ոտեաններուն ու ազգի-ազգի միւս անհեթեթութիւններուն, եւ 40ական թուականներուն, դեռ Արեղեանի ողջուցը, չափով մը բարեփոխութեան ենթարկեց «աղէտալի Հետեւանքները», ընդհանուր գրհունակութիւն մը առաջացնելով՝ Տասնամեակներով երեւրացողը ինչո՞ւ աղէտալի Հետեւանքներ պիտի ունենայ, եթէ

40ական թուականներու վերականգնման ձեռնարկին օրինակով սրբազրուին իրրեւ ճիշդ պարտադրուած միւս վրէպները:

Սպասելի է, որ մեր մտաւորականութիւնը տուեալ օրինակով մօտենայ Հարցին եւ ոչ թէ բարեփոխութեան պահանջը կապէ «աղէտալի Հետեանքներու» ուրուականին:

Սոյն խօսքին շարունակութեան մէջ կիրարկուած տրամաբանութիւնը աւելի պայծառ բնոյթ մը չունի, երբ Սիլվա Կապուտիկեան Հանդիսաւոր լրջութեամբ մը կը գրէ.

«Իայց եկէ՛ք սքափ նայնե՛ք իրականութեանը: Վերջ ի վերջոյ, նոր ուղղագրութիւնը չի խանգարել, որ «Ես իմ անուշ Հայաստանի»ն, «Անյոցի զանգակատուն»ը, Նիրազի եւ Հայաստանի միւս բանաստեղծների հայրենասիրական գործերը հասնեն Ափիոսի եւ դառնան հայապահպանման կոուաններ, ինչպէս եւ ինձ ուղղագրութիւնը չի խանգարել, որ հայրենի մարդիկ գիտնան ու սիրեն Մանուրին, Համաստեղին, Մուշեղ Իշխանին, Ծառուկեանին, Վահի Վահեանին»:

Երեւութապէս երկու ուղղագրութիւն ունենալու մեր զրօք-քաղցրութիւնը երեւի դժբախտութիւն չի Համարեր Սիլվա Կապուտիկեան, քանի որ եղած են՝ թող մնան, կ'ըսէ զարմանալի Հաշտուողականութեամբ մը, խորքին մէջ, սակայն, անգիտակցաբար կամ գիտակից ծածկամտութեամբ մը կը պաշտպանէ մէկը, հրամանագրով պարտադրուած Արեղեանականը, երբ կ'ըսէ. թէ Հայրենիքի մարդիկ սիրեցին դասական ուղղագրութեամբ գրած Ծառուրի եւ միւսներուն գրականութիւնը: Շատ չէ՞ արդեօք այս արհամարհանքը Հայ մարդուն յիշողութեան Հանդէպ: Հայրենիքի մարդիկ գիտցան ու սիրեցին յիշեալ Հեղինակներուն գործերը դասակա՞ն ուղղագրութեամբ, թէ դասականը Արեղեանական «սխալերէնով» տակնուվրայ ընելէ ետք միայն: Հարցումը պատասխանի չի կարօաիր: Մէջտեղ են Հատորները կամ անոնց գրութիւնները հիւրընկալած թերթերը:

Դառնանք «Հայապահպանման կոուաններ» դարձած միւսներուն:

Այս կողմի բեմերէն լսուած քանի մը բանաստեղծութիւններու առաջացուցած Հայրենասիրական ապրումները երբեք այնքան վստահելի ապացոյցներ չեն կրնար նկատուիլ, երկարձգելու Համար հրամանագրով պարտադրուած ուղղագրութեան առաջացուցած աղէտը: Ոչ որ կ'ուրանայ Զարենցի, Սեւակի, Շիրազի եւ միւսներուն բանաստեղծութիւններէն ըխած Հայրենասիրական նպաստը: Ասոնք, սակայն, առանկաբար բեմերէն Հասան մարդոց կամ, Սփիւռքի պարագային, թերթներու ու դասագիրքերու մէջ դասական ուղղագրութեամբ մատչելի դարձան: Հետեւաբար, չենք կրնար աչք դոցել հրամանագրով պարտադրուածին պատճառած խզումին դիմաց:

Փորձին ու փորձառութեանց օրինակները չատ են: Ազգազրութեան պատճառով Հազարներ ու բիւրեր աչք մը Հազի նետած Հայրենի հրատարակութիւններուն վրայ, դէն չարտեցին զանոնք եւ ով գիտէ ինչ գեղեցկութիւններէ զրկուած մնացին, ինչ ազգեցութիւններու եւ Հակազգեցութիւններու տարերքներէն որբացան իրենք՝ ու իրենց կարգին զրկեցին յօգուածագիրներն ու Հեղինակները Հակազգեցութեան կեցուցիչ բարիքներէն: Ա՛յ, Հոս ու Հոն արտասանուած կամ դասական ուղղազրութեամբ արտագրուած քանի մը բանաստեղծութիւններու օրինակով կարելի չէ չքմեղանք մը ապահովել ուխտանամեայ աղէտին, որ կոչուեցաւ Արեղեանական ուղղազրութիւն:

Մնայ որ, ըստ Միլվա Կապուտիկեանի պարզած տրամաբանութեան, ուղղազրութիւն ըսուած գիտութիւն մը գոյութեան իրաւունք չէ ունեցած եւ չունի, ու ամէն ինչ կը վերջանայ Հոն, ուր տուեալ գրութեան բովանդակութիւնը կը Հանսի բնթերցողին: Արեղեանական «ախպերէնը» բարձրաձայն կամ լուռ Համարումներով պաշտպանելու իր փոյթին մէջ, Միլվա Կապուտիկեան կրնար աւելի մերձաւոր եզրեր գտնել ինքն իրեն եւ Հեռու մնար ձեռամբ Հրսած նման սարդոստայններէն:

Այն տպաւորութիւնը կը ստացուի տակաւին, որ իր խօսքին մէջ Միլվա Կապուտիկեան Հիմնովին կ'անտեսէ ուխտուն տարիներու վրայ երկարած ու պարբերաբար բորբոքած վէճին բուն էութիւնը ու ըստ իրեն բնաւ նշանակութիւն չունի, եթէ Չարենցի ձեռքով գրուած «Ես իմ անուշ Հայաստանի»ի դասական ուղղազրութեամբ գրուած տասնհինգ բառերը դրուին Արեղեանական վանդակի պատկերներով, ողբանուազր դառնայ՝ ողբանվազ, բոյրը՝ բույր, անհերքնկայք՝ անհյուրընկալ, վէրքերը՝ վերքեր, ճամբան՝ մամփայ, եւ այլն:

Արեղեանական պատակտիչ տառերով կազմուած այս պատկերը կը թուի, թէ ոչինչ կ'ըսէ Միլվա Կապուտիկեանին եւ, ով գիտէ, թերեւս ոչինչ պիտի ըսէր իրեն, եթէ մէկը ելլէր եւ իր «Խօսք իմ որդուն»ը սեւով ճերմակի վրայ գրէր «Խօսք իմ որդուն», եւ կամ բանաստեղծական իր Հատորներէն մէկուն «Ինչպի խորքը լեռան» խորագիրը դարձնէր ու գրէր՝

«Ինչպի խօսքը լեռան»

Այս ուղղազրութեան կազմուած խօսքը մարդիկ մակերես չեն Հասկնար Հարկաւ, բայց այդպիսի խօսք մը կրնա՞յ խորք ունենալ, որ անուանի բանաստեղծուհին կը փորձէ մէկ կողմ չարտել ուղղազրական... խորքը:

Հնչական առումով Համահունչ է տարրեր գիրերով կազմուած *bodelere* եւ *paueiaire*, բայց կրնա՞յ ֆրանսացի մը տարբերութիւն չունել երկուքին միջև եւ առաջինին ներքեւ եւս ըմբոջանել «Չարի ծաղիկներ»ուն Համն ու բոյրը: Սովորական մահկանացուներուն տրամաբանութեան անգամ անյարիր է այս տրամաբանութիւնը, ըստ որում՝ էականը գրուածքին բո-

վանդակութիւնն է եւ բնաւ անհրաժեշտ չէ ուղղագրական հարցերով... Հարցեր բարձրացնել:

Խնդրոյ առարկայ խօսքին մէջ կիրարկած Սիլվա Կապուտիկեանի տրամաբանութիւնը շարունակութեան մէջ նոյնպէս զուրկ է ամուր Հէնքէ մը: Կարդանք.

«Իսկ եթէ միասնութեան ամենախուժկու գրաւականն է ուղղագրութիւնը, եսպա ինչպէ՞ս է, որ այդ ուղղագրութիւնը չի օգնել, որ միասնական դառնայ Ափիուֆը եւ տարբեր կուսակցութիւններն ու միութիւնները այս 70-80 տարիներ շարունակ չետականամ իրար ու մնան այդքան իրարամերձ»:

Մենք ստուգապէս չենք գիտեր, թէ միասնական ուղղագրութիւն մը ունենալու կարօտով տանջաւար մարդիկ այդ մէկուն նուաճումով յանկարծ ու ամէն տեղ միասնական դառնալու կախարդական բանալին գտած ըլլալու պատրանքով մը պիտի սկսին օրօրուի: Սիլվա Կապուտիկեան իր բարձունքին վրայ պէտք չէր լուրջի առնէր նման յայտարարութիւնները եւ լրջանար. վասնզի միասնական ուղղագրութիւն ունենալ երբեք չէ նշանակած ու չի նշանակեր ունենալ նաեւ միասնական մտածողութիւն, միասնական աշխարհահայեացք ու հոգեբանութիւն: Մարտահիւի պիտի ըլլար կեանքը, եթէ ամէն ինչ օգտապատուութեան սահմաններուն մէջ գիտէին մարդիկ եւ չանդրադառնալին. որ կան բաներ, որոնք խիստ անհրաժեշտ են, բայց յուկայական յարաբերութիւններու մէջ չեն մտներ: Յետոյ՝ պէտք չէ անտեսել պատմութեան վճիռները ու կոնակ դարձնել կենդանի վկայութիւններու: Չհաշուած պարբերաբար պատահած ճակատագրական պահերը, երբ տարբերութիւնները յանկարծ կը շնչուին ու տուեալ ժողովուրդը կը դառնայ մէկ, միւս բոլոր պարագաներուն փնտռածք, միապաղաղ միասնակութիւնը չէ. «բազմաբեզուն» ալիսականութիւնն է փնտռածք, բազմադանութիւնը: Սրինակը դարձեալ վերցնենք մեզի քիչ մը աւելի մօտ ֆրանսացիներէն: Ֆրանսացիները մէկ միասնական լեզու եւ միասնական ուղղագրութիւն ունին, բայց մէկ ու միասնական ազգ չեն բոլոր մարզերուն, իրենցմէ ոչ ոք կը մաղթէ, որ այդպիսին ըլլան, նոյն լեզուով ու ուղղագրութեամբ դրահուած՝ անոնք կը ճգնին արտայայտել իրենց բազմազանութիւնը: Այդ է իրենց խտէալը: Նոյն լեզուով եւ ուղղագրութեամբ օրհնութիւններ տեղայ, կամ վիճիլ իրարու հետ, կամ հայհոյել իրարու:

Մեր միտքը աւելի պարզ դարձնելու համար դիմենք աւելի պարզունակութեան ու ըսենք, որ ամէն ոք կը բաղձայ ունենալ ամբողջական Հայրենիք մը՝ ամբողջական Հայութեամբ, բայց այդ տիրացումէն ետք, միասնութիւնը երբեք պայման չէ, այն ատեն ամէն ոք իրաւունք ունի նոյն Հայրենիքին ամբախարիւխ հաստատման ու ժողովուրդին բարգաւաճման համար ունենալու իր սեփական տեսլականը: Այլապէս կը սկսի թշուառութիւնը, միօրինակութիւնը, չըսելու համար միապաղաղութիւնը, գորշութիւնը:

Հետաքրքրական պարագայ մը կայ, պարագաներ կան, զորս կարելի չէ անտես առնել ու շարունակ նուազել Արեղեանական ջութակին արդէն խոստոտ լարերուն վրայ:

Ներկայ դարու առաջին կէտերուն ապրած մեր ամէնէն պատկառելի մտաւորականները, Լուսաւորչի աստղին տակ գործած թէ Հայրենական աստղերուն կարօտով Հալումաշ եղածները, Թումանեանէն մինչեւ Եղիշէ արք. Գուրեան, ու Աճառեանէն մինչեւ Մխիթարեան Հայրերու Հայերէնագէտները, առանց՝ տասնեակ մը ուրիշ պատկառելիներ մերժելով մերժեցին դասական ուղղապարտութեան նուիրագործուած Համակարգը խախտած Արեղեանական չղլալիք «օրէնադրութիւնը», բայց պատմութենէն ու ճշմարտութենէն շերկընդ Համայնավարութիւնը, զինու գորութեամբ մարտի տուած միջոնաւոր ոճիւրներուն կարգին՝ կարմիր գօտիներուն մէջ մարտի տուաւ նաեւ ուղղապարական այս ոճիւրը, որուն Հետ եթէ օրին զլիսահակ Հաշտութիւն մը կըրեցին Հոն շնոր մեր զանգուածները, այսօր սակայն նման Հարկադրանքի մը տակ չեն գտնուիր անոնք եւ անըմբռնելի է ազատօրէն ծածանող Եռագոյնին տակ՝ Հաւատարիմ մնալ պատմութեան անդունդներուն մէջ նետուած Մուրճ-մանգաղին գործած աւերներուն...

Աւելի Հետաքրքրականը այն եղաւ տակաւին, որ կարմիր սակաւապետութեան տակ կազմուած կարգախօսները ուղիղ գծով կրկնող ու անգամ սրբազան իրաւունքները ծալած-մէկ կողմ դրած այն օրերու ուղեկիցները, ուղղապարտութեան պարագային կարմիր ուղիէն չընթացան բնաւ, այլ բացառաբար Հաւատարիմ մնացին դարերուն նուիրագործած օրէնքներուն, Հաւանաբար այն մտածումով, որ Արեղեանականը չի կրնար արմատանալ մարդոց մտածողութեան մէջ եւ ի չիք դարձնել սրբութեան կարգը անցած յաւերժադրոյմ դասականը:

Մեր ծանօթութեան սահմաններուն մէջ, բացառելով մէկ Հոգի, Կարմիր բանակի յաղթանակով եւ ներգաղթի իրակաւնութեամբ ոգեշնչուած պատանի բանաստեղծ մը, կրկնե՛նք, ազատ աշխարհի մտաւորականները երբեք չփորձեցին այդ խառնակենցաղ ուղղապարտութիւնը կիրարկել, մինչդեռ Հայրենի մտաւորականներուն մէկ մասը, անգամ Մուրճ-մանգաղի բռնութեան տակ երբեմն ու Մուրճ-մանգաղին չքացումէն ետք յաճախ, ուղիղ ճամբուն վերադարձը Հրամայական կը Համարէ եւ կը շարունակէ պայքարը բանի եւ գործով:

Նոյնն է նաեւ վերաբերումը Հայրենի մաւղոյ ներկայացուցիչներուն, որոնք Սփիւռքի գրողներուն յօդուածները անսխալօրէն լոյս ընծայելու յարգալիք վերաբերումին պէս, է՛ջ կը բանան նաեւ դասական ուղղապարտութեամբ գրուած Հայրենի դէմքերուն գրութեանց:

Այս կը նշանակէ, թէ ստեղծուած է ուղիղ ճամբան բռնած աննախապաշար դէմքերու Հոսանք մը, եւ սովորութեան ուժով սխալին կառչած-մնացած ըլլալու մտայնութեամբ խօսք առնող Միլվա Կապուտիկեանի եւ իր Համախոհներուն յորդորները շատ երկար կեանք մը չունին, չեն կրնար ունենալ...

Քաղին

ԴԱՌՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ...

Միշտ մաղթած ենք, որ ֆրանսացի շիկոյին, Լամարթի-
նին, Մալրոյին եւ Լոյն հասակը ունեցող գրական դէմքերուն պէս
պետական կառոյցներուն մէջ ժողովուրդները ունենան մտաւո-
րական դէմքեր, գիտնականներ, բանաստեղծներ, գրագէտներ,
այսինքն՝ խելքին հետ խղճմտանքի տէր տարրեր եւս, որպէսզի
արդարութիւնը թագաւորէ եւ մարդիկ Լուազ դժբախտ զգան
իրենք զիրենք այս դժբախտ մոլորակին վրայ:

Մշտահոյով այս մաղթանքը Հայաստանի երկրորդ հան-
րապետութեան օրօք մարմնաւորող տիպարներ ունեցանք, Լա-
խագահական, Լախարարական ու հրամանաւորական աս-
տիճաններուն վրայ, ամբողջ հինգ տարի, բայց Լոյն անձնա-
ւորումներէն բխելու սահմանուած ուրախութիւնը եթէ այլուր
հազուադէպօրէն վայելեցինք, գրական ճակատի վրայ նման
առիթներ բոլորովին պակսեցան մեր ժողովուրդին:

Ընդհակառակն:

Դիմացի էջերուն վրայ ընթերցողը պիտի տեսնէ արձակա-
գիր Ռուբէն Յովսէփեանի տխրօրէն ուրուագրած այդ տխուր
պատկերներէն մէկը, ու մեզի պէս դժուար պիտի հաւատայ, որ
իշխանական թախտերու տիրացած Հայաստանի գրողներու
միութեան անդամ իշխանաւորներուն ուղղակի թէ անուղղակի
գործած հակամշակութային արարքներուն, մանաւանդ գրողնե-
րու օրգաններէն մէկուն դէմ գործած արարքին, որուն նմանը
երբեք պիտի չուզէինք գործուած ըլլար իրենց հրահանգներով,
իրենց գիտութեամբ կամ մարտնչող մասնակցութեամբ:

Զարմանալի է, որ հակառակ փաստերու այս անհերքելի
առկայութեան, կան մարդիկ, որ սեւով ճերմակի վրայ կը գրեն,
թէ նման վանտալութիւններ չեն պատահած եւ Լախնին իշխա-
նաւորները այդ կապակցութեամբ կրնան ճակատաբաց ներկա-
յանալ որեւէ ատեն:

Օտար արիւն կրող օտար Լուաճողներու օրով կատարուած
խորտակումներուն ու հրկիզումներուն դառնադառն պատմու-
թիւններով յագեցած պէտք է ըլլայինք եւ օտարներու անողոք
արարքներով հիւսուած տարեգրութիւններուն վրայ անհրա-
ժեշտ չէր նոր էջեր գումարել ու չսպիացող վէրքեր բանալ բազ-
մախոց մեր սրտերուն:

Նման սխրագործութիւնները ներքի չեն անշուշտ, բայց առնը-
ւազն հասկնալի են ոտիներուն պարագային, Լոյնը, ցաւօք, չենք
կրնար ըսել հարազատին «գործունէութեան» ատեն, մանաւանդ,
երբ գործ ունինք հարազատին մտաւորական ընտրանիին հետ:

Դառն է, եւ շատ, Ռուբէն Յովսէփեանի անդրադարձը...

ԲԱՆԱՎԷՃԻ ՀՐԱՒԵՐ

ՀՀՇ անդամ Դաւիթ Մանեագարեանի «Առաջադիւրս» օրաքերթի յեմահարրակից քանակներ հրատարակելու համար հասարակութեանը, ոչ առնելու ոչ սրբապատկարացում, թէ՛ «Մենք պատրաստ ենք զակագած հրապարակային քանակներ»: «Մենք» ասելով, կարծում եմ, համետարար ՀՀՇՆ նկատի ունի եւ ոչ թէ իր անձը, ըստովինեւր նշանակել է անբարեկամ Է՛ առիթ ունեցնել՝ համոզելու հասարակութեանը, որ յանկրաւ, մեղադրուող նախկին իշխանութիւնը իրականում սուրբ էր, իսկ ներկայ իշխանութեան համեմատութեամբ՝ նոյնիսկ հրեշտակ:

Յանկութեան դէպքում կարելի է եւ ընդունել Դաւիթ Մանեագարեանի հրատարակելու քանակները՝ քանակներն առաջադրուած թեմաներով, համեմատել նախկին իշխանութեան արած-չարածք՝ ներկայ իշխանութեան արած-չարածի հետ, համեմատել իշխանութեան մաս կազմող անձերին՝ մի դէպքում ընդհանրութիւն գտնել, մի այլ դէպքում՝ տարբերութիւն, պարզել, թէ ո՞ր իշխանութիւնն է առնել ժողովրդավար եւ խօսքի ազատութիւնը յարգող, ի՞նչ է, առհասարակ, լիբերալ ժողովրդականութիւնը, ինչպէ՞ս են դրան հասնում, արդեօ՞ք քոյր հարեւանների հետ բարիդրացիական յարաբերութիւններ հաստատելու, ժամանակակից զարգացած աշխարհին մաս կազմելու, քաղաքացիների ազատութեան եւ այլ սկզբունքները ՀՀՇի յայտնադրութիւնն են, եւ եթէ չլինէր ՀՀՇՆ, հայ ժողովուրդը կը շարունակէր խարխափել քարանձաւի խաւարում՝ նացիոնալ-սոցիալիստների լծի տակ...: Կրկնելով հին ու նոր հմաստատեքներին՝ կարելի էր փաստել, որ կեանք ասածը, այո, փոփոխութիւն է, եւ չկայ կեանք՝ առանց նորութեան: Իսկ փոփոխութիւնը կարող է դառնալ նաեւ դաւանանութիւն, եթէ պատրաստ չես, հասուն չես նման փոփոխութեան: Մարդկային անհատականութեան իրացումը եթէ ենթադրում է փոփոխութիւն եւ նորութիւն, ապա ենթադրում է նաեւ անփոփոխութիւն, առանց որի չկայ անհատականութիւն: Անհատականութեան զարգացման մէջ մարդ պետք է հաւա-

տարիմ մնայ իրեն, չդաւանանի իրեն, պահպանի իր դէմքը: Ուրեմն՝ անհրաժեշտութիւնը ոչ թէ փոփոխութիւնն է սոսկ կամ հաւատարմութիւնը, այլ այս երկուսի ներդաշնակութիւնը:

Եւ էլի շատ ու շատ հարցերի շուրջ կարելի է բանավիճել Դաւիթ Շահնազարեանի, արելի ճիշդ՝ ՀՀԾի հետ, եթէ անհնարին շիկեր յարաբերուելը նրա կամ ՀՀԾի տրամաբանութեանը, ըստ որի՝ ինչ մեղքը այլեւս մեղք չի կոչուում, երբ մեղք է գործում նաեւ մէկ ուրիշը: Սեփական մեղքի ծանրութիւնը, պարոն Շահնազարեան, չի բեթեւանում այլոց գործած մեղքերով: Մեղքը ճաշում են ապաշխարանքով: Եթէ չկայ ապաշխարանք, եւ կայ սոսկ մեղքերի համեմատութիւն, պարզ չէ՞, որ սեփական մեղքը կարելի է անսահմանօրէն փոքրացնել՝ ի հաշիւ դիմացինի մեղքի անսահման մեծացման: Անձամբ ես ոչ մի ցանկութիւն չունեմ՝ բանավիճելու յատկապէս Դաւիթ Շահնազարեանի հետ, եւ ոչ էլ կարող եմ յարաբերուել նրա «համեմատական» տրամաբանութեանը, եւ իմ այս արձագանքը նրա հարցազրոյցին վերաբերում է հարցազրոյցը վարող Աննա Իսրայէլեանի հարցադրմանը. «Կարելի՞ է «Նորք», «Անդրադարձ», «Մուսեաիկ» կամ «Առաջատար» պարբերականները, որոնց հրատարակումն արգելուեց 1994 թուականին, անուանել ՀՅԴ անրաժանելի մասը»:

«Այո», հարցազրոյցում հաստատում է Դաւիթ Շահնազարեանը, 94-95 թթ. Հայաստանի Հանրապետութիւնում Դաշնակցութեան գործունէութեան կասեցումից յետոյ փակուել են այդ կուսակցութեան անրաժանելի բաղկացուցիչ մաս հանդիսացող լրատուամիջոցները»:

«Իրկնում եմ», քիչ արելի ուշ, Աննա Իսրայէլեանի նախնական յամառութեան վրայ գրգռուած, ասում է Դաւիթ Շահնազարեանը, այդ լրատուամիջոցները կուսակցութեան անրաժանելի մասն են: Ամէն ինչ եղիլ է օրէնքի շրջանակներում: Հակառակ դեպքում այդ լրատուամիջոցները կը դիմէին դատարան, ինչպէս վարում է «Ա1+»ը...: Տեսա՞ք, թէ ինչ ասել է «համեմատական» տրամաբանութիւնը:

Ի գիտութիւն ազգային անվտանգութեան համակարգի նախկին ղեկավարի, յայտնեմ, որ «Նորք»ը լրատուամիջոց չէ, այլ գրական-հասարակական հանդէս, պատկանում է Հայաստանի գրողների միութեանը (եւ ոչ թէ Դաշնակցութեանը), եւ 1983 թուականից լոյս տեսնելով՝ չի փակուել ոչ մի անգամ՝ ոչ 1987ին՝ գաղափարական նկատառումներով, ոչ էլ պատերազմի տարիներին՝ նիւթական պատճառներով: Փակուել է միայն 1994 թուականի Դեկտեմբերի 28ի գիշերը՝ նիշտ եւ ճիշտ այն մարդկանց հրաժանգով. ովքեր «պայտարել ու պայտարելու են

խօսքի ազատութեան եւ ժողովրդավարական միւս քույր արժեքներին անշրջելի հաստատումն ապահովելու համար»:

Սի հարցում է իրաւացի Պր. Շահնագարեանը. այո՛, ես դատարան չեմ դիմել, ինչպէս այսօր դիմել է «Ա.1+»ը: Բայց ո՛չ այն պատճառով, որ «ամէն ինչ եղել է օրէնքի շրջանակներում»: Զեմ դիմել, որովհետեւ խմբագրատան վրայ յարձակում էին գործել ոչ թէ գողները, աւագակները, այլ ինքը՝ նորին գերազանցութիւն իշխանութիւնը՝ իր ուժային կանոյցներով, իր դատախազ-դատաւորով: Ես ո՞ւմ դիմէի: Գիշերուայ կէսին, մթութեան մէջ, լուսարձակների հւ ձեռքի լապտերների լոյսի տակ իշխանութիւնը ջարդուփշուր է անում խմբագրատան դռները, առանց արձանագրութեան բռնագրաւում համակարգիչները, շերկիզուող պահարանները, ռազմերի թղթապանակները, մատնանները, լուսանկարները, կնճում է ջարդուխուրդ արուած դռները. ռատիկանական հերթապահութիւն է կարգում, եւ այս խայտառակ իրողութեան մէջ ես պիտի դիմէի դատարան...: Արջալգայիմ գատարան՝ թերեւս արժէք դիմել, բայց ես ինձ այդ շռայլութիւնը թոյլ չտուեցի...

Ի՞ դէպ, երբ մէկ տարի անց փորձում էի վերաբացել խմբագրութիւնը՝ յանկարծ պարզուեց, որ վերաբացման թոյլտուութիւն անհնար է կորցել որեւէ հիմնարկից: Ո՛չ ներքին գործերը, ո՛չ ազգային անվտանգութիւնը, ո՛չ արդարադատութեան նախարարութիւնը չէին կարող թոյլատրել, որովհետեւ իրենք չէին փակել: Հապա ո՞վ է փակել: Օրէնքը: Ո՞ր օրէնքը: Արտե՞ղ է պահպանուում «Նորք»-ի փակելու օրինական որոշումը, Պր. Շահնագարեան:

Եւ, այսուհանդերձ, դատարան դիմել եմ, բայց մի այնպիսի գատարան, որտեղ Դաւիթ Շահնագարեանը, ցաւօք, գեռեւս ռոֆ չի դրել: 1996 թուականին վերատպուող «Նորք»-ի առաջին համարը բացուում է, ահա, այսպիսի խմբագրականով:

«Երբ մէկ տարի անց բացուեցին «Նորք»-ի կնճուած, փականաջարդ դռները՝ ցուցադրելով 1994 թուականի Դեկտեմբերի 28ի գիշերուայ հետքերը, մե՞նք դեռ չգիտէինք, որ ամէնից շատ մեզ ցնցելու է սմբած թաղարների, կմախփացած ծաղիկների տեսարանը: Կարծես խորշակն էր գարկել նրանց: Կարծես անապատում էինք յայտնուել:

Մենք չէինք կարող սպասել լուսանկարչին, մենք գերադասեցինք, վայրկեան իսկ չկորցնելով, մաքրել «Ալպուրգեան այդ գիշերուայ խրախնամքի սեղանը»՝ քնազօրէն հասկանալով, որ պատմութեանը յանձնուած նման մի լուսանկար, Աստուած մի արասցէ, «յանուն պետականութեան կա-

յացման», սակայն որպես վրեժ, որպես փոխհատուցում, մի այլ խելացնորի ուղեղում կարող է; սանձ, Մատենադարանը հրկիզելու մտայղացումը ծնել:

Մենք հապշտապ, բայց գոուշօրեն դուրս բերեցինք ծաղիկների դիակները...

Որքան էի այդ պահին ցանկանում, որ սոյն յուզարկարութեանը, որպես պատուոյ պահակ, կանգնած լինէին Հայաստանի գրողների միութեան անդամներ Լեւոն Տէր Պետրոսեանը, Վանօ Սիրադեղեանը, Վազգէն Սարգսեանը, Անվըտանգութեան խորհրդի նիստի այն մասնակիցները, ուր վճռուել էր «Նորք»ի ճակատագիրը: Պետական այս այրերին զգայացունց տեսարաններով չես յուզի, եւ ես յուզելու համար չէ, որ ցանկանում էի նրանց ներկայութիւնը, պարզապէս կեանքն այդ օրը յարմար պահ էր ընտրել՝ եւս մէկ անգամ բացայայտելու եանրայայտ իր իմաստութիւնը. խմբագրութեան հաւաքարարուհին՝ Տիկին Սեդան, աչքերից արտասուքը սրբելով, թոյլ չտուեց, որ մենք թույլանանք, ընկճուեմք կամ մեր շրթները պղծեմք հայեոյանքով:

Յաւոյ տանեմ,- աւագ,- շան տեղ մի դիր...: Ես նոր ծաղիկներ եմ անցրել...: Հիմա կը վագեմ տուն՝ կը բերեմ...: Գիտէի, որ էսպէս է լինելու...

Հիմա նոր ծաղիկներ են աճում իմ աշխատասենեակում, ձեռագրերի նոր թղթապանակներ են դարսում գրասեղանիս, սփիւռեան եւ հայաստանեան գրասէրները փորձում են անել ամէն ինչ՝ վերականգնելու խմբագրութեան լիարժէք գործունէութիւնը: Եւ վերջը աստիճանաբար սպի է դառնում:

«Նորք»ը միշտ ծառայելու ծառայելու է հայ գրականութեանը եւ հայ ազգին՝ անկախ նրանից, թէ ովքեր են լինելու իշխանութեան վերին օթեակում: Մենք չենք ամաչում մեր սպիներից: Թող ամաչեն մեզ վերք հասցնողները:

Վերջը սպի է դառնում: Սպին գեղեցկացնում է տղամարդկային դեմքը:

Այո, Պր. Շահնագարեան, վերջը սպի է դառնում... եւ եթէ հասցրած վերջերի եամար ձեր մէջ քրիստոնէական ուժ չէք գտնում ապաշխարելու, գոնէ խոհեմութիւն ունեցէ՛ք անցած այս տարիներին անցրած եղունգներով շփորփրել մեր սպին: Լեւօք է («Երկիր», 10-16 Մայիս, 2002):

ՌՈՒՐԵՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ
արշակազիր, ԱՇ պատգամաւոր


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼԻՐԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵԾԱՐԵՑ
ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲՅԱՆԸ

7 Ապրիլ 2002-ին սկսեալ եւ գրեթէ մէկ ամիս լիբանանահայութիւնը վայելեց ներկայութիւնը ուփառքահալ մեծամուն բանաստեղծ Ժագ Ս. Յակոբեանի, որ Պէյրութ ժամանած էր «Գիտակ» ամսագիրի հրավրով:

Քարի գայլատի եւ պաշտօնական այցելութիւններու շարքէ մը ետը, որ սկսաւ Արամ Ա. Անհափառին տրուած այցով եւ շարունակուեցաւ լիբանանահայ մամուլի «Ազդակ»-ի, «Արարապ»-ի, «Ճարտօնք»-ի, «Բազին»-ի եւ «Վահայ չայն» տասնիակայանի իրմբարարութեան անդամներուն ու պատասխանատուներուն հետ քերթ հանդիպումներով, 12 Ապրիլին տեղի ունեցաւ մեծարանքի պաշտօնական հանդիսութիւնը:

Բազմապատակ բանաստեղծին ծննդեան 85ամեակին եւ գրական գործունէութեան 65ամեակին առիթով կազմակերպուած այս յարեւանական հանդիսութիւնը, որուն իրականացման գործնապէս սատարեցին լիբանանահայ մշակութային միութիւնները, կը վայելէր բարձր եռվանտորութիւնն ու նախագահութիւնը Արամ Ա. Անհափառին, որ իր ներկայութեամբ յատուկ վայր տուաւ ձեռնարկին: «Յ. Տէր Սեփրճեան» հանդիսարանը կը յարգէր մշակութասէր հոծ բազմութեամբ: Ներկայ էին հայ երեք համայնքապետներ՝ Գեղամ Եպս. Խա-



չերեան, Վարդան Եպս. Աշգարեան, Վեր. Փոյ Հայտնսրեան, լիբանանեան խորհրդարանի այժմու եւ անցեալի պետական երեսփոխաններ, Պորճ Համբալի քաղաքապետը, հայ երեք կուսակցութեանց եւ միութիւններու ներկայացուցիչներ, գրողներ, խմբագիրներ եւ գրասէր կուսարակութիւն մը:

«Գիտակ» ամսագիրի բազման խօսքին ետք, Ժագ Ս. Յակոբեան մարդը եւ բանաստեղծը յաջորդաբար ներկայացուցին Տօքթ. Ռօբովք Զորպաճեան եւ Սարգիս Կիրակոսեան, որոնք Ժագ Ս. Յակոբեանի կեանքի փորձառութենէն եւ քերթողական վաստակէն վեր առնուած բնորոշ յատ-

կանիչներով պատկերացուցին անոր դիմանկարը: Ապա, շուրջ մկ ժամ, իր գրականութենէն քաղուած հատուածներով եւ քանաստեղծութեանց ասուցումով էիւր գրուող ներկայացուց իր ստեղծագործական, հոգեւոր եւ եսլատորոփ աշխարհը:

Գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին իւրմը մը իրանահայ արժանագէտներ: Փակման խօսքը արտասանեց Արամ Ա. Կաթողիկոս, որ եւս գրականութեան այս «բացատրիկ նոյրնար»-ին վաստակը բարձր գնահատելով՝ շեշտեց. *«Հայտնիներ եւ հաւաքը միասնաբար ապրեցան ժագ Ա. Յակոբեանի մէջ: Հաւաքքի մասքով ան հայտնիներ երգեց եւ հայտնիներ նախքով հաւաքք բարոզեց: Հայտնիներ ու հաւաքք զիրար գրկեցին, զիրար ամբողջացուցին, զիրար արժեւորեցին եւ հարստացուցին ժագ Ա. Յակոբեանի բանաստեղծութիւնը»*

Յաջորդ շարքերնոր յաւկացուեցան հանդիպումներու եւ դպրոցական ու միութեանական ներքին հանդիսութիւններու, որոնք սկսան Հայաստանի Հանրապետութեան Լիբանանի դեսպանատան տրուած այցելութեանը, որուն յաջորդեցին ջերմ հանդիպումներ կրթական հաստատութիւններու «Համագային»-ի «Մեյլանքոն» եւ Հայկ Արպանեան» Գեմարանի, «Յովակիմեան-Մանուկեան» երկրորդական վարժարանի, Հայ Աւետարանական Կեդր. Բարձրագոյն վարժարանի, «Հոլիսիմեանց» քոյրերու վարժարանի, Ազգ. վարժարաններու աշակերտութեանց եւ կորրական այլ հաստատութիւններու աշակերտութեանց, ասուցիչ-

ներուն եւ պատասխանատուներուն հետ:

Լիբանան իր միաձուսայ կենցառեան ընթացքին, բանաստեղծը կաւ էիւրը նաեւ հայ հոգեւոր համայնքապետներուն, Լ.Օ.Խ.ի «Պուրդարեան» կեդրոնին, «Համագային»-ի Այնճարի «Պարոյր Մեյլակ» մասնաճիւղին, որ մեծաբանքի յատուկ ձեռնարկով մը պատուեց ժագ Ա. Յակոբեան հայն ու բանաստեղծը:

Լիբանանահայտեան հետ ժագ Ա. Յակոբեանի վերջին հանդիպումը տեղի անցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ՝ 2 Մայիսի երեկոյեան, «Կիլիկիա» բանգարանի սրահին մէջ, երբ այս անգամ իբրեւ հայ գրականութեան դասախօս՝ ան ներկայացուց *«Դ. Վարուժան ժագ Ա. Յակոբեանի հետ»* խորագրեալ նիւթը:

ՀԱՅ ԴԱՏԸ ԹԻՔԱԿԱՆ ԱԿՆՈՅՈՎ

Վերջերս, Թուրքիոյ մէջ հրատարակուած Լ. «Հայկական ուսումնասիրութիւններ» պարբերականին շորթորդ թիւը: Այս պարբերակին եւ իր նախորդ երկրորդ պատրաստուած են Հայկական Ուսումնասիրութիւններու Թրքական Հիմնարկին կողմէ, որ հիմնուած Լ. մտաւորապէս տարի մը առաջ:

Պարբերակին Դեկտեմբեր 2001 Յունուար/Փետրուար 2002 թիւը կը բաղկանայ բրբերէն եւ անգլերէն մտաւորապէս 400 էջերէ եւ կ'ընդգրկէ յօդուածներ,

որոնք կ'արտայայտեն հայկական հարցին նկատմամբ Թուրքիոյ պաշտօնական կեցուածքը:

Էօմէր Լ. խրճի խմբագրապետութեամբ յոյս տեսնող այս պարբերաբարքին կարելորագոյն յօդուածները կը հանդիսանան հետեւեալները. «Մաշինկորնի մէջ օսմանեան դեպքան Ալեքսանդր Մաւրոյէնի պէյ և հայկական գլխացաւը (1887-1896)», «Օսմանեան երրորդ բանակի սպայակոյտի պեյր Յէլիքս Կիզի յօդուածը 1915ի հայոց ապստամբութեան և արդիւնքներուն մասին», «Թալէաք փաշայի համար վկայութիւն», «Անի հայերու, բիզանդացիներու և թուրքերու փրայպետութեան փակ», «Հայերու կողմէ Արաբիոյրքի վերագրուած խօսքեր և հայ ահաբեկիչներու չեղորով նահապետութեան նկատմամբ Արաբիոյրքի շահագրգոյրիւնը», «Ազերի թուրքերը Հայաստանի մէջ անցեալէն մինչև այսօր», և այլն:

Պարբերաբարքը կ'ընդգրկէ նաև անգլերէնով երատարակուած կարգ մը յօդուածներու քրքրելուն քարգմանութիւնները: Այս յօդուածներուն շարքին Լ. փրոֆ. Լրիլս Փայկլի յօդուածը, որ Թրանս Վերջէլի «Մուսա Լեռան 46 օրերը» գիրքը կը նկատ «զեղծարարութիւն»: Պարբերաբարքին մէջ կայ նաև բաժին մը, ուր ընդհանուր տեղեկութիւններ կը տրուին հայկական նիւթերու շուրջ կազմակերպուած համագործարներու և կրատարակուած գիրքերու մասին:

«Հայկական ուսումնասիրութիւններ»-ը հասցեագրուած է թուրք մտաւորական խաւին և պարզ ընթերցողներուն:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԵՑԱԻ Ի. ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆԻ «ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ»Ը



24 Մարտին, Թարսնորոյի Հայ Կեդրոնին մէջ, տեղի ունեցած Լ. տալիքանօ Իզապէլ Պայրագտարեանի կատարուելու մը հայ եռգետը երգերու «Լոյս Զուարթ» խտասալիկի նրատարակուածը: Խտասալիկը կը պարփակէ 16 Սեպտեմբեր 2001ին Գանատայի Ազգային Առաջնորդարանի կազմակերպած եռգետը համերգի ընթացքին ներկայացուած երգերը, կատարողութեամբ Իզապէլ Պայրագտարեանի և զեկապարտութեամբ Բաթիքի Արմենեանի: Երաժշտութեան դաշնութեամբ կատարած Լ. Պետրոս Շուծունեան:

...ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳԸ

4 Յունիսի Երեկոյեան, լիբանանեան և տեղացի երաժշտաւոր եւսարակութիւնը ապրեցաւ արուեստի քացառիկ երեկոյ մը,

էրր Կարողիկոսարանի Ս. Գրիգորի Լուսատրիչ մայր տաճարին մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառի բարձր հովանաւորութեամբ և Տէր և Տրիւն Գրիգոր և Միգի Շուփունեաններու նախագահութեամբ Իզապէլ Պայրագտարեան հանդէս եկաւ հոգեւոր գեղարուեստական համերգով մը, լեկերակցութեամբ լարային նուագախումբը խմբավարայ Անդրիկ Ն. Վրդ. Թարխեանի:

Եւ դարձն միևնչեւ Միջնադար, նայ եկեղեցւոյ հոգեգմայլ շարականները տողանցեցին սոյն երգանանդէս-նուագանանդէսի ընթացքին, Իզապէլ Պայրագտարեանի ջինջ, բախանցիկ, առիմրնոյ աւ ճշգրիտ ծայնալարերուն էշտոյքներով: «*Լոյս գուարք*» «*Սուրբ Աստուած*» «*Միսիս լիռ, եկեղեցի սուրբ*» «*Այսօր դասք հրնշտակաց*» «*Բաց մեզ, Տէր*» «*Ո՛ր ես, մայր իմ*» «*Ո՛վ գարնանայի*» «*Տէր ողորմեա*» «*Ամէն, հայր սուրբ*» «*Տէրունական աղօթք*» «*Կիլիկիա*» և այլ խորագիրներ կրող թիւով 18 յօրինումներ ունկնդիրները հմայեցին և մայր տաճարը ջերմացաւ քրիստոնէական հոգերով սրնուորտով:



Վան Լիօ (բուն անունով Լեւոն Պոյաճեան), որ 1940-1950 թուականներուն արուեստի բարձր մակարդակ և համբաւ նուաճած էր, վերջէս իր դիմանկարներուն մեծ հատարածուն նախըզ Գանիրի Ամերիկեան համալսարանին: Այդ հատարածուն կը բաղկանայ 19,000 յուսանկարներով, 16,000 յուսանկարներու պատճեններով, արուեստի գիրքերով և քաջիկներով:

Գանիրի արանսական մշակոյթի տան մ.ջ. Ապրիլ ամսուն քաջումը կատարուած է Վան Լիոյի յուսանկարչական ցուցահանդէսին:

ՎԱՆ ԼԻՕ ՈՉ ԵՒՍ Է

Եզիպտահայ համբաւաւոր յուսանկարիչ ՋՍամեայ Վան Լիօ, որ իր յուսանկարներով Եզիպտոսի մուրագկաններուն, պարուսիններուն և ազնոտականներուն տուաւ հոյիվուտեան առտղերու տեսքը, Մարտի 22ին, մահացած է Գանիրի մէջ, սրտի կաթուածի հետեւանքով:

**ՄԵԾԱՐԱՆՔԻ
ԵՐԵՎԱՆՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏ
ԼՈՒՍՆԿԱՐԻՉ
ՎՐՈՒԺԱՆ ԱԷԹԵԱՆԻ**

Լուսանկարչութեան ասպարիզը արուեստի վերածելու առարկութիւնը Միջին Արեւելի մ.ջ. եղած է մենաշնորհը նայ յուսանկարչական ցուցահանդէսին:

պետական խօսքը, նշելով որ Վ. Սևրեան, իր արուեստով, գործով եւ ծառայութեամբ արժանի է անթողջական մեծարանքի: «Ան յարողած է իր լուսանկարներով որսալ Լիբանանի ոգին, շօշափելի դարչնէյ անգրեսանէյին եւ անասեմանք: Անոր լուսանկարները սոսկ յարգանքի փութք չեղան լիցանանեան հայրենիքին, այլ եղան անոր գեղեցկութեան, արժէքին ու անժամանցելիութեան գրասկանը», րսա Արամ Ա. Կարողիկոս:

Հուսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը Վ. Սևրեանը պարգևատրեց «Ս. Մարոյ Մաշտոց» շքանշանով:



**ՎԱՐՈՒԻՄ ԵՏԸՇԵԱՆ
ՊԱՐԳԵՒԵՏՐՈՒԵՑԱԻ
«Ս. ՄԵՍՐՈՊ
ՄԱՇՏՈՑ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ**

Լիբանանահայ ռատերական կեանքին վրայ իր ինքնուրոյն դրոշմը դրած դերասան, դերաստյց եւ քեմադրիչ Վարուժան Խտրչեանի երկար տալիներու քեղուն գործունէութիւնը գնահատելու համար, Չորեքշաբթի, 15 Մայիս 2002ի երեկոյեան, տեղի սնեցաւ մեծարանքի հանդիսութիւն մը, Մեծի Տանն Կիլիկիոյ կարողիկոսութեան «Կիլիկիա» քանգարանի սրահին մէջ:

«Համագային»ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութիւնը փայելող այս ծեռնարկը կը վայելի եովանաւորութիւնն ու նախագանսութիւնը Արամ Ա. Վեհափառին, որուն

ներկայութիւնը յատուկ փայլք տուաւ սոյն երեկոյին: Առաջին շարքին՝ տեղ գրաւած էին Լիբանանի Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, Հայ Կարողիկէ Պատրիարքական Փոխանորդ Վարդան Եպս. Ազգարեան, սարժնակրթութեան եւ մշակոյթի նախարարներ Տոքր. Սեւրոս Յովնանեան եւ Ղաւսան Սալամ, հայ երեսփոխաններ, Պոլսւ Համուտի րադարպետը, հայ ու տեղացի բեմադրիչներ, դերասաններ, արուեստագետներ եւ մշակութրատը եռմ հասարակոյթիւն մը:

Հայերէն եւ Իրանսերէն լեկուներով հսնդիարեան բազման խօսքը արտասանեց «Համագային»ի Շրջ. Վարչութեան խօսնակը՝ Սեղա Խտրչեան: Ապա տեղի ունեցաւ սահիկներու ցուցադրութիւն, որուն միջոցաւ ներկաներուն երաճցուեցան Վ. Խտրչեանի թատերական կեանքի իրերայաջորդ հանգրուանները:

Առաջին խօսք առնողը եղաւ մշակոյթի նախարար Ղասսան Մարամէ, որ մարդկային կեանքին մէջ արուեստին եւ յատկապէս քաւորոնին ունեցած իրաւատուկ տեղն ու դերակատարութիւնը վեր առնելէ ետք, յիշատակեց Լիբանանեան քաւորոնի նախապատերազմեան վայրոյն շքրջանը, անոր գարգացման ու ծաղկման կարկառուն դիմքերէն մէկը նկատելով մեծարեալ Վ. Խտըշեանը: Ապա խօսք առաւ Գրիգոր Շահինեան, որ ամփոփ գիծերով ներկայացուց Վ. Խտըշեանի արուեստի ճանապարհն ու առանձնայատկութիւնները: Յաջորդեց Լիբանանեան քաւորոնի եզակի դէմքերէն հանդիսացող դերասան, թեմադրիչ ու րատերագիր Ռեմոն Ժպարան, որ երկար տարիներու քարեկամութենէն մեկնելով՝ բարձր գնահատեց Վ. Խտըշեանի քաւորոնին առանձնայատկութիւնները:

Ծանօթ դերասան Մուսիբ Բարրուանի խօսեցաւ իր դասախօսին եւ իբր բեմադրիչ տարիներու գործակիցին մասին, ծանրանալով Վ. Խտըշեանի մարդկային ազնիւ նկարագրի գիծերուն վրայ:

«Համագգային»-ի կեդր. վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան բարձր գնահատեց մեծարեալ արուեստագէտին տարիներու թեղուն վաստակը, ապա Վ. Խտըշեանը պարգևատրեց «Համագգային»-ի պատուանշանով: Յաջորդեց դերասանուհի Ժոզիա Բասսար, որ Լիբանանի դերասաններու սենտիքայի սրտի խօսքը արտասանելէ ետք, մեծարեալ արուեստագէտը պարգևատրեց սենտիքայի յատուկ պատուանշանով: Ապա կարգացուեցան Հայաստանի մշակոյթի նախարարութեան, «Գ.

Մունդուկեան» ակադեմիական քաւորոնի, Սօս Մարգսեանի եւ քաւորական այլ գործիչներու շնորհատրագիրները:

Հանդիսարեան փակման խօսքը արտասանեց Արամ Ա. Կաթողիկոս, որ Վ. Խտըշեանի կեանքը կենդանի քաւորոն մը եղաւ, իսկ իր րասրոնը՝ կենդանի կեանք մը մտածումը գարգացնելով՝ վեր առաւ մեծարեալ արուեստագէտին մարդկային ու հայկական ազնիւ գիծերը: «*Խտըշեանի իր փարիներու բեմական գործունէութեամբ ու նուաճումներով փայլող լուսաւոր ասպղ մը դարչաւ հայ ժողովուրդի բազմաթիւ կրկնակամարին վրայ, առանց որուն կենդանի ներկայութեան հայ կեանքը կրնար խաւարի մէջ մնալ*», ըսաւ Արամ Ա. Վեհափառ եւ վաստակաւոր բեմադրիչը պարգևատրեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» սուկեայ շքանշանով:

...ԵՒ ՊԵՐՃ
ՖԱԶԼԵԱՆԻ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ

Առ ի գնահատանք լիբանանեայ վաստակաւոր բեմադրիչ եւ դերասան Պերճ Ֆազլեանի բեմական բազմամեայ վաստակին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի «Կիլիկիա» քանդաքանի սրահին մէջ, Ուրբաթ, 1 Մարտի երեկոյեան ժամը 7:00ին, տեղի ունեցաւ մեծարանքի երեկոյ մը՝ հանդիսապետութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին:

Ներկայ էին Հայ Կաթողիկէ Պատրիարքական Ընդհանուր



նկարիչներուն, որոնք սերունդներ շարունակ լայսի և շուրի խաղերով արուեստի գործի վերածած են իրենց հիւրընկալ եայրենիքներուն ջնաշխարհները, անոնց անուանի զատկներուն վիճակարները և այլ միւրեր:

Լիբանանի մէջ հայ արուեստագետ լուսանկարիչներու առաջ ներկայացուցիչն է Վարուժան Սլքեան, որուն ճծածեայ վաստակին յարգանք մատուցելու համար, «Համազգային»-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնած էր մեծարանքի երեկոյ մը: Չեռնարկը կը վայելէր Արամ Ա. Կաթողիկոսին հովանաւորաբարիւնը և իանդիտակուտութիւնը:

Չորեքշաբթի, 20 Մարտ 2002ի երեկոյեան ժամը 7:00ին, Ամբիլիասի Մայրավանքի «Կիլիկիա» բանգարանի սրահին մէջ տեղի ունեցած իանդիտութեան ներկայ գտնուեցան Լիբանանի Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, Հայ Կաթողիկէ Պատրիար-

քական Ռնդիանուր Փոխանորդ Վարդան Եպս. Աշգարեան, ՄԱՀԱՅՍԻ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վեր. Դեկտ. Փան Խանճեան, նախկին նախարար Սուրեն Խանամիրեան, նախկին Լրեսփոխան Նուրիճեան Տեմիրճեան, Լրեսփոխան Սիլվայի Տուհեր, Պորճ Հանուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, լիբանանահայ կառայցներ և միութիւններու պատկան ներկայացուցիչներ և մեծ թիւով հայ ու օտար արուեստագետներ և արուեստասէրներ:

Հայերէն և արաբերէն լեզուներով բազման խօսքը կատարեց Ռորճ Արեւեան, որ ներկայացուց արուեստագետին կեանքը և գործը:

«Լուսանկարչութեան բանաստեղծ» Վ. Մէրեանի մասին հայերէն լեզուով իր սրտի խօսքը ուղղեց Յակոբ Կիլոյեաս: Ապա, գնահատանքի և մեծարանքի խօսքերով յաջորդաբար իանդուեկան Արաքական Լուսանկարչութեան Միութեան նախագահ Արրամ Չաարարի (անգլերէնով), լիբանանցի բանաստեղծ Հանրի Չղէյպ և նշանաւոր բանաստեղծ Միլիսայի Նայիմի Լեթորորդին՝ գրականագետ Նեւոն Նայիմ:

Ն. Նայիմը յայտնեց, որ Վ. Մէրեանի ուղանակին շնորհիւ յաւիտեան կ'ապրին Լիբանանի բնութեան ու քաղաքներուն այն անկիւնները, որոնց վրայ ժամանակը սփռէն իսկ գործած է իր ատերը:

Հանդիսութեան ընթացքին, «Համազգային»-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը Վ. Սլքեանը պարգևատրեց «Համազգայինի Կեդրոնական Վարչութեան Շրանչան»ով:

Այնուհետև, Արամ Ա. Կաթողիկոս արտասանեց իր եայրա-



Փոխանորդ Վարդան Եպս. Աշգարեան, Սերժատր Արեւիլքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան առեմապետ Վեր. Դոկտ. Ժան Խանճեան, մշակոյթի նախարար Ղասսան Սալամէի ներկայացուցիչ՝ նախարարութեան ընդհանուր տնօրէն Անտր. Մատտէ, ներկայ եւ նախկին պետական հայ երեսփոխաններ, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Լիբանանի մէջ Բանաւայի դեսպան Հայկ Սարաֆեան, ազգային կառոյցներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մեծ քիւով հայ եւ տեղացի ծանօթ արուեստագէտներ եւ արուեստաւերներ:


Հանդիսութեան բացման խօսքը կատարեց Նորայր Ծ. Վրդ. Աշրգեան, որ հայերէն եւ արաբերէն լեզուներով մանրամասնօրէն ներկայացուց մեծարեալ արուեստագէտը: Ապա, արաբերէն լեզուով հանդէս եկան Պ. Ֆազլեանի ինտ գործակցած լի-

բանանցի անուանի բառերական գործիչներ եւ դերասաններ: Հանդիսութեան աւարտին, Արամ Ա. Կարողիկոս իր գնահատանքի խօսքը ուղղեց Պերճ Ֆազլեանի, «որուն արժէքը պէտք է, որ ըստ արժանոյն գնահատուի», ըստ ան: Ապա, իբրեւ փարձատրողիւն լիբանանահայ եւ լիբանանեան բարոնի այս գործիչին նուիրումին, Արամ Ա. Կարողիկոս Պերճ Ֆազլեանը պարգևատրեց հայ մշակոյթի ու ընդհանրապէս արուեստի սպասարկումներուն նուիրուող «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Ս. Էջմիածին ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐԷ 40 ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐ

Ս. Էջմիածնի եւ Հայաստանի Նկարիչներու Միութեան նախաձեռնութեամբ, անցեալ տարի կազմակերպուած Իր ցուցահանդէս մը նուիրուած Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն ընդունման 1700ամեակին: 9 Ապրիլին, Նկարիչներու Տան մէջ, այդ ցուցահանդէսին 40 լուսագոյն մասնակիցները արժանացած են Ս. Էջմիածնի զրամական մրցանակներուն՝ 200ական տոլարի համարժէք դրամի: Ողջունելով ներկայ արուեստագէտները՝ Ս. Էջմիածնի ղխանապետ Արշակ վրդ. Խաչատրեան ճշած է, որ Հայ Առաքելական Եկեղեցին մնայուն կերպով ժողովուրդին ներկայացած է իբրեւ արուեստի, գիտութեան ու մշակոյթի հովանաւոր եւ այսօր նաև կ'ընթացայ նոյն ճանքայլէ՝ հաւատարիմ ուսերու աւանդին:

ՊԻՏԻՆԵՐԿԱՅՆՑՈՒԻ ՄԱՅՔԸ ԶԵԿՈՒՅԱՆԻ «ՉԱՅՆԵՐ ԼԻՃԷՆ» ԺԱՊԱՒԷՆԸ



Հայկական Յեղատպանության մասին պատրաստում վաերազրական ժապաւեններու եւ պատկերիզներու կարգին, ոչազրաւ ի Մայքըլ Յակոբեանի «Voices From the Lake» («Չայնէր լիճէն») անուն վաերազրական ժապաւենը, որ յառաջիկայ օրերուն պիտի ներկայացուի Գանատայի եւ այլ երկիրներու մէջ:

«Voices From the Lake»-ը կը կերտումնայ Խարբէլդ-Մեզրլ բաղաբին մէջ ծառայած ղկրներուն եւ բնակչութեան ապրած ողբերգություններուն վրայ, որպէզզի գաղափար մը տայ Յեղատպանութեան տարողութեան ու անոր աղիտայի պատահարներուն մասին, որոնք արձանագրուած են ականատեսներու վկայաբլիւններու բնղստէն: Յիշի, որ լոյս տեսած ի 2000ին, կը ծանօթացուի յորն «25 տարի հեղազօղութեան եւ արգազրութեան արղիւնք,

առաջին երկար ժապաւենը (feature-length) եւ վաերազրական գաղաբնի Ֆիլմը Յեղատպանութեան մասին»:

Ժապաւենը արաղրուած ի 1979ին կիսնում «Armenian Film Foundation»-ին կողմ, որուն կիսնաղիրն ու նախագահն ի Տոքթ. Մայքըլ Յակոբեան: Ան վկայուած ի Հարվըրտ համալսարանն (PhD International Relationsի մէջ), Պրոքսիլի Գալիֆորնիոյ համալսարանն եւ Սաութըրն Գալիֆորնիոյ համալսարանն: Մ. Յակոբեան բաղաբնական գիտաբլիւններ ղատանղած ի Լոս Անջելըսի Գալիֆորնիոյ համալսարանին, Լիբանանի Ամերիկեան համալսարանին, Հնղկատուանի Պենարլս Հիւնտ համալսարանին մէջ: 1954ին յի վկայան լծում ի ղատիարակչական եւ վաերազրական Ֆիլմերու հետազօտութեան, գրութեան եւ արաղրութեան աշխատանքին: Ան հեղինակ ի առելի բան 70 բաղմաշակութային եւ վաերազրական ժապաւեններու, որոնք արժանացած են աներիկեան եւ համաշխարհային բաղմաբլիւ մրգանակներու:

Մայքըլ Յակոբեանի հայկական նիւթերու առնչուող նախորղ արաղրութիւններն անմնն շատ ծանօթ են «The Forgotten Genocide»-ը, պատմում «Մայք Բանըրղի կողմն եւ «Strangers in A Promised Land»-ը, պատմում Գալիֆորնիոյ կառավարիչ Բորն Տօքմենեանի կողմն: Ասոնց կողքին Մ. Յակոբեանի պատրաստած Ֆիլմերու շարքը երկար ի «The Armenian Case», «Cilicia, Rebirth», «Mandate for Armenia», «Where are my people», «California Armenians: the First Generation», «From Bidlis to Fresno: 100 years of an Armenian Family in California»:

Ինչ կը վերաբերի “Armenian Film Foundation”ին, տարիներու ռեբրացքին անիկա ստացած է բազմաթիւ կարեւոր յատկացումներ՝ կառավարական նպաստներ, ինչպէս նաեւ՝ գանազան կազմակերպութիւններու եւ Հարաւային Գալիֆորնիոյ համայնքին կողմէ: Ան ներկայիս կօզտագործուի իբրեւ Հայկական Յեղապանութեան, մշակոյթի եւ պատմութեան առնչուող ճիւղեր հայրայրոջ տարբեր հանրային պատկերասփիւռի, կրթական հաստատութիւններու եւ բնագործներու:

**ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ
«ՀԱՅՈՑ
ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ»**

Մարտի սկիզբը, Երեւանի Արամ Խաչատրեանի անուան տուն-բանգարանին մէջ տեղի ունեցած է Հայկ Խաչատրեանի «Հայոց բազուկիները» գիրքի անգլերէն տարբերակին գինեձօնը: Թարգմանութիւնը իրականացրած է Հայ Կանանց Միջազգային Միութեան (AIWA) եւ ԱՄԿի Կանանց Չարգացման Հիմնադրամի նախաձեռնութեամբ:

Հ. Խաչատրեանի «Հայոց բազուկիները» երկը առաջին անգամ տպագրուած է 1998ին: Հեղինակը օգտուած է ձեռագիր մատենաներէլ եւ գոյութիւն ունեցող գեղարուեստական ստեղծագործութիւններէ: Արբունի 150 կիներու կեանքն ու գործը կը ներկայացուին ժողովուրդին: Յիշատակուած բազուկիներն 103ը հայուիներ են: Ըատերու անունները ծանօթ են, բայց կան նաեւ այնպի-

սիներ, որոնց անունները մատենագիրները գրի չեն առած:

Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Դանրաս գիւղին մէջ 15 Դեկտեմբեր 1926ին ծնած Հայկ Խաչատրեան ինքնանունը Լ. առնելի քան տասը արձակ հաստութիւններու, որոնց նշանաւորներն են՝ «Տիգրան մեծ», «Էրիբունի», «Արփաշէս» եւ «Քերթողահայրը» անուն պատմավեպերը:

**ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ**

24 Յունիսին, Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի կեդրոնատեղիին մէջ բացուող կատարուած է «Հայկական մանրանկարչութիւնը 9էն 14րդ դարերուն» ցուցանանդէսին, որ կազմակերպուած էր վեհաժողովին մէջ Հայաստանի խորհրդարանական պատուիրակութեան եւ Եւրոպական Խորհուրդին մէջ Հայաստանի մնայուն ներկայացուցչութեան միացեալ ճիգերով:

Ցուցանանդէսի բացման ներկայ եղած են Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիքրը Շիտրը, Եւրոպական Խորհուրդի գլխաւոր քարտուղարութեան մշակոյթի, գիտութեան եւ կրթութեան հարցերու գլխաւոր անօրէն Պենտիք Ռուկասա, վեհաժողովի տարբեր կրկիրներու պատուիրակութիւններու ղեկավարներ, պատգամաւորներ եւ այլ պաշտօնատարներ:

Յուրանանդալիսի բացման խօսքը արտասանած է Երուսաղեմի Խորհրդարանական վեհաժողովին նախագահը, որ ցուցաբանելիս կազմակերպիչներուն շնորհակալութիւն յայտնելով՝ նշած է, որ ինք ծանօթ է հայոց պատմութեան, խորհրդանշական կերպով յիշատակած է «Էլեմնայի Ախիրարեան միաբանութեան ժառանգութիւնը եւ այն իրողութիւնները, որոնք նկարագրուած են արտոբիացի գրող Ֆրանց Վերֆելի «*Մուսս յերան 40 որները*» գիրքին մէջ: Ան ցուցահանդէսը նկատած է իբրեւ Երուսաղեմ մշակութային ժառանգութեան հայերու բերած նպաստին մէկ ապացոյցը:

**ԳՐՈՂՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ
ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ**

Կիրակի, 16 Յուլիս 2002ի երկուշեան, Հայաստանի Գրողներու Միութեան «Մեծ դահլիճ»ին մէջ, կատարուեցաւ բացման հանդիսաւոր արարողութիւնը Գրողներու Առաջին Համաեայկական Խորհրդաժողովին: «Մ.կ հայրենիք, մէկ մշակոյթ» ընդհանուր կարգախօսին տակ զամարում իր տեսակին մէջ այս առաջին խորհրդաժողովին շղջոյնի իրենց խօսքերը յղած Կին Հայաստանի հանրապետութեան նախագահ Ռոբերտ Զոչարեան, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Արամ Ա. Կաթողիկոս:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ եւսն Գրողներու Միութեան

Նախագահ Լեւոն Ամանեան, Հայաստանի Անտարանական Եկեղեցւոյ նախագահ Վերապատուելի Դոկտ. Ռոբէ Լեւոնեան եւ Սփյուռքի 15 գաղթօճախներէ եկած տատուիրակութեանց ներկայացուցիչ գրողներ:

Յաջորդ օր, խորհրդաժողովի անդրանիկ «պլենար նիստ»ը տեղի ունեցաւ Գլխութիւններու Ազգային Ակադեմիայի «Երբ դահլիճ»ին մէջ: Լ. Ամանեանի բացման խօսքէն ետք, ծայրէ տրուեցաւ Ազգային Ակադեմիայի նախագահ Ժաղիյ Սարգսեանին, որ ողջունելով խորհրդաժողովի մասնակիցները՝ համառօտ ձեռով անդրադարձաւ Գ.Ա.Ա.ի աշխատանքներուն, յատկապէս ընդգրծելով այն իրականութիւնը, որ Ազգային Ակադեմիան արդէն իր հաստատուն տեղը ունի աշխարհի մէջ եւ այդ կը վկայեն բազմաթիւ նրկիրներու կատարած պատուերները:

Ապա, նախատեսուած ծրագրով, յաջորդաբար զեկուցեցին Ազատ Եղիազարեան եւ Սուրբիս Կիրակոսեան «Հայ գրական-գեղարուեստական միտքը դարերի առեմնանագծում» եւ «21րդ դար գրական մարգարեակերներ» քննմներով: Գրաւոր զեկուցումներէն ետք, տեղի ունեցաւ մտքերու փոխանակում: Յաջորդաբար ելոյթ ունեցան Դաիթ Յովեաննէս, Մանուէլ Բէօսէեան, Թորգոմ Փոստամեան, Մանուէլ Աղամեան, Ազատ Սարեան, Յարութիւն Սարրեան, Պօղոս Սնապեան, Արրուր Անդրանիկեան, Արեւշատ Արագեան, Թորոս Թորանեան, Գեորգ Սնըխչեան, Անուշ Գրիգորեան եւ ուրիշներ:

Խորհրդաժողովի նրկրորդ «պլենար նիստ»ը ունեցաւ յաջորդ առաւօտուն, Հ.Գ. Միութեան «Մեծ դահլիճ»ին մէջ: Պօղոս

Մնապեանի նախագահութեանը գումարուող սոյն նիստին զեկուցումներով հանդէս եկան Ստրէն Դանիլեան «Սփիւռքահայ գրականութեան հիմնախնդիրները» եւ Հայր Լեւոն Չերիեան «Հայ գրականութիւնը որպէս ազգային ինքնութեան պահպանման գրասկան» բնմաներով:

Ապա, ծայն տօին մասնակցող գրողներէն ոմանք, ինչպէս Պելպօ Միսնեան, Հրանտ Մարգարեան, Խոսրով Յարութիւնեան, Բաղիշ Յովսէփեան, Ազատ Եղիազարեան, Ռոպէր Հատուճեան, Յովիկ Հովեան, Սոնա Վան եւ ուրիշներ:

Մտօրուան դադարէն ետք, երկույեան եփր գրողները ուղուեցան Յ. Պարոնեանի անտան քաւորոն, ուր եւ տեղի ունեցաւ «Գրական թերթ»ի 70ամեակին նուիրուած երեկոն, որուն իրենց մատակցութիւնը թերին «Գրական թերթ»ի իրերայաջորդ խմբագիրները, հայրենի գրագէտներ եւ սփիւռքահայ գրողներ:

Մտօրուան դադարէն ետք, ժամը 4ին սփիւռքահայ գրողները ճամբայ ելան դէպի Ծաղկածոր, ուր Մփիւռք-Հայրենիք գրական-մշակութային կապերու ամրացման, հայ գրականութեան ստատարման եւ տարածման նպատակով համահայկական հիմնադրամի մը ստեղծման, հայ մեքորեայ գրականութիւնը օտար ժողովուրդներու ծանօթացման եւ յարակից նխքերու շուրջ լայն կարծիքներ փոխանակելէ ետք, սփիւռքահայ գրողները գիշերեցին Գրողներու Մտեղծագործական տան մէջ:

Յաջորդ օր, առաւօտուն, եփր գրողներուն միացան յատկապէս Երեւանէն ժամանած մեծաքիւարձակագիրներ, րանատեղծներ ու գրականագետներ, որոնք

իրենց սփիւռքահայ գրչեղբայրներուն հետ անցուցին շուրջ չորս ժամեր. Ծաղկածորի Գրողներու տան դահլիճին մէջ:

Հայրենի եւ սփիւռքահայ գրողներ առիքը ունեցան ունկընդլելու Հայաստանի հանրապետութեան արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի, մշակութի, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարար Ռոյանդ Շառայեանի, գիտութեան եւ կրթութեան նախարար Լեւոն Ակրտչեանի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Վ. Տէր Աւետիեանի զեկուցումները՝ Հայաստանի ներկայ իրավիճակին, քաղաքական-տնտեսական դրութարութիւններուն, Հարարադեան հարցին, հայ-թիւրական յարաբերութիւններու հայկական պաշտօնական պատկերացման, մշակութի ազգային դերակատարութեան, գրական կեանքի վերաշխուժացումն ա գորացումը երաշխատրող նախածեռնութեանց, կրթութեան համակարգի հոլովոյրին եւ ազգային դիմագիծով կրթական քաղաքականութիւն վարելու նպատակով իրագործուած միջոցառումներուն, «Հայաստան» հիմնադրամի գործունէութեան եւ յարակից այլ հարցերու մասին: Ապա, հայրենի եւ սփիւռքահայ գրողները զեկուցարքեր նախարարներուն ուղղեցին իրենց հարցումները վերոնշեալ նիւքերուն շուրջ, որոնց հանգամանօրէն պատասխանեցին հայրենի պետական պատասխանատուները:

Այս առիքով, Հայաստանի մշակութի նախարարը «Սփիւռքի գրական-նասարակական կեանքում իրենց մատուցած ծուռայութիւններէ եւ ծաւաքած գործունէութեան համար» նախարարութեան ակեայ շքանշանով պար-

գեւատրեց Մեսրոպ Արք. Աշճեանը, Չահրատը, Ռուպը Հատտեճեանը, Գողոս Սնապեանը, Պեպօ Սիմոնեանը, Սարգիս Կիրակոսեանը, Թորոս Թորանեանը, Հրանդ Մարգարեանը և Ազատ Մարեանը:

Հինգշաբթի, 20 Յունիսի առաւօտուն սփիւռքահայ գրողները այցելեցին Շիճեռնակաբերդ, ուր ծաղկեպսակի գետեղումէն և յիշատակի ծառատնկումէն ետք, Յեղապանութեան բանգարանին մէջ եղան եփուրեր սոյն հաստատութեան տնօրէն Փրոֆ. Լարենտի Բարսեղեանի, որ մանրամասնօրէն զնկուցեց բանգարանի և անոր ծրագիրներուն մասին:

Ժամը 1ին, գրողները հասան Օշական, ուր Ս. Մեսրոպ Մաշտոցի և Ս. Սահակ Պարբեի Հայրապետի տօնին առիթով կազմակերպուած ժողովրդային տօնակատարութեան մասնակցելէ և Ս. Մեսրոպի շիրիմին առջեւ ձերբադրելէ ետք, սփիւռքահայ խումբ մը բանաստեղծներ իրենց մասնակցութիւնը րեքին այս առիթով պատրաստուած բանաստեղծական-գեղարուեստական ծրագիրին, որուն սկզբնաութեան, Հ.Գ.Մ. նախագահ Լ. Անանեան ծանուցեց, թէ Գրողներու Միութիւնը իր ամենամեայ բարգմանութեան մրցանակով այս տարի կը պարգևատրէ հայրենի և սփիւռքահայ վաստակաշատ երկու բարգմանիչներ՝ Արմէն Յովհաննիսեան և Տայանա Տէր Յովհաննիսեան:

Հայաստան-Ափիւսոյ գրական կապերու առաւել ամրապնդումը հետապնդող խորերդաժողովի աւարտեցաւ Ռոբբար երեկոյեան, հրաժեշտի երևկայով: Այսպէսով, Գառնի և Գեղարդ այցելութիւնը, իսկ անկի ոչ՝ հայրենի վաստակաշատ գիտնական, մտաւորա-


կան ու արունետագետ Գրիգոր Գօրգաղեանի հետ մտերմիկ հանդիպումը սփիւռքահայ գրողները վստակեցին իրենց նայրենի գրչեղբայրներուն հետ ողջերքի քերթ մաղրանքներով երկու տարի ետք րարձեալ հանդիպելու և սկսած գեղեցիկ ու օգտաշատ գործը անելի ամուր հիմերու վրայ հաստատելու խոստումներով:

Նշենք, որ յաջորդ օր, հայրենի գրող և հասարակական գործիչ Զօրի Բալայեանի նախաձեռնութեամբ՝ խումբ մը գրողներ այցելեցին «Յատուկ ուժեր»ու գօրանոցը, ուր դիմատրուեցան գօրանոցի պատասխանաւոր հրամանատարութեան կողմէ և ներկայ եղան նորակոչիկներու երկման արարողութեան:

«ԱՇՈՏ ՄԱԼԱՔԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

11 Մարտին գումարուած նիստի մը ընթացքին, Մարտլլի քաղաքապետարանի պատասխանատուներ միաձայնութեամբ որոշում ընդունած են Աշոտ Մալաքեանի անունով կոչելու Մարտլլի երապարակներէն մէկը: Հրապարակը կը գտնուի քաղաքի 12րդ քաղամասին մէջ, ուր որոշումին որդեկրումն ետք սկսած են կատարուիլ վերանորոգութեան աշխատանքներ: Հրապարակը ւրիշի կոչուի՝

«Ռոն Փուան Աշոտ Մարաքեան
Տի Հանրի Վերնոյ»



ՉԱՏԻԿ ՉԱՏԻԿԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

21 Փետրուարին, Կենտրոնի մէջ տեղի ունեցած է «Կարաւան» ծրարագիրի հիմնադիր և տնօրէն Ջատիկ Ջատիկեանի ցուցահանդէսը: Արտեստագետին նպատակն է դաբերու խորերէն հասած (9-14րդ դար) դասական մանրանկարչութեան ցուցադրութեան ընդմէջէն զեղարուեստասէր հասարակութեան և նորահաս սերունդին ցոյց տալ այդ ժամանակաշրջանի հայութեան ստեղծագործական եզրին, արուեստի ոճը, զօտ հայկական եզրով եւ նկարագրով նկարնչու մաքուր և անքիծ ձեւը առանց բիզանդական ու եւրոպական ազդեցութիւններա:

Վայրին ընտրութիւնը պատահաբար չէ կատարուած: Այս իրապարակը կը գտնուի Պեմենի և Սէն Պարնապէի թաղամասերուն միջեւ, որոնք հայաքնակ թաղամասեր են: Աշխատանքներու աւարտին հոն պիտի գետեղւի յուշարձան մը:

Մարտի քաղաքացեալ ժամ Գլօտ Կոտէն, Հանրի Վերնօյի մահուան օրն իսկ յայտարարած էր, որ հայազգի արուեստագետին տնունը պէտք է արձանագրուի: Մարտի պատմութեան մէջ, փողոցի մը կամ երապարակի մը վրայ:

Ջ. Ջատիկեան ըսած է, թէ հայկական պոմնանկարները ժամանակի ընթացքին թշնամիներու կողմէ կամ երկրաշարժի պատճառով կրնան փճացած ըլլալ, սակայն մանրանկարչութիւնը մեզի հասած է գիրքերու միջոցով եւ պէտք է զան ծանօթացնել իրերայաջորդ սերունդներուն:

Այս ցուցահանդէսին ընթացքին ցուցադրուած պատուանները կը նախատեսուի աշնան գետեղել 7 թեռնակառքերու վրայ եւ զանոնք ցուցադրել Բալիֆորնիոյ փողոցներուն մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆԻՔ

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՍԵՆԵԱԿԻՍ ՄԷՋ

- յուշեր -

Ռ. Հատուկճեան, Իսթամպուլ, 2002, 295 էջ:



ՍՐՔԱԼՈՅՍ ՄԻՒՌՆԸ ԵՒ ԿՐԱԿԱՐԱՆԸ

- արձակ -

Ռ. Հատուկճեան, Իսթամպուլ, 2008 էջ:



ԺՈՂՈՎՈՐԳԷՆ ՉԱՅՆԵՐ

- արձակ -

Գ. Մոլաթեան, Պէյրուք, 158 էջ:



ԱՆԱՊԱՏԻՆ ԿԱԿԱՉՆԵՐԸ

- արձակ -

Իսպրահիմ Ալ-Խուսիլ (Իսթամպուլ, Միհրան Միհրանեան),
Պէյրուք, 86 էջ:



ԱՇԽԱՐՀԱՎՅԵԱՅ ՊԱՏՈՒՀԱՆ

- արձակ -

Մ. Պէլաթեան, Փարիզ, 2002, 265 էջ:

پاکین

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد أوتين كاربيك قرانجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԿԵԱՆ

Խմբագրության անդամ
ԱՍՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Խմբագրական խորհուրդ
ԱԹՁԱՐԵԱՆ ԺԻՐԱՅՐ
ԱՐՄԱՆՏ
ՄՐՄԵՆԵԱՆ ԿԱՐՕ
ՄՍՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՆԴ
ՄԱՏԹԵՈՒԵԱՆ ԿԱՐՈՍՆ
ՆՇԱՆԵԱՆ ՄԱՐԿ
ԶԱՐԽՈՒՄԵԱՆ ՆՈՒՊԱՐ
ՊԵՐՊԵՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ
ՎԱՐԱՆԴ
ԶԻՐԵՃԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

Լիբանան 40.000 Լ.ո.
Արտաստիճան 40 ամ. տոլար
Հատապահում 10.000 Լ.ո.



Հասցե՝

Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud - Liban